

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԵԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ ՍԱՄՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ ԱՍՏՂԻԿ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ, ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԱՐՏԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Գլխավոր տեղեկություն**

Համար ԲԴԽ-57-Ո-Կ-17

Տիպ Որոշում

Ակտի տիպ Հիմնական ակտ (03.07.2023-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր Միասնական կայք 2023.07.24-2023.08.06  
Պաշտոնական հրապարակման օրը 27.07.2023

Ընդունող մարմին Բարձրագույն դատական խորհուրդ

Ընդունման ամսաթիվ 03.07.2023

Ստորագրող մարմին Բարձրագույն դատական խորհրդի նախագահ

Ստորագրման ամսաթիվ 03.07.2023

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 03.07.2023

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՍԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՄՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ, ՎԵՐԱՔՆՆԻՉ  
ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՍՏԴԻԿ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ, ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԱՐՏԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝**

**ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

- Նախագահությամբ՝** **Կ.**
- Բարձրագույն դատական խորհրդի նախագահ** **Անդրեասյանի**
- մասնակցությամբ՝ անդամներ** **Ա.**
- Արդարադատության նախարարի տեղակալ** **Աթաբեկյանի**
- Արդարադատության նախարարի ներկայացուցիչներ** **Հ.**
- Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր** **Գրիգորյանի**
- Աստղիկ Խառատյանի ներկայացուցիչ** **Ե.**
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր** **Թումանյանցի**
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր** **Ն.**
- Արտակ Բարսեղյանի ներկայացուցիչ** **Հովսեփյանի**
- քարտուղարությամբ՝** **Ք. Մկոյանի**
- Ս. Վարդանյանի**
- Վ. Քոչարյանի**
- Լ. Բայանի**
- Ա. Բադալյանի**
- Ա. Սուլջանի**
- Ա. Գալստյանի**
- Տ. Պետրոսյանի**
- Է. Ամիրխանյանի**
- Թ. Դուկասյանի**

2023 թվականի հուլիսի 3-ին ք. Երևանում

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի՝ «Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանին, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2023 թվականի մայիսի 24-ի թիվ 41-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի նախապատմությունը**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՍԻԵԴ) «Շուլց ԱԳ» ընկերություն (այսուհետև՝ Դիմումատու կամ Դիմումատու ընկերություն) ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 16528/10) գործով 24.01.2019 թվականին կայացված ՄԻԵԴ վճռի ուսումնասիրության արդյունքում ամբողջությամբ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Արդարադատության նախարարի 27.03.2023 թվականի թիվ 20-Ա որոշմամբ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի (այսուհետև՝ Դատավորներ) և Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Լևոն Բայանը 24.05.2023 թվականի թիվ 41-Ա որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) միջնորդություն է ներկայացրել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետև՝ Խորհուրդ) Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանին, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի

դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

## **2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը**

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

Իրավափորձությունների ծագման պահին գործող (17.06.1998 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած) խմբագրությամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարանի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:*

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել:

Իրավափորձությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավափորձություն կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով:

Արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր: Համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնությունն այն պայմանով, որ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, և տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը:

Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի եռության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, բացառությամբ, եթե գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ չի կարող կատարվել:

Վարույթ հարուցած մարմինը վերը նշված իրավական նորմերի համադրության արդյունքում նշել է, որ դատարանի կողմից հայցն առանց քննության թողնելու համար որպես հիմք նախատեսված է կողմերի միջև տվյալ վեճի վերաբերյալ արբիտրաժային համաձայնության առկայությունը և գործին մասնակցող համապատասխան անձի կողմից դրան կատարված հղումը: Միաժամանակ արբիտրաժային համաձայնությունը պետք է տարածվի միայն որոշակի իրավափորձությունների շրջանակի վրա՝ ներառելով վեճի վերաբերյալ ծագած իրավափորձությունները: Նշվածից հետևում է, որ արբիտրաժային համաձայնությունը չի կարող իրենում ներառել անորոշ շրջանակի իրավափորձությունների առնչությամբ ծագող վեճեր և չի կարող կախված չլինել կողմերի միջև հետագայում ծագած իրավափորձություններից, դրանց զարգացումից և դրանց շուրջ ձեռք բերած համաձայնություններից:

Սույն գործով առկա փաստական տվյալների համաձայն՝ «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ և «SCHOLZ AG» միջև կնքված 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականին կնքված համաձայնագրերը, որոնց հիման վրա հայց է ներկայացվել դատարան, չեն պարունակել արբիտրաժային համաձայնություն՝ ի տարբերություն կողմերի միջև 08.02.1999 թվականին, 10.04.2000 թվականին և 02.04.2003 թվականին կնքված պայմանագրերի (այսուհետև՝ միասին՝ Պայմանագրեր):

Սահմանափակ պետք, կողմերի միջև կնքված Պայմանագրերի առարկան է հանդիսացել վաճառողի կողմից («Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ) կողմից համապատասխանաբար 50.000, 120.000 և 12.000 տոննա սև մետաղի ջարդոնի մատակարարումը գնորդին (Դիմումատու ընկերությանը և KBKS ընկերությանը՝ Դիմումատու ընկերության իրավաձեռնորդին): Պայմանագրերի 7.2-րդ կետով նախատեսված արբիտրաժային համաձայնությամբ ամրագրվել է պայմանագրի կատարումից բխող ցանկացած վեճի՝ արբիտրաժային տրիբունալի քննությանը ենթակա լինելու պայմանը (վեճը բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում): Արդյունքում՝ ինչպես առարկա գործի շրջանակներում վեճի՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարանի (այսուհետև՝ Արբիտրաժային տրիբունալ) քննությանը ենթակա լինելու-չլինելու հարցը դիտարկելիս, դատարանը պետք է պարզեր

առաջացած վեճի՝ պայմանագրի կատարումից բխելու հանգամանքը:

08.11.2002 թվականին կնքված պարտավորագրով հաստատվել է Դիմումատուի կողմից «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ-ին 100.000 եվրո գումար տրամադրված լինելու փաստը և համաձայնություն է ձեռք բերվել մինչև 31.01.2001 թվականը նշված գումարը վերադարձնելու վերաբերյալ: Ընդ որում՝ նշված պարտավորագրով գումարը փոխանցվել է ՍՊԸ-ին՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ վարկը մարելու նպատակով: Միաժամանակ, պարտավորագիրը և համապատասխան համաձայնագրերը չեն պարունակում որևէ հիշատակում կամ հղում կողմերի՝ նախկինում ունեցած պայմանագրային հարաբերություններին՝ այդ թվում մետաղի ջարդոնի մատակարարման առնչությամբ ստեղծված հարաբերություններին: Այս առումով 28.10.2005 թվականի համաձայնագրերից առաջինի կնքման արդյունքում (որով սահմանվել է 600.000 ԱՄՆ դոլարի մարման ժամանակացույցը և Դիմումատուն հրաժարվել է մնացած 600.000 ԱՄՆ դոլարի իր պահանջից), ըստ էության, տեղի է ունեցել պարտավորության նորացում, ինչի արդյունքում դադարել է կողմերի միջև առկա սկզբնական պարտավորությունը՝ տրված կանխավճարը վերադարձնելու առնչությամբ (քանի որ պարտավորության առաջացման հիմքը եղել է գնորդի կողմից վճարված առավել մեծ չափով կանխավճարը ի տարբերություն իրեն փաստացի մատակարարված մետաղի ջարդոնի ծավալի): Հետևաբար, վարույթ հարուցած մարմինը եզրակացրել է, որ առկա վեճը Պայմանագրերի կատարումից որևէ կերպ չի բխելու հաշվի առնելով ինտրո առարկա պարտավորագրով, համաձայնագրերով, ինչպես նաև Պայմանագրերով կողմերի ստանձնած պարտավորությունները, դրանց կարգավորման առարկան, կողմերի միջև առաջացած իրավահարաբերությունների բովանդակությունն ու բնույթը:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ընդունելի համարենք այն, որ նշված համաձայնագրով նախատեսված պարտավորությունն ինչ-որ անուղղակի կապ է ունեցել կողմերի միջև կնքված մետաղի ջարդոնի մատակարարման Պայմանագրերի հետ, ապա 28.10.2005 թվականի մյուս համաձայնագրով և 08.11.2002 թվականի պարտավորագրով նախատեսված պարտավորությունների խախտումն առհասարակ Պայմանագրերի կատարումից բխող վեճի չի կարող հանգեցնել: Նշվածը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ ըստ 08.11.2002 թվականի համաձայնագրի՝ Դիմումատու ընկերությունը գումար է փոխանցել «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ-ին՝ այլ բանկի առջև ունեցած պարտքը մարելու և հետագայում Դիմումատուին վերադարձնելու նպատակով, և որևէ կապ չի ունեցել Դիմումատուի ունեցած նախկին դրամական պարտավորությունների և առավել ևս՝ Պայմանագրերի հետ:

Այնինչ, Դատավորները նշված հանգամանքներին պատշաճ ուշադրություն չեն դարձրել այն դեպքում, երբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետև՝ Ընդհանուր իրավասության դատարան) ներկայացրած հայցադիմումով Դիմումատուն պահանջել է վերադարձնել 116.600 եվրո, որը բխում էր միայն 08.11.2002 թվականի պարտավորագրով և 28.10.2005 թվականի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումից: Արդյունքում, ՄԻԵԴ-ը նույնպես չտեսնելով որևէ, նույնիսկ անուղղակի փոխկապակցվածություն մի կողմից պարտավորագրի և համաձայնագրերի, մյուս կողմից՝ Պայմանագրերի միջև արձանագրել է, որ «(...) դժվար է հասկանալ, թե ինչպես դիմումատու ընկերության՝ միայն վարկին վերաբերող հայցը կարող էր դիտարկվել որպես բոլորը միասին վերցված՝ 1999 թվականի փետրվարի 8-ի, 2000 թվականի ապրիլի 10-ի և 2003 թվականի ապրիլի 2-ի պայմանագրերի մաս այն դեպքում, երբ Վարչական շրջանի դատարանում որևէ ձևով նույնիսկ հղում չի կատարվել վերոնշյալ պայմանագրերին (...):»:

Հատկանշական է նաև այն, որ պայմանագրում կատարված հղումն այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն պայմանով, որ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, և տվյալ հղումն այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս, այնինչ ինտրո առարկա դեպքում նշված պարտավորագրում և համաձայնագրերում առհասարակ որևէ հղում չի կատարվել Պայմանագրերին:

Ըստ վարույթ հարուցած մարմնի՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 28.10.2005 թվականին կնքված համաձայնագրերը պարունակում են համաձայնություն՝ վճարման վերաբերյալ անմիջապես դատական բողոք (դատական հայցով բողոք) ներկայացվելու վերաբերյալ: Այլ խոսքով, ակնհայտ է, որ անգամ պարտավորագրի և համաձայնագրերի հիման վրա առաջացած վեճը Պայմանագրերի կատարումից բխող վեճ համարվելու պարագայում այն չէր կարող ենթակա լինել Արբիտրաժային տրիբունալի քննությանը, քանի որ կողմերը հետագայում կնքված պայմանագրով ուղղակիորեն նախատեսել են վեճի՝ դատական կարգով լուծման կարգը: Դատավորները նշված հանգամանքին առհասարակ անդրադարձ չեն կատարել իրենց որոշումներում, այնինչ՝ անգամ Պայմանագրերի և համաձայնագրերի միջև փոխկապակցվածության առկայությունն ընդունելի համարելու դեպքում ակնհայտ է եղել, որ կողմերը նախատեսել են վեճերի արդեն այլ՝ ներպետական դատական ընթացակարգով լուծման պայման:

Այսպիսով, գործում առկա փաստական տվյալները վկայել են այն մասին, որ հայցվոր կողմը (Դիմումատու ընկերությունը) դատարան է ներկայացրել արբիտրաժի, մասնավորապես՝ Արբիտրաժային տրիբունալի քննությանը ոչ ենթակա հայցադիմում, ինչի մասին, ի թիվս այլնի, փաստում է նաև այն հանգամանքը, որ նույն պահանջը 17.09.2008 թվականին ներկայացված հայցի միջոցով Դիմումատու ընկերությունը ներկայացրել է նաև Արբիտրաժային տրիբունալ (պահանջելով վճարել վարկի և տոկոսների գումարը 116.600 եվրո) և ստացել է մերժում՝ Արբիտրաժային տրիբունալի կողմից արբիտրաժային վարույթ սկսելու վերաբերյալ: Ընդ որում, Դիմումատու ընկերությունը հայցադիմումի մեջ նշում է կատարել այն մասին, որ «(...) ՀՀ տնտեսական դատարանի որոշումները և պայմանագրի քաղվածքները՝ արբիտրաժային համաձայնության վերաբերյալ ուղարկվել էին արբիտրաժային դատարանի նախագահին 23.08.2008 թվականի իմ գրությանը կից (...):»:

Այնինչ, Ընդհանուր իրավասության դատարանը, Վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանները փաստել են Պայմանագրերն Արբիտրաժային տրիբունալին ներկայացնելու անհրաժեշտությունը և, ըստ էության, արձանագրել գործն Արբիտրաժային տրիբունալի քննությանը ենթակա լինելու հանգամանքը: Դատավորները եկել են այն համոզմունքին, որ Պայմանագրերն Արբիտրաժային տրիբունալին ներկայացված հայցին կից ուղարկվելու դեպքում հայցը կքննվեր տրիբունալի կողմից՝ միաժամանակ մեկնաբանելով Արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված որոշումը: Մասնավորապես Վերաքննիչ դատարանն իր

որոշմամբ նշել է, որ «(...) արբիտրաժային դատարանին պետք է ներկայացվեն արբիտրաժային վերապահում նախատեսող ստորև թվարկված պայմանագրերը, որոնք հայցվորի կողմից չեն ներկայացվել՝

1. «KBKS» գերմանական ընկերության՝ որպես գևորդի և «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊ ընկերության՝ որպես վաճառողի, միջև կնքված սև մետաղի ջարդոնի առուվաճառքի 08.02.1999 թվականի թիվ SCH-3, 10.04.2000 թվականի թիվ SCH-4 պայմանագրերը (...):»:

Ավելին, ՄԻԵԴ-ն իր վճռի շրջանակներում, անդրադառնալով Պայմանագրերը Արբիտրաժային տրիբունալ ներկայացված լինել-չլինելու և Դիմումատուի կողմից իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցները սպառած լինելու հարցին, այնուամենայնիվ արձանագրել է արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող պայմանագրերն Արբիտրաժային տրիբունալին տրամադրված լինելու հանգամանքը և հերքել Կառավարության այն պնդումը, թե Արբիտրաժային տրիբունալը իրաժարվել է գործը քննել ոչ թե դրա իրավասությունը չունենալու պատճառով, այլ այն պատճառով, որ նրան ներկայացված հայցադիմումին կցված չեն եղել համապատասխան փաստաթղթերը (ՄԻԵԴ վճռի 49-րդ, 52-րդ կետեր):

Հատկանշական է այս առումով ՄԻԵԴ արտահայտած դիրքորոշումը նաև առ այն, որ ըստ ՄԻԵԴ-ի հատկապես բարդ է ընդունել Ընդհանուր իրավասության (Վարչական շրջանի) դատարանի հիմնավորումները՝ գործը քննելն իրավասու չլինելու վերաբերյալ, ինչպես նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից իրենց որոշումներում Դիմումատու ընկերության հայցը մերժելու վերաբերյալ մեկնաբանություններ կատարելը:

Այսպիսով, Դատավորների գործողությունների ամբողջական պատկերը դիտարկելով՝ վարույթ հարուցող մարմինը փաստել է, որ վերջիններս առանց իրավաչափ հիմքերի իրաժարվել են գործի ըստ էության քննությունն իրականացնելուց (հետևաբար նաև արդարադատություն իրականացնելուց), իսկ ներկայացված հայցադիմումը փորձել են «վերահասցեագրել» այլ իրավասու մարմնի լուծմանը, չնայած այն հանգամանքին, որ արդեն իսկ Տնտեսական դատարանը Դիմումատուի գործը ենթակա էր համարել Արբիտրաժային տրիբունալի քննությանը և Դիմումատուն, հայցադիմում ներկայացնելով տրիբունալ, արդեն իսկ իր գործի քննության իրականացման մերժում էր ստացել: Արդյունքում, Դատավորների գործողությունների հետևանքով Դիմումատու ընկերության՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվել է:

Վերոգրյալի հիման վրա վարույթ հարուցող մարմինը եզրակացրել է, որ Դատավորների կողմից թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտումներ:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231 հոդվածի և 234 հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 23.09.2009 թվականին, քննարկելով ըստ հայցի՝ Դիմումատու ընկերության ընդդեմ «Ա. Սաֆարյան և ընկերներ» համատեղ ձեռնարկության՝ 116.000 մլրդ բռնագանձելու պահանջի մասին Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2009 թվականի որոշման դեմ Դիմումատու ընկերության բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, որոշել է վճռաբեկ բողոքը վերադարձնել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին՝ չհամապատասխանելու հիմքով: Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ վերադարձնելով բողոքը՝ փաստել է այն մասին, որ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը՝ դատական սխալի առկայության մասին, անհիմն է, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Այնինչ, վարույթ հարուցող մարմինը սույն միջնորդության շրջանակներում արդեն իսկ ներկայացված փաստերի և վերլուծության հիման վրա փաստել է, որ ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա էր վարույթ ընդունման, քանի որ ստորադաս դատական ատյանները, անհիմն կերպով սահմանափակելով դատարանի մատչելիության իրավունքը, ծանր հետևանքներ էին առաջացրել Դիմումատուի համար: Առաջացած ծանր հետևանքների մասին է վկայում նաև ՄԻԵԴ-ի կողմից Դիմումատուի՝ Կոնվենցիայով երաշխավորված (6-րդ հոդվածի 1-ին կետով) իրավունքների խախտման փաստի արձանագրումը, ընդ որում, այն պայմաններում, երբ ՄԻԵԴ վճռի շրջանակներում փաստվել է հատկապես Ընդհանուր իրավասության, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների գործողությունների և կայացրած դատական ակտերի արդյունքում Դիմումատուի իրավունքների խախտման փաստը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, ներկայացված բողոքը վերադարձնելով, վերահաստատել է ստորադաս դատարանների դիրքորոշումը՝ հավելելով, որ Պայմանագրերն Արբիտրաժային տրիբունալ ներկայացնելուց և ընկերության կողմից հայցը չքննելու դեպքում ընկերությունը կարող է դիմել դատական պաշտպանության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոններով: Այնուամենայնիվ, ինչպես արդեն իսկ փաստվել է սույն միջնորդության շրջանակներում և հաստատվել ՄԻԵԴ-ի կողմից, Վճռաբեկ դատարանը պարտավոր էր վարույթ ընդունել ներկայացված բողոքը, քանի որ առաջին հերթին՝ ներկայացված հայցը ենթակա է եղել քննության Ընդհանուր իրավասության դատարանում, և երկրորդ, Դիմումատուն արդեն իսկ ստացել էր մերժում իր ներկայացրած հայցն Արբիտրաժային տրիբունալում քննելու վերաբերյալ:

Արդյունքում, Լիազոր մարմնի գնահատմամբ, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի կողմից, ի հավելումս վերը նշված խախտումների, թույլ են տրվել նաև դատավարական իրավունքի նորմերի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտումներ:

Վարույթ հարուցող մարմինը, անդրադառնալով մեղքի ձևին, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետև նաև՝

Օրենսգիրք) 142-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը, կարգապահական վարույթի փաստական հանգամանքների և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում փաստել է, որ Դատավորները Դիմումատու ընկերության ներկայացրած հայցադիմումն առանց քննության թողնելով (առանց քննության թողնելի իրավաչափ համարելով) «անտարբեր» վերաբերմունք են ցուցաբերել Դիմումատուի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում: Դատավորները, թեև բացահայտ չիրաժարվելով արդարադատության իրականացումից, պարզապես խուսափել են գործի քննություն իրականացնելու իրենց պարտականությունից՝ իրենց իրավունքների պաշտպանության համար լրացուցիչ բեռ դնելով Դիմումատուի համար, այն է՝ պահանջելով վերստին դիմել Արդարադատային տրիբունալ այն պայմաններում, երբ նշված պահանջն արդեն իսկ իրացված է եղել Դիմումատու ընկերության կողմից: Միաժամանակ վարույթի շրջանակներում չեն հայտնաբերվել Դատավորների արարքը դիտավորությամբ կատարած լինելու վերաբերյալ բավարար փաստական տվյալներ, ուստի Դատավորների կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորները չեն գիտակցել իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էին և պարտավոր էին դա անել:

Վարույթ հարուցող մարմինն անդրադառնալով *դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից ներկայացված բացատրությանը՝ նշել է հետևյալը.*

Այսպես, անդրադառնալով հորհրդի թիվ ԲԴԽ-81-Ո-Կ-22 և 02.09.2021 թվականի թիվ ԲԴԽ-56-Ո-Կ-18 որոշումներին և դրանց սույն գործի նկատմամբ կիրառելի լինելու հարցին վարույթ հարուցող մարմինը նշել է, որ նշված երկու որոշումներով էլ կարգապահական վարույթի կարճման հիմք է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի՝ կարգապահական խախտման հիմքում ընկած դատական գործի կողմ հանդիսանալու հանգամանքը, որը կարող էր ողջամիտ կասկածներ առաջացնել վարույթ հարուցած մարմնի, տվյալ դեպքում՝ Արդարադատության նախարարության անաչառության վերաբերյալ: հորհուրդը նշված որոշումներով փաստել է, որ. *«Սույն գործով Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատավորի՝ իր գործի Բարձրագույն դատական խորհրդում արդարացի կերպով դատական քննության ենթարկվելու իրավունքի մաս է կազմում կարգապահական վարույթի հարուցման օրինականությունը, տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմնի կողմից վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման համար տեսանելի անաչառության առկայությունը, միևնույն սույն գործով հարուցող մարմինը եղել է գործով կողմը, որի միջնորդությունը մերժվել է Դատավորի կողմից: Վերջին փաստը, հորհրդի դիտարկմամբ, պատկանում է այնպիսի հանգամանքների թվին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով վարույթ հարուցող մարմնի անաչառության մեջ: Դատավորի՝ սույն գործով արդար դատաքննության իրավունքի, այդ թվում՝ կարգապահական վարույթի հարուցման օրինականության իրավունքի վերականգնման միակ ձևը, սույն գործով կարգապահական վարույթի կարճումն է:»:*

Հետևաբար, հորհրդի նշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումը և սույն գործի փաստական հանգամանքները՝ երբ վարույթ է հարուցվել ՄԻԵԴ-ի կայացրած վճռի հիման վրա և Լիազոր մարմինը տվյալ գործով դատավարության մասնակից չի հանդիսացել, որևէ կերպ համաձայնելի չեն միմյանց հետ:

Միաժամանակ դատավոր Տիգրան Պետրոսյանը վկայակոչել է իր վերաբերյալ գործով կարգապահական վարույթ կարճելու մասին Արդարադատության նախարարի 17.12.2021 թվականի թիվ 94-Ա որոշումը՝ հայտնելով, որ նշված որոշման կայացման համար հորհրդի վերը վկայակոչված որոշումների հետ զուգահեռ հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ կարգապահական վարույթը հարուցելու առիթ է հանդիսացել 24.05.2021 թվականին «ԷՅ ԷՄ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի փաստաբանի կողմից ներկայացված հաղորդումը, իսկ նույն ընկերության բաժնետերերից է հանդիսացել վարույթ հարուցած մարմնի ղեկավարի կինը՝ Եվա Առաքելյանը: Արդյունքում՝ վկայակոչված գործի շրջանակներում շահերի բախում է առկա եղել վարույթ հարուցած մարմնի ղեկավարի և հաղորդում ներկայացրած անձի միջև և կարգապահական վարույթի իրականացման օրինականության, անաչառության, անկողմնակալության, ինչպես նաև անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկածի հարուցումը բացառելու նպատակով վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել:

Միևնույն վարույթ հարուցող մարմինը նշել է, որ սույն վարույթի շրջանակներում առկա չէ որևէ կերպ համադրելի իրավիճակ, քանի որ վարույթի հարուցման առիթը ՄԻԵԴ-ի կողմից կայացված դատական ակտն է, չկա հաղորդում ներկայացրած տուբյեկտ, իսկ վարույթ հարուցած մարմնի ղեկավարը որևէ առնչություն չունի գործով շահագրգիռ անձանց հետ: Հետևաբար դատավորի պնդումներն իր կողմից վկայակոչված գործերի և դրանում արտահայտված դիրքորոշումների՝ սույն վարույթի նկատմամբ կիրառելի լինելու վերաբերյալ, անհիմն են:

Անդրադառնալով Լիազոր մարմնի ղեկավարի և հորհրդի նախագահի միջև տևտեսական շահերի, նրանց ընկերներ և գաղափարակիցներ լինելու վերաբերյալ փաստարկներին՝ վարույթ հարուցող մարմինը նշել է, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուբրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշման շրջանակներում հորհուրդն անդրադարձել է հորհրդի նախագահին բացարկ հայտնելու վերաբերյալ դատավորի ներկայացուցի միջնորդությանը (հիմնված նույնաբովանդակ փաստարկների վրա) և մերժել է այն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ վարույթ հարուցող մարմինը նշել է, որ դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից չեն ներկայացվել անհրաժեշտ և բավարար փաստարկներ՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմնակալության վերաբերյալ, իսկ Լիազոր մարմնի ղեկավարի և հորհրդի անդամներից մեկի հետ ունեցած ընկերական հարաբերությունները կամ հորհրդի անդամներից մեկի կնոջ հետ առևտրային ընկերության ընդհանուր սեփականատեր լինելու հանգամանքներն ինքնին բավարար չեն սույն կարգապահական վարույթը կարճելու հիմքերի առկայությունը և սույն վարույթով հորհրդի անդամներից մեկի ու Լիազոր մարմնի ղեկավարի փոխադարձ շահագրգռվածության հանգամանքները փաստելու համար:

Վարույթ հարուցող մարմինը, անդրադառնալով դատավոր Աստղիկ Խառատյանի կողմից ներկայացված բացատրությանը, նշել է հետևյալը.

Թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործի նյութերը ոչնչացված լինելու և առանց համապատասխան գործի ուսումնասիրման կարգապահական վարույթ հարուցված լինելու փաստարկների առնչությամբ վարույթ հարուցող մարմինը փաստել է, որ թեև Դատական

դեպարտամենտի արխիվում պահվող գործի կյուլթերը (բացառությամբ դատական ակտերի) ոչնչացվել են, այնուամենայնիվ, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի 09.03.2023 թվականի թիվ 64.8/8051-2023 գրությամբ Արդարադատության նախարարության են տրամադրվել «Շոյզ ԱԳ» ընկերությունն ընդդեմ Հայաստանի» թիվ 16528/10 գանգատի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանից կոմունիկացված կյուլթերը, որոնք, ըստ էության, խնդրո առարկա գործերի կյուլթերի էլեկտրոնային պատճեններն են: ՄԻԵԴ-ից կոմունիկացված կյուլթերը, Լիազոր մարմնի գնահատմամբ, ամբողջությամբ բավարար են գործի փաստական հանգամանքների վերհանման և հարուցված վարույթի պատշաճ ընթացքն ապահովելու համար: Վճիլին՝ հատկանշական է, որ թեև Դատավորը բարձրաձայնում է կյուլթերի ոչնչացված լինելու պայմաններում իր՝ մրցակցային դատավարության և կողմերի հավասարության իրավունքների խախտման լինելու մասին, այնուամենայնիվ, նրա կողմից չի մատնանշվել որևէ փաստաթուղթ, որը կարող է տվյալ վարույթի լուծման համար էական նշանակություն ունենալ և որի բացակայությամբ գործընթացի իրականացումը կարող է հանգեցնել դատավորի իրավունքների խախտման: Արդյունքում վարույթ հարուցող մարմինը գտել է, որ վարույթի իրականացման համար անհրաժեշտ և բավարար կյուլթերը, այն է՝ Դատական դեպարտամենտի կողմից ստացված, ինչպես նաև ՄԻԵԴ-ի հետ կոմունիկացված կյուլթերն առկա են եղել վարույթի շրջանակներում և ամբողջությամբ տրամադրվել են Դատավորներին, հետևաբար դատավորի իրավունքների սահմանափակման մասին պնդումները հիմնավորված չեն:

Կառավարության լիազոր ներկայացուցչի կողմից գործի քննության շրջանակներում բավարար փաստարկներ չներկայացվելու և դրա՝ գործի ելքի վրա ունեցած բացասական ազդեցության այնպիսի առնչությամբ վարույթ հարուցող մարմինը հարկ է համարել արձանագրել, որ թեև դատավորի կողմից կատարվող այնպիսի, այնուամենայնիվ, գործում առկա կյուլթերի, մասնավորապես՝ ՄԻԵԴ վճռի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ՄԻԵԴ-ին ներկայացվել են և վերջինս անդրադարձել է պայմանագրերն Արբիտրաժային տրիբունալին ուղարկվելու, ինչպես նաև Տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, տնտեսական և քաղաքացիական գործերի միջև փոխադարձ կապի խնդիրներին (տե՛ս Վճռի 49-53, 64-65-րդ կետեր)՝ անընդունելի համարելով միայն վարկին և տոկոսներին վերաբերող Ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցը արբիտրաժի քննությանը ենթակա համարել այն պայմաններում, երբ հայցի հիմքում ընկած պայմանագրերը չեն պարունակել արբիտրաժային վերապահում:

Արդյունքում, Կառավարության կողմից ՄԻԵԴ-ին ներկայացվել են և ՄԻԵԴ-ն անդրադարձել է դատավորի կողմից բարձրաձայնված և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող անհրաժեշտ հակափաստարկներին: Միաժամանակ, դատավորի ներկայացրած պնդումների պայմաններում թյուր տպավորություն կարող է ստեղծվել առ այն, որ ՄԻԵԴ-ը չէր կարող գործում առկա Պայմանագրերի, պարտավորագրի և համաձայնագրերի ուսումնասիրության արդյունքում եզրահանգում կատարել գործի՝ Ընդհանուր իրավասության դատարանում կամ Արբիտրաժային տրիբունալում քննության ենթակա լինելու մասին: Այնինչ, նշված եզրահանգումը ՄԻԵԴ կողմից կատարվել է և ամրագրվել վճռի շրջանակներում:

Արբիտրաժային տրիբունալի կողմից որևէ որոշում կայացված չլինելու փաստարկի վերաբերյալ վարույթ հարուցող մարմինը նշել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկի կանոնակարգի 12-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնակարգի 10-րդ հոդվածի պահանջների (հայցադիմումի բովանդակությանը և կից փաստաթղթերին վերաբերող) խախտմամբ ներկայացված հայցադիմումները չեն ընդունվում: Նշվածի արդյունքում կարելի է փաստել, որ, որպես այդպիսին, կանոնակարգով նախատեսված չի եղել հայցադիմումը չընդունվելու պայմաններում առանձին որոշում կայացնելու ուղղակի պահանջ: Այնուամենայնիվ, Արբիտրաժային տրիբունալի նախագահի կողմից ստորագրված 07.10.2008 թվականի գրությունը, նաև ՄԻԵԴ-ի գնահատմամբ, բավարար է տրիբունալի կողմից հայցը վարույթ ընդունելու փաստը հաստատված համարելու համար:

Դատավորի ներկայացրած մյուս փաստարկների կապակցությամբ Լիազոր մարմինը նշել է, որ դրանց արդեն իսկ անդրադարձ կատարվել է միջնորդության շրջանակներում:

**3. Դատավորների դիրքորոշումները հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ**

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական կալուսի դատավոր Տիգրանյանը, վարույթ հարուցող մարմնին ներկայացրած բացատրությամբ, հղում կատարելով հորհրդի 04.11.2021 թվականի թիվ ԲԴԽ-81-Ռ-Կ-22 և 02.09.2021 թվականի թիվ ԲԴԽ-56-Ռ-Կ-18 որոշումներին, խնդրել է կարճել հարուցված կարգապահական վարույթը՝ հաշվի առնելով հորհրդի արտահայտած այն դիրքորոշումը, որ կողմնակալության ցանկացած դեպքում անհրաժեշտ է բացառել և կանխել նման իրավասության օժտված մարմնի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը՝ վարույթ հարուցելու հարցի լուծումը փոխանցելով մյուս իրավասու մարմնին: Միաժամանակ, դատավորի գնահատմամբ, որպես առկա կողմնակալության վերաբերյալ փաստարկ, դատավորը ներկայացրել է տեղեկություններ և փաստեր (համապատասխան հայտարարագրերը)՝ Լիազոր մարմնի ղեկավարի և հորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի կնոջ՝ միևնույն ՍԴԸ-ի բաժնետերեր լինելու վերաբերյալ (դատողություններ անելով Լիազոր մարմնի ղեկավարի և հորհրդի նախագահի միջև տնտեսական շահերի առկայության մասին): Որպես կողմնակալության վերաբերյալ փաստարկ՝ դատավորը վկայակոչել է նաև Լիազոր մարմնի ղեկավարի և հորհրդի նախագահի՝ իր գնահատմամբ ընկերներ և գաղափարակիցներ լինելու հանգամանքը:

Նշվածի հետ մեկտեղ դատավորը վկայակոչել է իր վերաբերյալ գործով կարգապահական վարույթը կարճելու մասին Արդարադատության նախարարի 17.12.2021 թվականի թիվ 94-Ա որոշումը՝ որպես Լիազոր մարմնի կողմից ձևավորած և սույն վարույթի նկատմամբ ևս կիրառելի պրակտիկա:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի *դատավոր Աստղիկ Խառատյանը վարույթ հարուցող մարմնին ներկայացրած բացատրությամբ միջնորդել է վերանայել իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը՝ հետևյալ հիմնավորումներով.*

Դատավորը, անդրադառնալով Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված գրությանը, որի համաձայն՝ Տնտեսական դատարանի թիվ Տ-1780/2007 և Երևանի քաղաքացիական դատարանի թիվ ԵԲԴ/1123/02/08 քաղաքացիական գործերն օրենսդրությամբ սահմանված պահպանման ժամկետն անցնելու հետևանքով ոչնչացվել են (և

ուղարկվել են միայն դատական ակտերի հաստատված պատճենները) և հղում կատարելով «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետին՝ գտել է, որ գործերը ոչնչացվել են դրանց պահպանման ժամկետի ընթացքում՝ մինչև կողմերի միջև առկա վեճը սպառվելը: Նշվածի հետևանքով, տվյալ կարգապահական վարույթի շրջանակներում, դատավորի գնահատմամբ, խախտվում են իր՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր համարվող մրցակցային դատավարության և կողմերի հավասարության իրավունքները: Դատավորի պնդմամբ, կարգապահական վարույթ է հարուցվել առանց այն գործի ուսումնասիրման, որի քննության արդյունքում կայացված դատական ակտը հիմք է դարձել կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատավորի գնահատմամբ՝ Արբիտրաժային տրիբունալը հրաժարվել է քննել գործը ոչ թե դրա իրավասությունը չունենալու, այլ այն պատճառով, որ նրան ներկայացված դիմումին կցված չեն եղել համապատասխան փաստաթղթերը: Եթե արբիտրաժային դատարանում հայցվորի հայցը մերժվեր «վեճը ենթակա չէ արբիտրաժի կողմից քննության պատճառաբանությամբ», կրկին, հայցվոր կողմի դիմումի հիման վրա, ըստ նախկինում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնակարգումների՝ քաղաքացիական հայցը վերստին քննության առարկա կդառնար:

Դատավորի կարծիքով, Կառավարության լիազոր ներկայացուցիչը գործի քննության շրջանակներում չի ներկայացրել բավարար փաստարկներ, որոնք կհիմնավորեին Դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակված չլինելը (չի բացահայտել օբյեկտիվ իրականությունը): Ըստ դատավորի՝ Կառավարության ներկայացուցիչը ՄԻԵԴ-ին չի ներկայացրել Տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը և դրանցով հաստատված փաստական հանգամանքները, տնտեսական և քաղաքացիական գործերի միջև փոխադարձ կապը: Ըստ դատավորի՝ ՄԻԵԴ-ի առջև չի բացահայտվել, որ Տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի գոյության պայմաններում ՀՀ դատարանները քաղաքացիական հայցի կարգով չէին կարող իրականացնել գործի ըստ էության կրկնակի քննություն: Ըստ դատավորի՝ սահմանված ժամկետում մինչև 18.10.2016 թվականը, Կառավարությունը չի ներկայացրել գրավոր առարկություններ, ինչն իր բացասական ազդեցությունն է ունեցել գործի քննության վրա: Դատավորը եզրակացրել է, որ ՄԻԵԴ որոշմամբ արձանագրված Կոնվենցիայի խախտումը ՄԻԵԴ-ում Կառավարության լիազոր ներկայացուցչի պաշտոնական պարտականությունների չկատարման արդյունք է:

Հակադարձելով զեկուցագրում և ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճռում նշված փաստերին՝ դատավորը պնդել է, որ Արբիտրաժային տրիբունալի կողմից որևէ որոշում չի կայացվել, այլ Արբիտրաժային դատարանի նախագահը գրությամբ պատասխանել է Դիմումատուին, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերն արբիտրաժային վերապահում չեն պարունակում:

Դատավորը նշել է նաև, որ Տնտեսական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում գործի ըստ էության վերստին քննությամբ կխախտվեր նախադատելիության ինստիտուտի, ինչպես նաև իրավական որոշակիության ինստիտուտի բովանդակությունը և էությունը:

Դատավորի պնդմամբ, Դիմումատուի գործողությունների հետևանքով է, որ պահանջը չի քննվել ինչպես ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից արբիտրաժային դատարանում, այնպես էլ ՀՀ դատական ատյաններում, քանի որ չի ներկայացրել 08.02.1999 թվականի թիվ SCH-03, 10.04.2000 թվականի թիվ SCH-4, 02.04.2003 թվականի թիվ SCH/1 պայմանագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները, որոնցում ուղղակիորեն սահմանված էր արբիտրաժային վերապահում:

*Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Տիգրան Պետրոսյանը և Արտակ Բարսեղյանը խորհրդին ներկայացրած համատեղ պատասխանով հայտնել են, որ իրենց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունն անհիմն է և Որոշումը կայացվել է Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 73-րդ, 164-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, Օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի, 142-րդ, 143-րդ հոդվածների, 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 146-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 147-րդ հոդվածի 5-րդ մասի և 6-րդ մասի 1-ին կետի, 148-րդ հոդվածի և 153-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումներով, իսկ միջնորդությունը ենթակա է մերժման կամ կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ ներքոնշյալ պատճառներով:*

Դատավորները հայտնել են, որ իրենց դեմ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել 19.03.2010 թվականին «Շուրջ ԱԳ» գերմանական կորպորացիայի Մարդու իրավունքների պրոպական դատարան ներկայացված գանգատի հիման վրա հարուցված գործով ՄԻԵԴ 24.01.2019 թվականի վճիռը, որով արձանագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Լիազոր մարմինը Սահմանադրությունը կիրառելու փոխարեն կիրառել է դրան հակասող օրենքը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածում 25.03.2020 թվականին ընդունված և 02.05.2020 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-197-Լ օրենքով և 06.07.2022 թվականին ընդունված և 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-333-Լ օրենքով կատարվել են Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին ուղղակի հակասող (անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն) լրացումներ և փոփոխություններ, ինչի արդյունքում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսացող, օրենքով նախկինում նախատեսված նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերը վերաշարադրվել են որպես նույն նորմերի սովորական (յուրաքանչյուր) խախտման հիմքեր, իսկ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու նախկինում սահմանված դատական վարույթն ավարտվելուց հետո հինգ տարի առավելագույն ժամկետն էլ 2020 թվականի փոփոխությամբ և լրացմամբ երկարացվել և դարձվել է՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 8 տարի, 2022 թվականի փոփոխությամբ և լրացմամբ՝ ՄԻԵԴ վճիռն ուժի մեջ մտնելուց հետո 15 տարի: Կատարված փոփոխությունները միաժամանակ խախտել են Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը դատավորների անկախության վերաբերյալ, քանի որ գործադիր իշխանությանը հնարավորություն են տվել վաղեմության չափազանց երկար ժամկետներ անցած լինելու պայմաններում ձևավորել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու և նրանց պատասխանատվության ենթարկելու:

արատավոր պրակտիկա: Ընդ որում, հակասահմանադրական է ոչ միայն վերոհիշյալ օրենքների ընդունումը, այլև դրանց կիրառումը նախկինում կատարված կարգապահական խախտումների նկատմամբ: Նշել են, որ իրենց նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի կոպիտ խախտմամբ, քանի որ իրենց վիճակը վատթարացնող պատասխանատվություն սահմանող և այդ պատասխանատվության ժամկետները երկարացնող օրենքին տրվել է հետադարձ ուժ: Հատկանշական է, որ օրենսդրական այդ փոփոխությունների կապակցությամբ բացասական կարծիքներ են հայտնել մարդու իրավունքներով և ժողովրդավարությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունները, իսկ 2022 թվականի օրենսդրական փոփոխության՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իր եզրակացության մեջ ուղղակիորեն նշել է նաև Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունը:

Դատավորները նաև նշել են, որ իրենց վերագրված կարգապահական խախտումը կատարվել է 23.09.2009 թվականին, մինչդեռ կարգապահական վարույթ է հարուցվել 24.03.2023 թվականին՝ ավելի քան տասներեքուկես տարի անց: Իրենց կողմից ենթադրյալ կարգապահական խախտումը կատարվելու օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 153-րդ հոդվածով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման առավելագույն ժամկետ է սահմանված եղել գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո մեկ տարի, իսկ այդ ժամանակ գործող Սահմանադրության 42-րդ հոդվածը ևս սահմանել է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Դա նշանակում է, որ իրենց կողմից դատական ակտի կայացման օրվանից՝ 23.09.2009 թվականից մեկ տարի անցնելուց հետո իրենց նկատմամբ այլևս կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել: Այլ խոսքով՝ սույն վարույթի հարուցումն ապօրինի է, հետևաբար ապօրինի է նաև դրա ողջ ընթացքը, այդ թվում՝ հտորհորդին միջնորդությամբ դիմելը: Այս կապակցությամբ ի պատասխան դատավոր Ս. Թադևոսյանի փաստարկների Որոշման մեջ կատարված վերլուծությամբ եզրահանգում է կատարվել, որ կիրառվող օրենքի սահմանադրականության խնդրի պարզաբանումը դուրս է Լիազոր մարմնի իրավասությունների շրջանակից, և որ Լիազոր մարմինն իրացրել է և պարտավոր է իրացնել օրենքով իրեն վերապահված լիազորությունը: Այդ վերլուծությունը և եզրահանգումն ըստ էության չեն պատասխանում դատավորի բարձրագրած խարցիկ. դատավորները քաջատեղյակ են օրենքների սահմանադրականությունը վիճարկելու գործընթացից, դրա վերաբերյալ օրենսդրական կարգավորումներից և հտորհորդ չեն դիմել օրենքի սահմանադրականությունը որոշելու պահանջով: Դրա հետ կապված հտորհորդին դատավորների կողմից առաջադրված պահանջները երկուսն են՝ 1) կիրառել Սահմանադրությունը և ոչ թե դրա խախտմամբ ընդունված և դրան հակասող օրենքները, 2) քանի որ ընդունված օրենքների հակասահմանադրական լինելը բավարար չափով հիմնավորվել է իրենց կողմից, յուրաքանչյուր իրավակիրառողի մոտ պետք է ողջամիտ կանկաձներ առաջանան այդ օրենքների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, իսկ այդպիսի կանկաձների դեպքում հտորհորդն իրավունք ունի դիմելու Սահմանադրական դատարան: Դատավորները նշել են, որ իրենք այդպիսի օրենսդրական հնարավորություններ կայուն չունեն և դա կարող են անել միայն իրենց նկատմամբ օրենքի կիրառմամբ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում: Այսպիսով, իրենց մյուս պահանջն այն է, որ հտորհորդը կասեցնի սույն կարգապահական վարույթը և դիմի Սահմանադրական դատարան՝ Օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածներում 2020 և 2022 թվականներին կատարված վերոհիշյալ փոփոխություններն ու լրացումները հակասահմանադրական ճանաչելու դիմումով:

Դատավորները նաև հայտնել են, որ ինչպես վարույթ հարուցած մարմինը, այնպես էլ հտորհորդին միջնորդություն ներկայացրած անձը պատշաճ չեն ուսումնասիրել ՄԻԵԴ 24.01.2019 թվականի վճիռը, ինչի արդյունքում հանգել են անհիմն հետևությունների:

Այսպես, վարույթի հարուցումից հետո դատավոր Ա. Խառատյանի կողմից փաստարկվել է, որ ՄԻԵԴ կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը ճանաչվել է ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի դրսևորած անգործության արդյունքում: Ի պատասխան դատավոր Ա. Խառատյանի այդ փաստարկի՝ միջնորդություն ներկայացրած անձը, վկայակոչելով ՄԻԵԴ վճռի որոշակի հատվածներ, հակադարձել է, թե Կառավարության կողմից ՄԻԵԴ-ին ներկայացվել են և ՄԻԵԴ-ն անդրադարձել է գործի լուծման համար Էական նշանակություն ունեցող անհրաժեշտ հակափաստարկներին:

Միաժամանակ, միջնորդություն ներկայացրած անձը սխալ է գնահատել ինչպես դատավորի առարկությունը, այնպես էլ վարույթի նյութերը, մասնավորապես՝ ՄԻԵԴ վճռում արձանագրված փաստերը: Այս կապակցությամբ դատավորները հարկ են համարել նշել, որ դատավորի կողմից չի վկայակոչվել այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ն իր վճռում չի անդրադարձել որոշակի հանգամանքների: Դատավորի առարկությունը կայացել է նրանում, որ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչը չի ներկայացրել համապատասխան առարկություններ և ապացույցներ՝ հիմնավորելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման բացակայությունը՝ ՄԻԵԴ կողմից գործի ըստ էության քննության ընթացքում: Դատավորները նշել են, որ դատավորի առարկությունը տեղին է, իրենք լիովին միանում են դրան և ի հակադրություն միջնորդություն ներկայացրած անձի՝ այդ հարցով կատարված եզրահանգումների, հայտնել են հետևյալը.

ՄԻԵԴ վճռի 14-16-րդ էջերում շարադրվածից ակնհայտ է, որ Կառավարության ներկայացուցիչը տվյալ գործով ներկայացրել է միայն նախնական առարկություն, որն էլ ներկայացվել է դիմումի ընդունելիության փուլում՝ դիմումի ընդունելի կամ անընդունելի լինելու հարցի կապակցությամբ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ՄԻԵԴ վճռի 16-րդ էջում հստակ նշված է. «... գանգատն ընդունելի չէ այս հիմքով և, հետևաբար Կառավարությունը նախնական առարկությունը պետք է մերժվի»: Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ն իր այս հետևությունը կատարել է իր որոշման «Ա. Ընդունելիությունը» բաժնում (վճռի 14-16-րդ էջեր), այսինքն՝ դիմումի ընդունելիության հարցը քննելիս, և միայն դրանից հետո է սկսել շարադրել դիմումի ըստ էության քննության արդյունքները՝ «Բ. Ըստ էության քննությունը» բաժնում, իսկ այդ բաժնում էլ բանացիորեն նշված է հետևյալը. «54. Դիմումատու ընկերությունը նշել է, որ այն փաստը, որ Կառավարությունը գործում նախնական առարկությունից բացի որևէ այլ պնդում չի ներկայացրել, ցույց է տալիս, որ նրանք անուղղակիորեն ընդունել են դիմումատու ընկերության կողմից ներկայացված փաստարկները»: Այսպիսով, վճռում ուղղակիորեն նշված է, որ Կառավարությունը գործում նախնական առարկությունից բացի որևէ այլ պնդում չի ներկայացրել, իսկ վճռի հետագա շարադրանքում էլ այլևս ոչ մի նշում չկա այն մասին, որ

դիմումի ըստ Էուլթյան քննության ընթացքում Կառավարության ներկայացուցիչը որևէ առարկություն կամ Դիմումատուի փաստաթղթերը հերքող որևէ ապացույց է ներկայացրել: Կառավարության ներկայացուցիչ գործողությունների մասին վճռի հետագա տեքստում նշվել է նաև 22-րդ Էջում. «Կառավարությունը համարել է, որ կյուբական վնասի մասով պահանջը պետք է մերժվի»: ՄԻԵԴ-ում գործի ըստ Էուլթյան քննության փուլում Կառավարության ներկայացուցիչ անգործությունն ընդգծել է նաև Դիմումատուին՝ նշելով, թե՛ քանի որ բացի նախնական առարկությունից Կառավարությունը որևէ այլ պնդում չի ներկայացրել, ուստի ընդունել է Դիմումատու ընկերության փաստաթղթերը:

Դատավորները հայտնել են, որ տվյալ գործով Կառավարության ներկայացուցիչ անգործության ուղղակի վկայությունն է նաև այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ն իր վճռի 20-22-րդ էջերում մի քանի անգամ գործածել է «Դժվար է հասկանալ», «Բարդ է ընդունել» արտահայտությունները, քանի որ Կառավարության ներկայացուցիչ կողմից ի պատասխան Դիմումատուի փաստաթղթերի և ապացույցների որևէ հակափաստարկ և հերքող ապացույց չեն ներկայացնելը որոշակի երևույթներ ըմբռնելու հարցում նույնիսկ ՄԻԵԴ-ին և կանգնեցրել դժվար իրավիճակի առջև:

Հայտնի է, որ ՄԻԵԴ-ում գործերի քննության ժամանակ ևս գործում է կողմերի մրցակցության սկզբունքը և տվյալ դեպքում ՄԻԵԴ վճռից հստակ երևում է, որ Կառավարության ներկայացուցիչը դիմումի ըստ Էուլթյան քննության ընթացքում իրոք անգործություն է դրսևորել և Հայաստանի Հանրապետության շահերը պատշաճ կերպով չի պաշտպանել: Հակառակ պարագայում ևս կարող էր ՄԻԵԴ ներկայացնել այն ժամանակ դեռևս չոչնչացված գործի կյուբեր և ապացույցներ, որոնք կարող էին հիմնավորել այն հանգամանքը, որ Դիմումատու, չնայած իր պնդումներին և հայցադիմումում նշվածին, Արբիտրաժ չի ներկայացրել արբիտրաժային համաձայնության վերաբերյալ օրենքով պահանջվող փաստաթղթերը, ինչն ապացուցվելու դեպքում ՄԻԵԴ-ը կարող էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման առկայության վերաբերյալ գալ այլ եզրահանգման: Նույնը վերաբերում է նաև այն հանգամանքին, որ ՄԻԵԴ-ը միայն Դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթի՝ 28.10.2005 թվականի համաձայնագրի հիման վրա է հանգել այն եզրահանգման, որ դա այլևս արբիտրաժային համաձայնությունն չէր պարունակում, իսկ ծագած վեճը պետք է լուծվեր դատական կարգով: Մինչդեռ, եթե Կառավարության ներկայացուցիչը ներկայացներ համապատասխան առարկություններ և ներպետական դատարաններում քննված գործերում գտնվող ապացույցներ, հնարավոր է, որ ՄԻԵԴ-ը գար այլ եզրահանգման, քանի որ, ինչպես հետևում է քննարկվող փաստաթղթից, 28.10.2005 թվականի համաձայնագրում նշված գումարների վեճը ևս կապված է եղել 08.04.2002 թվականին և 08.11.2002 թվականին կնքված համաձայնագրի և պայմանագրի հետ, որոնք նախատեսել են վեճերի լուծման արբիտրաժային կարգ, իսկ 28.10.2005 թվականի համաձայնագրում վեճը դատական կարգով լուծելու մասին նշումը չէր կարող միանշանակ մեկնաբանվել այնպես, որ դրանում նշված «դատական կարգով» արտահայտությունը վերաբերել է ընդհանուր իրավասության դատարանին: Հատկանշական է, որ ՄԻԵԴ կողմից իր վճռում մեջբերված, այն ժամանակ գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում էր, որ հայցը կամ դիմումը թողնվում է առանց քննության, եթե կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել: Եթե Կառավարության ներկայացուցիչն առարկություն ներկայացներ այն մասին, որ ՀՀ օրենսդրությամբ դատարան է կոչվել ոչ միայն ընդհանուր իրավասության դատարանը, այլև արբիտրաժը (արբիտրաժային դատարան), ապա այդ պայմաններում հայտնի չէ՝ արդյո՞ք ՄԻԵԴ-ը կգար այն եզրահանգման, որ 28.10.2005 թվականի համաձայնագրում նշվածը վերաբերել է հատկապես ընդհանուր իրավասության դատարանին: Ավնհայտ է, որ Կառավարության ներկայացուցիչ անգործության պայմաններում ՄԻԵԴ-ն իր եզրահանգումները կատարել է Դիմումատուի ներկայացրած փաստաթղթերի, ապացույցների հիման վրա, և դրանք հերքող այլ փաստաթղթեր ու ապացույցներ չեն ներկայացվելու պայմաններում դա լիովին իրավաչափ է՝ ելնելով կողմերի մրցակցության սկզբունքից:

Մինչդեռ, ըստ դատավորների միջնորդություն ներկայացրած անձը խեղաթուրել է այս հարցի կապակցությամբ դատավոր Ա. Խառատյանի առարկությունների Էուլթյունը և վերոհիշյալ հարցերին չի պատասխանել: Ավելին, դատավորները նշել են, որ իրենց մեղքը հերքող գործերի կյուբերն ապօրինաբար ոչնչացված լինելու պայմաններում ներկայումս իրենք զրկված են իրենց կողմից խախտում թույլ տրված չլինելու փաստն ապացուցելու հնարավորությունից: Դա իր հերթին նշանակում է, որ կարգապահական վարույթն ընթանում է Օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասում վկայակոչված՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքների կոպիտ խախտմամբ: Վարույթների ոչնչացված լինելու պայմաններում ոչ վարույթ հարուցած, ոչ միջնորդություն ներկայացրած անձը և ոչ էլ Խորհուրդը ցանկության դեպքում անգամ չեն կարող ամբողջական ուսումնասիրել վարույթի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, առավել ևս դրանք կարողանան արտացոլել իրենց որոշումներում՝ Օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մասով և 155-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումների նկարագրական-պատճառաբանական մասերին ներկայացվող պահանջները կատարելու համար: Նշել են նաև, որ իրենց նկատմամբ դրսևորվող ակնհայտ կողմնակալության պայմաններում վարույթ հարուցող և միջնորդություն ներկայացրած անձինք չեն կատարել Օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն այն մասին, որ դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին:

Դատավորները հայտնել են, որ Որոշումն անհիմն է, թերի և չի համապատասխանում Օրենսգրքի 148-րդ հոդվածի պահանջներին:

Թեև միջնորդություն ներկայացրած անձը փորձել է տպավորություն ստեղծել, թե իբր կարգապահական վարույթի հարուցումից հետո լրացուցիչ ուսումնասիրություններ են կատարվել, որոնք էլ հիմք են հանդիսացել միջնորդություն ներկայացնելու համար, սակայն Որոշման ամբողջ բովանդակությունից երևում է, որ վարույթի հարուցումից հետո որևէ նոր տվյալ, տեղեկություն, ապացույց ձեռք չի բերվել, փաստերի որևէ նոր ուսումնասիրություն չի կատարվել: Որոշումը հիմնականում կրկնում է վարույթի հարուցման որոշման պնդումները, իսկ Դատավորների առարկություններն ու միջնորդությունները ներկայացված են թերի, աղավաղված և ըստ դրանց որևէ պատասխան տալու հնարավորության և նպատակահարմարության, Որոշումն անդրադարձ չի պարունակում Դատավորների կողմից

բարձրացված վարույթի լուծման համար Էական նշանակություն ունեցող հանգամանքներին, իսկ դրանում կատարված եզրահանգումներն էլ սխալ են և հիմնված միայն վարույթ հարուցելու որոշման մեջ նշված ապացույցների վրա:

Այսպես, միջևորդություն ներկայացրած անձը դատավորներ Ս. Թադևոսյանի և Ա. Խառատյանի բացատրությունների փաստարկները հերքելիս վարույթի ապացույց է համարել ՄԻԵԴ-ում Դիմումատուի հայտնած տեղեկությունն այն մասին, որ ինքն Արբիտրաժ ներկայացրել է արբիտրաժային համաձայնության վերաբերյալ փաստաթղթերը, ի հիմնավորումն որի վկայակոչել է իր հայցադիմումում այդ մասին նշված լինելը, իսկ որ Դիմումատուն տվյալ գործով շահագրգիռ կողմ է հանդիսացել, և նրա հայտնած տեղեկությունները կամ նրա հայցադիմումում նշվածը կարող են նաև ճիշտ չլինել, մասնավորապես ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի անգործության պայմաններում, դա միջևորդություն ներկայացրած անձին չի մտահոգել: Ընդ որում, իր հետևությունները հիմնավորելու համար միջևորդություն ներկայացրած անձը միայն կրկնել է ՄԻԵԴ-ի վճռում նշվածները՝ անտեսելով, որ ինչպես վերը հիմնավորվեց, ՄԻԵԴ-ն իր եզրահանգումները ստիպված կատարել է Դիմումատուի ներկայացրած տվյալների հիման վրա, քանի որ ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչն այլ տվյալներ չի ներկայացրել: Եթե կարգապահական վարույթ հարուցելիս բավարար է միայն դրա հարուցման առիթի և հիմքի առերևույթ առկայությունը, ապա միջևորդության մասին Որոշումը արդեն Դատավորներին վերագրվում է կոնկրետ խախտում, հետևաբար Որոշումը պետք է ավելի հիմնավոր լինի և հենված ստույգ ապացույցների վրա, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քննված գործերի նյութերը և ապացույցները ոչնչացված լինելու պայմաններում դա անհնար է: Միայն այդ հանգամանքը բավարար էր, որպեսզի վարույթ հարուցած մարմինը հրաժարվեր միջևորդությամբ դիմելու մասին Որոշում կայացնելուց, ինչը չի արել:

Դատավորները նշել են, որ Որոշման թերի և ոչ ճշգրիտ լինելու մասին և վկայում նաև այն հանգամանքը, որ վարույթի հարուցումից հետո դատավոր Տիգրան Պետրոսյանը բացատրություն չի ներկայացրել, մինչդեռ միջևորդություն ներկայացրած անձը որոշման մեջ երկու անգամ նշել է, թե իբր այդպիսի բացատրություն է ներկայացվել: Դատավոր Տ. Պետրոսյանը վարույթ հարուցած անձին ներկայացրել է միայն կարգապահական վարույթը կարծելու մասին միջևորդություն, ինչի փաստարկներն էլ Որոշման մեջ շարադրվել են կիսատ: Այսպես, դատավոր Տ. Պետրոսյանը՝ վարույթ հարուցած անձին հասցեագրված միջևորդությունում նշել է նրա անաչառությունը կասկածի տակ դնող երեք հիմք և հիմնավորում՝ հստակ տարանջատելով և համարակալելով դրանք, մինչդեռ միջևորդություն ներկայացրած անձը Որոշումը անդրադարձել է դրանցից միայն երկուսին՝ հանգելով սխալ հետևությունների, իսկ այն հանգամանքին, որ վարույթ հարուցած անձը՝ կոնկրետ իրենց նկատմամբ վարույթ հարուցելով, դրսևորել է կամայականություն և ընտրողաբար է կիրառել օրենքը, ոչ մի անդրադարձ չկա: Դա պատահական չէ, քանի որ միջևորդություն ներկայացրած անձն, ըստ, իրենց որևէ կերպ չէր կարող պատճառաբանել, թե ՄԻԵԴ վճիռների հիմքով պոտենցիալ պատասխանատվության ենթակա ավելի քան 40 դատավորներից ինչու է հատկապես իրենց նկատմամբ վարույթ հարուցել, երբ կան ավելի վաղ կայացված և հրապարակված ՄԻԵԴ վճիռներ, որոնցով արձանագրվել է մարդու իրավունքների խախտում կապված դատարաններում քննված քրեական, քաղաքացիական և վարչական գործերով դատավորների կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ տալու հետ:

Ինչ վերաբերում է դատավոր Տ. Պետրոսյանի կողմից վարույթի կարճման միջևորդությունում նշված մյուս երկու հանգամանքներին՝ Դատավորները նշել են, որ դրանց վերաբերյալ վերլուծություններն ու եզրահանգումները բացարձակապես սխալ են:

Նախ՝ անհասկանալի է, թե ինչու է Որոշում կայացրած անձը դատավորի միջևորդության փաստարկը՝ վկայակոչելիս Լիազոր մարմնի և Խորհրդի նախագահի ընկերներ և գաղափարակիցներ լինելու հանգամանքը որակել դատավոր Տ. Պետրոսյանի՝ «իր [դատավորի] գնահատմամբ», երբ դատավորի միջևորդությամբ հղում է կատարվել այն լրատվամիջոցին, որտեղ կատարված հրապարակման համաձայն՝ հենց Կարեն Անդրեասյանն է ընդունել իրենց ընկերներ և գաղափարակիցներ լինելը: Ուստի այդ հանգամանքը ոչ թե դատավորի գնահատմամբ է, այլ հիմնված է չհերքված հրապարակման, Կ. Անդրեասյանի խոստովանության վրա, ուստի գոնե անաչառության նվազագույն պայմանը պահպանելու համար միջևորդություն ներկայացրած անձը չպետք է գործածեր «իր գնահատմամբ» արտահայտությունը, իբրև թե դա դատավորի գնահատականն է և ոչ իրենը կամ Խորհրդի նախագահինը: Դատավորները պնդել են, որ վարույթ հարուցած անձի և Կ. Անդրեասյանի ընկերներ և գաղափարակիցներ լինելու հանգամանքը հենց վերջինիս գնահատականն է:

Անդրադառնալով 04.11.2021 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-Կ-22 և 02.09.2021 թվականի թիվ ԲԴԽ-56-Ո-Կ-18 որոշումներին և դրանց՝ սույն գործով կիրառելի լինելու հարցին, Դատավորները նշել են, որ Որոշում կայացրած անձը փաստարկել է, որ առաջին դեպքում վարույթի կարճման հիմք է հանդիսացել այն, որ կարգապահական վարույթը հարուցված է եղել մի գործով, որով Արդարադատության նախարարությունը հանդիսացել է վեճի կողմ: Վերլուծելով մյուս կարգապահական վարույթի կարճումը՝ Որոշում կայացրած անձն ընդունել է, որ դա կարճվել է այն հիմքով, որ վարույթ հարուցած անձը և նրան հաղորդում ներկայացրած անձը կապված են եղել փոխադարձ շահերով: Ինչ վերաբերում է սույն վարույթին, ապա դատավորը փաստարկել է, որ սույն դեպքում էլ ընկերական և տնտեսական շահերով փոխկապակցված են վարույթի կողմը և վարույթի ընթացքը լուծող, որպես դատավոր հանդես եկող անձը: Որոշում կայացրած անձի հետևությունը, թե այդ վարույթների իրավիճակները համադրելի չեն՝ փաստական հանգամանքների տարբերության պատճառով, անհիմն է հետևյալ պատճառներով:

Ինչպես նշել է Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում՝ յուրաքանչյուր գործ եզակի է և չի կարող երկու գործերի միջև լինել փաստերի լիակատար համընկնում, ուստի ընդհանրապես որևէ իրավական դիրքորոշման կիրառումը այլ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կատարվում է ոչ թե փաստերի նույնության, այլ փաստական հանգամանքների նմանության պայմաններում (տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԴ/4708/02/17 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 04.03.2022 թվականի որոշումը): Այսինքն՝ եթե նախորդ կարգապահական վարույթն անաչառորեն հարուցած համարվելու համար անթույլատրելի կապեր են եղել վարույթ հարուցող անձի և նրան վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հաղորդումը ներկայացրած անձի միջև, ապա տվյալ դեպքում, ըստ Դատավորների, առկա են նման անթույլատրելի կապեր վարույթ հարուցող անձի և այդ վարույթի ընթացքը լուծող դատավորի միջև, ինչն իրենց գնահատմամբ ավելի կոպիտ

խախտում է, քանի որ, ինչպես հիմնավորել են վարույթի կարճման մասին միջևորդությունում, «մեղադրողը» և «դատավորը» չեն կարող գտնվել ընկերական, տնտեսական և այլ կապերի մեջ, դա բոլոր դեպքերում հանգեցնում է վարույթի օրինականության խախտման: Խնդրո առարկա երկու դեպքում էլ անթույլատրելի կապեր են առկա վարույթի ընթացքը սկզբնավորող և որոշող անձանց միջև: Նման պայմաններում անհիմն է այն հետևությունը, թե նախորդ վարույթի և սույն վարույթի իրավիճակները «համադրելի չեն»: Տվյալ երևույթի ճիշտ գնահատականը հետևյալն է՝ գոյություն ունի երկու դեպքերի փաստերի տարբերություն, սակայն երկու դեպքում էլ կան օբյեկտիվ հիմքեր՝ կասկածի տակ դնելու վարույթ հարուցած անձի անաչառությունը: Այս հետևությունը չի կարող հերքվել նաև այն փաստարկով, որ մի դեպքում կա վարույթ հարուցելու համար դիմող անձ, մյուս դեպքում՝ չկա: Այդ հանգամանքն էական չէ, քանի որ եթե առաջին դեպքում կարող էին կասկածներ ծագել, որ վարույթ հարուցելու հարցով դիմած անձը կարող էր ուղղորդված լինել վարույթ հարուցած անձի կողմից, ապա տվյալ դեպքում անկողմնակալ դիտորդի մոտ կարող է կասկած ծագել, որ վարույթ հարուցած անձը կարող է ուղղորդված լինել վարույթի ընթացքը լուծող փոխկապակցված անձի կողմից: Այսինքն՝ էական այն է, որ անկողմնակալ դիտորդի մոտ երկու դեպքում էլ կարող է ողջամիտ կասկած առաջանալ վարույթ հարուցած անձի անկողմնակալության նկատմամբ, մասնավորապես, որ վարույթ հարուցած անձն առ այսօր չի բացատրել, թե ինչու վարույթ չի հարուցել մյուս, ավելի վաղ խախտում թույլ տված դատավորների նկատմամբ:

Այսպիսով, իրավիճակները համադրելի են, և խորհրդի վերոհիշյալ որոշման դիրքորոշումները, որոնք, ի դեպ, բխում են Օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, լիովին կիրառելի են նաև սույն կարգապահական վարույթով:

Ինչ վերաբերում է գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու արդյունքում վարույթ հարուցած անձի և խորհրդի նախագահի միջև շահերի բախման իրավիճակի բացակայության մասին որոշման հետևությունը, ապա Դատավորների պնդմամբ այն ևս անհիմն է, քանի որ վարույթը կարճելու մասին դատավորի միջևորդությունում ներկայացվել էր փաստարկ, որ դա չի վերացնում շահերի բախման իրավիճակը, ինչի մասին որոշման մեջ որևէ վերլուծություն չկա: Փոխարենը փորձ է արվել գույքը հավատարմագրային կառավարման հանձնված լինելու և հավատարմագրային կառավարչի վրա գույքի սեփականատիրոջ կողմից ազդեցության գործադրման օրենսդրական արգելք սահմանված լինելու «իրավաչափ» ենթադրությունից բխեցնել, որ վարույթ հարուցած անձը խորհրդի նախագահի վրա ազդելու որևէ լծակ չունի, իսկ դատավորի միջևորդությունում նշված հակառակ փաստարկները չեն վերլուծվել և չեն հերքվել:

Մինչդեռ, եթե գույքն իրականում հանձնվել է հավատարմագրային կառավարման, պարագայես անհրաժեշտ էր վկայակոչել և հիմնավորել այդ փաստը և ոչ թե «իրավաչափ» ենթադրություն անել՝ հղում անելով դատավոր Ս. Անտոնյանի վերաբերյալ կարգապահական վարույթին: Վերջինիս կարգապահական վարույթում այդ հարցը քննարկվել է խորհրդում՝ Կ. Անդրեասյանին հայտնված բացարկի լուծման փուլում, իսկ բարձրացված հարցը վերաբերել է Արդարադատության նախարարին: Եթե այդ պայմաններում խորհրդի անդամները քննարկվող փաստերի մասին կարող էին միայն ենթադրություններ անել, ապա տվյալ դեպքում վարույթ հարուցող անձի և խորհրդի նախագահի ընդհանուր տնտեսական շահերով փոխկապակցվածության մասին դատավոր Տ. Պետրոսյանի կողմից մատնանշվել է վարույթ հարուցելուց հետո մինչև միջևորդության ներկայացումը և այդ հարցը քննարկում են ոչ թե խորհրդի անդամները, այլ հենց ինքը՝ վարույթ հարուցած անձը, քանի որ քննարկվող փաստը վերաբերել է իրեն: Տվյալ դեպքում դատավորի կասկածները փարատելու համար նա կարող էր վկայակոչել այն փաստը, որ գույքը հանձնված է հավատարմագրային կառավարման, և նշել համապատասխան պայմանագրի առկայության մասին, մինչդեռ դա չանելով և որոշման կայացումն էլ պատվիրակելով այլ անձի, վարույթ հարուցած անձն ավելի է խորացրել իր անաչառության նկատմամբ կասկածները:

Միաժամանակ, ի պատասխան որոշմամբ արտահայտված նոր մտքերի՝ Դատավորները հայտնել են, որ գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի ենթադրում դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարում և միևնույն է, հավատարմագրային կառավարիչը պայմանագրով որոշված կարգով և ժամկետներում պետք է հաշվետվություն ներկայացնի սեփականատիրոջը կամ նրա նշած շահառուին, թե ինչպես է կառավարել գույքը: Տվյալ դեպքում գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում վարույթ հարուցած անձը պահպանած կլինի միայն պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ չզբաղվելու պահանջը, իսկ գույքի համասեփականատերեր մնալը չի վերացնում այդ անձանց՝ գույքային շահերով կապված լինելն այն պարագայում, երբ գույքը բաժնեմաս է մի ընկերության, որը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Ի վերջո, որոշում կայացրած անձն այս կապակցությամբ պետք է առաջադրեր և պատասխաներ երկու հարցի. արդյո՞ք և՛ վարույթ հարուցած անձը, և՛ խորհրդի նախագահը շահագրգռված չեն, որպեսզի «ԷՅ ԷՄ» իրավաբանական ընկերության գործունեությունը լինի առավել շահութաբեր: Արդյո՞ք վարույթ հարուցած անձը որպես իրավաբանական անձի 60%-ի սեփականատեր հնարավորություն ունի այդ ընկերության կամ դրա բաժնեմասի հետ կապված ընդունելու այնպիսի որոշում, որը կարող է անդրադառնալ խորհրդի նախագահի ընտանիքի տնտեսական շահերի վրա: Այդ հարցերի դրական պատասխաններն էլ կանխորոշում են նշված անձանց փոխադարձ կապվածությունը տնտեսական շահերով, հետևաբար նաև միևնույն վարույթում «մեղադրողի» և «դատավորի» գործառույթներն իրականացնելու անթույլատրելիությունը: Ի դեպ, «Իրական շահառուների վերաբերյալ» 22.02.2023 թվականին ներկայացված «ԷՅ ԷՄ» իրավաբանական ընկերության հայտարարագրում որպես կազմակերպության իրական շահառուներ են նշվել Գրիգոր Մինասյանը և Կ. Անդրեասյանի կին Եվա Առաքելյանը: Միաժամանակ հաստատվել է, որ կազմակերպության կանոնադրական կապիտալում Գրիգոր Մինասյանն ունի 60% ուղղակի մասնակցություն:

Դատավորները վկայակոչելով «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը՝ նշել են, որ Գ. Մինասյանի և Կ. Անդրեասյանի ընտանիքի փոխադարձ տնտեսական շահերով կապված լինելն անժխտելի փաստ է հաստատված հրապարակված պաշտոնական փաստաթղթով և նման պայմաններում այդ փաստը որևէ ձևով ժխտելը չի կարող փոխել իրականությունը:

Դատավորները նաև հայտնել են, որ անվիճելի է, որ դատական կազմում անգամ մեկ դատավորի բացարկման հիմքերի առկայության դեպքում այդ դատավորը չի կարող մասնակցել որոշման կայացմանը: Ինչ վերաբերում է այդ դատավորի մասնակցության

ազդեցությանը վարույթի ելքի վրա, ապա դատավոր Տ. Պետրոսյանի միջնորդությունում արդեն իսկ հիմնավորվել է, որ հորհրդի նախագահը տվյալ դեպքում էական ազդեցություն ունի վարույթի ելքի վրա, քանի որ հանդիսացել է իշխող կուսակցության անդամ: հորհրդի մյուս 9 անդամների վրա նրա ազդեցության մասին են վկայում նրա պաշտոնավարման օրվանից հորհրդի որոշումների քվեարկության արդյունքները, որպես կանոն՝ մինչև 2023 թվականի ապրիլ ամիսն այդ որոշումների կապակցությամբ հորհրդի անդամների որևէ հատուկ կարծիքի բացակայությունը: Ըստ Դատավորների՝ հորհրդի որոշ անդամների հետ հորհրդի նախագահն ունի այնպիսի կապեր, որոնց բնույթը բարձրաձայնելի իրենց թույլ չի տալիս ցանկացած իրավիճակում զսպվածություն հանդես բերելու դատավորի վարքագծի կանոնը:

Դատավորները, անդրադառնալով դատավոր Ս. Թադևոսյանի փաստարկներին՝ նյութական կամ դատավարական նորմերի խախտումները «կարգապահական խախտում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության մեջ չներառվելուն, Օրենսգրքի 142-րդ հոդվածի տարբեր մասերի միջև հակասությունների առկայությանը, ինչպես նաև նյութական և դատավարական նորմերի խախտումների համար դատավորների պատասխանատվության ենթակա չլինելուն, վարույթ հարուցած անձը կատարել է մի ուշագրավ եզրահանգում. «Նշված նորմերի առկայությունը չի բացառում նմանատիպ գործողություններով՝ այլ հանգամանքների հետ համակցության պայմաններում կարգապահական խախտման հիմքերի ստեղծումը»: Տվյալ դեպքում կարգապահական խախտման հիմքեր իրոք առկա չեն, դրանք ստեղծվում են Սահմանադրության և օրենքների սխալ մեկնաբանմամբ, քանի որ «դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն հանգեցնելու համար» հաշվի առնվելու ենթակա և ոչ մի հանգամանք հաշվի չի առնվել: Այսպես, եթե միջնորդությամբ դիմած անձի կարծիքով պետք է հաշվի առնվի խախտման բնույթը, ապա Որոշումից պարզ չէ, թե «խախտման բնույթ» ասելով ինչ նկատի ունի միջնորդություն ներկայացրած անձն այն պայմաններում, երբ 2020 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում Օրենսգրքից հանվել են «խախտում» բառից առաջ եղած «ակնհայտ և կոպիտ» բառերը, որոնց իմաստը հորհրդի նախորդ կազմը բացահայտել և մեկնաբանել էր իր որոշումներում, իսկ որպես խախտման բնույթը որոշող չափանիշ Օրենսգրքում թողնվել է միայն «էական կարգապահական խախտում» հասկացությունը: Նման պայմաններում դատավորների կարգապահական պատասխանատվության հանգեցնող բոլոր խախտումներն ըստ օրենսդրի [փոփոխության արդյունքում խեղաթյուրված] տրամաբանության դասակարգվում են միայն էական և ոչ էական խախտումների, իսկ քանի որ էական կարգապահական խախտման համար սահմանված է դատավորի լիազորությունների դադարեցում, ստացվում է, որ տույժի մյուս տեսակները կիրառվում են ոչ էական խախտումների համար, իսկ ոչ էական խախտումների համար դատավորներին պատժելն ապօրինի գործողություն է, ավելին՝ պարունակում է հանցագործության առերևույթ հատկանիշներ:

Այսպիսով, կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում Դատավորները գտել են, որ Օրենսգրքի վերոհիշյալ առումով չի համապատասխանում օրենքի իրավական, կանխատեսելի լինելու պահանջներին, քանի որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված խախտումը «դատավորությամբ կամ կոպիտ անփութությամբ» կատարված լինելը ոչ թե բնութագրում է խախտման՝ որպես գործողության կամ անգործության օբյեկտիվ կողմը, այլ խախտումը կատարող սուբյեկտի մեղքի ձևը՝ սուբյեկտիվ կողմը: Եթե մի պահ վերանում ենք մեղքի ձևի վերաբերյալ նշումից, ապա ստացվում է, որ որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք օրենսդիրը սահմանել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ցանկացած խախտումը, իսկ մեղքի ձևի և բնույթի նշումը ոչնչով չի ավելացնում խախտման՝ որպես արարքի բնութագիրը, քանի որ, միևնույն է, ցանկացած խախտման համար դատավորին կարելի է պատասխանատվության ենթարկել միայն մեղքի առկայության դեպքում:

Ըստ միջնորդություն ներկայացրած անձի՝ խախտման համար վարույթ հարուցելիս կամ միջնորդություն ներկայացնելիս պետք է հաշվի առնվեն խախտման առաջացրած փաստական և իրավական հետևանքները: Սույն կարգապահական վարույթով ոչ վարույթ հարուցած, ոչ Որոշումը կայացրած անձի կողմից դրանք հաշվի չեն առնվել, մասնավորապես անտեսվել են այն հանգամանքները, որ ՄԻԵԴ-ն իր վճռով մարդու իրավունքների խախտում արձանագրելով, այնուամենայնիվ մերժել է Դիմումատուի նյութական պահանջը, իսկ դրանից հետո Դիմումատուն նույնիսկ չի էլ դիմել ներպետական դատարաններ՝ իր նկատմամբ կայացված դատական ակտերը վերանայելու և բեկանելու պահանջով: Ստացվում է, որ ներպետական դատարանների դատական ակտերի արդյունքում կրած նյութական վնասը Դիմումատուին չի էլ հետաքրքրում, սակայն Դատավորներին պատասխանատվության ենթարկելու հարցը ենթադրյալ խախտումից տասներեքուկես տարի անց հետաքրքրում է վարույթ հարուցած և միջնորդություն ներկայացրած անձանց:

Դատավորները նաև նշել են, որ Որոշման մեջ չկա նաև որևէ հիմնավորում, թե Դատավորների խախտումն ինչ ծանր հետևանքների է հանգեցրել: Այսպես, Որոշման մեջ այդպես էլ բացահայտված չէ, թե Դատավորների կատարած խախտումն ինչպես, ինչ հատկանիշների ուժով է կասկածի տակ դրել Դատավորներից յուրաքանչյուրի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին կամ հեղինակագրելու դատական իշխանությունը: Միգուցե նրանց կատարած խախտումներն ավելի կոպիտ են, քան այն մյուս քառասունից ավելի դատավորների կատարած խախտումները, որոնց արդյունքում ՄԻԵԴ-ն արձանագրել է մարդու իրավունքների խախտում՝ այդ մասին Որոշման մեջ որևէ հիմնավորում չկա, իսկ եթե այդ խախտումներն ավելի կոպիտ չեն, քան մյուս դատավորների թույլ տվածները, ապա ինչու է կարգապահական վարույթ հարուցվել այս 4 դատավորի նկատմամբ և նրանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմելու Որոշումը կայացվել, մինչդեռ խախտում թույլ տված մյուս դատավորները ծառայողական առաջխաղացում են ունեցել և կարգապահական պատասխանատվության չեն կանչվում: Միգուցե վարույթ հարուցած անձը կարծում է, որ մյուս՝ պատասխանատվության չկանչված դատավորների թույլ տված խախտումը բարձրացրել է դատական իշխանության հեղինակությունը, իսկ այդ դատավորներն էլ արժանի են ավելի բարձր կարգավիճակի: Դատավորները նշել են, որ իրենք ամենևին դեմ չեն գործընկերների առաջխաղացմանը, սակայն ցանկանում են ընդգծել միևնույն կարգավիճակում գտնվող դատավորների նկատմամբ խտրական վերաբերմունքը, որը դրսևորվում է սույն կարգապահական վարույթը հարուցելով և ցանկացած գնով տպավորություն ստեղծելով, թե Դատավորներն ինչ-որ արտառոց խախտում են թույլ տվել

մյուս դատավորների համեմատ: Այսպիսով, Որոշումը կայացրած անձի կողմից հաշվի չի առնվել Դատավորների խախտումը բնութագրող՝ իր իսկ Որոշման մեջ վկայակոչված և ոչ մի հանգամանք, իսկ Որոշումը, բացի անհիմն լինելուց, լի է նաև մի շարք հակասություններով:

Այսպես, Որոշման 20-րդ էջում միջևորդություն ներկայացրած անձը փաստել է, որ Դատավորները «առանց իրավաչափ հիմքի հրաժարվել են գործի ըստ էության քննությունն իրականացնելուց (հետևաբար նաև՝ արդարադատությունն իրականացնելուց)», իսկ Որոշման 22-րդ էջում արդեն փաստվել է բոլորովին այլ բան. «Դատավորները Դիմումատու ընկերության ներկայացրած հայցադիմումն առանց քննության թողնելով (առանց քննության թողնելը իրավաչափ համարելով) «անտարբեր» վերաբերմունք են ցուցաբերել Դիմումատուի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում: Դատավորները թեև բացահայտ չհրաժարվելով արդարադատության իրականացումից, պարզապես խուսափել են գործի քննությունն իրականացնելու իրենց պարտականությունից...»: Մեջբերված հատվածներից ակնհայտ է, որ միջևորդություն ներկայացրած անձն այդպես էլ չի կողմնորոշվել Դատավորներն արդարադատություն իրականացնելուց, գործի քննությունն իրականացնելուց հրաժարվել են, թե ոչ, քանի որ հրաժարումը փաստելուց ընդամենը երկու էջ հետո նշել է, թե դատավորները բացահայտ չեն հրաժարվել արդարադատության իրականացումից: Եթե նրանք բացահայտ չեն հրաժարվել արդարադատության իրականացումից, միգուցե դրանից գաղտնի՝ (կամ քողարկված) են հրաժարվել: Ի վերջո նրանք հրաժարվել է են արդարադատության իրականացումից, թե՛ խուսափել են դրանից: Այս հարցերի պարզումն էական նշանակություն ունի սույն կարգապահական վարույթի համար, քանի որ Դատավորներն իրավունք ունեն իմաստալու, թե ի վերջո իրենց ինչ խախտման մեջ են մեղադրում, որպեսզի կարողանան պաշտպանվել մեղադրանքից: Մի բան է արդարադատության իրականացումից հրաժարվելը, մեկ այլ բան՝ դրանից խուսափելը:

Այնուհետև, արարքն արդարադատության իրականացումից ոչ թե հրաժարում, այլ խուսափում որակելուց հետո միջևորդություն ներկայացրած անձն անմիջապես անցել է մեղքի ձևի վերլուծությանը, փաստելով, որ վարույթի շրջանակներում չեն հայտնաբերվել Դատավորների արարքը դիտավորությամբ կատարած լինելու վերաբերյալ փաստական տվյալներ: Ստացվում է, որ վարույթի շրջանակներում միջևորդություն ներկայացրած անձն այնուամենայնիվ փորձել է փաստական տվյալներ ձեռք բերել արարքը դիտավորությամբ կատարված լինելու վերաբերյալ, սակայն այդպիսի չհայտնաբերելու արդյունքում եկել է այն եզրահանգման, որ խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ: Սրանով միջևորդություն ներկայացրած անձն ակամա խոստովանել է, որ վարույթն իրականացրել է ակնհայտ մեղադրական թեքումով՝ Դատավորներին ավելի ծանր՝ դիտավորությամբ կատարված խախտում վերագրելու ուղղությամբ, իսկ երբ դա չի հաջողվել, բավարարվել է նրանց կոպիտ անփութությամբ կատարված խախտում վերագրելով: Սակայն, բացի վարույթի միտումնավորությունից, առկա է ևս մեկ խնդիր՝ դա այն է, որ Դատավորներին վերագրվող թեկուզև անորոշ խախտումները միջևորդություն ներկայացրած անձի վերագրած մեղքի ձևով կատարել իրականում հնարավոր չէ:

Այսպես, Դատավորները, վկայակոչելով Օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, նշել են, որ իրավունքի ժամանակակից տեսությունը բոլոր իրավախախտումները իրավակարգը խախտող արարքները, դասակարգում է երկու խմբի՝ հանցագործությունների և այլ իրավախախտումների: Այլ իրավախախտումներն իրենց հերթին դասակարգվում են վարչական և կարգապահական իրավախախտումների (զանցանքների): Հանցակազմերը և զանցակազմերը լինում են երկու տեսակի՝ ձևական և նյութական: Եթե առաջին դեպքում անձին պատասխանատվության ենթարկելու համար բավարար է սոսկ «խախտում» բնութագրվող գործողության կատարումը կամ անգործության դրսևորումը, ապա նյութական հանցակազմի կամ զանցակազմի առկայության համար անհրաժեշտ է հանրավտանգ հետևանքի առաջացումը: Անձի մեղքը բնութագրում է նրա արարքի սուբյեկտիվ կողմը, այսինքն՝ այն, թե անձն ինչ վերաբերմունք է դրսևորում իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Ըստ այդ հատկանիշների էլ՝ մեղքը լինում է 2 ձևի՝ դիտավորություն և անզուշտություն, դրանք էլ իրենց հերթին՝ ուղղակի և անուղղակի դիտավորություն, ինքնավստահություն և անփութություն: Քանի որ մեղքի ձևերը և տեսակներն առավել մանրամասն մշակվել են քրեական իրավունքի բնագավառում, ուստի վերլուծության համար օգտագործել են այդ բնագավառի բնորոշումները:

Վկայակոչելով 05.05.2021 թվականին ընդունված և 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Դատավորները նշել են, որ նոր Քրեական օրենսգրքի կարգավորումները չեն վկայակոչվում, քանի որ հանցավոր անփութության սահմանումը գրեթե չի փոխվել, իսկ միջևորդություն ներկայացրած անձն էլ իր դատողությունները կատարել է նախկին իրավակարգավորումներով տրված ձևակերպումների սահմաններում:

Դատավորները հայտնել են, որ Որոշման մեջ նշված է. «Դատավորների կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորները չեն գիտակցել իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էին և պարտավոր էին դա անել»: Որոշման այս ձևակերպումից հետևում է, որ արարքն անփութությամբ կատարված որակելիս միջևորդություն ներկայացրած անձը դա հիմնավորել է նրանով, որ Դատավորները չեն գիտակցել իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Վերոհիշյալ օրենսդրական սահմանումից հետևում է, որ անձի կողմից իր գործողության կամ անգործության հանրավտանգ բնույթը գիտակցելու մասին անփութությամբ կատարված արարքի դեպքում խոսք չկա, քանի որ դա դիտավորության հատկանիշ է, իսկ անփութությունը բնորոշելու համար օրենսդիրը որոշիչ նշանակություն է տվել անձի կողմից իր կատարած արարքի (գործողության կամ անգործության) հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը նախատեսելուն կամ չնախատեսելուն:

Դատավորները հայտնել են, որ իրենց վերագրված մեղքի ձևի սահմանումը Որոշման մեջ չի համապատասխանում մեղքի ձևերից և ոչ մեկի սահմանմանը, սակայն առավել մոտ է քրեաիրավական առումով անփութության ձևակերպմանը. տարբերությունը միայն այն է, որ անզուշտ մեղքի ձևը սահմանելիս օրենսդիրն էական նշանակություն է տվել ոչ թե արարքի բնույթի (փաստական հանգամանքների), այլ դրա հնարավոր հետևանքների առաջացման նկատմամբ անձի վերաբերմունքին, մինչդեռ տվյալ դեպքում Որոշում կայացրած անձն իր ձևակերպմամբ հաստատված է համարել Դատավորների կողմից իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթը չգիտակցելու հանգամանքը՝ այդպիսով վկայակոչելով մի հանգամանք,

որն իրավունքի տեսության մեջ և քրեական իրավունքում օգտագործվում է մեղքի դիտավորյալ ձևը սահմանելիս: Քանի որ իրենց վերագրված խախտման մեղքի ձևը որոշելիս ոչ մի խոսք չի ասվել խախտման հնարավոր հետևանքները նախատեսելու կամ չնախատեսելու վերաբերյալ, ստացվում է, որ իր եզրահանգումներն Օրենսգրքի 142-րդ հոդվածի ձևակերպումներին համապատասխանեցնելու համար միջնորդություն ներկայացրած անձն ստեղծել է մի կողմ, իրավագիտության անհայտ մեղքի ձև, որը պարունակում է թե՛ դիտավորության և թե՛ անզգուշության հատկանիշներ: Հաշվի առնելով նաև, որ Դատավորներին վերագրվում է արդարադատության իրականացումից հրաժարվելու կամ խուսափելու, «Դիմումատուի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում «անտարբեր» վերաբերմունք ցուցաբերելու» արարք, ապա իրավիճակն ավելի է բարդանում, քանի որ ցանկացած բանից (այդ թվում և արդարադատության իրականացումից) հրաժարվել կարելի է միայն դիտավորությամբ: Որևէ բանից հրաժարվելու համար անձը պետք է դրանից հրաժարվելու կամք դրսևորի և այն իրականացնի, իսկ կամքը բնութագրում է մեղքի՝ դիտավորյալ ձևը, ահա թե ինչու հնարավոր չէ արդարադատության իրականացումից անփութությամբ հրաժարվել: Նույնը վերաբերում է նաև արդարադատության իրականացումից խուսափելուն, միայն թե այս դեպքում արդարադատության իրականացումից հնարավոր է խուսափել կամ դիտավորությամբ՝ խուսափելու կամք դրսևորելով, կամ ակամա՝ առանց մեղքի (օրինակ՝ եթե Վճռաբեկ դատարանի դատավորները Վճռաբեկ դատարանի որոշումը կայացնելիս գտնվեին արձակուրդում կամ անաշխատունակության մեջ): Ինչ վերաբերում է Որոշման հետևությանը, թե «Դատավորները Դիմումատու ընկերության ներկայացրած հայցադիմումն առանց քննության թողնելով (առանց քննության թողնելիս իրավաչափ համարելով) «անտարբեր» վերաբերմունք են ցուցաբերել Դիմումատուի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում», ապա այն լիովին համընկնում է 18.04.2003 թվականին ընդունված և 01.08.2003 թվականին ուժի մեջ մտած ՀՀ նախկին քրեական օրենսգրքով սահմանված անուղղակի դիտավորությամբ դրսևորված մեղքի հատկանիշներին, այն է՝ եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք:

Այսպիսով, միջնորդություն ներկայացրած անձը Որոշման մեջ հաստատված է համարել, որ Դատավորները խախտումը կատարել են կոպիտ անփութությամբ, սակայն ի խախտումն դատավորների խախտման մեղքի ձևը հստակ որոշելու իր պարտականության, նրանց վերագրել է խախտումը դիտավորությամբ կատարելու հատկանիշներ՝ արդյունքում նրանց վերագրելով մեղքի այնպիսի ձև, որով տվյալ արարքը կատարել հնարավոր չէ:

Դատավորները նաև հայտնել են, որ վարույթ հարուցելու մասին և միջնորդությամբ խորհրդին դիմելու մասին որոշումներում դրանց հեղինակները եզրակացրել են, որ Դատավորների կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի Նորմերի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտումներ: Միաժամանակ Որոշման համաձայն՝ Լիազոր մարմնի գնահատմամբ, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Քարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի կողմից, ի հավելումս վերը նշված խախտումների, թույլ են տրվել նաև դատավարական իրավունքի Նորմերի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտումներ:

Սույն կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսացած ՄԻԵԴ վճռի ուսումնասիրությունից երևում է, որ այնտեղ հիշատակված են բոլոր դատավորներին վերագրվող բոլոր խախտված Նորմերը, մինչդեռ Վճռաբեկ դատարանի դատավորների կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի խախտումների մասին որևէ հիշատակում չկա: Դա նշանակում է, որ այդ Նորմերի խախտումները Լիազոր մարմնի կողմից ինքնուրույն են հայտնաբերվել, իսկ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելու դեպքում, Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը կայացվել է 23.09.2009 թվականին, մինչդեռ Լիազոր մարմինն իր հայտնաբերած խախտման հիմքով վարույթ է հարուցել 27.03.2023 թվականին՝ ավելի քան տասներեք տարի անց: Դատավորները նշել են, որ վերոգրյալից բխում է, որ իրենց նկատմամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի խախտման հիմքով վարույթը հարուցվել է Լիազոր մարմնի լիազորությունների վերազանցմամբ, հետևաբար իրավաչափ չէ նաև նրանց նշված Նորմերի խախտումներ վերագրելը Որոշմամբ:

Դատավորները միաժամանակ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի դատավորների կողմից թույլ տրված «հավելյալ» խախտումներին՝ նշել են, որ քննարկվող ժամանակաշրջանում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը բաղկացած է եղել թվով 10 դատավորներից: Վճռաբեկ վարույթի սահմանված կարգի համաձայն՝ պալատի յուրաքանչյուր դատավորի մակագրվել են գործեր, այսինքն՝ յուրաքանչյուր գործ ունեցել է զեկուցող: Վերջինս ծանոթացել է գործի նյութերին և դրա վերաբերյալ պալատում ներկայացրել զեկույց, ինչի հիման վրա էլ դատական կազմի դատավորները պատկերացում են կազմել տվյալ գործի էության մասին: Տվյալ դեպքում գործը զեկուցող դատավոր Վ. Աբելյանի զեկույցի հիման վրա են պալատի մյուս դատավորները եկել Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված եզրահանգումներին: 23.09.2009 թվականի որոշման մեջ նշված է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Առևտրաարդյունաբերական պալատի արբիտրաժային տրիբունալ արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ վավերացված պատճենը չներկայացնելու ... և հարցը չքննելու հանգամանքը, [դիմումատու ընկերությունը] գրկված չէ դատական պաշտպանությանից՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր դրույթներին համապատասխան...»: Մեջբերումից միանշանակ հետևում է, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորները որոշումը ստորագրելիս համոզված են եղել, որ Դիմումատու ընկերության դատարանի մատչելիության իրավունքը չի սահմանափակվում: Լիազոր մարմինը Դատավորներին խախտում վերագրելով չի պարզաբանել այն հարցը, որ եթե ըստ գործը զեկուցողի՝ գործում եղած տվյալների համաձայն

արբիտրաժային դատարան դիմելու Դիմումատուի հնարավորությունը չի սպառվել, ապա Դատավորներն ինչի հիման վրա պետք է եզրահանգեին, որ հնարավոր է՝ գեկուցողը գործի հանգամանքները ճիշտ չի ներկայացնում: Հայտնի է, որ և՛ այն ժամանակ, և՛ ներկայումս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական (ներկայումս քաղաքացիական) պալատում յուրաքանչյուր շաբաթ քննարկվում են տասնյակ, երբեմն նաև՝ հարյուրավոր գործեր և տեխնիկայաչես ու ֆիզիկայաչես անհնար է, որ բոլոր դատավորները ծանոթանան բոլոր գործերին: Եթե պալատի մյուս դատավորները գործը գեկուցող դատավորի գեկուցյցին ամեն անգամ վերաբերվեն կասկածանքով, պալատի աշխատանքը պարզապես կդառնա անհնարին կամ էլ, եթե Հայաստանի Հանրապետությունը որոշի բարձրացնել յուրաքանչյուր դատավորի անձնական պատասխանատվությունը, ապա պալատի դատավորների թիվն ամրապահ պետք է տասնապատկվի, որպեսզի բոլոր դատավորներն անձամբ ծանոթանան բոլոր գործերին և անձնական պատասխանատվություն կրեն իրենց որոշումների համար, ինչը պետական ռեսուրսների հարց է: Սակայն փաստ է, որ այդ ժամանակ պալատում եղել են ընդամենը տասը դատավորներ, և կոնկրետ դեպքում պալատի յուրաքանչյուր դատավոր, այդ թվում իրենք, ողջամտորեն ենթադրել են, որ գեկուցողը ճիշտ է ներկայացրել գեկուցվող գործի տվյալները, հետևաբար գեկուցող դատավորի ստորագրելուց հետո Վճռաբեկ դատարանի որոշումը ստորագրելիս՝ անգամ խախտում թույլ տրված լինելը հաստատված համարվելու պայմաններում, նրանց մեղքը բացակայել է: Այդ տեսակետից Որոշումը կայացրած անձի այն եզրահանգումը, թե խախտումը կատարվել է կոպիտ անփութությամբ, լիովին հիմնադրվել է, քանզի, չպատկերացնելով պալատի աշխատանքների կազմակերպման սկզբունքներն ու եղանակները, միջնորդություն ներկայացրած անձը չի պարզաբանել, թե կոնկրետ ինչպես է դրսևորվել գործի գեկուցող չհանդիսացող դատավորների անփութությունը և հատկապես մեղքի որ հատկանիշներն են թույլ տալիս պնդելու, թե այդ անփութությունը կոպիտ է եղել: Որոշումը պետք է պատասխաներ այն հարցին, թե ինչ պետք է անելիս Դատավորներն իրենց պաշտոնական պարտականություններն անթերի կատարելու համար, որը չեն արել: Ի վերջո չի կարելի անձի վրա դնել որևէ պարտականություն, որի կատարումը փաստացի անհնար է, իսկ հետագայում էլ նրան մեղադրել իր պարտականությունները թերի, անփութ կատարելու մեջ:

Դատավորները նշել են, որ իրենց վերագրվել է ոչ մի հիմք չունեցող, վերացական և անհասկանալի խախտում կատարված անհասկանալի մեղքի ձևով, այն պայմաններում, երբ իրականում այդ դատավորների կողմից խախտում թույլ չի տրվել, իսկ եթե անգամ որևէ խախտում առկա է, ապա դրանում նրանց մեղքը բացակայում է: Այդ կապակցությամբ Լիազոր մարմինը չի կատարել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի ապացուցման՝ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, Որոշումը կայացրել է նույն օրենսգրքի 147-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտմամբ՝ խախտման հանգամանքների վերաբերյալ բավարար ուսումնասիրություն չկատարելով, իսկ ըստ էության և Որոշումն էլ կայացրել է ի խախտումն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 6-րդ մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջների, այն է՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի և դատավորների մեղքի բացակայության պայմաններում:

Դատավորներ Արտակ Բարսեղյանն ու Տիգրան Պետրոսյանը ամփոփելով վերը նշվածը, վկայակոչելով Օրենսգրքի 148-րդ հոդվածի 8-րդ մասը, 153-րդ հոդվածը՝ Խորհրդին միջնորդել են իրենց կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով մերժել Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Լևոն Բայանի 24.05.2023 թվականի Որոշմամբ ներկայացված միջնորդությունը կամ կարճել կարգապահական վարույթը, կասեցնել սույն կարգապահական վարույթը և դիմել Սահմանադրական դատարան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1.1-ին մասը և 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պահանջով, միաժամանակ խնդրել են Վճռաբեկ դատարանում գործը գեկուցող դատավոր Վարուժան Աբեյանին հրավիրել որպես վկա՝ վերագրվող խախտման հանգամանքները պարզելու համար:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Արտակ Բարսեղյանի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանը ներկայացրել է դիրքորոշման լրացում՝ հայտնելով, որ մինչև Որոշման հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալով գտնում է, որ ՄԻԵԴ 24.01.2019 թվականի վճիռը (դրա ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը) սույն դեպքում կարգապահական վարույթ հարուցելու առիթ չէր կարող հանդիսանալ, ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները սահմանված են Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասով:

ՄԻԵԴ ակտը (դրա ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը) որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ սահմանվել է 25.03.2020 թվականին ընդունված (ուժի մեջ է մտել 02.05.2020թ.) թիվ ՀՕ-197-Ն օրենքով՝ նույն հոդվածում կատարված լրացմամբ: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի անցումային դրույթների 19-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով լրացվող՝ 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա:

Վերոնշյալից նորմերից ուղղակիորեն և անվերապահորեն հետևում է, որ որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է ծառայել միայն այն ՄԻԵԴ վճիռը, որը կայացվել է նշված օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, այն է՝ 02.05.2020 թվականից հետո: Նշված մոտեցումը բացատրվում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձ ուժ չունենալու սահմանադրական սկզբունքի առկայությամբ (Սահմանադրության 73-րդ հոդված):

Հետևաբար, Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ցանկացած տարբերվող մեկնաբանություն իրավաչափ չի կարող որակվել և կհակասի ոչ միայն անձի վիճակը վատթարացնող նորմի հետադարձության արգելքի, իրավական որոշակիության սկզբունքներին, այլ հենց օրենքի տառին:

Մինչդեռ, տվյալ դեպքում դատավոր Արտակ Բարսեղյանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման համար Լիազոր մարմինը որպես առիթ է դիտարկել 2019 թվականին կայացված ՄԻԵԴ վճիռը, ինչև ուղղակիորեն հակասում է Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին:

Ենթադրվում է, որ նման մոտեցումը (2019 թվականի ՄԻԵԴ վճիռը որպես առիթ դիտելը) վարույթ հարուցող մարմինը պայմանավորել է 06.07.2022 թվականին ընդունված թիվ ՀՕ-333-Ն օրենքով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածում կատարված լրացմամբ, քանի որ Որոշմամբ հղում է կատարվել հենց այդ նորմին:

Դատավորի ներկայացուցիչը պնդել է, որ նշված հոդվածում կատարված փոփոխությունները չեն վերաբերում վարույթի հարուցման առիթներին և չեն պատասխանում այն իրավական հարցին, թե որ ՄԻԵԴ վճիռները կարող են առիթ հանդիսանալ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Դատավորի ներկայացուցիչը հարուցման ժամկետների մասով հայտնել է, որ դեռևս 2020 թվականին թիվ ՀՕ-197-Ն օրենքով կատարվել է փոփոխություն նաև Օրենսգրքի 144-րդ հոդվածում, որտեղ պարզապես սահմանվել է, որ նշված հոդվածում սահմանված ժամկետները կիրառելի չեն նույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթի նկատմամբ:

Այսինքն ստացվում է, որ 2020 թվականի օրենսդրական փոփոխություններով սահմանվել է կարգապահական վարույթ հարուցելու նոր առիթ, սակայն բաց է մնացել այն հարցի կարգավորումը, թե այդ առիթով ինչ ժամկետներում կարող է կարգապահական վարույթ հարուցվել:

Նշված բաց ուղղվել է հենց 06.07.2022 թվականին ընդունված թիվ ՀՕ-333-Ն օրենքով Օրենսգրքի 144-րդ հոդվածում կատարված լրացմամբ, որը կիրառվել է Լիազոր մարմնի կողմից:

Մասնավորապես, նշված հոդվածը լրացվել է 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետները չեն տարածվում սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: Եթե արդարադատություն կամ որպես դատարան օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքով, ապա այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի:»

Նշված նորմը լրացվել է Օրենսգրքի 144-րդ հոդվածում, որը վերաբերում է վարույթի հարուցման ժամկետներին: Հետևաբար և հաշվի առնելով նաև դրա բովանդակությունը, ակնհայտ է դառնում, որ այն վերաբերում է միայն վարույթ հարուցելու ժամկետին, որը պետք է հաշվարկվել ՄԻԵԴ ակտի ուժի մեջ մտնելուց հետո: Միաժամանակ, նախատեսվել է անցումային դրույթ, որով սահմանվել է. «Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներով, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի:»

Վերոնշյալից հետևում է, որ թիվ ՀՕ-333-Ն օրենքի անցումային դրույթի վարույթ հարուցելու ժամկետի կանոնը վերաբերում է մինչև այդ օրենքի ուժի մեջ մտնելը (13.08.2022թ.) կայացված ՄԻԵԴ ակտերին, սակայն թիվ ՀՕ-197-Ն օրենքի անցումային դրույթների 19-րդ մասի գործողության պայմաններում, կարող է վերաբերել հետադարձ հաշվարկով մինչ 02.05.2020 թվականն ուժի մեջ մտած ՄԻԵԴ ակտերին: Այսինքն, 02.05.2020 թվականից մինչև 13.08.2022 թվականն ուժի մեջ մտած ՄԻԵԴ ակտերին:

Նշված եզրահանգման համար հիմք է ընդունվում այն հանգամանքը, որ թիվ ՀՕ-333-Ն օրենքով որևէ փոփոխության չի ենթարկվել 25.03.2020 թվականին ընդունված թիվ ՀՕ-197-Ն օրենքով որդեգրված այն մոտեցումը, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ միայն 02.05.2020 թվականից հետո կայացված ՄԻԵԴ ակտը:

Ավելին, ՀՕ-333-Ն օրենքի անցումային դրույթը որևէ կերպ հակասության մեջ չի մտնում ՀՕ-197-Ն օրենքով սահմանված վերոնշյալ կարգավորման հետ, քանի որ դրանով սահմանված հետադարձ ուժի կանոնը վերաբերում է միայն վարույթ հարուցելու ժամկետ սահմանող նորմին, իսկ ՀՕ-197-Ն օրենքով և դրա անցումային դրույթով սահմանվում են վարույթի հարուցման առիթները: Այսինքն, այս երկու օրենքների կարգավորման առարկաները տարբեր են:

Եթե ավելի պարզ, ապա թիվ ՀՕ-197-Ն օրենքը սահմանել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է 02.05.2020 թվականից հետո կայացված ՄԻԵԴ ակտը, իսկ հետագայում այդ առիթով վարույթ հարուցելու ժամկետ սահմանող նորմով սահմանվել է, որ 02.05.2020 թվականից հետո կայացված ՄԻԵԴ ակտի հիման վրա վարույթ կարող է հարուցվել դրա ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում: Անցումային դրույթով էլ սահմանվել է, որ այդ 15 տարվա կանոնը կիրառելի է ոչ միայն ՀՕ-333-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո (13.08.2022թ.), այլ նաև մինչ այդ (բայց ոչ 02.05.2020 թվականին նախորդող ժամանակահատվածում) կայացված ՄԻԵԴ ակտերի նկատմամբ:

Նշված մոտեցումը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ անցումային դրույթը սահմանվում է միայն տվյալ իրական ակտի հիմնական մասի՝ Օրենսգրքի 144-րդ հոդվածում կատարված լրացման, գործողության մեջ դնելու ժամկետների հստակեցման նպատակով և չի կարող դուրս գալ դրա շրջանակներից:

Ամփոփելով վերոգրյալը և համադրելով վերոգրյալ իրավունքի նորմերով սահմանված կարգավորումները սույն գործի փաստերի հետ՝ Դատավորի ներկայացուցիչը հարկ է համարել

արձանագրել, որ սույն կարգապահական վարույթը հարուցվել է ՀՕ-197-Ն (Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը) և ՀՕ-333-Ն օրենքների սխալ մեկնաբանության և կիրառության արդյունքում, քանի որ դրանք թույլ չեն տալիս Լիազոր մարմնին ՄԻԵԴ 24.01.2019 թվականի վճիռը դիտել որպես առիթ կարգապահական վարույթի հարուցման համար:

Անդրադառնալով միջնորդության հիմքերին և հիմնավորումներին՝ Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ Արդարադատության նախարարի պաշտոնակատարի 24.05.2023 թվականի թիվ 41-Ա Որոշումն անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպես, դատավոր Արտակ Բարսեղյանին ըստ Էուլայան վերագրվել է կարգապահական խախտումն այն պայմաններում, երբ Դիմումատուի կողմից ներկայացվել է Արբիտրաժային դատարանի քննությանը ոչ ենթակա հայցադիմում և վերջինս արդեն իսկ ստացած է եղել արբիտրաժային վարույթ սկսելու վերաբերյալ մերժում, դատավորը՝ օրինական ուժի մեջ թողնելով առանց քննության թողնելու մասին ստորագրած դատարանի որոշումը, թույլ է տվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 103-րդ հոդվածի 3-րդ կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտումներ: Ըստ Լիազոր մարմնի՝ նշված խախտումները դատավորը՝ կատարել է կոպիտ անփութությամբ:

Դատավորի ներկայացուցիչը նյութական և դատավարական իրավունքի Նորմերի խախտման մասով հայտնել է, որ Որոշումից հետևում է, որ վարույթ հարուցող մարմնի կողմից դատավորին վերագրված խախտման հիմքում դրվել են մի շարք պնդումներ: Դրանք են՝

ա) Հայցվոր կողմը դատարան է ներկայացրել արբիտրաժային դատարանի քննությանը ոչ ենթակա հայցադիմում, ինչը փաստվել է Արբիտրաժային դատարանի նախագահի պատասխան գրությամբ:

բ) 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականի համաձայնագիրը, որոնց հիման վրա հայց է ներկայացվել դատարան, չեն պարունակել արբիտրաժային համաձայնություն, իսկ մատակարարման պայմանագրերում առկա արբիտրաժային վերապահումը դրանց չի վերաբերում:

Ի հիմնավորումն վերոնշյալ պնդումների՝ վարույթ հարուցող մարմնին արձանագրել է, որ՝ 28.10.2005 թվականի համաձայնագիրը չի պարունակում որևէ հիշատակում կամ հղում կողմերի՝ նախկինում ունեցած պայմանագրային հարաբերություններին: 28.10.2005 թվականի համաձայնագրով տեղի է ունեցել պարտավորության Նորացում, ինչի արդյունքում դադարել է կողմերի միջև առկա սկզբնական պարտավորությունը:

Եթե նույնիսկ ենթադրվի, որ 28.10.2005 թվականի համաձայնագիրը կապ ունեցել է նախկին պարտավորությունների հետ, այնուամենայնիվ, 08.11.2002 թվականի պարտավորագիրը որևէ կապ դրանց հետ չի ունեցել և այն վերաբերել է վարկային պարտավորություններին:

Դատավորի ներկայացուցիչը, միջնորդության մեջ տեղ գտած վերոնշյալ պնդումներին առանձին-առանձին անդրադառնալով, հայտնել է հետևյալը.

ա) Այսպես, 23.07.2008 թվականին Դիմումատու ընկերության ներկայացուցիչն Արբիտրաժային տրիբունալի նախագահին ուղարկել է տեղեկատվություն ստանալու հարցում հարցնելով, թե արդյոք կողմերի միջև կնքված պայմանագրերում պարունակվող արբիտրաժի վերաբերյալ կետը բավարար է, որպեսզի տրիբունալը հայցն ընդունի քննության: Դիմումատուի պնդմամբ հարցմանը կից ներկայացվել են Արբիտրաժի վերաբերյալ դրույթներ պարունակող պայմանագրերի քաղվածքների հայերեն թարգմանությունները: Ստացվել է պատասխան, որ նշված հարցադրմանը կարող է պատասխան տրվել հայց ներկայացնելուց հետո:

Այնուհետև 17.09.2008 թվականին Դիմումատու ընկերությունը հայց է ներկայացրել Արբիտրաժային տրիբունալ՝ պահանջելով բռնագանձել վարկի և տոկոսների գումարը՝ 116.600 եվրո: Հայցին կցվել են միայն 08.11.2002 թվականի 100.000 եվրոյի չափով վարկ տրամադրելու վերաբերյալ մուրհակի պատճենը, և կատարվել է նշում այն մասին, որ արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող մատակարարման պայմանագրերի քաղվածքները ներկայացվել են 23.07.2008 թվականի հարցմանը կից:

Արդյունքում, 07.10.2008 թվականի գրությամբ Արբիտրաժային տրիբունալի նախագահը Դիմումատու ընկերությանը տեղեկացրել է, որ արբիտրաժային վարույթ սկսելու իր պահանջը չի բավարարվել: Ի հիմնավորումն վերոգրյալի՝ տրիբունալի նախագահը վկայակոչել է Արբիտրաժի կանոնակարգի 10-րդ կետի բ) ենթակետը, որի համաձայն՝ Արբիտրաժին ներկայացված հայցադիմումը պետք է պարունակի հղում արբիտրաժային համաձայնությանը, որի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը պետք է ներկայացվի հայցադիմումին կից և փաստարկել, որ այդպիսի փաստաթղթեր հայցվորի կողմից հայցին կից չեն ներկայացվել, իսկ ներկայացված 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականի համաձայնագիրը, որոնց վրա հիմնվում է պահանջը, արբիտրաժային վերապահում չեն պարունակում:

Այսինքն, վերոնշյալ պատասխանից ակնհայտ է դառնում, որ Արբիտրաժի նախագահը, ղեկավարվելով Արբիտրաժի կանոնակարգի 10-րդ կետի բ) ենթակետով, գնահատման առարկա է դարձրել միայն հայցին կից ներկայացված 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականի համաձայնագիրը, որոնք առանձին վերցրած, իրոք, արբիտրաժային վերապահում չեն պարունակում և իրավացիորեն գնահատման առարկա չի դարձրել մինչ այդ հարցմամբ ներկայացված մատակարարման պայմանագրերը, որոնք պարունակում էին արբիտրաժային վերապահում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ դատարաններին, Վճռաբեկ դատարանին այլ բան չէր մտում, քան արձանագրել, որ Արբիտրաժային դատարանի նախագահի կողմից ստացված մերժումը պայմանավորված է Դիմումատուի կողմից ոչ պատշաճ կարգով հայցադիմումի ներկայացմամբ և, հետևաբար, դրանով չի հիմնավորվում արբիտրաժ դիմելու հնարավորությունից զրկված լինելը:

Վերոնշյալ հանգամանքները ՄԻԵԴ առջև չեն բացահայտվել, որով էլ պայմանավորված է եղել նման դատական ակտի կայացումը:

Մասնավորապես, Կառավարության ներկայացուցիչը պարզապես կատարել է պնդում այն մասին, որ Դիմումատուն Արբիտրաժին չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը մատակարարման պայմանագրերը: Դրան ի պատասխան Դիմումատուն պնդել և հիմնավորել է, որ դրանք ներկայացվել են մինչ այդ ներկայացված հարցմանը կից, որն էլ ՄԻԵԴ-ը դրել է իր վճիռի հիմքում: Մինչդեռ, Կառավարության ներկայացուցիչը դիրքորոշում չի հայտնել, որ

Արբիտրաժի կանոնակարգի պահանջն է փաստաթղթերի ներկայացումը հենց հայցադիմումին կից, իսկ մինչ այդ ներկայացված հարցումներով ներկայացված փաստաթղթերը չեն կարող գնահատման առարկա դառնալ Արբիտրաժի կողմից:

Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ այդ է եղել պատճառը, որ ՄԻԵԴ-ն իր որոշման 51-րդ և 52-րդ կետերում արձանագրել է. «հայցում նշվել է, որ Տնտեսական դատարանի որոշումները և արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող պայմանագրերի քաղվածքներն արդեն ներկայացվել են Արբիտրաժային տրիբունալի նախագահին (տե՛ս վերևում 25-րդ պարբերությունը):

Այս տեղեկությունների հիման վրա Դատարանի համար պարզ է դառնում այն փաստը, որ դիմումատու ընկերությունն Արբիտրաժային տրիբունալ է ներկայացրել ...արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող երեք պայմանագրերը:»:

Ըստ դատավորի ներկայացուցչի՝ պետք է որ անվիճելի լինի այն, որ ՄԻԵԴ-ը պարտավոր չէ տեղյակ լինել և/կամ կողմի փոխարեն տեղեկանալ Արբիտրաժի կանոնակարգի կարգավորումներին հայցի ներկայացման կանոններին և պարտադիր պահանջներին: Նշված հանգամանքները պետք է վեր հանվեն Կառավարության ներկայացուցչի կողմից, ինչը վերջինս չի արել: Մասնավորապես, Կառավարությունը (լիազոր ներկայացուցիչը) բավարար ջանասիրություն չի ցուցաբերել գանգատի անհիմն լինելը և կայացրած դատական ակտերի իրավաչափությունը հիմնավորելու և դրա մասին վկայող փաստական հանգամանքները մատնացույց անելու ուղղությամբ:

Ավելին, թե վարույթ հարուցող մարմնի և թե ՄԻԵԴ-ում չէ ներկայացուցչի կողմից անտեսվել են, որ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ նշված փաստաթղթերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճեններն Արբիտրաժին «ներկայացնելուց և վերջինիս կողմից ընկերության հայցը չքննելու դեպքում, վերջինս զրկված չէ չ՛ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոններով դիմելու դատական պաշտպանության»:

Դատավորը հայտնել է, որ նշված հանգամանքը անչափ կարևոր է սույն գործի լուծման տեսանկյունից, ինչը անտեսվել է և տեղ չի գտել թե՛ ՄԻԵԴ վճռի և թե՛ միջնորդության մեջ: Փոխարենը, նշված պարբերությունը ՄԻԵԴ վճռի և միջնորդության մեջ շարադրվել է մասնակի, փոփոխված տեսքով, որի արդյունքում խեղաթյուրվել է Վճռաբեկ դատարանի ասելիքը:

Այսպես, ՄԻԵԴ վճռում (Կետ 38) և միջնորդության մեջ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ արձանագրումը շարադրվել է հետևյալ կերպ. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Առևտրաարդյունաբերական պալատի արբիտրաժային տրիբունալ արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ վավերացված պատճենը ներկայացնելու... և (դիմումատու ընկերության) հայցը չքննելու հանգամանքը, (դիմումատու ընկերությունը) զրկված չէ դատական պաշտպանությունից՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր դրույթներին համապատասխան...»:

Դատավորի ներկայացուցիչը գտել է, որ անվիճելի է, որ Վճռաբեկ դատարանի որոշման նման կերպ մեջբերումն ամբողջությամբ փոխում է (անհասկանալի է դարձնում) որոշման պատճառաբանությունների ողջ իմաստը: Նշվածը խոսում է այն մասին, որ Կառավարությունը (լիազոր ներկայացուցիչը), ոչ պատշաճ կերպով է իրականացրել իր գործառույթները և պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել ՄԻԵԴ-ին մատնացույց անելու Վճռաբեկ դատարանի որոշման իրական բովանդակությունը և իմաստը:

Եթե ՄԻԵԴ-ին հասու լիներ Վճռաբեկ դատարանի այն մտտեցումը, որ անհրաժեշտ փաստաթղթերն Արբիտրաժին «ներկայացնելուց և վերջինիս կողմից ընկերության հայցը չքննելու դեպքում, վերջինս զրկված չէ չ՛ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոններով դիմելու դատական պաշտպանության», ապա որևէ իրավունքի խախտում չէր արձանագրվի: Առավել ևս վերջինս չէր արձանագրի, որ դատարանների կողմից կասկածի տակ է դրվել անձի՝ «դատարանի իրավունքի բուն էությունը»:

բ) Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ որոշման մեջ տեղ գտած պնդումներն իրականությանը չեն համապատասխանում: Այնուամենայնիվ, մինչ դրանց անդրադառնալը, հարկ է համարել արձանագրել, որ դրանցով բարձրացված իրավական հարցադրումները և կատարված պնդումները վերաբերելի չեն սույն կարգապահական վարույթի համար և չեն կարող հիմք հանդիսանալ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, ներքոնշյալ պատճառաբանությամբ.

Տնտեսական դատարանում քննված գործը և դրա արդյունքում կայացված և օրինական ուժի մեջ մտած 16.11.2007 թվականի վճիռը վերաբերում էր Դիմումատուի՝ գումարի բռնագանձման հայցապահանջին, որի հիմքում դրվել էին ոչ միայն կողմերի միջև կնքված 3 մատակարարման պայմանագրերը, այլ նաև 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականի համաձայնագիրը:

Նշված դատական ակտով դատարանը, գնահատման առարկա դարձնելով կողմերի միջև կնքված բոլոր գործարքները, եկել է այն եզրահանգման, որ նշված գործով կողմերը 28.10.2005 թվականի համաձայնագրով «ճշտել են պարտքի գումարը և սահմանել պարտքի մարման ժամանակացույց»: Անդրադառնալով 08.11.2002 թվականի պարտավորագրին՝ դատարանը կատարել է հետևյալ արձանագրումը. «Դատարանը գտնում է, որ այդ գումարի բռնագանձման պահանջը նույնպես ենթակա է Արբիտրաժային դատարանի քննությանը, քանի որ դատաքննությանը հաստատվեց, որ «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրենը նշված գումարի չափով վարկ է ստացել բանկից, կատարելու սև մետաղի ջարդոնի մատակարարման հետ կապված ծախսերը, որը հետագայում մարվել է «Շոյց ԱԳ» ընկերության կողմից, պայմանով, որ «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՍՊԸ-ն պայմանավորված ժամկետում հետ վերադարձի պարտքը, ժամանակացույցում նշված ժամկետում, սակայն չի կատարել ստանձնած պարտավորությունը:»:

Նույն գնահատականները տրվել են և փաստերը հաստատված են համարվել նաև նշված դատական ակտի բողոքարկման արդյունքում կայացված Տնտեսական դատարանի 10.12.2007 թվականի վճռով (տես՝ վճռի 7-րդ էջը):

Վերոնշյալից հետևում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է համարվել 08.11.2002 թվականի պարտավորագրի (վարկային պարտավորության մասին) և 28.10.2005 թվականի համաձայնագրի կապը կողմերի միջև նախկինում ծագած՝ ապրանքի մատակարարման իրավափոխաբերությունների հետ և դրանցից բխող վեճերն Արբիտրաժային դատարանին ենթակա լինելը: Հետևաբար, նման պայմաններում, թիվ ԵԶԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում (որի դեպքում նույնպես հայցի հիմքում դրվել էին նշված փաստաթղթերը) չէին կարող կասկածի տակ դրվել նշված

փաստական հանգամանքները:

Նշվածից իր հերթին հետևում է, որ սույն կարգապահական վարույթի շրջանակներում չի կարող քննարկվան առարկա դարձվել այն հարցադրումը, թե արդյոք մատակարարման պայմանագրերով նախատեսված արբիտրաժային վերապահումը կիրառելի է վարկային պարտավորության նկատմամբ, թե ոչ:

Ավելին, դատավորի ներկայացուցիչը նշել է, որ եթե այդ հարցերը քննարկվան առարկա դարձվեին թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործով, ապա վստահ է, որ այս դեպքում դատավարության մյուս կողմն էր գանգատ ներկայացնելու ՄԻԵԴ, ՄԻԵԴ-ն իր հերթին արձանագրելու էր Res judicata սկզբունքի խախտում, իսկ Լիազոր մարմինն էլ միջնորդելու էր հորհրդին պատասխանատվության ենթարկել դատավորներին, այս անգամ այդ սկզբունքի խախտման համար:

Իրավական որոշակիության սկզբունքին բազմիցս անդրադարձել է ՄԻԵԴ-ը՝ արձանագրելով, որ պետությունը պատասխանատու է կազմակերպել իր դատական համակարգերն այնպես, որ խուսափի հակասող վճիռների կայացումից (տես օրինակ՝ Վրինին և այլոք ընդդեմ Ալբանիայի, 24.03.2009թ. թիվ 2141/03 վճիռ, կետ 58): Իրավական որոշակիությունը ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ վճիռները վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքով ընդգծվում է, որ որևէ կողմ իրավունք չունի պահանջելու վերջնական և պարտադիր ուժ ունեցող վճիռ վերանայում գործը պարզապես կրկին լսելու և դրա վերաբերյալ նոր որոշում կայացնելու հնարավորությունն ստանալու նպատակով (տես օրինակ, Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 52854/99, կետ 52):

Ի հակառակ դրա, սույն գործով դատավորի վարքագիծը գնահատելիս, առավելագույնը կարող է գնահատման առարկա դարձվել հետևյալ հարցադրումը. այն պայմաններում երբ արդեն իսկ կար Տևտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով հաստատվել է, որ այդ թվում 100.000 վարկի իրավահարաբերության մասով նույնպես առկա է արբիտրաժային համաձայնություն, արդյոք արբիտրաժային դատարանի նախագահի պատասխան գրությունը՝ իրավիճակ է փոխում և դրանով ապացուցվում է, որ արբիտրաժ դիմելու հնարավորությունը վերացել է:

Վերոնշյալ հարցի պատասխանը միանշանակ բացասական է, որի հիմնավորումները տրվել են վերևում:

Այնուամենայնիվ անդրադառնալով Ռոշման մեջ տեղ գտած այն պնդմանը, թե 28.10.2005 թվականի համաձայնագրով տեղի է ունեցել պարտավորության նորացում, ինչի արդյունքում դադարել է կողմերի միջև առկա սկզբնական պարտավորությունը, ապա այն ակնհայտ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ պարտավորության նորացման դեպքում մինչ այդ կողմերի միջև գոյություն ունեցող պարտավորությունը դադարում է և նրանց միջև ծագում է նոր պարտավորություն: Ի դեպ արդեն իսկ գոյություն ունեցող դրամային պարտավորության վճարման կարգի փոփոխությունը չի կարող որակվել որպես պարտավորության նորացում, քանի որ այդ դեպքում սկզբնական պարտավորությունը չի դադարում, այլ շարունակվում է փոփոխված տեսքով:

Սույն դեպքում կողմերի միջև կնքված 28.10.2005 թվականի համաձայնագրի բովանդակությունից և օրինական ուժի մեջ մտած Տևտեսական դատարանի վճիռի ուղղակիորեն հետևում է, որ այդ համաձայնագրով կողմերը պարզապես ընդունել են դրամ վճարելու պարտավորության առկայությունը (մասնավորապես փաստաթղթում ուղիղ նշված է «պարտքի ընդունում»), ճշտել են պարտքի գումարը և սահմանել պարտքի մարման ժամանակացույց:

Նշվածից հետևում է, որ վերոնշյալ համաձայնագիրն ի հավաստումն արդեն իսկ գոյություն ունեցող պարտավորության տրված պարտքային փաստաթուղթ է, որով պարտապանն ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ, և հետևաբար չի կարող գնահատվել որպես պարտավորության նորացման վերաբերյալ ապացույց (տես՝ օրինակ նույնանման փաստական հանգամանքներով Վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի թիվ ԱՎԴ3/0042/02/10 որոշումը):

Ավելին, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածը, Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ սույն դեպքում չի հիմնավորվել նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով կնքված պայմանագրի առկայությունը:

Դատավորի ներկայացուցիչն անդրադառնալով փաստերի և ապացույցների գնահատմանը, որպես կարգապահական պատասխանատվության հիմք, նշել է հետևյալը.

Ինչպես իրավացիորեն պնդել է Լիազոր մարմինն իր միջնորդությամբ, դատավորը չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել օրենքի մեկնաբանության, փաստերի և ապացույցների սխալ գնահատման համար:

Վկայակոչելով Օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասը՝ Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ տվյալ դեպքում ամբողջ միջնորդության հիմքում դրվել են հենց փաստերի և ապացույցների սխալ գնահատումը:

Այսպես, միջնորդությամբ փաստարկվում է, որ Դատավորը սխալ է գնահատել.

ա) Արբիտրաժային դատարանի նախագահի պատասխան գրությունը, որի ճիշտ գնահատման դեպքում կփաստեր, որ Դիմումատուն զրկված է արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունից:

բ) 08.11.2002 թվականի պարտավորագիրը և 28.10.2005 թվականի համաձայնագիրը, որոնք չեն պարունակել արբիտրաժային համաձայնություն:

գ) 28.10.2005 թվականի համաձայնագիրը, որն իրականում չի պարունակում որևէ հիշատակում կամ հղում կողմերի նախկինում ունեցած իր պայմանագրային հարաբերություններին և դրանով տեղի է ունեցել պարտավորության նորացում, ինչի արդյունքում դադարել է կողմերի միջև առկա սկզբնական պարտավորությունը:

դ) 08.11.2002 թվականի պարտավորագիրը, որը վերաբերել է վարկային պարտավորություններին և որևէ կապ չի ունեցել մատակարարման պայմանագրերից բխող պարտավորությունների հետ:

Վերոնշյալից հետևում է, որ Դատավորը մեղադրվում է (այն էլ ոչ իրավացիորեն) գործի փաստական հանգամանքները և ապացույցները ոչ պատշաճ գնահատելու մեջ, ինչն անթույլատրելի է:

Մեղքի առկայության մասով Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ պատասխանում և

դիրքորոշմամբ արդեն իսկ վկայակոչել է, Դատավորը որևէ իրավունքի նորմի խախտում թույլ չի տվել, ավելին՝ Լիազոր մարմնի բոլոր հիմքերը վերաբերում են գործի փաստական հանգամանքները և ապացույցները ոչ պատշաճ գնահատելուն, ինչը չի կարող հիմք հանդիսանալ Դատավորին պատասխանատվության ենթարկելու համար:

Այնուամենայնիվ, անդրադառնալով մեղքի առկայությանը և դրա դրսևորման ձևին՝ Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Որոշմամբ Լիազոր մարմինն անդրադարձ է կատարել մեղքի ձևին: Ի դեպ հատկանշական է, որ Լիազոր մարմինն ընդհանարապես չի անդրադարձել և չի էլ փորձել հիմնավորել Դատավորի/ների արարքում մեղքի առկայությունը: Ստեղծվում է տպավորություն, որ եթե կա օրենքի որևէ նորմի խախտում, ապա Դատավորի մեղքը համարվում է ապացուցված, ինչն այդպես չէ:

Ի դեպ, անձի մեղքը դա վերջինիս սուբյեկտիվ վերաբերմունք է իր կատարած արարքի ու նրա հետևանքների նկատմամբ: Հետևաբար նշված հարցին անդրադառնալիս Լիազոր մարմինը պետք է յուրաքանչյուր դատավորի մասով առանձին հիմնավորեր նախ մեղքի առկայությունը, իսկ հետո նաև մեղքի ձևը, ինչը չի արվել:

Փոխարենը Լիազոր մարմինը պարզապես արձանագրել է, որ Դատավորը «հայցադիմումը առանց քննության թողնելը ոչ իրավաչափ համարելով «անտարբեր» վերաբերմունք է ցուցաբերել Դիմումատուի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում:

Դատավորները, թեև բացահայտ չիրաժարվելով արդարադատության իրականացումից, պարզապես խուսափել են գործի քննությունն իրականացնելու իրենց պարտականությունից՝ իրենց իրավունքների պաշտպանության համար լրացուցիչ բեռ դնելով Դիմումատուի համար, այն է՝ պահանջելով վերստին դիմել Արբիտրաժային տրիբունալ այն պայմաններում, երբ նշված պահանջը արդեն իսկ իրացված է եղել Դիմումատուի կողմից:»:

Ըստ Դատավորի ներկայացուցչի՝ իրավամեկնաբանողական որևէ հնարք առկա չէ, որը թույլ կտա այս պարբերությունում գտնել հիմնավորում թե՛ ինչու է Լիազոր մարմինը կարծում, որ ենթադրյալ խախտման հարցում առկա է դատավորի մեղքը: Նշել է, որ ի դեպ, կարևոր է համարում հորհրդի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ նշված պարբերությունում Լիազոր մարմինը գտնում է, որ Դատավորները չեն հրաժարվել արդարադատություն իրականացնելու, իսկ օրինակ նույն միջնորդության 20-րդ էջում պնդում է, որ դատավորները մարմինը գտնում է, հրաժարվել են արդարադատություն իրականացնելուց: Այս ակնհայտ հակասությունը ցույց է տալիս, որ նույնիսկ Լիազոր մարմինը միջնորդություն ներկայացնելիս չի կարողանում որոշակիորեն բնութագրել ենթադրյալ խախտումը:

Դրանից հետո անդրադառնալով մեղքի ձևին՝ Լիազոր մարմինը պարզապես արձանագրել է, որ քանի որ բավարար փաստական տվյալներ չունեն պնդելու, որ դատավորներն այդ խախտումը կատարել են դիտավորությամբ, հետևաբար գտել է, որ այն կատարվել է կոպիտ անփութությամբ: Ըստ դատավորի ներկայացուցչի կրկին բախվել է այն անընդունելի մոտեցման, թե եթե առկա է խախտում ուրեմն առկա է մեղք, եթե կա մեղք ու դա դիտավորություն չէ, ուրեմն միանշանակորեն կոպիտ անփութությունն է:

Ըստ դատավորի ներկայացուցչի՝ Լիազոր մարմինը հիմնավորել է կոպիտ անփութության տեսքով մեղքի առկայությունը պարզապես կրկնելով օրենսդրական նորմի շարադրանքը, ասելով, որ «խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորները չեն գիտակցել իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էին և պարտավոր էին գիտակցել»: Այս դեպքում նույնպես չկա որևէ պատճառաբանություն, թե արդյոք նույնիսկ եթե ենթադրենք կա խախտում, օրինակ Վճռաբեկ դատարանի դատավորը, որը չէր հանդիսանում զեկուցող դատավոր, պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թե ոչ:

Ավելին, Լիազոր մարմինը մեղքի ձևը որոշելիս, իսկ հորհուրդը կարգապահական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնեն խախտման բնույթը և հետևանքները:

Այս մասով նույնպես Լիազոր մարմնի կողմից պատշաճ հիմնավորումներ չեն ներկայացվել, և, ինչպես նշվեց վերևում, տրվել են հակասական գնահատականներ: Նախ՝ Լիազոր մարմինն ասել է, որ դատավորները հրաժարվել են արդարադատություն իրականացնելուց, իսկ հետո՝ որ չնայած չեն հրաժարվել, բայց «խուսափել են գործի քննություն իրականացնելու իրենց պարտականությունից» ... լրացուցիչ բեռ դնելով Դիմումատուի համար, այն է՝ պահանջելով վերստին դիմել Արբիտրաժային տրիբունալ այն պայմաններում, երբ նշված պահանջը արդեն իսկ իրացված է եղել Դիմումատուի կողմից:»:

Այս տեսանկյունից հարց է առաջանում, եթե դատավորները չեն խուսափել արդարադատություն իրականացնելուց, այլ պարզապես լրացուցիչ բեռ են դրել կողմի վրա, ապա արդյոք այդ արարքը (եթե նույնիսկ որակի ոչ իրավաչափ) չի ընկնում Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման տիրույթում: Հատկապես այն պայմաններում, երբ անձը ոչ թե գրկվել է իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից, այլ դատարանները վերջինիս ուղղորդում էին մինչ դատարան դիմելը սպառել արբիտրաժին դիմելու հնարավորությունը:

Վերոգրյալն ամփոփելով՝ Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ Լիազոր մարմինն ընդհանրապես չի անդրադարձել և չի էլ փորձել հիմնավորել Դատավորի մոտ մեղքի առկայության հանգամանքը, իսկ մեղքի ձևին վերաբերող Լիազոր մարմնի եզրահանգումը զուրկ է որևէ իրավական և/կամ փաստական հիմնավորումից:

Թիվ S-1780/2007 և թիվ ԵՔԴ/1123/02/08 գործերի նյութերը ոչնչացված լինելու արդյունքում խախտվել է «կողմերի հավասարության» սկզբունքը:

Սույն կարգապահական գործի փաստերի համաձայն՝ նույն գործով կողմ հանդես եկող դատավոր Ա. Խառատյանը ստացել է հորհրդի աշխատակազմի Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի 13.04.2023 թվականի թիվ Ե-3071 գրությունը, որի համաձայն՝ թիվ S-1780/2007 և թիվ ԵՔԴ/1123/02/08 գործերն օրենսդրությամբ սահմանված պահպանման ժամկետն անցնելու հետևանքով ոչնչացվել են:

Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ անկախ նշված գործերի ոչնչացման իրավաչափությունից (ինչը սույն գործով դեռևս պետք է ապացուցվի) նշված հանգամանքը կոպտորեն խախտում է Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ կողմերի հավասարության սկզբունքը:

ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետևողականորեն իր

վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ» (տես օրինակ՝ Ռեզներն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, 2017, կետ 146):

Ստացվում է, որ ոչ միայն վարույթ հարուցող մարմինն է սույն գործով վարույթ հարուցել և Դատավորներին կարգապահական պատասխանատվության վերաբերյալ միջնորդություն ներկայացրել առանց գործերի բոլոր նյութերն ուսումնասիրելու, այլ նաև Դատավորներն են գրկված գործի նյութերին ծանոթանալու և իրենց իրավունքների պաշտպանությունը պատշաճ կերպով կազմակերպելու հնարավորությունից:

Նշված հիմքի վերաբերյալ նախկինում իր դիրքորոշումն է հայտնել նաև դատավոր Ա.Խառատյանը վարույթ հարուցող մարմինն հասցեագրած իր բացատրությամբ: Նշվածի վերաբերյալ Լիազոր մարմինն իր դիրքորոշումն է հայտնել միջնորդությամբ, պնդելով, թե՛

- ՄԻԵԴ-ից կոմունիկացված նյութերը, Լիազոր մարմնի գնահատմամբ բավարար են գործի փաստական հանգամանքները վեր հանելու և վարույթի պատշաճ ընթացքն ապահովելու համար,

- Դատավորի կողմից չի մատնանշվել որևէ փաստաթուղթ, որը կարող է տվյալ վարույթի լուծման համար էական նշանակություն ունենալ:

Ըստ Դատավորի ներկայացուցչի՝ նման մոտեցումն ակնհայտ անհիմն է և չի բխում կողմերի հավասարության սկզբունքից: Նախ, եթե նույնիսկ՝ վարույթ հարուցող մարմինը ծանոթ չէ գործի բոլոր նյութերին, ապա ինչպես կարող է եզրահանգում անել, որ եղածը բավարար է գործի փաստական հանգամանքները վեր հանելու համար: Նման մոտեցումը խոսում է այն մասին, որ Լիազոր մարմինը ոչ թե փորձում է վեր հանել գործի բոլոր փաստական հանգամանքները, ստանալ գործի իրական պատկերը, այլ բավարարվել իր միջնորդության հիմնավորման համար անհրաժեշտ փաստակազմով: Ավելին, ինչպես բացահայտվել է դատական նիստի ընթացքում, նույնիսկ վարույթ հարուցող մարմինը տեղյակ չէր և կարգապահական գործի նյութերում բացակայում էին 18.10.2016 թվականին ՄԻԵԴ-ում Կառավարության ներկայացուցչի կողմից ներկայացված լրացուցիչ դիտարկումները: Դրանք ոչ վարույթ հարուցելիս և ոչ էլ միջնորդություն ներկայացնելիս հաշվի չեն առնվել Լիազոր մարմնի կողմից, սակայն ինչպես հիմնավորվել է սույն դիրքորոշմամբ, կարևոր նշանակություն ունեն Կառավարության լիազոր ներկայացուցչի անգործությունը բացահայտելու և Դատավորների մեղքը ՄԻԵԴ կողմից մարդու իրավունքների խախտում արձանագրելու հարցում:

Նույն կերպ դատական գործերում կարող են լինել փաստաթղթեր, որոնցով կարող է վեր հանվեն Դատավորների կողմից խախտում թույլ տրված լինելը կամ կարգապահական պատասխանատվության հիմքերը բացառող հանգամանքներ:

Դատավորի ներկայացուցիչը նշել է, որ անհիմն է նաև պնդումն այն մասին, թե Դատավորի կողմից պետք է մատնանշվի որևէ փաստաթուղթ, որը կարող է տվյալ վարույթի լուծման համար էական նշանակություն ունենալ, քանի որ ողջամիտ չէ Դատավորներից ակնկալել, որ նրանք գործի քննության ավարտից հետո մոտ 14 կամ 15 տարի անց պետք է հիշեն գործի բոլոր նյութերը և գնահատեն դրանց կարևորությունը սույն գործի քննության համար:

Ստեղծված իրավիճակը համեմատելի է մի այնպիսի իրավիճակի հետ, երբ օրինակ վարչական գործով, որով քննվում է վարչական ակտի իրավաչափությունը, դատարան չներկայացվեն վարչական վարույթի բոլոր նյութերը՝ մյուս կողմին հորդորելով սահմանափակվել այն նյութերով, որոնք վարչական մարմինն է նպատակահարմար և/կամ հնարավոր համարել ներկայացնել դատարան:

Հիմք ընդունելով վերոգրյալը և վկայակոչելով Օրենսգրքի 154-րդ հոդվածը, 142-րդ հոդվածի 2-րդ մասը և 147-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը՝ Դատավորի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանը խնդրել է 24.05.2023 թվականի թիվ 41-Ա որոշմամբ ներկայացված միջնորդությունը մերժել կամ կարգապահական վարույթը կարճել:

#### **4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները**

**4.1.** ՄԻԵԴ-ի կողմից «Շուրց ԱԳ» ընկերությունն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում մասնավորապես, նշված է հետևյալը.

«4. Դիմումատու ընկերությունը գտնվում է Գերմանիայում՝ Էսինգենում:

5. 1990-ական թվականներից սկսած՝ դիմումատու ընկերությունը Հայաստանում գրանցված՝ «Ա. Սաֆարյան և Անդրիեյթս» ՍՊԸ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (ՍՊԸ) կանոնավոր գնել է մետաղական շարդոն:

6. 1999 թվականի փետրվարի 8-ին, 2000 թվականի ապրիլի 10-ին և 2003 թվականի ապրիլի 2-ին դիմումատու ընկերությունը և «Զեյթհեյթս» ընկերությունը (KBKS) (դիմումատու ընկերությանը պատկանող գերմանական մեկ այլ ընկերություն) ՍՊԸ-ի հետ կնքել են երեք պայմանագիր, որոնց համաձայն «Զեյթհեյթս» ընկերությունը և դիմումատու ընկերությունը պետք է ՍՊԸ-ին վճարեին կանխավճար՝ մետաղական շարդոնի դիմաց: 2003 թվականի ապրիլի 2-ի պայմանագիրը պարունակել է վեճերի կարգավորման վերաբերյալ հետևյալ կետը.

«... 7. Արբիտրաժը

7.1 Կողմերը համաձայնում են, որ սույն պայմանագրի կատարումից բխող ցանկացած վեճ և հակասություն պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով՝ փոխադարձ շահավետ լուծման հասնելու նպատակով:

7.2 Եթե հնարավոր չէ այդպիսի վեճերը լուծել հաշտությամբ, ապա այս հարցերը, բացառությամբ սովորական դատարանների իրավագործության շրջանակում գտնվող հարցերի, ուղղվում են պատասխանող երկրի Առևտրային պալատի արբիտրաժային տրիբունալին:...»

7. Պարզվում է, որ 1999 թվականի փետրվարի 8-ի և 2000 թվականի ապրիլի 10-ի պայմանագրերը պարունակել են նույնանման կետ:

8. 2002 թվականի ապրիլի 8-ին «Զեյթհեյթս» ընկերությունը և դիմումատու ընկերությունը կնքել են իրավունքների փոխանցման համաձայնագիր, որի համաձայն «Զեյթհեյթս» ընկերությունը իր պայմանագրային բոլոր իրավունքները, այդ թվում՝ ՍՊԸ-ի մասով ձեռք բերված, փոխանցել է դիմումատու ընկերությանը:

9. 2002 թվականի նոյեմբերի 8-ին դիմումատու ընկերությունը ՍՊԸ-ին տրամադրել է վարկ՝ 100 000 եվրոյի չափով, որը պետք է մարվեր մինչև 2003 թվականի հունվարի 31-ը: Վարկի

նպատակը եղել է բանկային վարկը մարելու հարցում ՄՊԸ-ին աջակցելը: Պարզվում է, որ այն չի վերադարձվել դիմումատու ընկերությանը:

10. Այնուհետև պարզվում է, որ ՄՊԸ-ն չի կատարել դիմումատու ընկերության vis-à-vis (նկատմամբ) իր պայմանագրային պարտավորություններն այն մասով, որ մատակարարել է ավելի քիչ մետաղական ջարդոն, քան եղել են կանխավճարները, որոնք այն արդեն ստացել էր:

11. 2005 թվականի հոկտեմբերի 28-ին Տնտեսական ընկերության և ՄՊԸ-ի ներկայացուցիչները հաշվարկել են այդ օրվա դրությամբ նրանց ունեցած դրամական պարտավորությունները, և պարզվել է, որ ՄՊԸ-ն դիմումատու ընկերությանը պարտք է 1 213 824 ԱՄՆ դոլար: Բանակցությունների արդյունքում դիմումատու ընկերությունը համաձայնել է 613 824 ԱՄՆ դոլարի չափով ազատել պարտքից՝ պայմանով, որ ՄՊԸ-ն մարի պարտքի մնացած մասը, մասնավորապես՝ 600 000 ԱՄՆ դոլարը՝ համաձայն պարտքի վճարման ժամանակացույցի, որը սահմանվել էր երկու ընկերությունների տնօրենների կողմից նույն օրը ստորագրված առանձին համաձայնագրով: Նշված համաձայնագրի համաձայն՝ ՄՊԸ-ն պարտավորվել էր պարտքը վճարել հինգ մասնաբաժիններով՝ առաջին վճարումը կատարելով մինչև 2005 թվականի դեկտեմբերի 15-ը: Եթե ՄՊԸ-ն չկատարեր վճարման ժամանակացույցով սահմանված իր պարտավորությունները, ապա այն պարտավոր էր անմիջապես վճարել ամբողջ պարտքը, իսկ վճարման հետ կապված ցանկացած վեճ պետք է լուծվեր դատական կարգով:

12. Նույն օրը կողմերը կնքել են մեկ այլ համաձայնագիր, որով սահմանվել է 100 000 եվրոյի չափով վարկի և 10 000 եվրոյի չափով ապառքի մասով վճարման ժամանակացույցը: Դրանում նաև նշվել է, որ վճարման ժամանակացույցը չպահպանելու դեպքում կվճարվի լրացուցիչ 6%: (...)

14. 2007 թվականի հունվարի 15-ին դիմումատու ընկերությունը ՄՊԸ-ի դեմ հայց է ներկայացրել Տնտեսական դատարան՝ պահանջելով սկզբնական 1 213 824 ԱՄՆ դոլար պարտքից վերադարձնել 10 000 ԱՄՆ դոլարը: (...)

19. 2007 թվականի նոյեմբերի 16-ին Տնտեսական դատարանը բավարարել է պահանջը և որոշել դիմումատու ընկերության հայցը և ՄՊԸ-ի կողմից ներկայացված հակընդդեմ հայցը թողնել առանց քննության: Այդ նպատակով այն հղում է կատարել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետին և գտել, որ վեճի կարգավորման հարցը գտնվում է Արբիտրաժային տրիբունալի իրավագործության շրջանակում: (...)

21. 2007 թվականի դեկտեմբերի 10-ին Տնտեսական դատարանի երեք դատավորից բաղկացած կազմը մերժել է դիմումատու ընկերության կողմից ներկայացված բողոքը: Որոշման մեջ նշվել է, որ, inter alia, պարտքի և վարկի վերաբերյալ հայցերը եղել են փոխկապակցված և բխել են մետաղական ջարդոնի մատակարարման վերաբերյալ պայմանագրի վրա հիմնված՝ կողմերի միջև առևտրային հարաբերություններից:

22. 2008 թվականի հուլիսի 23-ին դիմումատու ընկերության ներկայացուցիչն Արբիտրաժային տրիբունալի նախագահին ուղարկել է տեղեկատվություն ստանալու հարցում հարցնելով, թե արդյոք կողմերի միջև կնքված պայմանագրերում պարունակվող՝ արբիտրաժի վերաբերյալ կետը բավարար էր, որպեսզի տրիբունալը հայցն ընդուներ քննության, և արդյոք Տնտեսական դատարանի՝ հայցն առանց քննության թողնելու որոշումներն այն հիմքով, որ վեճերի կարգավորումը գտնվում էր առևտրային արբիտրաժային դատարանի իրավագործության շրջանակում, ապահովում են բավարար հիմքեր՝ հայցն ընդունելու համար: Արբիտրաժի վերաբերյալ դրույթներ պարունակող պայմանագրերի քաղվածքների հայերեն թարգմանությունները և Տնտեսական դատարանի երկու որոշումների պատճենները կցվել են գրությանը:

23. 2008 թվականի օգոստոսի 1-ին Արբիտրաժային տրիբունալի նախագահը պատասխանել է, որ այն հարցը, թե արդյոք կողմերի միջև կնքված պայմանագրերով նախատեսված արբիտրաժի վերաբերյալ կետը բավարար էր հայցը քննության ընդունելու համար, կարող էր որոշվել միայն հայցը ներկայացվելուց հետո: (...)

25. 2008 թվականի սեպտեմբերի 17-ին դիմումատու ընկերությունը հայց է ներկայացրել Արբիտրաժային տրիբունալի պահանջելով վճարել վարկի և տոկոսների գումարը՝ 116 600 եվրո: 2002 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ ՄՊԸ-ին 100 000 եվրոյի չափով վարկ տրամադրելու վերաբերյալ մուրհակի պատճենը՝ այլ փաստաթղթերի հետ, կցվել է հայցին: Բացի այդ՝ հայցում նշվել է, որ Տնտեսական դատարանի որոշումները և արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող պայմանագրերի քաղվածքները 2008 թվականի հուլիսի 23-ի գրության հետ արդեն ներկայացվել են Արբիտրաժային տրիբունալի նախագահին:

26. 2008 թվականի հոկտեմբերի 7-ին Արբիտրաժային տրիբունալի նախագահը դիմումատու ընկերությանը տեղեկացրել է, որ արբիտրաժային վարույթ սկսելու իր պահանջը չի բավարարվելու: Այդ գրության համապատասխան մասերը շարադրվել են հետևյալ բովանդակությամբ. «... 2002 թվականի նոյեմբերի 8-ի մուրհակը և 2005 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնագիրը, որոնց վրա հիմնված է ձեր հայցը, չեն պարունակում արբիտրաժի վերաբերյալ կետ, և ավելին, կողմերը չեն կնքել վերոնշյալ մուրհակի և համաձայնագրի կատարումից բխող վեճերը կարգավորման համար Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն ներկայացնելու վերաբերյալ որևէ համաձայնագիր: Հետևաբար, կողմերի միջև արբիտրաժային համաձայնության բացակայության պարագայում [Արբիտրաժային տրիբունալը] չի կարող արբիտրաժային վարույթ սկսել:»:

27. Հաշվի առնելով այն փաստը, որ Տնտեսական դատարանն այդ ժամանակ լուծարվել էր, 2008 թվականի հոկտեմբերի 17-ին դիմումատու ընկերությունը հայց է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան՝ ՄՊԸ-ից պահանջելով վերադարձնել 116 600 եվրո, որը կազմում էր վարկի և տոկոսների գումարը: (...)

30. 2009 թվականի մարտի 13-ին Վարչական շրջանի դատարանը գործն ընդունել է քննության: (...)

33. 2009 թվականի հունիսի 16-ին Վարչական շրջանի դատարանը որոշել է դիմումատու ընկերության կողմից ներկայացված հայցը թողնել առանց քննության՝ գտնելով, որ 2008 թվականի հոկտեմբերի 7-ի գրության մեջ նշված՝ արբիտրաժային վարույթ սկսելու մերժմամբ չի հիմնավորվել այն փաստը, որ Արբիտրաժային տրիբունալը դիմելու որևէ հնարավորություն չկա: Այնուհետև Վարչական շրջանի դատարանը հղում է կատարել Տնտեսական դատարանի կողմից նախկինում արված եզրահանգումներին՝ եզրակացնելու համար, որ հայցը պետք է թողնել առանց քննության: (...)

36. 2009 թվականի հուլիսի 21-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանն անփոփոխ է

թողել 2009 թվականի հունիսի 16-ի որոշումը: Նման որոշում կայացնելով՝ այն նշել է, մասնավորապես, որ դիմումատու ընկերությունն արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող պայմանագրերի համապատասխան քաղվածքները չի ներկայացրել Արբիտրաժային տրիբունալ, ինչի հետևանքով դրա հայցը չի ընդունվել: (...)

38. 2009 թվականի սեպտեմբերի 23-ին Վճռաբեկ դատարանը դիմումատու ընկերության վճռաբեկ բողոքը հայտարարել է անընդունելի: Նման որոշում կայացնելիս այն նշել է՝ «...ինչ վերաբերում է [դիմումատու ընկերության] կողմից ներկայացված հայցը չընդունելու վերաբերյալ Առևտրային պալատի արբիտրաժային տրիբունալի նախագահի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի գրությանը, ապա այն հիմնված է եղել այն հիմքերի վրա, որ [դիմումատու ընկերությունը] չի ներկայացրել արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ վավերացված պատճենը, ինչպես սահմանված է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով և [դրանում պարունակվող դրույթներով], ինչի բացակայության դեպքում չի կարող սկսվել արբիտրաժային վարույթ»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Առևտրաարդյունաբերական պալատի արբիտրաժային տրիբունալ արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ վավերացված պատճենը չներկայացնելու ... և [դիմումատու ընկերության] հայցը չընդունելու հանգամանքը, [դիմումատու ընկերությունը] զրկված չէ դատական պաշտպանությունից՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր դրույթներին համապատասխան...»:

**4.2.** Անտրադառնալով ներկայացված գանգատի ընդունելիության հարցին և դրա վերաբերյալ Կառավարության ներկայացված փաստարկներին, ՄԻԵԴ-ն արձանագրել է.

«(...) 51. Դատարանը նշում է, որ 2008 թվականի սեպտեմբերի 17-ին դիմումատու ընկերությունն Արբիտրաժային տրիբունալ է ներկայացրել 116 600 եվրո գումարի հայց՝ պահանջելով վերադարձնել վարկի գումարը: 2002 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ ՍԴԸ-ին 100 000 եվրոյի չափով վարկ տրամադրելու վերաբերյալ մուրհակի պատճենը, 2005 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնագիրը և այլ փաստաթղթեր կցվել են հայցին: Բացի այդ՝ հայցում նշվել է, որ Տնտեսական դատարանի որոշումները և արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող պայմանագրերի քաղվածքներն արդեն ներկայացվել են Արբիտրաժային տրիբունալի նախագահին (տե՛ս վերևում 25-րդ պարբերությունը):

52. Այս տեղեկությունների հիման վրա Դատարանի համար պարզ է դառնում այն փաստը, որ դիմումատու ընկերությունն Արբիտրաժային տրիբունալ է ներկայացրել այն երկու փաստաթղթերը, որոնց վրա հիմնված է եղել 116 600 եվրոյի իր հայցը, ինչպես նաև արբիտրաժի վերաբերյալ կետ պարունակող երեք պայմանագրերը: Հետևաբար չի կարելի ասել, որ դիմումատու ընկերությունը, չներկայացնելով տվյալ փաստաթղթերը, չի սպառել իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցները: Այսպիսով դիմումատու ընկերության գանգատն անընդունելի չէ այս հիմքով, և հետևաբար Կառավարության նախնական առարկությունը պետք է մերժվի: (...):»

**4.3.** Միաժամանակ, վճռի շրջանակներում ՄԻԵԴ-ը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) 64. Դատարանը կրկին նշում է, որ իրավագործության հետ կապված ցանկացած հարց լուծելու խնդիրը նախևառաջ ազգային իշխանությունների խնդիրն է: Սույն գործում դիմումատու ընկերության դատարանի մատչելիության իրավունքը մերժվել է ներպետական բոլոր այն դատարաններում և տրիբունալներում, որոնց դիմումատու ընկերությունը ներկայացրել է իր հայցը: Չնայած Տնտեսական դատարանի սկզբնական որոշումն այն մասին, որ Արբիտրաժային տրիբունալն է իրավասու եղել, կարող էր շատ լավ հիմնավորվել, Արբիտրաժային տրիբունալի և Վարչական շրջանի դատարանի հետագա որոշումները, որոնցով մերժվել է դիմումատու ընկերության՝ դատարանի մատչելիության իրավունքը, եղել են ակնհայտ անհամաչափ: Գործն ամբողջությամբ քննելիս գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չի եղել համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

65. Դատարանը գտնում է, որ հատկապես բարդ է ընդունել Վարչական շրջանի դատարանի հիմնավորումը: Նախ, դիմումատու ընկերության՝ Վարչական շրջանի դատարան ներկայացված հայցը վերաբերել է միայն վարկին և տոկոսներին, որոնք հիմնված են եղել 2002 թվականի նոյեմբերի 8-ի մուրհակի և 2005 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնագրի վրա, որոնցից ոչ մեկ չի պարունակել արբիտրաժի վերաբերյալ կետ: Եթե Արբիտրաժային տրիբունալն արբիտրաժի վերաբերյալ կետի բացակայության պատճառով իրավասու չի եղել քննել այդ նույն հայցը, ապա Վարչական շրջանի դատարանը պետք է որ այդպիսի իրավասություն ունենար: Ավելին, քանի որ դիմումատու ընկերության հայցն այնպես էր առնչվում իր կողմից Տնտեսական դատարան ներկայացված մյուս հայցերի հետ, այն առնչվում էր միայն վարկի հետ կապված պայմանավորվածություններին, Վարչական շրջանի դատարանը դիմումատու ընկերության հայցն առանց քննության թողնելիս դժվար թե հիմնվեր Տնտեսական դատարանի նույն հիմնավորման վրա: Դժվար է հասկանալ, թե ինչպես դիմումատու ընկերության՝ միայն վարկին վերաբերող հայցը կարող էր դիտարկվել որպես բոլորը միասին վերցված՝ 1999 թվականի փետրվարի 8-ի, 2000 թվականի ապրիլի 10-ի և 2003 թվականի ապրիլի 2-ի պայմանագրերի մաս այն դեպքում, երբ Վարչական շրջանի դատարանում որևէ ձևով նույնիսկ հղում չի կատարվել վերոնշյալ պայմանագրերին: Ավելին, հարկ է նշել, որ Վարչական շրջանի դատարանը դիմումատու ընկերության հայցը թողել է առանց քննության գործն արդեն քննության ընդունելուց հետո (տե՛ս վերևում 31-րդ պարբերությունը): Դատարանը նաև գտնում է, որ բարդ է ընդունել, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը և Վճռաբեկ դատարանը իրենց որոշումներում շարունակել են մեկնաբանել, թե ինչպես է Արբիտրաժային տրիբունալը, որն ամբողջությամբ անկախ մարմին է, մերժել դիմումատու ընկերության հայցը:

66. Վերոնշյալ նկատառումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ ներպետական դատարանների կողմից գործը չքննելը դիմումատու ընկերության համար եղել է դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, ինչը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդել և չի եղել համաչափ: Դիմումատու ընկերության հայցը թողնելով առանց քննության՝ ներպետական դատարանները կասկածի տակ են դրել դիմումատու ընկերության՝ դատարանի իրավունքի բուն եռությունը, որը երաշխավորվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով:

67. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: (...):»

**4.4.** Թիվ ԵԶԴ/1123/02/08 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի (ներկայումս Սևանկության դատարանի դատավոր) կողմից 16.06.2009

թվականին կայացվել է «Հայցն առանց քննության թողնելու» մասին որոշում, որով, մասնավորապես, արձանագրել է հետևյալը. «(...) Գործի ուսումնասիրությամբ պարզվեց, որ քննվող գումարային պահանջը, որի հիմքում ընկած է 110.000 եվրո պարտք լինելու 28.10.2005թ. կողմերի միջև ստորագրված համաձայնագիրը, քննության առարկա է հանդիսացել նաև ՀՀ տնտեսական դատարանում և դրա վերաբերյալ ՀՀ տնտեսական դատարանն իր դիրքորոշումն է հայտնել 16.11.2007թ. որոշմամբ, որն էլ նույն դատարանի 10.12.2007թ. որոշմամբ մնացել է ուժի մեջ: Հետևաբար, առկա է ուժի մեջ մտած և չբեկանված դատական ակտ, համաձայն որի, ի թիվս այլ պահանջների առանց քննության է թողնվել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանցված «Շույց ԱԳ» ընկերության պահանջն ընդդեմ «Ա. Սաֆարյան և ընկերներ» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 116.100.00 եվրո բռնագանձելու մասին:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առևտրային արբիտրաժի նախագահը 07.10.2008թ. թիվ 03/08 գրությամբ մերժել է Արբիտրաժի կողմից արբիտրաժային վարույթ սկսելը, ապա դատարանը գտնում է, որ այդ փաստը չի ապացուցում այն հանգամանքը, որ վերացել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 3-րդ մասի արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը, քանի որ արբիտրաժային դատարանը հիմնավորել է, որ «08.11.2002թ. պարտավորագիրը և 28.10.2005թ. համաձայնագիրը, որոնց վրա հիմնվում է ներկայացված պահանջը չեն պարունակում արբիտրաժային վերապահում, ինչպես նաև բացակայում է կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնագիր վերոհիշյալ պարտավորագրից և համաձայնագրից բխող վեճերը Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության քննությանը հանձնելու վերաբերյալ:

Մինչդեռ, ՀՀ տնտեսական դատարանի 16.11.2007թ. որոշման հետագոտումից պարզվեց, որ արբիտրաժային համաձայնությունը կողմերի միջև ծագել է «Շույց ԱԳ» ընկերության և «Ա. Սաֆարյան և ընկերներ» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 02.04.2003թ. կնքված սև մետաղի ջարդոնի մատակարարման թիվ SCH/1 պայմանագրով:

Ուստի, պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի պահանջներից և ենթակա է բավարարման: (...):»:

**4.5.** Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի կողմից 21.07.2009 թվականին կայացվել է վերը նշված որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում, որով Ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2009 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ և արձանագրվել է հետևյալը. «(...) Արբիտրաժին ներկայացված «Պարտավորագրով» և ոչ էլ՝ «Համաձայնագրով» նախատեսված չէ արբիտրաժային վերապահում, ինչպես նաև դրանցում բացակայում է կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնագիր՝ այդ «Պարտավորագրից» և «Համաձայնագրից» բխող վեճերը Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության քննությանը հանձնելու վերաբերյալ, որն էլ հիմք ընդունելով, «Շույց ԱԳ» ընկերության ներկայացուցչին մերժվել է արբիտրաժային վարույթ հարուցել:

Մինչդեռ, արբիտրաժային դատարանին պետք է ներկայացվեին արբիտրաժային վերապահում նախատեսող ստորև թվարկված պայմանագրերը, որոնք հայցվորի կողմից չեն ներկայացվել՝

1. «KBKS» գերմանական ընկերության՝ որպես գնորդի և «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊ ընկերության՝ որպես վաճառողի, միջև կնքված սև մետաղի ջարդոնի առուվաճառքի 08.02.1999 թվականի թիվ SCH-3, 10.04.2000 թվականի թիվ SCH-4 պայմանագրերը, (...)

2. «KBKS» ընկերության՝ որպես ցեղենտի, և «Շույց ԱԳ» ընկերության՝ որպես ցեսիոների միջև 08.04.2002 թվականին կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝ ցեղենտը զիջում է, իսկ ցեսիոներն ընդունում է երրորդ անձանց, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊ ընկերության նկատմամբ ցեղենտին պատկանող պահանջի բոլոր իրավունքները: (...)

Հայցն առանց քննության թողնելու մասին որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանը եզրահանգման է եկել, որ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 3-րդ կետի կարգով՝ հայցն առանց քննության թողնելու հիմքերը, ինչի մասին էլ կայացրել է որոշում:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ճիշտ որոշում, հետևաբար, վերաքննիչ բողոքը ենթակա մերժման անհիմն լինելու պատճառաբանությամբ, ինչը հիմք է բողոքարկվող ակտն անփոփոխ թողնելու համար»:

**4.6.** Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 23.09.2009 թվականին, նախագահությամբ դատավոր Ս. Սարգսյանի, մասնակցությամբ դատավորներ՝ Վ. Աբեյանի, Ա. Անտոնյանի, Վ. Ավանեսյանի, Ա. Բարսեղյանի, Ս. Դրմեյանի, Տ. Պետրոսյանի, քննարկելով ըստ հայցի «Շույց ԱԳ» ընկերության ընդդեմ «Ա. Սաֆարյան և ընկերներ» համատեղ ձեռնարկության՝ 116 000 եվրո բռնագանձելու պահանջի մասին Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2009 թվականի որոշման դեմ Դիմումատու ընկերության բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, որոշել է վճռաբեկ բողոքը վերադարձնել՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին չհամապատասխանելու հիմքով:

Վճռաբեկ դատարանն իր 23.09.2009 թվականի որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է. «(...) վեճն արբիտրաժի քննության ենթակա լինելու վերաբերյալ գրավոր համաձայնության բևեռիակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը («ԿԲԿՍ» ընկերության և Կազմակերպության միջև 08.02.1999 թվականին և 10.04.2000 թվականին կնքված պայմանագրերի 7.1 և 7.2 կետեր) ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից գործող առևտրային արբիտրաժին ներկայացնելուց և վերջինիս կողմից Ընկերության հայցը չքննելու դեպքում, Ընկերությունը զրկված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոններով դիմելու դատական պաշտպանության»:

**4.7.** «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ տնօրեն Արա Սաֆարյանի կողմից 08.11.2002 թվականին ստորագրված պարտավորագրով նշված է. «Ես՝ «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ տնօրեն Արա Սաֆարյանս հաստատում եմ, որ «SCHOLZ AG» կազմակերպության ներկայացուցչի՝ Ֆրանկ Շտիլը փոխանցել է «Ա. Սաֆարյան և ընկերներ» ՀՀ ՍՊԸ հաշվարկային հաշվի վրա 100 000 եվրո «Կոնվերս Բանկ» ՓԲԸ վարկը մարելու համար: Վերոհիշյալ գումարը համարվում է մեր պարտք «SCHOLZ AG» ընկերությանը և պետք է

փոխանցվի ընկերության հաշվին մինչև 31 հունվարի 2003թ.:

(...) Այս պարտավորագրի խախտման դեպքում առաջանում է տույժ՝ ընդհանուր գումարի 2%-ի չափով: Փոխանցումները կարող են կատարվել մաս առ մաս: (...):»:

**4.8.** Դիմումատու ընկերության («SCHOLZ AG») և «Ա. Սաֆարյան և Քոմիքնի» ՀՀ ՍՊԸ միջև 28.10.2005 թվականին կնքված համաձայնագրով սահմանվել է կողմի ունեցած ընդհանուր պարտավորության չափը՝ 600 000 ԱՄՆ դոլար և ամրագրվել պարտքի՝ «Ա. Սաֆարյան և Քոմիքնի» ՀՀ ՍՊԸ տնօրենի կողմից վճարման ժամանակացույցը: Համաձայնագրով նշվել է, որ «(...) Սույնով բերված վճարման պարտականությունները պարոն Արա Սաֆարյանի կողմից չկատարվելու դեպքում, 26.01.2004թ. ընդհանուր պահանջները մտում են կիրառելի և վճարումը վերաբերյալ դատական հայցով բողոք կներկայացվի դատարան: (...)»:

28.10.2005 թվականին կնքված մեկ այլ համաձայնագրով նույն կողմերի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն լրացուցիչ 15.06.2003 թվականին տրամադրված 110 000 Եվրո վարկի գումարի վճարման ժամանակացույցի վերաբերյալ: Համաձայնագրով նշվել է, որ «(...) Եթե առաջին մարման մասը մինչև 28.02.2006 թվականը չվճարվի անմիջապես դատական բողոք կներկայացվի և այդ պահի դրությամբ արժույթավորված պահանջը կավելանա 6,0 %-ով (...):»:

**4.9.** Բարձրագույն դատական խորհրդի 14.06.2023 թվականի թիվ ԲԴԽ-58-Ո-193 որոշմամբ Սևանկուլայան դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի լիազորությունները վերջինիս կողմից 13.06.2023 թվականին ներկայացված հրաժարականի դիմում հիման վրա 14.06.2023 թվականից համարվել են դադարած:

## **5. Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում եական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները**

Հաշվի առնելով Լիազոր մարմնի կողմից միջնորդությունում բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորների կողմից ներկայացված պատասխանները՝ խորհուրդը Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար եական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

**5.1.** արդյո՞ք թիվ ԵԲԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ խառատյանի կողմից 21.07.2009 թվականին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի 23.09.2009 թվականին կայացված որոշումներով թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, իսկ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի կողմից 23.09.2009 թվականին կայացված որոշմամբ նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների ենթադրյալ խախտումներ,

**5.2.** արդյո՞ք թիվ ԵԲԴ/1123/02/08 քաղաքացիական գործով Դատավորների կողմից թույլ տրված ենթադրյալ խախտումն Օրենսգրքի իմաստով կարող է գնահատվել, որպես եական կարգապահական խախտում, որն ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության հանրային շահերով:

## **6. խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննարկելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի միջնորդությունը՝ Սևանկուլայան դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանին, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայատի դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Սևանկուլայան դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը ենթակա է կարճժամանակ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհուրդը կարծում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: (...)

Օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե նա հրաժարական է ներկայացնում:

Քննարկվող պարագայում Սևանկուլայան դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի կողմից 13.06.2023 թվականին ներկայացվել է հրաժարականի դիմում, որի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի 14.06.2023 թվականի թիվ ԲԴԽ-58-Ո-193 որոշմամբ Սևանկուլայան դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի լիազորությունները 14.06.2023 թվականից դադարել են, ուստի խորհուրդը գտնում է, որ առկա է Օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճելու հիմքը:

Քննարկելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայատի դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի հաղորդումը, ինչպես

*Նաև վերջինիս ներկայացուցիչների դիրքորոշումները, Դատավորների և Նրանց ներկայացուցիչների դիրքորոշումները, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ տրոհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.*

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի, դատարանի և դատական իշխանության անկախության վերաբերյալ իրավական կարգավորումներն ամրագրված են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով, ընդ որում դատավորի անկախության վերաբերյալ իրավական կարգավորումների ընդհանուր իրավական բովանդակության եռությունը կայանում է նրանում, որ դատավորի անկախությունը հանդիսանում է ոչ միայն նրա իրավունքը, այլ հասարակության՝ օրինական և հիմնավորված արդարադատության իրականացման ապահովման երաշխիքը:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ դատավորի անկախության երաշխիքներն ապահովող գործիքակազմում կարևոր տեղ է զբաղեցնում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Խորհուրդն իր սահմանադրական առաքելության հաշվառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպիսի չվտանգի դատավորի և դատարանի անկախության սահմանադրական պահանջը:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Եական կարգապահական խախտում է՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակագրկման:

Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում՝ առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավաճարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Խորհուրդը գտնում է, որ Օրենսգրքի հիշյալ հոդվածների շարադրանքից ակնհայտ է, որ ՄԻԵԴ որոշման հիման վրա հարուցված կարգապահական վարույթն ուղղակիորեն չի ենթադրում, որ կատարված արարքն իր բնույթով Եական կարգապահական խախտում է:

Սույն համատեքստում Խորհուրդը կարևոր է համարում անդրադառնալ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերին, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը տարանջատել է «ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտում» և «մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում» հասկացությունները:

Ակնհայտ է, որ օրենսդրի կողմից կոնկրետ բառերի կիրառումը երբևէ ինքնանպատակ չէ, առավել ևս, երբ նորմի կարգավորման առարկան վերաբերում է այնպիսի առանցքային ինստիտուտի, ինչպիսին դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: «Հիմնարար» բառը գնահատողական տերմին է, որպիսի ձևակերպումների կիրառումն ընդունելի պրակտիկա է մի շարք եվրոպական երկրներում, քանի որ որոշակի դեպքերում դրանց կիրառումը անխուսափելի է: Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ օրենսդրի կողմից նմանատիպ ձևակերպումների կիրառման դեպքում կարևոր նշանակություն ունի, թե կոնկրետ որ մարմինն է լիազորված այդ ձևակերպումների մեկնաբանության և կիրառման համար: Հայաստանում այդ լիազորությունը վերապահված է Խորհրդին, որն ունի բավարար ինստիտուցիոնալ անկախություն և ապահովում է արդար դատաքննության հիմնարար երաշխիքներ<sup>2</sup>:

Այսպիսով, օրենսդիրը, կիրառելով «ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների **հիմնարար խախտում**» և «մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների **խախտում**» ձևակերպումները, Խորհրդին տվել է դատավորի կողմից կատարված նյութական կամ դատավարական նորմի՝ մարդու իրավունքների հիմնարար խախտման հանգեցնելու և դրա արդյունքում Եական կարգապահական խախտում հանդիսանալու հարցի վերաբերյալ մեկնաբանություններ անելու և չափանիշներ սահմանելու լիազորություն: **Մասնավորապես, կարևոր է ընդգծել, որ «հիմնարար խախտում» եզրույթը պետք է տարանջատել «հիմնարար իրավունքի խախտում» եզրույթից**, քանի որ առանձին դեպքերում անհրաժեշտ է գնահատել թե արդյոք հիմնարար իրավունքի խախտումը հանգեցրել է հիմնարար խախտման, թե ոչ: Հակառակ պարագայում, դիցուք, դատավարական նորմի խախտումը թեև կարող է դիտարկվել արդար դատաքննության՝

որպես հիմնարար իրավունքի խախտման դրսևորում, սակայն իր բնույթով չհանդիսանա հիմնարար խախտում և նշված խախտման դեպքում լիազորությունների դադարեցում կարգապահական տույժի կիրառումն անհամաչափ գործիք կլինի հանրային շահի և դատական իշխանության հեղինակության պաշտպանության համար: Հետևաբար, նկատի ունենալով խորհրդի սահմանադրական առաքելությունը, յուրաքանչյուր դեպքում խորհուրդը պարտավոր է գնահատել խախտման բնույթը՝ հստակեցնելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ապահովելով Օրենսգրքի նորմերի որոշակի կիրառելիությունը և պրակտիկայի կանխատեսելիությունը:

Հակառակ մեկնաբանման դեպքում վարույթ հարուցող մարմնի կողմից նման հիմքով վարույթի հարուցումն ինքնաբերաբար հանգեցնելու է արարքի որակման, որն էլ անխուսափելիորեն հանդիսանալու է լիազորությունների դադարեցում կարգապահական տույժի կիրառման հիմք և խորհրդի՝ Սահմանադրությամբ ամրագրված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության գործարկումը ստանալու է ձևական բնույթ: Նման իրավիճակում խորհրդի դերը կսահմանափակվի միայն դատավորի կողմից դրսևորած մեղքի ձևի ուսումնասիրությամբ:

Վլեյին, վերոնշյալն ամրագրվել է նաև ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի հիմնավորումներում, իսկ հետագայում վերահաստատվել նաև ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների հիմնավորումներով, որտեղ բացահայտվում է նաև օրենսդրի կամքը: Մասնավորապես, ըստ հիշյալ փոփոխությունների հիմնավորումների համապատասխանաբար նշվել է՝

- «(...) Նման մոտեցում ամրագրվել է այն նպատակով, որպեսզի մի կողմից դատավորը պատասխանատվության չենթարկվի պարզապես փաստերի ու ապացույցների իր գնահատման համար, մյուս կողմից՝ գնահատման ենթարկվի դատավորի վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ՝ որպես բարեվարքության կարևոր ցուցանիշ (...):»

- «(...) Նախ, ինչպես բխում է Դատական օրենսգրքի կարգավորումներից կարգապահական պատասխանատվության հիմքը ոչ թե ինքնին ՄԻԵԴ վճիռն է, այլ դրանով բացահայտված մարդու իրավունքների հիմնարար խախտումը, որը ենթակա է գնահատման որպես դատարան գործող խորհրդի կողմից (...):»:

Հետևաբար, կասկածից վեր է, որ ՄԻԵԴ որոշման հիման վրա հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում խորհուրդը, յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, պետք է գնահատի թույլ տրված ենթադրյալ կարգապահական խախտման բնույթը:

Խորհուրդն արձանագրում է, որ Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության հիման վրա Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության է առնում Օրենսգրքի 152-րդ հոդվածում ամրագրված դրույթի պահանջների համապատասխան, այն է՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում»:

Այդ կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի իրավական հետազոտման առարկան սահմանափակվում է միջնորդությամբ ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել նաև, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմինն է կրում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունն ապացուցելու պարտականությունը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն բավարար ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար կլինեն Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար և կհաստատեն վերջինիս մեղքը:

Քննարկվող պարագայում համաձայն Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի կողմից ներկայացված միջնորդության՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի կողմից թիվ ԵՁԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում թույլ են տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, իսկ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի կողմից վերոնշյալ գործով նաև թույլ են տրվել՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտումներ:

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 31-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և

*հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. «Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարանի դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ այդ իրավունքը կլիներ անիրական, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլիներ, եթե 6-րդ հոդվածի 1-ին մասը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ օրինականության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (տես Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (*Burdov v. Russia*), թիվ 59498/00, պարբ. 34, ECHR 2002-III):»:

Խորհուրդն իր նախկին որոշումներով արձանագրել է, որ «(...) սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, որն իրականացվում է դատարանի կողմից օբյեկտիվ իրավունքի կիրառմամբ, իր հանրային իրավական ընկալման տիրույթում կոչված է ապահովելու գործող իրավակարգի անշեղ կենսագործումը: Այդ առումով իրավունքի յուրաքանչյուր խախտում այս կամ այն կերպ բացասաբար է անդրադառնում իրավակարգի բնականոն գործելու վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ կախված իրավախախտման հետևանքից, այն տարաբնույթ անդրադարձ կարող է ունենալ պետության իրավակարգի գործառնական խնդիրների լուծման վրա: Այն բոլոր դեպքերում, երբ իրավունքի խախտումն առաջ չի բերում որևէ սուբյեկտիվ իրավունքից զրկում կամ դրա սահմանափակում, ինչպես նաև իրավունքի սուբյեկտի մոտ չի առաջացնում օրենքով չնախատեսված պարտականություններ կամ այդպիսիք առաջանալու հնարավորություն, ապա իրավունքի նման խախտումը զանցակազմի նյութական բաղադրիչի առկայության պայմաններում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող է որակվել որպես նվազ կարևորություն ունեցող և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չհանդիսացող, թեկուզև այն առերևույթ պարունակել է կարգապահական խախտում համարվող արարքի հատկանիշներ: (...)»<sup>3</sup>:

Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է նաև, որ ՄԻԵԴ-ը «Շույց ԿԳ» ընկերության ընդդեմ Հայաստանի (զանգատ թիվ 16528/10) գործով 24.01.2019 թվականի վճռով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, հետևաբար Խորհուրդը Դատավորների արարքների կանոնադրական վերոնշյալ վճռով հաստատված հանգամանքների շրջանակներում:

Սույն կարգապահական վարույթի փաստական հանգամանքների և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Դատավորների կողմից թույլ տրված խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերը նշված իրավանորմերի տրամաբանությունից բխում է, որ օրենսդրի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի տրամաբան խախտման վարքագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտավորություն և կոպիտ անփութություն:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության տեսանկյունից մեղքը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Այսպես, տվյալ ժամանակահատվածում գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Դատարանի դիմելու իրավունքը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ «Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար»:

Նույն օրենսգրքի «Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմքերը» վերտառությամբ 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ կողմերից մեկը հողում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննության հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարանի դիմելու հնարավորությունը չի վերացել»:

Վերոշարադրյալ իրավական վերլուծությունների յույսի ներքո անդրադառնալով սույն միջնորդության հիմքերին և հիմնավորումներին՝ Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Այսպես, Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ինչպես վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից, այնպես էլ «Շույց ԿԳ» ընկերությունն ընդդեմ Հայաստանի գործով թիվ 16528/10 զանգատի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թիվ ԵԶԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում 21.07.2009 թվականին Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից Վարչական շրջանի դատարանի 16.06.2009 թվականի «Շույց ԿԳ» ընկերության հայցն առանց քննության թողնելու մասին որոշումն անփութիս թողնելու, այնպես էլ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2009 թվականին կայացրած

որոշման հիման վրա ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձնելու արդյունքում ներպետական բոլոր դատարաններում մերժվել է Դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքը, ինչը վերջինիս համար առաջացրել է նաև նյութական բնույթի անբարենպաստ հետևանքներ՝ այն պարագայում, երբ տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ ընկերությունն իրավունք է ունեցել սահմանված կարգով դիմել դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների պաշտպանության համար:

Այսպես, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած արարքը դրսևորվել է նրանում, որ քննելով երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարտի համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2009 թվականի թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործով հայցն առանց քննության թողնելու մասին որոշման դեմ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ որոշել է այն թողնել անփոփոխ և որոշման պատճառաբանությունները և եզրահանգումները մասում արձանագրել է. «... Մինչդեռ, արբիտրաժային դատարանին պետք է ներկայացվեին արբիտրաժային վերապահում նախատեսող ստորև թվարկված պայմանագրերը, որոնք հայցվորի կողմից չեն ներկայացվել...», այսինչ ընկերությունը, ներկայացնելով իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շուրջ ծագած վեճը լուծելու մասին հայցադիմում, իսկ դրա առանց քննության թողնվելուց հետո վերաքննիչ բողոք, ակնկալել է դատարանի կողմից ծագած վեճի լուծում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած արարքում նրա մեղքի առկայությանը և մեղքի ձևին՝ հորիզոնական արձանագրում է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանը Ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2009 թվականի թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործով կայացված հայցն առանց քննության թողնելու մասին որոշումն անփոփոխ թողնելով՝ իր, որպես դատարանի վերաբերմունքն է արտահայտել «Շուրջ ԱԳ» ընկերության իրավունքների դատական պաշտպանության հարցում՝ դրսևորելով կոպիտ անփութություն՝ միաժամանակ չգիտակցելով իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել: Այսինքն՝ որոշման կայացման ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի խախտմամբ կիրառելու արդյունքում շահագրգիռ ընկերությունը զրկվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության հնարավորությունից:

Տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝

*«1) վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231 հոդվածի և 234 հոդվածի 1-ին կետի պահանջներին, կամ»:*

*Նույն օրենսգրքի «Վճռաբեկ բողոքը քննության ընդունելը» վերտառությամբ 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ՝*

*«3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»:*

*Նույն օրենսգրքի «Գործերի միանձնյա և կոլեգիալ քննությունը» վերտառությամբ 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով: Վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը»:*

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած արարքին՝ հորիզոնական արձանագրում է, որ այն դրսևորվել է նրանում, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանը և Տիգրան Պետրոսյանը, կոլեգիալ կազմում քննարկելով ըստ հայցի «Շուրջ ԱԳ» ընկերության ընդդեմ «Ա. Սաֆարյան և ընկերներ» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 116.000 եվրո բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2009 թվականի որոշման դեմ ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, որոշել են այն վերադարձնել և որոշման պատճառաբանությունները և եզրահանգումները մասում արձանագրել են հետևյալը. «...Նման պայմաններում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը՝ դատական սխալի առկայության մասին, անհիմն է, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող է ազդել գործի ելքի վրա:

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, այն ենթակա է վերադարձման...»,* այսինչ ընկերությունը, ներկայացնելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.07.2009 թվականի որոշումը վերանայելու և նոր որոշում կայացնելու պահանջի մասին վճռաբեկ բողոք նպատակ է ունեցել հասնելու «դատարանի իրավունքի» իրացմանը, սակայն Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ բողոքի վերադարձման արդյունքում վերջնականապես զրկվել է ՀՀ ներպետական բոլոր դատական ատյաններում իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շուրջ ծագած վեճի լուծումը ստանալու՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և նույն օրենսգրքով սահմանված օրենսդրական հնարավորությունից:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Արտակ

Բարսեղյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած արարքում նրա մեղքի առկայությանը և մեղքի ձևին՝ խորհուրդն արձանագրում է, որ թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում կոլեգիալ կազմում իր ներքին համոզմամբ գնահատելով գործի հանգամանքները վերջինս ստորագրել է Վճռաբեկ դատարանի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 23.09.2019 թվականի որոշումը, որով Դատավորն արտահայտել է իր ներքին համոզմունքն այն մասին, որ ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման: Իսկ ինչ վերաբերում է մեղքի ձևին, ապա խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին վերագրվող արարքը կատարվել է կոպիտ անփութությամբ, քանի որ սույն վարույթի շրջանակներում առկա ապացույցներով չի հաստատվել, որ Դատավորը, վերոնշյալ որոշումը ստորագրելով, դիտավորություն է ունեցել սահմանափակելու բողոքաբերի դատարանի մատչելիության իրավունքը:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած արարքում նրա մեղքի առկայությանը, միևնույն ժամանակ հաշվի առնելով թե՛ դատական նիստի ընթացքում և թե՛ ներկայացված պատասխանում Դատավորի կողմից հայտնված դիրքորոշումն այն մասին, որ թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործի նյութերի մասին իրենք պատկերացում են կազմել գործով զեկուցող դատավոր Վ. Աբելյանի զեկույցից՝ խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի նախապատրաստումը գործի քննությանը» վերտառությամբ 237-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Վճռաբեկ դատարանի նախագահը հանձնարարում է վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորին ուսումնասիրել վճռաբեկ բողոքը, գործի նյութերը և զեկուցել վճռաբեկ դատարանի նիստում:*

*2. Վճռաբեկ դատարանի դատավորները ծանոթանում են վճռաբեկ բողոքին և գործի նյութերին:»:*

Այսպես, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Տիգրան Պետրոսյանը և Արտակ Բարսեղյանը թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում կոլեգիալ կազմում որպես դատավորներ մասնակցելով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունման ենթակա լինելու հարցի քննարկմանը տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորման հիմքով ունեցել են որոշման կայացումից առաջ վճռաբեկ բողոքին և գործի նյութերին ծանոթանալու պարտականություն, ինչը սույն գործով 23.09.2009 թվականին «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում կայացնելու ընթացքում Դատավորների կողմից չի կատարվել: Այսինքն Դատավորներն առանց վճռաբեկ բողոքի նյութերին ծանոթանալու, կոլեգիալ կազմում ստորագրելով «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, արտահայտել են իրենց ներքին համոզմունքը վճռաբեկ բողոքի ընդունելիության վերաբերյալ: Խորհուրդը հարկ է համարում նաև նշել, որ չի բացառվում նաև այնպիսի իրավիճակ, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Տիգրան Պետրոսյանը և Արտակ Բարսեղյանը թիվ ԵՔԴ/1123/02/08 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության շրջանակներում, կատարելով կոլեգիալ կազմի դատավորի գործի նյութերին ծանոթանալու իրենց պարտականությունը, ձևավորել են վճռաբեկ բողոքի ընդունելիության վերաբերյալ այնպիսի համոզմունք, որ կտարբերվեր կոլեգիալ կազմում ներգրավված մյուս դատավորների համոզմունքից:

Անդրադառնալով վերոնշյալ արարքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի մեղքի ձևին՝ խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին վերագրվող արարքը կատարվել է կոպիտ անփութությամբ, քանի որ սույն վարույթի շրջանակներում առկա ապացույցներով չի հաստատվել, որ Դատավորը, վերոնշյալ որոշումը ստորագրելով, դիտավորություն է ունեցել սահմանափակելու բողոքաբերի դատարանի մատչելիության իրավունքը:

Ինչ վերաբերում է Դատավորի և Դատավորների ներկայացուցիչների կողմից ներկայացված միջնորդությանը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 144-րդ և 146-րդ հոդվածների սահմանադրականությունը Սահմանադրության 73-րդ հոդվածի համատեքստում քննարկման առարկա դարձնելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, խորհուրդը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

02.05.2020 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ «Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները» վերտառությամբ 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի տրմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի, բացառությամբ սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթի»:

Նույն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 58-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքով լրացվող 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային այլանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա»:

13.08.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները» վերտառությամբ 144-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով հետևյալ խմբագրությամբ՝ «1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետները չեն տարածվում սույն

օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: Եթե արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում: արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքով, ապա այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի:»:

Նույն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումների ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով Եական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:»:

Վերոնշյալ նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի հիման վրա Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ այն է 02.05.2020 թվականից սկսած, իսկ 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի եզրափակիչ և անցումային դրույթների 2-րդ մասից հետևում է, որ մինչև 13.08.2022 թվականը (որը ներառում է սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 24.01.2019 թվականին վճռի կայացման օրը) կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթ, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի, հետևաբար սույն վարույթի «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների սխալ մեկնաբանության արդյունքում հարուցված լինելու մասին Դատավորի ներկայացուցչի փաստարկներն հորհրդի գնահատմամբ անհիմն են:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Արտակ Բարսեղյանի ներկայացուցիչ Ամիրխանյանի այն պնդմանը, թե «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների միաժամանակյա գոյության պարագայում Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 02.05.2020 թվականից մինչև 13.08.2022 թվականը կայացված ակտերը, ապա այն նույնպես անհիմն է, նախ և առաջ այն հիմնավորմամբ, որ նման կարճ ժամանակահատվածի սահմանումը վերոնշյալ իրավակարգավորումները կդարձնեն որոշակիորեն առարկայազուրկ և կխոչընդոտեն «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների ընդունմամբ հետապնդվող նպատակի իրագործմանը, իսկ օրենսդիրը, սահմանելով նման իրավակարգավորում նպատակ է ունեցել ժամկետի որոշակի՝ տվյալ դեպքում 15 տարի հետադարձ հաշվարկի կիրառման արդյունքում հասնելու մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու օրենսդրական հնարավորություն տալուն: Վերոնշյալը փաստվում է նաև «ՀՀայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի հիմնավորումով, որտեղ մասնավորապես նշվել է. «(...) ՀՀ-ում տեղի են ունեցել մարդու հիմնարար, կոնվենցիոն իրավունքների համակարգային և զանգվածային խախտումներ տարբեր ոլորտներում, որոնք էլ հենց բացահայտվել են ՄԻԵԴ վճիռներով, որոնց մեծ մասը կայացվել է մինչև վերջերս: Վետևաբար, եթե հիմք ընդունվեն միայն ՄԻԵԴ նոր վճիռները, ապա նախատեսված մեխանիզմը ամբողջությամբ չի հասնի իր նպատակին, քանի որ փաստ է, որ 2018 թվականից հետո դատախոսական համակարգում տեղի են ունեցել Եական փոփոխություններ, և դատական ակտերով թույլ տրված հիմնարար խախտումների առկայությունը հնարավոր կլինի բացահայտել բացառապես կամ մեծամասամբ ՄԻԵԴ այն վճիռներով, որոնք վերաբերում են ՀՀ անկախացումից ի վեր տեղի ունեցած խախտումներին: (...)»:

Այնուամենայնիվ, եթե անգամ քննարկվան առարկա դարձնենք Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Արտակ Բարսեղյանի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանի կողմից նկարագրված այն իրավիճակը, որ 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի գոյության և 02.05.2020 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ դատական օրենսգիրք»

սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 58-րդ հոդվածի 19-րդ մասի իրավաբանական ուժը կորցրած ճանաչված չլինելու պայմաններում 02.05.2020 թվականից ուշ (որը ներառում է սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 24.01.2019 թվականին վճռի կայացման օրը) կայացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու անհիմն լինելուն, ապա նման իրավիճակը ևս կարգավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես, օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանել է Նորմատիվ իրավական ակտերի Նորմերի միջև կոիզիաների հաղթահարման իրար հաջորդող որոշակի կանոններ, որոնք ի թիվս այլնի ներառում են իրավաչափ հնարավորություն կիրառել ավելի ուշ ուժի մեջ մտած Նորմատիվ իրավական ակտի Նորմերը:

Հետևաբար, խորհուրդը գտել է, որ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ Դատավորի ու Դատավորների ներկայացուցիչների կողմից ինչպես վերոնշյալ, այնպես էլ ներկայացված այլ հիմնավորումներն անհիմն են և ենթակա են մերժման:

Ինչ վերաբերում է Դատավորի և Դատավորների ներկայացուցիչների ներկայացրած խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի և կարգապահական վարույթ հարուցած Արդարադատության նախարար Գրիգոր Միևսայանի միջև առկա տևտեսական, ընկերական, աշխատանքային և քաղաքական կապերի առկայությանը և որոշման վրա դրանց ազդեցություն ունեցած լինելու մասին պնդումներին, ապա խորհուրդն այդ հանգամանքներին անդրադարձել է իր 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ, մասնավորապես նշելով հետևյալը. «Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերի համաձայն՝ «Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի (...) նկատմամբ, գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տևտեսական շահ ունի (...) կողմերից մեկի հետ»:

Խորհրդի գնահատմամբ Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանված լինելով իբրև դատավորի անաչառության ապահովման երաշխիք, նպատակ ունի, ի թիվս այլնի, բացառել, որ դատավորը որոշում կայացնելիս կաշկանդած լինի կողմերից մեկի այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որը կարող է ֆինանսական հետևանքներ առաջացնել իր համար:

Միաժամանակ խորհուրդն արձանագրել է, որ ինքնաբացարկի հիմք հանդիսացող տևտեսական շահի առկայությունը ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ դատավորը կամ իր մերձավոր ազգականը մասնավոր կարգավիճակով պայմանավորված ունի այնպիսի շահ, որը կարող է ազդեցություն ունենալ իր լիազորությունների պատշաճ կատարման վրա: Այսպես, Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի իմաստով տևտեսական շահ կարող է առկա լինել բացառապես այն պարագայում, երբ կողմերից մեկն ունենա այնպիսի առարկայական լծակներ, որոնք ուղղակիորեն կարող են ներազդել դատավորի կամ իր մերձավոր ազգականի տևտեսական շահերի վրա:

Խորհուրդն արձանագրել է նաև, որ Դատավորի ներկայացուցիչ կողմից ներկայացված հանրահայտ փաստերն ինքնին բավարար չեն եզրակացնելու, որ Կ. Անդրեասյանը կարող է դրսևորել կողմնակալություն: Ավելին, արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Rustavi 2 Broadcasting Company Ltd-ը և այլք ընդդեմ Վրաստանի գործով վիճարկվել է միաձայն որոշում կայացրած ինը դատավորից բաղկացած կազմը նախագահող դատավորի անկողմնակալությունը և ՄԻԵԴ-ը գտել է, որ խախտում առկա չէ<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանի կողմից վկայակոչված Stoimenovikj-ն և Milosheviki-ն ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի, Mitrinovski-ն ընդդեմ Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիայի և Karrar ընդդեմ Բելգիայի գործերով ՄԻԵԴ դիրքորոշումներին, ապա խորհուրդը հարկ է համարում առանձին անդրադառնալ վերոնշյալ գործերով ՄԻԵԴ ձևավորված դիրքորոշումներին: Այսպես, *Stoimenovikj-ն և Milosheviki-ն ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի գործով* ՄԻԵԴ-ը կարևորել է քաղաքացիական գործով տարբեր փուլերում միևնույն դատավորի մասնակցության հարցը և նշված դեպքերում 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անկողմնակալության պահանջին վերաբերող հարցադրումներին՝ նշելով, որ տվյալ դեպքերում պետք է անդրադառնալ յուրաքանչյուր գործի առանձին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործի հանգամանքները: Դա վերաբերում է նաև այն իրավիճակներին, երբ միևնույն դատավորը մասնակցում է երկու առանձին վարույթների, ինչպիսիք են փաստացի փոխկապակցված քրեական և քաղաքացիական վարույթները կամ վարույթները, որոնք սերտ կապված են և իրականացվել են մի քանի տարվա տարբերությամբ<sup>5</sup>: Վերոնշյալ տրամաբանությամբ՝ անդրադառնալով յուրաքանչյուր գործին առանձին և հաշվի առնելով յուրաքանչյուր գործի հանգամանքները Mitrinovski-ն ընդդեմ Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դատավորը հանդես է եկել որպես «դատախազ» դիմումատուի նկատմամբ, այն է՝ վիճարկվող վարույթում «ամբաստանյալի» նկատմամբ<sup>6</sup>: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այլ գործերով նույնպես վերահաստատել է վերոնշյալ մոտեցումն արձանագրելով, որ իրավիճակն այլ է, երբ դիմումատուի նկատմամբ քննությունն իրականացնող երկու մարմինները բաղկացած են եղել միևնույն դատավորների կազմից, և խառնաշփոթ է առաջացել մեղադրանքներ ներկայացնելու և հանգամանքները պարզելու ժամանակ: Դատախազի և դատավորի գործառնությունների միջև խառնաշփոթը կարող է օբյեկտիվորեն առաջացնել արդարացի կասկածներ ներգրավված անձանց անկողմնակալության վերաբերյալ<sup>7</sup>:

Ինչ վերաբերում է *Karrar-ն ընդդեմ Բելգիայի* գործով ՄԻԵԴ-ը դիրքորոշմանը, ապա ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ կազմի անդամներից միայն մեկի օբյեկտիվ անկողմնակալության բացակայությունը վճռորոշ չէ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, քանի որ խորհրդակցության գաղտնիությունն անհնարին է դարձնում պարզելու դատավորի փաստացի ազդեցության բնույթը<sup>8</sup>:

Վերոնշյալի համատեքստում խորհուրդը հարկ է համարում կրկին հիշատակել Բարձրագույն դատական խորհրդի 26.01.2023 թվականի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ հիշատակված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Fazli Aslaner-ն ընդդեմ

Թուրքիայի գործով արձանագրումը, ըստ որի՝ դատավորներից ոմանց նախկինում որոշակի դիրք ունենալը, ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ ողջ կազմը եղել է կողմնակալ: ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ նմանաբնույթ իրավիճակներում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ գործոններ<sup>9</sup>:

Խորհուրդը նաև հարկ է համարում արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումի հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 06.06.2023 թվականի վարույթի հարուցումը մերժելու մասին թիվ N 01-ԴՄ որոշմամբ ի թիվս այլևի անդրադառնալով այն հարցին թե՛ «արդյո՞ք Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հետ ընկերական, գաղափարական և ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված կապերի պայմաններում տվյալ հիմքով կարգապահական վարույթ հարուցելու նախարարի գործունեությունն ընդհանրապես և մեր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առնչությամբ, մասնավորապես կոռուպցիոն առումով ռիսկային չէ և չի հանգեցնում շահերի բախման, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների»՝ գտել է, որ.

«(...) 17. Այսպես, ներպետական կյուրակալ իրավունքի նորմերի բովանդակությունից հետևում է, որ անձի անձնական շահերի և պաշտոնեական պարտականությունների միջև առկա հակասությունն **ինքնին շահերի բախում չի դիտարկում**: Ներպետական օրենսդրությունը շահերի բախման համար որպես պայման դիտարկում է այս կամ այն կերպ **գույքային կամ իրավական դրության բարելավումը, որևէ արտոնության ապահովումը**, որը դրսևորվելու է իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

Շահերի բախման վերաբերյալ միջազգային չափորոշիչների և սահմանումների բովանդակությունից ևս հետևում է, որ շահերի բախումն, ըստ էության, **անձնական և հանրային/պաշտոնեական շահերի (հարաբերությունների)՝ միջև առկա հակասությունն է**. Յուրաքանչյուր այն դեպքում, երբ առկա է այնպիսի հարաբերություն, որի առկայությամբ կարող է պայմանավորել կամ ազդեցություն ունենալ անձի կողմից պաշտոնեական լիազորությունների իրականացման վրա, ապա առկա է շահերի բախման ռիսկ: Խիստ կարևոր է, որ շահերի բախման մեկնաբանման ընթացքում կառավարման տարբեր ոլորտների առանձնահատկությունները չհանտեսվեն այնպես, որ խաթարվի իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնարար սկզբունքը, և հնարավոր պատասխանատվության կիրառման գործընթացը չհանգեցնի իշխանության մեկ ճյուղի կողմից մյուսի գործունեության միջամտության:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել հարաբերությունների կողմերը, զբաղեցրած պաշտոնները և այն խնդիրները, որոնց կապակցությամբ նշված սուբյեկտներն առնչություն ունեն.

1) Սուբյեկտներից մեկը հանդիսանում է պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավար, այս պարագայում Արդարադատության նախարար, ով գործում է Սահմանադրության և օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում:

2) Սուբյեկտներից մյուսը հանդիսանում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահ: Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական մարմնի կարգապահական ունեցող անկախ պետական մարմնի է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը և գործում է կոլեգիալության հիման վրա: Բարձրագույն դատական խորհրդի անդամներից հինգը հանդիսանում են դատավոր անդամներ, մնացած հինգը՝ գիտնական անդամներ, նրանցից յուրաքանչյուրը ինքնուրույն ձայնի իրավունքով մասնակցում են որոշումների կայացման գործընթացին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Հետևաբար՝ դիմումում ներկայացված երկու սուբյեկտներն իրականացնում են Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններ, որոնք ուղղված են հանրային շահի իրացմանը:

18. Սույն գործով շահերի բախման համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում գնահատել, արդյո՞ք ընկերական, գաղափարական կապերի և առկա ընդհանուր տնտեսական շահերի առկայության պայմաններում մի պետական մարմնի ներկայացուցչի՝ այս դեպքում Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելը հանգեցնում է վարքագծի կանոնների, շահերի բախման և անհամատեղելիության պահանջների խախտման:

Այսպես, թե՛ ներպետական օրենսդրությամբ, թե՛ միջազգային չափորոշիչներով մասնավոր շահը ի պաշտոնե կատարած գործողության, անգործության կամ որոշման կայացումն է, որի արդյունքում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձը կամ կազմակերպությունը պաշտոնատար անձի կողմից դրսևորած գործողության, անգործության կամ կայացրած որոշման դիմաց ստանում է **որևէ արտոնություն կամ առավելություն**: Մինչդեռ, սույն դիմումով ներկայացված փաստերի շրջանակում կարգապահական վարույթը ներկայացվում է սահմանադրական մարմնի կարգապահական ունեցող անկախ պետական մարմնի, և ըստ էության ներկայացված փաստերով որևէ կերպ չի հիմնավորվում, թե կարգապահական վարույթ հարուցելով Արդարադատության նախարարն ինչ արտոնություն կամ առավելություն է տրամադրել իր հետ փոխկապակցված անձին կամ կազմակերպությանը: Ընդ որում, ներկայացված հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունն Արդարադատության նախարարի համար սահմանված է օրենքով: Հետևաբար, սույն գործով ներկայացված փաստերի համատեքստում կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես Արդարադատության նախարարի մասնավոր շահի սպասարկում: Մինչդեռ, շահերի բախումը անձի մասնավոր շահի անհարկի ազդեցությունն է պաշտոնեական պարտականությունների կատարման անաչառության վրա, օգուտ կամ առավելություն ապահովելով իր հետ փոխկապակցված անձի կամ կազմակերպության համար: (...)»<sup>10</sup>:

Ի լրումն վերոնշյալի՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում նաև հիշատակել Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների 2.5.3. կետը, որի համաձայն՝ Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ նա չի կարող գործով անաչառ որոշում կայացնել կամ երբ անկողմնակալ դիտորդին թվում է, թե նա ի վիճակի չէ տվյալ գործով անաչառ որոշում կայացնել: Նման գործերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ **(...) դատավորը կամ դատավորի ընտանիքի անդամը կյուրակալ շահ ունի առկա գործի ելքով**: Խորհուրդը հարկ է համարում վերահաստատել, որ սույն գործի

շրջանակներում նյութական շահի և/կամ մասնավոր շահի որևէ դրսևորում առկա չէ, ավելին՝ թե՛ Խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը և թե՛ կարգապահական վարույթ հարուցած Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն իրականացնում են Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններ, որոնք ուղղված են հանրային շահի իրացմանը:

Վերոնշյալ համատեքստում Խորհուրդը հարկ է համարում վերահաստատել, որ դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտը, նաև որպես դատական համակարգի «առողջացման» կառուցակարգ, անկախ, անաչառ և հանրության առջև հաշվետու դատական համակարգ ունենալու և դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու անհրաժեշտ գործիքներից է: Իր հերթին, դատական իշխանության հանրային դրական ընկալումները և վստահության բարձր աստիճանը ամուր և անկախ դատական համակարգ ունենալու կարևոր նախապայման են: Հետևաբար, ինչպես նշում է Վենետիկի հանձնաժողովը, եթե դատավորի սխալ վարքագիծը ունակ է թուլացնելու դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը, ապա հանրության շահերից է բխում այդ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը<sup>11</sup>:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու մասին Դատավորի և Դատավորների ներկայացուցչների միջնորդությունը մերժվել է:

Խորհուրդը կարևոր է համարում անդրադառնալ նաև նիստի ընթացքում Դատավորի ներկայացուցչի կողմից բարձրացված այն հարցին, թե Խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանն ընթացող վարույթի շրջանակներում ընդդիմազերծ շփումներ է ունեցել Արդարադատության նախարարի հետ, որին մասնակից է դարձել Խորհրդի մեկ այլ անդամ և նշել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության («ex parte» (եքս պարտե), այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում. (...)

բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Օրենսգրքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը՝ իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 18.1-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը՝ քննարկում է դատարանների բնականոն գործունեության հարցերը, իր լիազորությունների շրջանակում լուծում դրանք կամ դրանց լուծման նպատակով դիմում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ:

Խորհուրդն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ Խորհրդի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեությունն ապահովելու, իսկ Խորհրդի անդամը դատարանների բնականոն գործունեության հարցերի իրենց լիազորությունների շրջանակում լուծելու նպատակով հնարավորություն ունեն մասնակցել քննարկումների: Հակառակ դեպքում, նկատի ունենալով Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական վարույթների քննության տևողությունը և թվաքանակը Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեությունը կարող է պարալիզացվել, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ընդհուպ իրավական անվտանգության խնդիրների առաջացմանը, ինչով և պայմանավորված Բարձրագույն դատական խորհրդի հիմնադրումից ի վեր, նման հանդիպումների, այդ թվում դատարանների բնականոն գործունեության ապահովման համատեքստում անհրաժեշտ այլ աշխատանքային պրոցեսների (հեռահաղորդակցություն, նամակագրություն, հանդիպում քննարկումներ և այլն) իրականացման մասին չի բարձրաձայնվել:

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները՝ Խորհուրդն արձանագրում է, որ վարույթ հարուցող մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներն անկհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով: Ավելին, Խորհրդի գնահատմամբ Դատավորների կողմից թույլ տրված արարքը՝ հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի խախտմանը, որը նախատեսված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

Գնահատելով Դատավորների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի Նորմերի խախտման անկհայտությունը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորներին մեղաազարկող դատավարական Նորմերի խախտումների առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությունից կամ փաստարկներով:

Նշվածը թույլ է տալիս ողջամտորեն եզրահանգել, որ Դատավորների կողմից վերոնշյալ դատավարական Նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ:

Քննության առնելով Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցի ընտրության հարցը՝ Խորհուրդը գտնում է, որ ընտրվող

պատասխանատվության միջոցը պետք է համաչափ լինի խախտմանը, որպիսի պարագայում անհրաժեշտ է նաև իրավական գնահատական տալ այն հարցին, թե արդյոք Դատավորների կողմից թույլ տրված արարքը բավարար հիմքեր է պարունակում վերջինիս կողմից թույլ տրված կարգապահական խախտումն էական գնահատելու համար և արդյոք դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Նույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ էական կարգապահական խախտում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակագրվման:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (...) Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Դատավորների կողմից թույլ են տրվել անձի արդար դատաքննության իրավունքի խախտումներ և դրանք ակնհայտորեն պայմանավորված են եղել դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Միաժամանակ Խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ըստ Օրենսգրքի 142-րդ հոդվածի ի թիվս այլիս էական կարգապահական խախտում է հանդիսանում՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ թույլ տրված խախտումը, ինչն իր հերթին հանգեցրել է Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտմանը, ինչպես նաև դատական իշխանության հեղինակագրվմանը: Ավելին, տվյալ դեպքում Դատավորների կողմից կատարված խախտումներն էապես նվազեցնում են դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը: Այսինքն՝ սույն դեպքում խոսքը վերաբերում է դատավորի պաշտոնի հետ ոչ համատեղելի արարքին:

Դատավորի կողմից Օրենսգրքի 142-րդ հոդվածի իմաստով «արարք» կատարելը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում դատավորի կողմից այնպիսի վարքագծի (ներառյալ՝ անգործության) դրսևորումը, որն ակնհայտորեն կարող է կասկածի տակ ղնել արդարադատությունը Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական չափորոշիչներին համապատասխանելու հանգամանքը՝ խեղաթյուրելով դրա բուն էությունը: Եթե դատավորի պաշտոնավարման ընթացքում դատավորի վարքագիծը շեղվում է իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման ընդհանուր կանոններից, և դատավորը, դրսևորելով ոչ պատշաճ արհեստավարժություն և մասնագիտական պատրաստվածություն, դուրս է գալիս իրավական նորմի գործողության շրջանակներից ոչ թե գուտ նորմի սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում, այլ իր սահմանադրափրավական լիազորությունների վերագանցման պայմաններում, ապա այդպիսի արարքը կարող է բնութագրվել որպես դատավորի պաշտոնի հետ ոչ համատեղելի:

Այսպիսով, Դատավորներն իրենց գործողություններում գերծ չեն մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ուստի միջևորդության քննությամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Դատավորների կողմից թույլ տրված դատավարական նորմերի խախտումներն էական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ և ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 150-րդ հոդվածի 4-րդ մասով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Մանկության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճել:

2. Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Լևոն Բայանի միջնորդությունը՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

<sup>1</sup> Տե՛ս, ECtHR, Oleksandr Volkov v. Ukraine, 21722/11, 09.01.2013, կետ 175:

<sup>2</sup> Տե՛ս, Joint opinion of Venice Commission, DHR and DGI on the Amendments to the Judicial Code and Some Other Laws of Armenia, 14.10.2019, կետ 40:

<sup>3</sup> Տե՛ս, ի թիվս այլ որոշումների Խորհրդի 05.04.2021 թվականի թիվ ԲԴԽ-7-Ո-Կ-02 որոշում

<sup>4</sup> Տես, Case of Rustavi 2 Broadcasting Company Ltd and others v. Georgia, <https://hudoc.echr.coe.int/GEO#%22itemid%22:%22001-194445%22>}, (Տ 363):

<sup>5</sup> Տես, Case of Pasquini v. San Marino, <https://hudoc.echr.coe.int/eng#%22appno%22:%2250956/16%22,%22itemid%22:%22001-192787%22>}, § 148-149, Case of Stoimenovikj and Miloshevikj v. North Macedonia, <https://hudoc.echr.coe.int/eng#%22appno%22:%2259842/14%22,%22itemid%22:%222001-208756%22>}, (Տ 36-38, 40, 42):

<sup>6</sup> Տես, Case of Mitrinovski v. The Former Yugoslav Republic of Macedonia, <https://hudoc.echr.coe.int/#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-154027%22>}, (Տ 43):

<sup>7</sup> Տես, Case of Kamenos v. Cyprus, <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-178174%22>}, §§ 104- 109:

<sup>8</sup> Տես, Case of Karrar v. Belgium, <https://hudoc.echr.coe.int/fre#%22languageisocode%22:%22FRE%22,%22appno%22:%2261344/16%22,%22documentcollectionid%22:%22CHAMBER%22,%22itemid%22:%22001-211597%22>}, (Տ 36):

<sup>9</sup> Տես, Fazli Aslaner v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/fre#%22itemid%22:%22002-9417%22>}, §§ 36-43:

<sup>10</sup> <http://cpcarmenia.am/files/legislation/1041.pdf>

<sup>11</sup> Տես, COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES, Strasbourg, 12 July 2019 CDL-PI(2018)008, էջ 32:

**Բարձրագույն դատական խորհրդի նախագահ  
Անդամներ՝**

**Կ. Անդրեասյան  
Ա. Աթաբեկյան  
Հ. Գրիգորյան  
Ե. Թումանյանց  
Ն. Հովսեփյան  
Ք. Սկոյան  
Ա. Վարդանյան  
Վ. Քոչարյան**

**Հատուկ կարծիք**

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 հուլիսի 2023 թվական:**

**ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ  
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

«31» հուլիսի 2023 թ.

ք. Երևան

**«ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** «(...) Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ: Եթե Բարձրագույն դատական խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում Բարձրագույն դատական խորհրդի որոշման մեջ, և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը»:

**Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. հոկտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման** (Աշխատակարգի) 96-րդ մասի համաձայն՝ (...) Խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ: Եթե Խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նա հայտարարում է խորհրդակցական սենյակում, նրա ստորագրությամբ նշում է արվում Խորհրդի որոշման մեջ, և ամբողջական որոշումը հրապարակվելուց հետո 8-օրյա ժամկետում հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ հանձնվում է Խորհրդի նախագահին՝ որոշմանը կցելու համար»:

Արժևորելով ստորև քննարկվող հարցերի շուրջ Բարձրագույն դատական խորհրդի անդամների (**նախագահող՝ Կ.Անդրեասյան, անդամներ՝ Ա.Աթաբեկյան, Ք.Սկոյան, Ե.Թումանյանց, Ն.Հովսեփյան, Վ.Քոչարյան, Հ.Գրիգորյան**) ներքին համոզմունքը՝ այնուամենայնիվ, դատավորներ Աստղիկ Խառատյանին, Արտակ Բարսեղյանին և Տիգրան Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու Լիազոր մարմնի միջնորդությունը բավարարելու և նրանց լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի՝ 2023 թվականի հուլիսի 3-ի որոշման <sup>1</sup> եզրափակիչ մասի առնչությամբ մտնում եմ հատուկ կարծիքի՝ հետևյալ փաստարկներով և հիմնավորումներով:

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում **պարզաբանման ենթակա հիմնական հարցադրումները** հետևյալներն են՝ որպես դատարան հանդես եկող Բարձրագույն դատական

խորհուրդն (այսուհետ՝ խորհուրդ) արդյոք երաշխավորել է սույն վարույթով անցնող դատավորների՝

**1) անկախ ու անաչառ դատարանի կողմից գործի արդարացի դատաքննության իրավունքը (Նախատեսված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով):**

**2) անձնական կյանքը հարգելու իրավունքը՝ լիազորությունները դադարեցնելու անհրաժեշտության և համաչափության տեսանկյունից (Նախատեսված՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով):**

### **1.1. Արդար դատական քննության իրավունքին վերաբերելի ու կիրառելի (ընդհանուր) իրավական նորմեր.**

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու (...) վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»:

**Օրենքի** 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքներից»:

2015 թվականի դեկտեմբերի 22-ի խմբագրմամբ **ՀՀ սահմանադրության** 61-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների **արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:**

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի **անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի**, հրապարակային և ողջամիտ ժամկետում **քննության իրավունք:** (...)»:

**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի** (այսուհետ՝ Կոնվենցիա կամ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված **անկախ ու անաչառ դատարանի** կողմից ողջամիտ ժամկետում **արդարացի** և հրապարակային **դատաքննության իրավունք:** (...)»:

### **1.2. Բացարկյի (ինքնաբացարկի) ինստիտուտին վերաբերելի իրավական նորմեր և դիրքորոշումներ.**

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի համաձայն՝ (...):

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամը չի կարող մասնակցել հարցի քննարկմանը և որոշման կայացմանը, եթե այդ հարցով առկա է դատավորի ինքնաբացարկի հիմք:

3. Բարձրագույն դատական խորհրդի անդամը պարտավոր է ինքնաբացարկի հիմքը իրեն հայտնի դառնալու պահից անհապաղ Բարձրագույն դատական խորհրդին ներկայացնել ինքնաբացարկ շարադրելով ինքնաբացարկի հիմք հանդիսացող հանգամանքները:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամը և վարույթի կողմը կարող են քննարկման առարկա դարձնել Բարձրագույն դատական խորհրդի անդամին բացարկ հայտնելու հարցը:

5. Բարձրագույն դատական խորհրդի նիստը նախագահողը քննարկման է ներկայացնում ինքնաբացարկի կամ բացարկի հարցը, որը քննարկվում է Բարձրագույն դատական խորհրդի ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամի մասնակցությամբ:

6. Հարցի քննարկման արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է որոշում: Բարձրագույն դատական խորհրդի՝ ինքնաբացարկ հայտնած կամ բացարկվող անդամը, ինչպես նաև բացարկ հայտնած անդամը չեն մասնակցում ինքնաբացարկի կամ բացարկի հարցով քվեարկությանը:

7. Ինքնաբացարկի կամ բացարկի ընդունման դեպքում այդ անդամը չի մասնակցում այն հարցի քննությանը և որոշման կայացմանը, որի կապակցությամբ առկա է ինքնաբացարկի հիմք»:

Դատավորի ինքնաբացարկի հիմքերը նախատեսված են նույն **Օրենքի** 71-րդ հոդվածով, որի համաձայն՝

«1. Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»:

2. Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝

**1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի,** նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների **Նկատմամբ.**

**2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ակնատես է եղել այն հանգամանքներին, որոնք վիճարկվում են գործի քննության ընթացքում.**

**3) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ դատարանում.**

**4) դատավորի մերձավոր ազգականը հանդիսացել է, հանդիսանում է կամ ողջամտորեն կհանդիսանա գործին մասնակցող անձ.**

**5) դատավորը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ.**

**6) դատավորը պաշտոն է զբաղեցնում ոչ առևտրային կազմակերպությունում, և գործով կարող են շոշափվել այդ կազմակերպության շահերը:**

3. Սույն հոդվածի իմաստով՝ **տնտեսական շահ հասկացությունը չի ընդգրկում՝**

1) ներդրումային կամ կենսաթոշակային ֆոնդի կամ այլ անվանական սեփականատիրոջ միջոցով բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր կառավարելը, եթե դատավորը

զգիտի այդ մասին,

2) բանկում ավանդ ունենալը, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը, վարկային կամ խնայողական միջոցային մասնակից հանդիսանալը, եթե գործի ելքի արդյունքով այդ կազմակերպության վճարունակության էական վտանգ չի սպառնա,

3) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր ունենալը:

4. **Դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, որը ենթակա է արձանագրման:** Տվյալ գործով անաչառ լինելու վերաբերյալ համոզմունք ունենալու դեպքում դատավորը կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկն անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի քննությունը:

5. Դատավորը պարտավոր չէ ինքնաբացարկ հայտնել կամ ընդունել բացարկը, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին»:

Քննարկվող հարցով **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի** (այսուհետ՝ ՄԻԵԴ կամ Դատարան) ձևավորած իրավական դիրքորոշումը հետևյալն է. «Դատարանը վերահաստատում է, որ ժողովրդավարական հասարակությունում հիմնարար կարևորություն է ներկայացնում այն հարցը, որ դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն: Այդ նպատակով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով պահանջվում է, որ դրա գործողության շրջանակներում գտնվող տրիբունալը լինի անկողմնակա: Անաչառություն սովորաբար նշանակում է կանխակալության կամ կողմնակալության բացակայություն, իսկ դրա ամկալությունն այլ կերպ կարելի է ստուգել տարբեր եղանակներով: Դատարանն այդպիսով տարբերակում է դնում սուբյեկտիվ մոտեցման, այն է՝ ջանալ պարզելու կոնկրետ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքը կամ շահը, և օբյեկտիվ մոտեցման միջև, այն է՝ որոշել, թե արդյոք դատավորը բավարար երաշխիքներ է առաջարկել այս առումով որևէ իրավաչափ կասկած բացառելու համար (տե՛ս «Կիպրիանոս ընդդեմ Կիպրոսի» [ՄԴ] [Kyprianou v. Cyprus [GC]], թիվ 73797/01, § 118, ՄԻԵԴ 2005-XIII, «Միկալեֆն ընդդեմ Մալթայի» [ՄԴ] [Micallef v. Malta [GC]], թիվ 17056/06, § 93, ՄԻԵԴ 2009, «Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի» [ՄԴ] [Morice v. France [GC]], թիվ 29369/10, § 73, ՄԻԵԴ 2015 թվական, և «Ռամոս Նունես դե Կարվալո Է Սան ընդդեմ Պորտուգալիայի» [ՄԴ], Ramos Nunes de Carvalho e Sn v. Portugal [GC], թիվ 55391/13 և ևս 2-ը, § 145, 2018 թվականի նոյեմբերի 6):

**Սուբյեկտիվ գնահատման տակ** հասկացվում է, որ դատավորի անձնական անկողմնակալությունը ենթադրվում է այնքան ժամանակ, քանի դեռ չկան հակառակն ապացուցող փաստեր (տե՛ս Կիպրիանոսի գործը՝ վերևում հիշատակված, § 119, Միկալեֆի գործը՝ վերևում հիշատակված, § 94, և Մորիսի գործը՝ վերևում հիշատակված, § 74):

Ինչ վերաբերում է օբյեկտիվ գնահատմանը, ապա պետք է որոշվի, թե արդյոք, անկախ դատավորի վարքագծից, կան հավաստի փաստեր, որոնք կարող են նրա անկողմնակալության վերաբերյալ կասկածներ առաջացնել (տե՛ս Միկալեֆի գործը՝ վերևում հիշատակված, § 96, Մորիսի գործը՝ վերևում հիշատակված, § 76, և Ռամոս Նունես դե Կարվալո Է Սայի գործը՝ վերևում հիշատակված, § 147): Այս առումով նույնիսկ արտաքին հատկանիշները կարող են որոշակի նշանակություն ունենալ (տե՛ս Կիպրիանոսի գործը՝ վերևում հիշատակված, § 118): Սա ենթադրում է, որ այն ժամանակ, երբ որոշվում է, թե արդյոք տվյալ դեպքում ամկա է որևէ կոնկրետ դատավորի կամ որպես դատարան հանդես եկող մարմնի մոտ անկողմնակալության բացակայության մասով մտավախություն ունենալու որևէ հիմնավոր պատճառ, տվյալ անձի տեսակետը կարևոր է, բայց ոչ որոշիչ: **Որոշիչ է այն հանգամանքը, թե արդյոք այդ մտավախությունը կարող է համարվել օբյեկտիվորեն հիմնավորված** (տե՛ս Միկալեֆի գործը՝ վերևում հիշատակված, § 96, Մորիսի գործը՝ վերևում հիշատակված, § 76, և Ռամոս Նունես դե Կարվալո Է Սայի գործը՝ վերևում հիշատակված, § 147):

**Օբյեկտիվ գնահատումը** հիմնականում վերաբերում է դատավորի և վարույթի այլ մասնակիցների միջև ցանկացած կապերին, որոնք օբյեկտիվորեն հիմնավորում են տրիբունալի անկողմնակալության վերաբերյալ կասկածները և հետևաբար օբյեկտիվ գնահատման տեսանկյունից չեն համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին:

Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել **արդյոք տվյալ հարաբերությունների բնույթը և սերտության աստիճանը վկայում են այն մասին, որ տրիբունալն անկողմնակալ չէ** (տե՛ս Միկալեֆի գործը՝ վերևում հիշատակված, § 97, Մորիսի գործը՝ վերևում հիշատակված, § 77, և Ռամոս Նունես դե Կարվալո Է Սայի գործը՝ վերևում հիշատակված, § 148):

**«Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի» գործով** ՄԻԵԴ-ն արտահայտել է քննարկվող հարցին վերաբերելի հետևյալ իրավական դիրքորոշումը.

« 104. Որպես կանոն, անաչառություն նշանակում է կողմնակալության բացակայություն: Դատարանի կողմից սահմանած նախադեպային իրավունքի համաձայն՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անկողմնակալության ամկալությունը պետք է որոշվի ըստ՝ (i) սուբյեկտիվ քննություն, որտեղ հաշվի է առնվում որոշակի դատավորի վճռի կայացումը և անհատական վարքը, այսինքն՝ ստուգվում է, արդյոք դատավորը հասցրել է որևէ անձնական վնաս կամ տվյալ գործում ցուցաբերել է կողմնակալություն, և (ii) օբյեկտիվ քննություն, որտեղ պարզվում է, թե արդյոք դատարանն, ի թիվս այլ հարցերի, տրամադրել է բավարար երաշխիքներ բացառելու համար յուրաքանչյուր իրավաչափ կասկած իր անկողմնակալության նկատմամբ (տե՛ս «Ֆին ընդդեմ Ավստրիայի», 1993թ. փետրվարի 24, Series A, թիվ 255, կետեր 28 և 30, և «Վեթթեյնս ընդդեմ Շվեյցարիայի», թիվ 33958/96, կետ 42, ՄԻԵԴ 2000թ.-XII):

105. Այնուամենայնիվ, չկա որևէ բաժանում սուբյեկտիվ և օբյեկտիվ անկողմնակալության միջև, քանի որ դատավորի վարքագիծը կարող է արտաքին դիտորդին ոչ միայն հուշել իր ոչ անկողմնակալ լինելու վերաբերյալ (օբյեկտիվ քննությունը), այլև կարող է իր դեմ վարույթ հարուցելու պատճառ դառնալ (սուբյեկտիվ քննություն) (տե՛ս «Կիպրիանոս ընդդեմ Կիպրոսի» [GC], թիվ 73797/01, կետ 119, ՄԻԵԴ 2005թ.-XIII): Այսպիսով, որոշ դեպքերում կարող է դժվար լինել ապացույցներ ձեռք բերել, որոնցով կհերքվի դատավորի սուբյեկտիվ անկողմնակալության կանխավարկածը (տե՛ս «Փալարն ընդդեմ Միացյալ Թագավորության», 1996թ. հունիս 10, կետ 32, Չեկոյցներ 1996թ. iii):

106. Այս առումով, նույնիսկ արտաքինը կարող է որոշակի նշանակություն ունենալ, կամ այլ կերպ ասած՝ **«արդարադատությունը պետք է ոչ միայն կատարվի, այլ այն պետք է նաև**

**երևա»:** Կարևոր հարցը վստահությունն է, որը ներպետական դատարանները պետք է ապահովեն ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս «Դե Կուբեն ընդդեմ Բելգիայի», 1984թ. հոկտեմբերի 26, կետ 26, Series A, թիվ 86):»:

«**Ղուլյանն ընդդեմ Հայաստանի**» գործով ՄԻԵԴ-ը, արձանագրելով քննարկվող հիմքով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, արտահայտել է սույն գործին որոշակիորեն վերաբերելի հետևյալ իրավական դիրքորոշումները.

Տվյալ գործով Դիմումատուն բողոքել էր, որ իր գործի առնչությամբ չի իրականացվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անաչառ տրիբունալի կողմից լուր հաշվի առնելով այն փաստը, որ Վարչական շրջանի դատարանի դատավոր Ա.Մ.-ն սերտ ընտանեկան կապեր է ունեցել վարույթում իր հակառակորդի ներկայացուցիչների հետ:

«51. Դատարանը գտնում է, որ երբ դատավորն ունենում է արյունակցական կապեր ցանկացած վարույթի կողմ ներկայացնող իրավաբանական ընկերության աշխատակցի հետ, սա ինքնին պատճառ չէ դատավորին գործից հեռացնելու համար (տե՛ս «Ռամլյակն ընդդեմ Խորվաթիայի» [Ramljak v. Croatia], թիվ 5856/13, § 29, 2017 թվականի հունիսի 27): Այդ կապերի հիման վրա պարտադիր չէ գործից ավտոմատ հեռացումը: Այնուամենայնիվ, իրավիճակից կամ կապից է կախված դատավորի անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը: **Թե արդյոք այդ կասկածներն օբյեկտիվորեն հիմնավորված են, թե՛ ոչ, ավելի շատ կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և այն գործոնների թվից, որոնք այդ իմաստով պետք է հաշվի առնվեն: Սա, inter alia, պետք է ներառի այն, թե արդյոք դատավորի ազգականը ներգրավված է եղել տվյալ գործում, դատավորի ազգականի պաշտոնն այդ ընկերությունում, ընկերության չափը, դրա ներքին կազմակերպական կառուցվածքը, իրավաբանական ընկերության համար գործի նշանակությունը ֆինանսական իմաստով, և այդ ազգականի համար ցանկացած հնարավոր ֆինանսական շահը կամ հնարավոր օգուտը** (և դրանց չափը) («Նիկոլյասն ընդդեմ Կիպրոսի» [Nicholas v. Cyprus ], թիվ 63246/10, § 62, 2018 թվականի հունվարի 9):

Այնուամենայնիվ, հաշվի առնելով արտաքին հատկանիշների կարևորությունը, երբ առաջանում է նման իրավիճակ (ինչից կարող է առաջանալ կողմնակալության ենթադրություն կամ արտաքին հատկանիշ), այդ իրավիճակը պետք է բացահայտվի վարույթի սկզբում, և պետք է կատարվի գնահատում հաշվի առնելով առնչվող բոլոր գործոնները, որպեսզի որոշվի, թե արդյոք գործից հեռացնելն իսկապես անհրաժեշտ է, թե՛ ոչ: Սա կարևոր դատավարական երաշխիք է, որն անհրաժեշտ է օբյեկտիվ և սուբյեկտիվ անկողմնակալության մասով համապատասխան երաշխիքներ ապահովելու համար (սույն տեղում, § 64):

52. Սույն գործով որևէ նման բացահայտում տեղի չի ունեցել, և դիմումատուն հակառակորդի ներկայացուցչի և դատավորի միջև կապը բացահայտել է միայն առաջին ատյանի վճիռն ստանալուց հետո: Այդպիսով նա նաև հայտնվել է մի իրավիճակում, որտեղ այն իրավաբանական ընկերությունը, որը ներկայացրել է Բրիտանական խորհրդին, հիմնադրվել և կառավարվում էր դատավոր Ա.Մ.-ի քրոջ և փեսայի կողմից, իսկ նրա երկվորյակ եղբայրը՝ Ար.Մ.-ն, աշխատում էր այնտեղ որպես ավագ մասնագետ: Հայտնի չէ, թե արդյոք քույրը և փեսան ակտիվորեն ներգրավված եղել են գործում (համեմատության համար տե՛ս «Հուսեյնը և այլք ընդդեմ Ադրբեջանի» [Huseyn and Others v. Azerbaijan], թիվ 35485/05 և մյուս 3-ը, § 168, 2011 թվականի հուլիսի 26, և «Բելլիզզին ընդդեմ Մալթայի» (որոշում) [Bellizzi v. Malta (dec.)], թիվ 8162/13, § 61, 2011 թվականի հունիսի 21), և արդյոք նրանք ունեցել են ֆինանսական շահ գործի արդյունքի հետ կապված, թե՛ ոչ, սակայն **պարզ է, որ Ար.Մ.-ն ակտիվորեն ներգրավված է եղել գործի նախապատրաստման գործընթացում:** Այսպիսով ստեղծվել է կողմնակալության արտաքին հատկանիշ:

55. Վերը նշված նկատառումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ դատավոր Ա.Մ.-ի մասնակցությունը գործին առաջին ատյանի դատարանի վարույթը դարձրել է կողմնակալ, և այդ թերությունը բողոքարկմամբ չի վերացվել: (...):

**ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2006 թվականի թիվ 2006/23 բանաձևով հաստատված Դատավորների վարքագծի բանալորյան սկզբունքներից** անաչառության սկզբունքին վերաբերում է 2-րդ ցուցիչը, համաձայն որի՝ դատավորի անաչառությունն անհրաժեշտ պայման է ծառայողական պարտականությունների պատշաճ իրականացման համար: **Այն վերաբերում է ոչ միայն բուն վճիռն, այլ նաև վճիռը կայացնելուց առաջ տեղի ունեցող դատավարական գործողություններին:**

2.1 Դատավորը պարտավոր է իր ծառայողական պարտականություններն իրականացնել առանց Նախապատվության, կողմնակալության կամ խտրականության:

2.2 Դատական նիստի ժամանակ և դատարանի շենքից դուրս դատավորն իր վարքագծով պետք է նպաստի հանրության, իրավաբանի մասնագիտության ներկայացուցիչների և դատավարության կողմերի վստահության պահպանմանն ու բարձրացմանը դատավորի և դատական համակարգի անաչառության հանդեպ:

2.3 Դատավորը պետք է հնարավորինս իրեն այնպես պահի, որպեսզի նվազագույնի հասցնի դատական նիստը վարելու կամ դատական գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար բացարկի հիմք հանդիսացող դեպքերը:

2.4 (...):

2.5 Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ նա չի կարող գործով անաչառ որոշում կայացնել կամ երբ **անկողմնակալ դիտորդին թվում է, թե նա ի վիճակի չէ տվյալ գործով անաչառ որոշում կայացնել: Նման գործերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ՝**

**2.5.1 Դատավորն իրական կողմնակալություն և խտրականություն է ցուցաբերել կողմերից մեկի նկատմամբ** կամ դատավորին սեփական աղբյուրներից հայտնի են դարձել ապացուցողական բնույթի վիճելի փաստեր, որոնք վերաբերում են գործի վստահությանը:

2.5.2 Սույն վեճի առարկա գործով դատավորը նախկինում հանդես է եկել որպես փաստաբան կամ կարևոր վկա, կամ

2.5.3 դատավորը կամ դատավորի ընտանիքի անդամը նյութական շահ ունի վեճի առարկա գործի ելքով:

Դատավորի բացարկ չի կարող պահանջվել, եթե այլ դատավոր չի կարող նշանակվել տվյալ գործը քննելու համար կամ, գործի իրատարությունից ելնելով, դատավորի կողմից գործը չքննելը կարող է լուրջ դատական սխալի հանգեցնել:

Դատական նիստից դուրս դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ կողմերի և դատավարության այլ մասնակիցների հետ առանձին շփումից: Կանոնն արգելում է դատական նիստից դուրս դատավորի միակողմանի (ex parte) շփումները, քանի որ դա խախտում է

կողմերի հավասարության սկզբունքը: Նշված խախտումից բացի, դատական նիստերի դահլիճից դուրս դատավորի միակողմանի շփումները կարող են հասարակության մոտ կարծիք ձևավորել, թե դատավորը կարևորություն է տալիս դատական նիստերի դահլիճում ներկա չգտնվող անձի մասնավոր կարծիքին: Բացի դրանից, (ex parte) հաղորդակցության վտանգն այն է, որ դատավորը կարող է ստանալ ոչ ճշգրիտ տեղեկություն, որը կարող է նրան հեշտության մեջ կողմնորոշել: Շփման միակողմանիությունը նշանակում է, որ հաղորդակցությանը ներկա չեն դատավարության բոլոր կողմերը կամ նրանց փաստաբանները: Միակողմանի հաղորդակցությունն արգելված է, քանի որ այն կասկածի տակ է դնում դատավորի անկողմնակալությունը: Միակողմանի հաղորդակցության ընթացքում դատավորը կարող է ստանալ ոչ ստույգ կամ ոչ լիարժեք տեղեկություններ, որից կարելի է խուսափել, եթե ներկա գտնվեն գործի բոլոր կողմերը: Կողմերի, դատավարության այլ մասնակիցների հետ առանձին շփման ընթացքում գործի հանգամանքների քննարկումն անխուսափելիորեն նպաստում է դատավորի մոտ նախատրամադրվածության առաջացմանը: Միակողմանի շփումները վտանգավոր են նաև այն առումով, որ եթե հաղորդակցության չմասնակցած կողմը կասկածի կամ իմաստ մյուս կողմի հետ առանձին շփման մասին, նրա մոտ անխուսափելիորեն կարծիք կառաջանա, որ մյուս կողմն իր նկատմամբ առավելություն է ստացել: Նման դեպքերում, անկախ այն հանգամանքից՝ իրականում դատավորի մոտ կողմնակալությունն առաջացել է, թե՛ ոչ, նրա անաչառությունը կարող է կասկածի տակ դրվել և հանգեցնել նրա դեմ բացարկ ներկայացնելուն կամ նրա կայացրած դատական ակտի նկատմամբ անվստահության:

Կանոնը դատավորից պահանջում է ձեռնպահ մնալ որևէ կողմի կամ նրա ներկայացուցչի հետ առանձին շփումից: Դա նշանակում է, որ նախ՝ դատավորն ինքը չպետք է նախաձեռնի նման շփումներ, և երկրորդ՝ դատավորը չպետք է թույլ տա այդպիսի շփումներ, երբ դրանք նախաձեռնվում են կողմերը կամ այլ անձինք: Եթե իրավաբանը կամ կողմերից մեկի բարեկամը պատահաբար տեսնում է դատավորին սրահում և մի բան է ասում, իսկ դատավորը դեռևս վստահ է, որ ինքը կարող է արդար լինել, ապա դատավորը պետք է դատական նիստերի դահլիճում բոլոր կողմերի ներկայությամբ ներկայացնի, որ այդպիսի բան է պատահել, և որ ինքը կարող է շարունակել տվյալ գործի քննությունն անաչառորեն և արդար:

**1.3. Բարձրագույն դատական խորհրդի նախագահին ներկայացված բացարկի հիմքերը.**

Դատավորները և/կամ նրանց ներկայացուցիչները (այսուհետ նաև՝ Պատասխանող կողմ) կարգապահական վարույթի շրջանակներում Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի նկատմամբ, ի թիվս այլնի, բացարկի միջնորդություններ են ներկայացրել հետևյալ հիմքերով՝

**Ա.** Նախագահ Կ.Անդրեասյանը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ անձամբ և նրա մերձավոր ազգականը (Կ.Անդրեասյանի կինը) տնտեսական շահ ունի՝ կապված կողմերից մեկի (Միջնորդություն ներկայացրած Արդարադատության նախարարի կամ որևէ ուրիշ) և Լիազոր մարմնի) հետ.

**Բ.** Նախագահ Կ.Անդրեասյանը կանխակալ վերաբերմունք ունի սույն վարույթի ընթացքում որպես կողմ հանդես եկող անձի՝ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի (ընկերոջ) նկատմամբ.

**Գ.** Խորհրդի նախագահը դատական նիստից դուրս միակողմանի (ex parte) շփումներ է ունեցել սույն վարույթի շրջանակներում կողմ հանդիսացող Լիազոր մարմնի՝ Արդարադատության նախարար Գ.Մինասյանի հետ.

**Դ.** Մեկ այլ դատավորի (Վճռաբեկ դատարանի դատավոր Ս.Անտոնյան) վերաբերյալ վարույթի ընթացքում, որպես Խորհրդի նախագահ, Կ.Անդրեասյանը արտահայտել է Վճռաբեկ դատարանի դատավորների և նրանց կայացրած որոշումների վերաբերյալ քննադատական խոսք, որը վտանգում կամ կասկածի տակ է դնում նույն ատյանի դատարանի դատավորներ Ս. Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի վերաբերյալ սույն վարույթով իր անկախությունը և անաչառությունը, անկողմնակալ դիտորդի մոտ առնվազն ստեղծում է այդպիսի տպավորություն:

Վերոնշյալ միջնորդությունները Խորհրդի անդամների կողմից «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ դռնփակ նիստում ձայների մեծամասնությամբ մերժվել են, թեև Լիազոր մարմնի՝ Արդարադատության նախարար Գ.Մինասյանի նկատմամբ Խորհրդի նախագահի նախապատվության և կողմնակալության (անաչառ չլինելու) վերաբերյալ կասկածներն ըստ իս չեն փարատվել, ընդ որում՝ մերժման պատճառները Կողմերին նիստում գոնե հակիրճ չեն ներկայացվել՝ անհրաժեշտության դեպքում եզրափակիչ ակտում շարադրվելու հիմնավորմամբ:<sup>2</sup>

**1.4. «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (Օրենքի), ինչպես նաև այլ իրավական ակտերի համատեքստում «մերձավոր ազգական» և «լիազոր մարմին» տերմինների բացահայտում.**

1.4.1 Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ մերձավոր ազգական է՝ դատավորի ամուսինը:

1.4.2 Օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝  
«1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝ (...).

2) Լիազոր մարմինը.»:

**Օրենքի 151-րդ հոդվածի համաձայն՝**  
« 1. Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի Եռյան և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: **Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է Լիազոր մարմինը, ապա Լիազոր մարմինը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը** պարտավոր է ներկա լինել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: (...):»:

**«ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»** ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝

**«1. Նախարարը՝**  
1) ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է Կառավարության՝ նախարարությանը վերապահված

գործունեության ոլորտի քաղաքականությունը.

2) իրականացնում է նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպության կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ, այդ թվում՝ վերանայում է նախարարությանը ենթակա մարմնի որոշումները.

3) վարչապետին առաջարկություններ է ներկայացնում նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի հիմնական ուղղությունների վերաբերյալ.

4) Կառավարության քննարկման է ներկայացնում օրենքների և Կառավարության որոշումների նախագծեր:

2. Նախարարի հրապարակային ելույթները պետք է համահունչ լինեն Կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններին:

**3. Նախարարի հիվանդության, արձակուրդում գտնվելու կամ արտասահմանում գործուղման մեջ լինելու դեպքում նախարարին փոխարինող փոխնախարարն ամբողջ ծավալով իրականացնում է նախարարին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ Ազգային ժողովում»:**

**ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրության** համաձայն՝

«III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

(...).

11. **Նախարարությունն** իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

(...).

26) **օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում դատավորների, նոտարների, սնանկության կառավարիչների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը և դրա իրականացումը.**

(...).

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

(...):

14. **Նախարարը** ղեկավարում է նախարարության գործունեությունը:

15. (...):

16. Նախարարին **անմիջական հաշվետու են** նախարարի տեղակալները, գլխավոր քարտուղարը, գործակալության ղեկավարը, ենթակա մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարները, նախարարի խորհրդակցանք, օգնականը, մամուլի քարտուղարը և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

(...).

18. **Նախարարը՝**

1) **ինքնուրույն ղեկավարում է** նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը.

2) իրականացնում է նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպության, հիմնարկի կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ, այդ թվում՝ վերանայում է նախարարությանը ենթակա մարմնի որոշումները.

3) վարչապետին առաջարկություններ է ներկայացնում նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի հիմնական ուղղությունների վերաբերյալ.

4) նախարարությանը վերապահված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է նախարարության գործունեության հիմնական ուղղությունները.

5) վերահսկողություն է իրականացնում նախարարությանն ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը.

7) սահմանում է նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ հաստատելով դրանց կանոնադրությունները.

8) պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

9) սահմանում է յուրաքանչյուր նախարարի տեղակալի կողմից համակարգվող աշխատանքների (գործունեության) բնագավառները.

10) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անուհից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անուհից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

11) նշանակում և ազատում է իր խորհրդակցանին, մամուլի քարտուղարին, օգնականին, նախարարի տեղակալի օգնականին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

12) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է նախարարության համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

13) հաստատում է հաստիքացուցակը.

14) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

16) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

17) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

18) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ենթակա մարմնի, կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները և հանձնարարականները.

19) լսում է նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, գործակալությունների, ենթակա մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

20) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին

իրավական ակտեր:

19. **Նախարարի հիվանդության, արձակուրդում գտնվելու կամ արտասահմանում գործուղման մեջ լինելու դեպքում՝** նախարարին փոխարինող նախարարի տեղակալն ամբողջ ծավալով իրականացնում է նախարարին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ **Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում:**

20. **Նախարարի տեղակալը՝**

1) **գործում է նախարարից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքները (գործունեությունը) իրեն հանձնարարված բնագավառներում.**

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներին, գործակալություններին, ենթակա մարմիններին, կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է նախարարի հանձնարարականները, ապահովում է վերջիններիս կողմից նախարարի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով նախարարին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում նախարարին ներկայացնում է առաջարկություններ.

5) **իրականացնում է նախարարի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները»:** **«Նորմատիվ իրավական ակտերի մասին»** ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

**«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի, «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»** ՀՀ օրենքի և ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրության վերաբերելի նորմերի համադրված մեկնաբանման արդյունքներով, կիրառելով նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանելու վերը նշված կանոնները, կարելի է հանգել աներկրա եզրակացության, որ կարգապահական վարույթների շրջանակներում կողմ, այսինքն՝ Լիազոր մարմին է հանդիսանում ՀՀ Արդարադատության նախարարը, տվյալ դեպքում Գ.Մինասյանը, իսկ նրա տեղակալներից որևէ մեկը նախարարին վերապահված բացառիկ լիազորությամբ կարող է հանդես գալ միայն նախարարի հիվանդության, արձակուրդում գտնվելու կամ արտասահմանում գործուղման մեջ լինելու դեպքերում, երբ փոխարինում է նախարարին և միայն փոխարինման ժամանակահատվածում է փոխնախարարին իրավասու ամբողջ ծավալով իրականացնել նախարարին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու և վարույթի ընթացքում որպես Լիազոր մարմին հանդես գալու լիազորությունը:

Այլ կերպ, Որոշման մեջ, մասնավորապես՝ Արդարադատության նախարարի նկատմամբ հորհրդի նախագահի կողմնակալության խնդրի շուրջ վերլուծությունում օգտագործված «Լիազոր մարմնի ղեկավար» եզրույթը չի բխում սույն կարծիքում մեջբերված իրավակարգավորումներից. օրենսդիրը Լիազոր մարմինը նույնացնում է հատկապես Արդարադատության նախարարը պաշտոնը զբաղեցնող անձի կամ վերջինիս կողմից իր լիազորությունները ժամանակավորապես կատարելու անհնարինության դեպքերում՝ նրան փոխարինող տեղակալի և ոչ թե Արդարադատության նախարարության հետ:

**«Ղուլյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ-ը, կողմի նկատմամբ դատավորի անաչառության հարցի վերաբերյալ վերլուծություններ կատարելիս և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտում արձանագրելիս՝ ինքնին գործի նախապատրաստման գործընթացում ակտիվորեն ներգրավված լինելը և սկզբնական մի քանի նիստերում կողմի շահերը ներկայացնելը (հետագայում փոխարինվել է այլ ներկայացուցչով) Դատարանը բավարար է համարել՝ փաստելու, որ դատավորի հետ մերձավոր ազգակցական կապի մեջ գտնվող տվյալ անձը (դատավորի եղբայրը)՝ լիարժեքորեն հանդես է եկել որպես կողմ:**

Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների համաձայն՝ **դատավորի անաչառությունը վերաբերում է ոչ միայն բուն եզրափակիչ ակտին, այլ նաև այն կայացնելուց առաջ տեղի ունեցող դատավարական գործողություններին:**

Վարույթի նյութերի հետազոտմամբ, ինչպես նաև Կողմին ուղղված հարցերի պատասխաններով հաստատվեց, որ թեև կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ հորհուրդ է դիմել այդ օրը նախարարին փոխարինող փոխնախարար Լ.Բայանը, սակայն դատավորներ Ս.Թադևոսյանի, Ա.Խառատյանի, Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը<sup>3</sup> 2023 թվականի մարտի 27-ին կայացրել էր Արդարադատության նախարար Գ.Մինասյանը, ով հորհրդում տվյալ վարույթը քննվելու առաջին իսկ պահից մինչև վարույթի ավարտը շարունակում էր իրականացնել Լիազոր մարմնի պարտականությունները, թեև նիստին մասնակցում էր ներկայացուցիչների, այդ թվում՝ փոխնախարար Լ.Բայանի միջոցով: <sup>4</sup> Ընդ որում, «Ղուլյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ արտահայտած դիրքորոշումը սույն գործով հաստատված փաստական հանգամանքների վրա տարածելով՝ կարելի է արձանագրել, որ գործի նախապատրաստման գործընթացում ակտիվորեն ներգրավված լինելը, մասնավորապես՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշում կայացնելը, ինքնին բավարար է արձանագրելու, որ նախարար Գ.Մինասյանը սույն կարգապահական վարույթի շրջանակներում դատարանում հանդես է եկել որպես «մեղադրանքի» կողմ:

**1.5. Կողմի հետ տնտեսական շահերի առկայությունը՝ որպես դատավորին բացարկելու հիմք, վարույթով (դատաքննությամբ) պարզված փաստական հանգամանքներ.**

հորհրդին ներկայացված կարգապահական վարույթի նյութերում առկա փաստաթղթերի հետազոտման արդյունքներով, ինչպես նաև ընդհանուր հասանելի իրապարակային աղբյուրից (պաշտոնատար և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերի

ռեեստր) ստացված տեղեկատվությամբ պարզվեց, որ ՀՀ արդարադատության նախարար Գ. Մինասյանը և Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի կինը՝ Ե.Ա-ն, հանդիսանում են միևնույն առևտրային կազմակերպության՝ «Էյ Էմ Իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի համապատասխանաբար՝ 60 %-ի և 40 %-ի բաժնետերեր: Ընդ որում, տվյալ ընկերության բաժնեմասը Ե.Ա-ն ձեռք է բերել դեռևս 2012 թվականի մայիսի 21-ին, նվիրատվության կարգով, նվիրատու Գրիգոր Արայի Մինասյանից (ներկայիս Արդարադատության նախարարից):

Այլ կերպ՝ դատավորները և նրանց ներկայացուցիչները, դատաքննության ընթացքում համապատասխան ապացույցներ ներկայացնելով, հիմնավորել են, որ ԲԴԻ նախագահի կինը, ով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի մեկնաբանմամբ հանդիսանում է մերձավոր ազգական (հիմնավորումը տե՛ս Կարծիքի **1.4.1 կետում**), սույն Միջնորդությունը հարուցած և Բարձրագույն դատական խորհրդում որպես կողմ հանդես եկող լիազոր մարմնի՝ Արդարադատության նախարար Գ.Մինասյանի հետ ( հիմնավորումները տե՛ս Կարծիքի **1.4.2 կետում**) ունեն ընդհանուր տնտեսական շահ, որի մասին խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը գիտի, քանի որ այն հայտարարագրել է իր՝ 2022 թվականի տարեկան հայտարարագրի համապատասխան տողում: Ընդ որում, բաժնեմասի չափը և դրա առկայությունը ենթադրում է շահաբաժնի առկայություն, որը, յուրաքանչյուրի բաժնեմասին համապատասխան, պետք է բաշխվի և բաշխվել է ինչպես խորհրդի նախագահի կնոջ, այնպես էլ ողջամտորեն Նախարարի միջև:<sup>5</sup>

Ավելին, **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի** 201-րդ հոդվածի համաձայն՝ **ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով,<sup>6</sup> ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա:

Այլ կերպ՝ քննարկվող բաժնեմասից շահաբաժին (տնտեսական շահ) ստանալու իրավունքների նկատմամբ խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի կապն ամենևին էլ սահմանափակված չէ կնոջ՝ Ե.Ա-ի տվյալ ընկերության բաժնեմասի սեփականատեր հանդիսանալու և շահաբաժին ստանալու հանգամանքով, Նախարար Գ.Մինասյանի (կողմի) հետ խորհրդի նախագահի (դատավորի) ընդհանուր տնտեսական շահը նաև անմիջական է, քանի որ կնոջ շահաբաժնի 50 %-ն ուղղակի Կ.Անդրեասյանի սեփականությունն է (կնոջ շահաբաժնի այդ մասի նկատմամբ նա առնվազն ունի սեփականության իրավունք):

Տվյալ դեպքում բացակայում են **Օրենքի** 71-րդ հոդվածի 3-րդ մասում սպառիչ կերպով թվարկված իրավիճակները, որոնց պայմաններում տնտեսական շահի առկայության վերաբերյալ Պատասխանող կողմի փաստարկները կարող էին դիտարկվել որպես օբյեկտիվորեն չհիմնավորված, իսկ խորհրդի նախագահի հակափաստարկները՝ հիմնավորվորած:

Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու պարագայում վարույթ հարուցած Լիազոր մարմինը՝ նախարար Գ.Մինասյանն ապահովել է միայն այդ պաշտոնը զբաղեցնելու հետ անհամատեղելի գործունեությամբ չզբաղվելու օրենսդրական պահանջի կատարումը, սակայն շահաբաժին ստանալն ու դրա նկատմամբ սեփականության իրավունքի պահպանումը չի վերացնում Նախարարի և Կ.Անդրեասյանի (նաև վերջինիս կնոջ)՝ տնտեսական շահերով փոխկապակցված լինելու փաստը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը շահաբաժին է ստացել, ստանում և ստանալու իրավաբանական բնույթի ծառայություններ մատուցող, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սույն ընկերությունից: Վարույթ հարուցած անձը՝ նախարար Գ.Մինասյանը, որպես քննարկվող իրավաբանական անձի բաժնեմասի 60 %-ի սեփականատեր, ստացել և ստանալու է շահաբաժին՝ նույնիսկ իր բաժնեմասն հավատարմագրային կառավարման հանձնելու իրավիճակում, որից կարելի է եզրակացնել, որ առկա է դատավորի և (մեղադրող) կողմի փոխադարձ կապվածություն տնտեսական շահով, որի պայմաններում սույն վարույթով Կ.Անդրեասյանի կողմից (նախագահող) դատավորի գործառույթ իրականացնելն, ըստ իս, անթույլատրելի էր:

Քննարկելով տնտեսական շահի բացակայության և այդ հիմքով բացարկ հայտնելու միջնորդության անհիմն լինելու վերաբերյալ խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի՝ դատական նիստում ներկայացված հակափաստարկները, խորհրդի եզրափակիչ որոշման մեջ ներկայացված հիմնավորումները՝ գտնում են, որ դրանք ի գործ էն փարատել կողմերից մեկին՝ Լիազոր մարմնին նախապատվություն տալու և անաչառ չեղևալու վերաբերյալ Պատասխանող կողմի պնդումները, նրանց և արտաքին դիտորդի կասկածները:

**Փաստարկ 1.** Իր կինը, ով հանդիսանում է քննարկվող ՍՊ ընկերության բաժնետերերից մեկը (նաև տնօրեն է), կարգապահական վարույթի շրջանակներում կողմ չի հանդիսանում, վեճի ելքով շահ, առավել ևս՝ նյութական շահ չունի:

Խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի և կարգապահական վարույթ հարուցած Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի միջև առկա տնտեսական, ընկերական, աշխատանքային և քաղաքական կապերի առկայությանը և որոշման վրա դրանց ազդեցությունն ունեցած լինելու մասին պնդումների վերլուծությանը խորհուրդն անդրադարձել է Որոշման 73-րդ էջում: Հղում կատարելով դատավոր Ս.Ա-ի վերաբերյալ կարգապահական վարույթով կայացրած իր 26.01.2023 թվականի թիվ ԲԴԻ-1-Ո-Կ-4 որոշման վրա և վերլուծելով Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը՝ Որոշման մեջ խորհուրդը վերստին արձանագրել է հետևյալը. «**խորհրդի գնահատմամբ Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանված լինելով իբրև դատավորի անաչառության ապահովման երաշխիք, նպատակ ունի, ի թիվս այլնի, բացառել, որ դատավորը որոշում կայացնելիս կաշկանդած լինի կողմերից մեկի այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որը կարող է ֆինանսական հետևանքներ առաջացնել իր համար**»:

Կարծում են, որ խորհուրդը յուրովի է մեկնաբանել դատավորի բացարկման քննարկվող հիմքը Օրենքում ամրագրելու բուն նպատակը կամ այն միախառնել է տնտեսական շահերի հետ կապված մեկ այլ հիմքի հետ՝ հետևյալ հիմնավորումներով.

- Դատավորի և կողմի միջև առկա տնտեսական շահը, եթե նույնիսկ տվյալ վեճի առարկայի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի առնչվում, իր առկայության փաստով խախտում կամ ողջամտորեն կարող է ի վնաս մյուս կողմի խախտել կողմերի հավասարության սկզբունքը, այդ կողմի, ինչպես նաև անկողմնակալ դիտորդի տեսանկյունով առնվազն այդպիսի տպավորություն ստեղծել: Վերջինս (անաչառ չլինելու վերաբերյալ տպավորությունը) պակաս կարևոր գործոն չէ դատավոր բացարկման հարցը որոշելիս: Տնտեսական շահի առկայությունն ինքնին պարունակում է դատավորի անկախությունը վտանգող, դատավորի

կողմից գործը կողմնակալորեն քննելու և լուծելու մեծ ռիսկ, որի պատճառով կողմի հետ տնտեսական շահ ունենալու հանգամանքն հիմնավորված դիտարկվելու պարագայում տվյալ դատավորն իրավունք չունի քննել կոնկրետ այդ կողմի մասնակցությամբ որևէ գործ (անկախ պահանջի բովանդակությունից), ևս ենթակա է անվերապահ բացարկման, անշուշտ եթե չկան օրենքով սպառիչ կերպով թվարկված իրավիճակները, որոնց պայմաններում նույնիսկ այդ պարագայում դատավորը պարտավոր է քննել և լուծել նրան հանձնված գործը:

- Վեճի լուծմանը հաջորդող, հատկապես՝ դրա հետ փոխկապակցված գործընթացը, մասնավորապես՝ Որոշման մեջ հիշատակված «դատավորի համար ֆինանսական հետևանքներ առաջացնելու» ռիսկերի ստուգումը, առավել ևս՝ փաստումը, ևս չի հակառակ կողմը օբյեկտիվորեն չի կարող իրականացնել, բացի այդ՝ ժամանակավրեպ է, քանի որ վեճը, որը ենթադրաբար պետք է քննվեր ու լուծվեր անկախ և անաչառ դատարանի կողմից, ըստ էության քննվել և լուծվել է՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Դեռ ավելին, եթե անգամ այդ ստուգումը կողմին հաջողվի և ցանկալի արդյունք տա և եթե խորհրդի եզրափակիչ որոշման մեջ բացարկի մերժման պատճառի մասին հիշատակում լինի, միևնույն է, տվյալ եզրափակիչ ակտը բողոքարկման ենթակա չէ. կողմը **Օրենքով** գրկված է անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի իրապարակային քննության իրավունքի խախտումը վերադասության կարգով բողոքարկելու և վերականգնելու իրավական հնարավորությունից:

Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ նա չի կարող գործով անաչառ որոշում կայացնել կամ երբ անկողմնակալ դիտորդին թվում է, թե նա ի վիճակի չէ տվյալ գործով անաչառ որոշում կայացնել: Մասն գործերը ներառում են, սակայն չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ՝ (...) **2.5.3 դատավորը կամ դատավորի ընտանիքի անդամը նյութական շահ ունի վեճի առարկա գործի ելքով:**

Դատավորի համար նախատեսված նույն կանոնի պահանջներն ներպետական օրենսդրությամբ ավելի խիստ են, մասնավորապես՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ **դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել (բացարկն ընդունել), երբ գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:**

Այլ կերպ՝ ներպետական օրենսդրության դատավորի կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ Արդարադատության նախարարի հետ դատավորի և վերջինիս կին Ե.Վ-ի ընդհանուր տնտեսական շահերի առկայությունն ինքնին ինքնաբացարկի, ավելին՝ օրենքում ուղղակիորեն ամրագրված ինքնաբացարկի հիմք է, ընդ որում՝ վեճի էությունն ու բնույթը դատավորին բացարկելու տեսանկյունից որոշիչ նշանակություն չունեն, քանի որ **ընդհանուր տնտեսական շահով կողմի հետ դատավորի փոխկապակցվածությունն ինքնին բավարար է տվյալ դատավորին բացարկելու համար** (օրենսդիրը վերոնշյալ տրամը սահմանելիս՝ կիրառել է «կամ» շաղկապը):

**Փաստարկ 2.** Նիստում խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի նախաձեռնությամբ քննարկվեցին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողովին) ուղղված դատավոր Տ.Պետրոսյանի դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման որոշակի եզրահանգումներ, ու թեև դատավոր Տ.Պետրոսյանն այդ որոշումը խորհրդի անդամների ծանուցմանը չներկայացրեց, խորհրդի նախագահը՝ ևս, սակայն այն ողջամտորեն ազդել է խորհրդի անդամների մոտ ներքին համոզմունքի ձևավորման, այդ կերպ՝ նախարարի հետ Ե.Վ-ի տնտեսական շահի առկայության փաստարկով խորհրդի նախագահի դեմ ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունները մերժելու վերաբերյալ որոշումների<sup>8</sup> կայացման վրա:

Մինչդեռ, իրապարակային աղբյուրների համաձայն (<http://cpcarmenia.am/>)՝ Հանձնաժողովի տվյալ որոշման էլեկտրոնային տարբերակի ուսումնասիրությունից, բացարկի միջնորդությունների լուծման պահին առնվազն դրան ծանոթ խորհրդի անդամները կարող էին եզրակացնել մեկ բան՝ չանհատականացված և նիստում պատշաճ կարգով չիտազուտված (մինչև բացարկի միջնորդության վերաբերյալ որոշման կայացումը խորհրդի ոչ բոլոր անդամների հասու դարձած) տվյալ որոշումը, լինելով անհատական իրավական ակտ, միևնույն է, խորհրդակցական սեյսյակում չէր կարող քննարկվել, իսկ քննարկվելու պարագայում՝ դրվել խորհրդի անդամ Կ.Անդրեասյանին ներկայացված բացարկի միջնորդությունները<sup>9</sup> մերժելու որոշումների, ևս և խորհրդի եզրափակիչ որոշման հիմքում, քանի որ **այն վերաբերում է բացառապես Արդարադատության նախարար Գ.Մինասյանին**:

Ավելին, միայն սույն վարույթի ավարտից հետո պարզվեց, որ դատավոր Տ.Պետրոսյանը Հանձնաժողովին է դիմել երկու տարբեր դիմումներով, որոնցից մեկի շրջանակներում<sup>10</sup> Հանձնաժողովին ստուգելով և պարզելով, որ նախարար Գ.Մինասյանն «Էլ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում նրա ունեցած բաժնեմասն հավատարմագրային կառավարման է հանձնել այդ պահին գործող իրավակարգավորումներին համապատասխան, վարույթի հարուցումը մերժել է:

Մինչ վերոնշյալ դիմումի ներկայացումը դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից Հանձնաժողովին ներկայացրել էր մեկ այլ դիմում, որի ստուգման արդյունքներով **վարույթի հարուցումը դարձյալ մերժվել է (Հանձնաժողովի N 01-ԴՄ որոշում)**: Համաձայն այդ որոշման՝ դատավոր Տ.Պետրոսյանը, ի թիվս այլ հարցերի, խնդրել էր պարզաբանել՝ *արդյո՞ք Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հետ ընկերական, զաղափարական և ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված կապերի պայմաններում տվյալ հիմքով կարգապահական վարույթ հարուցելու նախարարի գործունեությունն ընդհանրապես և իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առնչությամբ՝ մասնավորապես, կոռուպցիոն առումով, ռիսկային չէ և չի հանգեցնում շահերի բախման, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների*:

Որոշման մեջ Հանձնաժողովը հղում է կատարել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, համաձայն որի՝ **«Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց**, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, **դատավորի, Բարձրագույն**

**դատական խորհրդի անդամի,** դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց **վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ»:**

Որոշման 18-րդ կետում, որը խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի կողմից նիստերի դահլիճում ամբողջությամբ հրապարակվեց, այն նաև արտացոլվել է Եզրափակիչ որոշման մեջ, Հանձնաժողովը կշռվի է հետևյալը.

«Սույն գործով՝ շահերի բախման համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում գնահատել՝ *արդյո՞ք ընկերական, զաղափարական կապերի և առկա ընդհանուր տնտեսական շահերի առկայության պայմաններում մի պետական մարմնի ներկայացուցչի՝ այս դեպքում Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելը հանգեցնում է վարքագծի կանոնների, շահերի բախման և անհամատեղելիության պահանջների խախտման:*

Այսպես, թե՛ ներպետական օրենսդրությամբ, թե՛ միջազգային չափորոշիչներով մասնավոր շահը ի պաշտոնե կատարած գործողության, անգործության կամ որոշման կայացումն է, որի արդյունքում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձը կամ կազմակերպությունը պաշտոնատար անձի կողմից դրսևորած գործողության, անգործության կամ կայացրած որոշման դիմաց ստանում է որևէ արտոնություն կամ առավելություն: Մինչդեռ, սույն դիմումով ներկայացրած փաստերի շրջանակում կարգապահական վարույթը ներկայացվում է Բարձրագույն դատական խորհուրդ, որը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կոլեգիալ մարմին, և ըստ Եուրոյան **ներկայացված փաստերով որևէ կերպ չի հիմնավորվում, թե կարգապահական վարույթ հարուցելով Արդարադատության նախարարն ինչ արտոնություն կամ առավելություն է տրամադրել իր հետ փոխկապակցված անձին կամ կազմակերպությանը:** Ընդ որում, ներկայացված հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունն Արդարադատության նախարարի համար սահմանված է օրենքով: Հետևաբար, **սույն գործով ներկայացված փաստերի համատեքստում կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես Արդարադատության նախարարի մասնավոր շահի սպասարկում:**<sup>11</sup> Մինչդեռ, շահերի բախումը անձի մասնավոր շահի անհարկի ազդեցությունն է պաշտոնեական պարտականությունների կատարման անաչառության վրա, օգուտ կամ առավելություն ասպահովելով իր հետ փոխկապակցված անձի կամ կազմակերպության համար»:

Վերոնշյալ պատճառաբանությամբ Հանձնաժողովը դատավոր Տիգրան Պետրոսյանի՝ 2023 թվականի մայիսի 30-ին ներկայացրած դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել է:

Տվյալ որոշման 18-րդ կետը խորհրդի նախագահի կողմից նիստում ամբողջությամբ հրապարակելու, այն, ինչպես նաև 17-րդ կետը Եզրափակիչ որոշման մեջ արտացոլելու փաստը վկայում է, որ իր (նաև իր կնոջ) և Նախարար Գ.Մինասյանի ընդհանուր տնտեսական շահերի առկայությունը Կ.Անդրեասյանը փորձել է հերքել՝ մասամբ հիմնվելով Հանձնաժողովի վերոնշյալ վերլուծությունների և եզրահանգման վրա, մինչդեռ այն Կ.Անդրեասյանին առհասարակ վերաբերելի չէր և ըստ օրենքի՝ չէր էլ կարող վերաբերելի լինել, հետևաբար՝ որոշամտորեն չպետք է դրվեր այդ հիմքով նրա դեմ ներկայացված բացարկման միջնորդությունները մերժելու՝ խորհրդի որոշումների կայացման հիմքում, ավելին՝ որպես հիմնավորում ներկայացվեր Եզրափակիչ որոշման մեջ:

Աներկբա է, որ 2023 թվականի մայիսի 30-ի դիմումի շրջանակներում Հանձնաժողովը քննարկել է բացառապես Լիազոր մարմնի՝ Արդարադատության նախարար Գ.Մինասյանի կողմից կարգապահական վարույթ հարուցելու լիազորության իրավաչափության հարցը՝ վերջինիս վարքագծի կանոնների, շահերի բախման և անհամատեղելիության պահանջների խախտման համատեքստում: Մինչդեռ Բարձրագույն դատական խորհրդում Պաշտպանական կողմը քննարկման առարկա է դարձրել խորհրդի կազմում նախագահ Կարեն Անդրեասյանի՝ սույն վարույթին մասնակցելու հնարավորության (կողմի հետ ընդհանուր տնտեսական շահեր ունենալու հիմքով անաչառ չլինելու, առնվազն անաչառ չերևալու) հարցը, նիստերի ժամանակ ներկայացրել նրան բացարկելու բավարար փաստական տվյալներ և իրավական հիմնավորումներ:

Ընդ որում, քննարկվող որոշումը կայացնելիս Հանձնաժողովի կիրառած իրավանորմի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ուղղակիորեն ամրագրված է, որ Հանձնաժողովն իրավասու չէր քննել և լուծել դատավորի կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամի, տվյալ դեպքում խորհրդի նախագահի վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ որևէ դիմում, սույնիսկ եթե Հանձնաժողովին առաջադրվելիս հատկապես խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանին վերաբերելի, հստակ ձևակերպված հարցադրումներ:

Անվիճելի է, որ դատարանի անկախության և անաչառության հարցը ստուգող և լուծող, կողմերին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքը՝ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի դատաքննության իրավունքն ասպահովող միակ իրավասու մարմինը հենց այդ դատարանն է,<sup>12</sup> տվյալ դեպքում որպես դատարան հանդես եկող Բարձրագույն դատական խորհուրդը, որն իրավասու չէր խորհրդի անդամի (դատավորի) և կողմի միջև տնտեսական շահի առկայության-բացակայության, վարույթի ելքի վրա դրա ազդեցության ռիսկերի առկայության, դրա բարձր-ցածր լինելու գնահատումն իրականացնել՝ հիմք ընդունելով այլ պետական մարմնի, քննարկվող դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ դատավորի անաչառության հարցին ոչ վերաբերելի եզրահանգումը:

Փաստարկ 3. Ինչպես վերը նշվեց, անընդունելի է և գործող իրավակարգավորումներից չի բխում նաև խորհրդի նախագահի այն պնդումը, թե իբր ընկերությունն հավատարմագրային կառավարման հանձնելու ողջ ժամկետում վերանում է նույն ընկերությունում բաժնետերերի ունեցած ընդհանուր տնտեսական շահը և այդ շահերով պայմանավորված՝ փոխկապակցվածությունը, այնքանով, որքանով բաժնեմասի առկայությունը ենթադրում է գոյացած շահաբաժնի բաշխում բոլոր բաժնետերերի, տվյալ դեպքում՝ Նախարարի և Կ.Անդրեասյանի (նաև վերջինիս կնոջ) միջև:

### **1.6. Կողմի հետ ընկերական հարաբերությունները՝ որպես դատավորին բացարկելու հիմք.**

«Ել էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ բաժնեմասի 40%-ը շուրջ 10 տարի առաջ նվիրատվության կարգով Կ.Անդրեասյանի կնոջն ի սեփականություն փոխանցելու փաստը վկայում է խորհրդի նախագահի և ներկայիս Արդարադատության նախարար Գ.Մինասյանի

միջև սերտ կապերի առկայության մասին, որոնք ոչ միայն ընկերական և գործընկերային են, այլ արտաքին դիտորդի մոտ ողջամտորեն կարող են ընկալվել նաև որպես միջընտանեկան: Կարգապահական վարույթի շրջանակներում ներկայիս Արդարադատության նախարար Գ.Մինասյանի միջև առկա ընկերական կապի առկայությունը հորհրդի նախագահ Կ.Անդրեասյանին ընդունել է, ավելին՝ այն հաստատվել է նաև ապացույցով (դատավոր Տ.Պետրոսյանի կողմից հորհրդին է ներկայացվել Կ.Անդրեասյանի համապատասխան ճեպագրույցի վերծանումը):

Այդ ապացույցի համաձայն՝ Կարեն Անդրեասյանը, որպես ՀՀ արդարադատության նախարար պաշտոնավարելիս, դեռևս 2022 թվականի հունվարի 27-ին ճեպագրույցի ընթացքում մեկնաբանելով Գրիգոր Մինասյանին իր տեղակալի պաշտոնում նշանակվելու հանգամանքը, հայտնել է հետևյալը. «Գրիգոր Մինասյանը իսկապես իմ ընկերն է, մենք նաև եղել ենք գործընկերներ, և քանի որ արդարադատության նախարարի տեղակալը, ինչպես մնացած բոլոր նախարարների տեղակալը, քաղաքական պաշտոն է, դա վկայում է այն մասին, և դա է հենց հիմքը, որ դու ընտրում ես ոչ միայն լավ մասնագետի, այլև վստահելի մասնագետի, որը քո հետ կհսում է քո գաղափարները»:

**Թեև իմ համոզմամբ դատավորի և վարույթի կողմի միջև ընկերական հարաբերությունների առկայությունն ինքնին ինքնաբացարկ հայտնելու կամ դատավորին բացարկելու բավարար հիմք (գործոն) չէ**, հատկապես, երբ խոսքը վերաբերում է իրավապահ մարմիններում տևական ժամանակ աշխատած, այնուհետև դատական իշխանություն տեղափոխված, այդ թվում՝ տարբեր ատյաններում դատավորի պաշտոն զբաղեցնող գործընկերներին, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ մեկ այլ՝ երևան քաղաքի առաջին ատյանի քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի նկատմամբ Արդարադատության նախարարի կողմից հարուցված, նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկված և **սույն վարույթի հետ զուգահեռաբար քննված վարույթով հորհուրդն այլևս ձևավորել էր նման պրակտիկա**, որի մասին տեղեկատվություն է առկա նաև հրապարակային աղբյուրներում՝ գանգվածային լրատվական միջոցներում՝ **գտնում եմ, որ հորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը**, ով դատավոր Դ.Հարությունյանի վարույթի շրջանակներում նախագահել է բոլոր նիստերը, այդ թվում՝ խորհրդակցական սեյանկում քննարկված՝ իմ դեմ ներկայացված ինքնաբացարկի միջնորդության լուծումը, մասնակցել է տվյալ վարույթով բոլոր քվեարկություններին, անկախ դատավոր Դ.Հարությունյանի վարույթով իմ դեմ ներկայացված բացարկի միջնորդությունը բավարարելուն դեմ կամ կողմ քվեարկելու հանգամանքի, **սույն վարույթով ևս ենթակա էր բացարկման**, այնքանով, որքանով նույնանման մոտեցում կողմի հետ ընկերական կապը որպես դատավորի կանխակալության և բացարկման հիմնավորում, հորհուրդը ցուցաբերել էր վերը նշված գործով ինձ բացարկելիս: Որպես բացարկման լրացուցիչ գործոն եմ դիտարկում այն, որ սույն դեպքում հորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը հանդես է եկել ոչ թե որպես դատավոր, այլ՝ որպես նիստերը նախագահող դատավոր:

Քննարկվող հիմքով իմ նկատմամբ Լիազոր մարմնի ներկայացրած բացարկի միջնորդությունը հորհրդի անդամների որոշմամբ բավարարվել է, սակայն սույն դեպքում, ընդամենը ժամեր անց՝ հորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի դեմ դատավորների ներկայացրած միջնորդությունները, որոնք դեմ Լիազոր մարմնի ներկայացուցիչները նիստում առարկեցին, մերժվել են, ընդ որում՝ թե՛ իմ նկատմամբ ներկայացված բացարկի միջնորդությունը բավարարելու, թե՛ հորհրդի նախագահի դեմ ներկայացված բացարկի միջնորդությունները մերժելու (տարբերակված մոտեցում ցուցաբերելու) պատճառները և հիմնավորումները նիստերի դահլիճում չեն հրապարակվել (Կողմերի և բացարկված դատավորին համար չեն բացահայտվել): Դրանք չեն բացահայտվել սույն վարույթով հորհրդի կայացրած եզրափակիչ որոշման մեջ, ավելին՝ իսկ սույն փաստական և իրավական հիմքով իմ դեմ ներկայացված բացարկի միջնորդությունը բավարարելու հիմնավորումները չեն ներկայացվել Դ.Հարությունյանի վերաբերյալ ԲԴԽ-57-Ռ-Կ-16 2023 թվականի հուլիսի 3-ի որոշման մեջ:<sup>13</sup>

Չուզահեռաբար ընթացող վարույթներով, բայցև նույնանման փաստական հանգամանքների պայմաններում Լիազոր մարմնի և հատկապես հորհրդի կողմից նման իրարամերժ մոտեցում ցույց տալու պատճառի մասին գուցե հնարավոր է կռահել սույն վարույթի շրջանակներում նիստը նախագահող Կ.Անդրեասյանի՝ Պատասխանող Կողմին ուղղված հարցադրումներից և դրանց շուրջ, հրապարակայնորեն արտահայտած նրա այն տեսակետից, ըստ որի՝ բացարկման հարցը լուծելիս որոշիչ է այն, թե դատավորի հետ ընկերական փոխհարաբերությունների մեջ գտնվող անձը վարույթի հատկապես որ կողմում է հանդես գալիս, մասնավորապես՝ պատասխանատվության ենթարկվող դատավորն է, թե վարույթ հարուցած, սակայն նիստերի դահլիճից բացակայող Արդարադատության նախարարը: Կարծում եմ, որ դատարանի անաչառության հարցը լուծելիս կողմերի նման տարանջատումը գուրկ է օբյեկտիվ որևէ հիմնավորումից, իսկ օրենքի վերոնշյալ մեկնաբանությունը, որն ըստ էության ընդունելի է համարվել հորհրդի անդամների մեծամասնության համար և դրվել իրարամերժ երկու որոշումների կայացման հիմքում, հակասում է ինչպես ներպետական, այնպես էլ կոնվենցիոն Նորմերի էությանը, հենված չէ նաև դրա վերաբերյալ ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային պրակտիկայի վրա:

### **1.7. Կողմի հետ դատավորի (ex parte) շփումները՝ որպես նրա կողմնակալության փաստարկ.**

Լիազոր մարմնի (կողմի) հետ հորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի ընդդիմազերծ շփման իրավաչափության հարցին հորհուրդն անդադարձել է Որոշման 78-79 էջերում, որում հղում է կատարվել Օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետի վրա, համաձայն որի՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ, ինչպես նաև 89-րդ հոդվածի 1-ին մասի 18.1 կետի վրա, համաձայն որի՝ Բարձրագույն դատական խորհուրդը քննարկում է դատարանների բնականոն գործունեության հարցերը, իր լիազորությունների շրջանակում լուծում դրանք կամ դրանց լուծման նպատակով դիմում պետություն և տեղական ինքնակառավարման մարմիններ:

Հորհուրդն արձանագրել է, որ «վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հորհրդի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեությունն ապահովելու, իսկ հորհրդի անդամը դատարանների բնականոն գործունեության հարցերի

իրենց լիազորությունների շրջանակում լուծելու նպատակով հնարավորություն ունեն մասնակցել քննարկումների: Հակառակ դեպքում, նկատի ունենալով Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական վարույթների քննության տևողությունը և թվաքանակը, Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեությունը կարող է պարալիզացվել, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ընդհուպ իրավական անվտանգության խնդիրների առաջացմանը, ինչով և պայմանավորված Բարձրագույն դատական խորհրդի հիմնադրումից ի վեր, նման հանդիպումների, այդ թվում՝ դատարանների բնականոն գործունեության ապահովման համատեքստում անհրաժեշտ այլ աշխատանքային պրոցեսների (հեռահաղորդակցություն, նամակագրություն, հանդիպում քննարկումներ և այլն) իրականացման մասին չի բարձրաձայնվել»:

Նիստում խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի արված մեկնաբանություններով, խորհրդի եզրափակիչ որոշման վերոնշյալ մեքբերումներով ոչ միայն չփարատվեց սույն վարույթի ընթացքում որպես Լիազոր մարմին հանդես եկած, այդ կերպ՝ վարույթի կողմ հանդիսացող Արդարադատության նախարար Գ.Մինասյանի հետ խորհրդի նախագահի միակողմանի շփվելու փաստը, այլ հաստատվեց ինչպես դա, այնպես էլ դրա պարբերական բնույթ կրելու հանգամանքը (ընդունված պրակտիկա է): խորհրդի նախագահն ըստ էության չէր քննադատում պարբերաբար, այդ թվում՝ վարույթների, ենթադրաբար նաև սույն կարգապահական վարույթը Բարձրագույն դատական խորհրդում քննվելու ժամանակահատվածում նախարարի հետ նման շփումներ ունենալու հանգամանքը, որը հաստատվել է նաև նրա ստորագրությունը կրող եզրափակիչ որոշմամբ: Արդարադատության նախարարի և Կ.Անդրեասյանի միջև նման շփումների առկայությունը խորհուրդը պայմանավորել է խորհրդի նախագահի՝ Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների և պաշտոնատար անձանց հետ փոխհարաբերություններում ի պաշտոնե ներկայացնելու լիազորությունն իրացնելու, դատարանների բնականոն գործունեության հարցերը քննարկելու և լուծելու

անհրաժեշտությամբ,<sup>14</sup> որը, խորհրդի եզրափակիչ որոշման համաձայն, օրենքով թույլատրելի է:<sup>15</sup> Ավելին՝ ըստ եզրափակիչ որոշման՝ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծման առաջին իսկ օրվանից նման շփումները կրում են պարբերական բնույթ և այդ պրակտիկան պահպանվում է խորհրդում նաև Կ.Անդրեասյանի նախագահության օրոք:

Գտնում են, որ վերոնշյալ (վարչարարական) լիազորության առկայությունը չի թույլատրում խորհրդի նախագահին խորհուրդ մուտքագրված կարգապահական որևէ վարույթի, այդ թվում՝ սույն վարույթի ողջ ժամանակահատվածում միակողմանի (հատկապես ոչ հրապարակային) շփումներ ունենալ վարույթի որևէ մասնակցի և/կամ նրա ներկայացուցչի, այդ թվում՝ Լիազոր մարմնի հետ՝ ի դեմս Արդարադատության նախարար Գ.Մինասյանի, եթե նույնիսկ այդ հանդիպումը կայացել է խորհրդի վարչական շենքին շատ մոտ գտնվող սննդի կետում և դրանում արձարծվել է վարույթին ոչ վերաբերելի, օրինակ՝ դատական իշխանության և դատավորների համար խիստ արդիական թեմա:<sup>16</sup> Ընդ որում, նման շփումները, որոնք իրավաչափորեն բովանդակում են վարույթին մասնակցող կողմերի հավասարության սկզբունքը խախտելու ռիսկեր, արգելված են, եթե անգամ գործնականում հնարավոր լինեք հաստատել, որ շփման ընթացքում վարույթի հետ կապված որևէ քննարկում տեղի չի ունեցել:

Ավելին, նման շփումներն անձամբ չնախաձեռնելու հետ մեկտեղ՝ խորհրդի նախագահը պարտավոր է կարգապահական վարույթների ժամանակահատվածում ձեռնպահ մնալ այդպիսի շփումներից, եթե անգամ դրանք նախաձեռնել էին կողմերը կամ նրանց ներկայացուցիչները, իսկ եթե նման շփումը, այնուամենայնիվ, պատահականորեն տեղի է ունեցել, խորհրդի նախագահը (անդամը) պարտավոր էր հերթական դատական նիստի ժամանակ կողմերին տեղեկացնել այդ շփման մասին և նշել, որ ի վիճակի է օբյեկտիվորեն՝ անաչառ և արդար կերպով շարունակել վեճի քննությունը, անշուշտ, եթե նրա մոտ առկա է նման համոզվածություն:

Միակողմանի շփումները տվյալ դեպքում վտանգավոր էին նաև այն առումով, որ Լիազոր մարմնի հետ խորհրդի նախագահի առանձին շփման մասին տեղեկացած, այդ հաղորդակցությանը չմասնակցած Պատասխանող կողմի մոտ անխուսափելիորեն կարծիք է ձևավորվել առ այն, որ կարգապահական վարույթ հարուցած կողմն իրենց նկատմամբ դատարանում առավելություն է ստացել: Նման դեպքերում, անկախ այն հանգամանքից՝ իրականում շփման արդյունքում խորհրդի նախագահի մոտ կողմնակալություն առաջացել է, թե՛ ոչ, նրա անաչառությունը լուրջ կասկածի տակ է, նա ենթակա է բացարկման (չպետք է մասնակցի վարույթին), հակառակ պարագայում ողջամտորեն ձևավորվում է՝ վարույթի անարդարացի լինելու վերաբերյալ ընկալում և կոլեգիալ կազմով խորհրդի (դատարանի) կողմից կայացվող միջանկյալ և եզրափակիչ դատական ակտերի նկատմամբ անվստահություն:

Վերը նկարագրվածը, որը սույն Կարծիքում ներկայացվում է բացառապես դատավորի (խորհրդի նախագահի) անաչառության վերաբերյալ ծագած կասկածների հիմնավորվածությունը ստուգելու տեսանկյունով, դատավորի համար նաև վարքագծի ընդհանուր կանոն է, որն ամրագրված է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում: Համաձայն այդ նորմի՝ **ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում** դատավորը պարտավոր է՝ չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության ( «ex parte», այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, իսկ դատավորի կամքից անկախ ընդդիմազերծ շփումներ տեղի ունենալու դեպքում առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնել դրանց բովանդակությունն այն կողմին, որը մասնակցից չի եղել այդ շփումներին՝ հնարավորություն տալով արձագանքելու: Սույն կանոնից բացառությունները թույլատրելի են միայն հետևյալ դեպքերում.

ա. երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ՝ դատական նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ դատավարության կազմակերպման այլ դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, **և դատավորն առաջին իսկ հնարավորության պարագայում հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու,** բ. երբ դատավորի կողմից միակողմանի շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Գտնում են նաև, որ նախարար Գ.Մինասյանի հետ միակողմանի շփման մասին

տեսանյութի՝ անանուն աղբյուրից կամ կեղծ օգտատիրոջ անունից («Ֆեյք պրոֆիլից») տարածվելու և ապացուցողական արժեք չներկայացնելու՝ նիստում ներկայացված փաստարկը՝ այդ տեսանյութը սոցիալական ցանցով շրջանառվելու, տեսանյութում երևացող անձանց՝ Նախարարի և Խորհրդի նախագահի հետո նույնականացնելու հնարավորության, Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի կողմից այդ շփումներն, այդ թվում՝ սույն վարույթի ընթացքում տեղի ունեցած շփումը, ըստ Էուբայի չհերքելու պայմաններում, բավարար չէ այն անտեսելու և Նախագահող դատավորի անաչառության հետ կապված խնդրի լուծման ժամանակ քննարկման առարկա չդարձնելու համար ( ի պաշտոնե իրավապաշտպան ֆունկցիա իրականացնող դատավորի վերաբերյալ կարգապահական վարույթի շրջանակներում հանրային շահը տվյալ իրավիճակում գերակայում է):

Խորհրդի նախագահն առնվազն պարտավոր էր Լիազոր մարմնի հետ ինչպես տվյալ շփման փաստի, այնպես էլ դրա բովանդակության մասին առաջին իսկ հնարավորության դեպքում տեղեկացնել վարույթի մյուս (Պատասխանող) կողմին և Խորհրդի մյուս անդամներին, ինչը չի կատարել, որը ևս սույն վարույթով նրա անաչառ չլինելն հաստատող լրացուցիչ գործոն է:

**1.7.1. Բանգալորյան սկզբունքների /Ցուցիչ 6-ի / 6.1 կետի համաձայն՝ դատավորի ծառայողական պարտականությունները գերակա են գործունեության մյուս բոլոր ձևերի նկատմամբ, իսկ «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի պաշտոնե գործելիս (...) դատավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:**

Գտնում են, որ Խորհուրդն այլ մարմինների և պաշտոնատար անձանց հետ ներկայացնելու լիազորության առկայությունը, որի իրականացման ընթացքում Խորհրդի նախագահը հանդես էր գալիս որպես դատավոր, իսկ Խորհուրդը՝ որպես դատարան, սույն Կարծիքի **1.7.1. կետում** նշված իրավական կարգավորումների համատեքստում ողջամտորեն չի կարող հիմնավորել կարգապահական վարույթի ողջ ընթացքում վարույթի կողմի հետ միակողմանի շփումներ ունենալու դատավորի (Խորհրդի նախագահի) վարքագծի իրավաչափությունն՝ այն տեսանկյունով, որ Խորհրդի նախագահի (դատավորի) պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ (վարչարարական) գործունեության նկատմամբ, հետևաբար՝ **քննարկվող ընդհիմագերծ շփումը, հատկապես դրա փաստի և բովանդակության մասին մյուս կողմին չտեղեկացնելու, դրա մասին այդ կողմին միայն այլ աղբյուրից հայտնի դառնալու պարագայում, ողջամտորեն կարող էին ձևավորել և ձևավորել են Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի անաչառ չլինելու (կանխակալ լինելու) վերաբերյալ չփարատված կասկածներ և մտահոգություններ:**

**1.8. Իր՝ որպես դատավորի անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնող քննադատական խոսք.**

Վճռաբեկ դատարանի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված և լիազորությունները դադարեցված մեկ այլ դատավորի (դատավոր Ս.Ա-ի) վերաբերյալ վարույթով դռնբաց դատական նիստի ընթացքում, որպես նախագահող դատավոր, Կ.Անդրեասյանը (հրապարակայնորեն) քննադատական արտահայտություններ է հնչեցրել 2007-2013թթ. ընթացքում Վճռաբեկ դատարանում պաշտոնավարող դատավորների նկատմամբ,<sup>17</sup> քննադատել նմանատիպ գործերով մի դեպքում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, մյուս դեպքում չընդունելու վերաբերյալ նրանց կայացրած որոշումները, այն պայմանավորելով դատավորների անձնական (գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից զանգեր ստանալու) կամ այսպես կոչված «տնտեսական շահերի» առկայության կամ բացակայության հանգամանքով:

Հրապարակային աղբյուրներից (համացանց) ստացված տեղեկատվության համաձայն՝ Վճռաբեկ դատարանում Կ.Անդրեասյանի նշած ժամանակահատվածում պաշտոնավարել են նաև դատավորներ Տիգրան Պետրոսյանը և Արտակ Բարսեղյանը, ովքեր 2009 թվականի հունվարի 15-ից նշանակվել և մինչև սույն վարույթով նրանց լիազորությունների դադարեցումը զբաղեցրել են ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոններ:

Սույն հիմքով Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի նկատմամբ ներկայացված բացարկի միջնորդությունը ևս մերժվել է Խորհրդի կողմից արձանագրային որոշման կայացմամբ (Խորհրդակցական սենյակում): Ավելին, դրա մերժման հիմքերի և հիմնավորումների մասին որևէ խոսք չկա Խորհրդի եզրափակիչ որոշման մեջ, որի պայմաններում մերժման պատճառները սույն վարույթի կողմերի և անկողմնակալ դիտորդի համար այդպես էլ մնաց չբացահայտված:

Բացարկման վերոնշյալ հիմքի առնչությամբ սույն վարույթով կիրառելի է ԲԴԿ-57-Ո-Կ-16 2023 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Խորհրդի արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը.<sup>18</sup> «(...) **դատավորը պարտավոր է դրսևորել բավարար շրջահայացություն, զսպվածություն և խուսափել դատարանի գործողությունները և որոշումները կասկածի տակ դնելուց:** Ավելին, **Դատավորի արտահայտությունները, որոնք հրապարակայնորեն կասկածի տակ են առնում իբրև դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհրդի գործողությունները, դատական ակտերը, հանդիսանում են դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագծի դրսևորումներ:** Սույն վարույթի շրջանակներում Խորհուրդը կարևոր է համարում արձանագրել, որ այն իրավիճակներում, երբ դատավորները դատական համակարգի անկախության և հանրային վստահության բարձրացման նպատակով իրենց խոսքի ազատության իրավունքի շրջանակներում հանդես են գալիս հրապարակային քննադատությամբ կամ որևէ այլ կերպ ներկայացնում են առանցքային հարցերի վերաբերյալ իրենց մտտեցումները, ապա նրանք նախևառաջ պարտավոր են հաշվի առնել, որ իրենց հայտարարությունների թիրախը չի սահմանափակվում իրավաբանական հանրույթով, այլ ներառում է հասարակության բոլոր շերտերը, և նրանք պարտավոր են ցանկացած հարցի վերաբերյալ ներկայացնել համապարփակ և մանրամասն բացատրություններ: Այսինքն, **դատավորները պարտավոր են բոլոր տեսակի քննադատությունները կամ դիրքորոշումները ներկայացնել մատչելի լեզվով, առավելագույնս հիմնավորել դրանք և անկողմնակալ դիտորդի տեսանկյունից հնարավորինս պահպանել անաչառությունը»:**

(...)

«Դատավորները, հաշվի առնելով իրենց խոսքի ազդեցիկությունը, պարտավոր են հանրությանը մանրամասն բացատրել իրենց քննադատության պատճառները և հիմնավորումները: Ավելին, յուրաքանչյուր դեպքում դատավորները պետք է դրսևորեն

**հավասարակշիռ մոտեցում, խուսափեն որևէ կողմնակալության տպավորություն ստեղծելուց և փոխարենը ձգտեն արդարացի և բազմակողմանի ներկայացնել խնդրի բոլոր կողմերը»:** <sup>19</sup>

Տվյալ դեպքում Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը, մեկ այլ վարույթ շրջանակներում նախագահած դատական նիստում հանդես գալով Վճռաբեկ դատարանի դատավորների և նրանց կայացրած, իր մեկնաբանմամբ տարբերակված որոշումների հրապարակային քննադատությամբ, դրանց պատճառների իր մեկնաբանություններով և այդպես էլ ներկայացնելով առանցքային այդ հարցերի վերաբերյալ իր մոտեցումները, պարտավոր էր խոսքի ազատության իր իրավունքի շրջանակներում ներկայացնել բարձրացրած վերոնշյալ հարցերի վերաբերյալ համապարփակ և մանրամասն բացատրություններ, ինչը չի կատարել:

Նման պայմաններում սույն վարույթի շրջանակներում քննարկվող հարցի շուրջ Խորհրդի նախագահի բացատրությունն ու հակափաստարկները՝ տվյալ քննադատության համար հիմք հանդիսացած տվյալները Մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դառնալու կամ տարբերակված որոշումների մասին խոսելիս՝ Սահմանադրական դատարանի (այսուհետև՝ ՍԴ) որոշումներով արձանագրված խախտումների վրա հիմնվելու վերաբերյալ, նախ՝ ժամանակավրեպ են, քանի որ պետք է մանրամասնվեն և համապարփակ ձևով ներկայացվեն հանրությանը: Բացի այդ, քննադատական խոսքը ներկայացված ճճով և բովանդակությամբ <sup>20</sup> չէր կարող արտացոլված լինել ինչպես ՍԴ որոշումների մեջ, այնպես էլ ՄԻՊ Կ.Անդրեասյանի գեկույցում:

Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին քննադատելու ենթատեքստը, որն առանց անհրաժեշտության ինչեցվել է այլ վարույթով դատական նիստի ընթացքում, չի եղել հիմնավորված, մանրամասն և համապարփակ, որպիսի բացերը ողջամտորեն չեն լրացվել նաև սույն նիստով Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի ներկայացրած բացատրություններով:

Անկողմնակալ դիտորդի տեսանկյունից Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի անաչառությունը կասկածի տակ գտնող տվյալ իրավիճակում, քննարկվող հարցի վերաբերյալ նրան ուղղված հարցադրմանն ի պատասխան՝ Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը թեև նշեց, որ Վճռաբեկ դատարանի դատավորներին ու նրանց կայացրած դատական ակտերին ուղղված իր վերոնշյալ քննադատական խոսքն սույն վարույթով անցնող դատավորներ Տ.Պետրոսյանին և Ա.Բարսեղյանին չի վերաբերել, սակայն սույն վարույթով նրանց ևս վերագրվում էր Վճռաբեկ դատարանի համապատասխան պայտի դատավորի պաշտոնը զբաղեցնելու՝ Կ.Անդրեասյանի հիշատակած ժամանակահատվածում Վճռաբեկ բողոքն ենթադրաբար անհիմն կերպով վերադարձնելու (ըստ էության քննության չառնելու) որոշման կայացում, ավելին՝ նրանց լիազորությունները սույն վարույթի արդյունքներով էական կարգապահական խախտում կատարելու պատճառաբանությամբ ևս դադարեցվեցին:

**1.9. Դատավորի բացարկման ենթակա լինելու վերաբերյալ ամփոփ եզրահանգում.**

Դեկավարվելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքում ձևավորված՝ դատավորի անաչառության ստուգման սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշներով, հաշվի առնելով սույն վարույթով պարզված փաստերն ու դրանց վերաբերյալ Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանից ստացված պարզաբանումները, Խորհրդի եզրափակիչ որոշման վերաբերելի պատճառաբանությունը, ինչպես նաև վարույթի շրջանակներում բացահայտված և սույն Կարծիքի **1.2 - 1.8 կետերում** ներկայացված փաստական տվյալները, մասնավորապես՝ որպես դատարան հանդես եկող Խորհրդում նախագահող Կ.Անդրեասյանի և վարույթի կողմ չչ արդարադատության նախարար Գ.Մինասյանի փոխհարաբերությունների սերտության աստիճանի և բազմաշերտության մասին վկայող հետևյալ գործոնները՝

- ընդհանուր տնտեսական շահեր,
- ընկերական, միջընտանեկան, ապա նաև գործընկերային (Արդարադատության նախարար և տեղակալ) փոխհարաբերություններ,
- սույն վարույթի ընթացքում Լիազոր մարմնի հետ միակողմանի («ex parte») շփում,
- Պատասխանող կողմի հարուցած միջևորդությունների <sup>21</sup> մերժմանն ակտիվ <sup>22</sup>

մասնակցություն, եզրափակիչ ակտով Լիազոր մարմնի ներկայացրած միջևորդության բավարարում բոլոր դատավորների <sup>23</sup> լիազորությունների դադարեցմամբ, <sup>24</sup> միջևորդության մեջ նշված կարգապահական խախտման սահմանների անցմամբ, <sup>25</sup> ինչպես նաև՝

- Վճռաբեկ դատարանի դատավոր Ս.Ա.ի վերաբերյալ վարույթով որպես նախագահող դատավոր տվյալ դատարանի այլ դատավորների նկատմամբ ապանձնավորված կերպով քննադատական արտահայտություններ անելու և 2007-2013թթ. ընթացքում նրանց կայացրած դատական ակտերի մի մասի իրավաչափությունը կասկածի տակ դնելու պայմաններում անուղղակիորեն նաև դատավորներ Տիգրան Պետրոսյանի և Արտակ Բարսեղյանի նկատմամբ իր՝ որպես դատավորի անաչառությունը կասկածի տակ դնելու վարքագիծը,

այն կարծիքին եմ, որ **Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը չի տրամադրել բավարարելիքներ՝ բացառելու սույն վարույթով իր կողմնակալ չլինելու վերաբերյալ ներկայացված և օբյեկտիվորեն հաստատված փաստերը, դրանց հիման վրա ծագած իրավաչափ կասկածները: Ավելին, սույն վարույթի ընթացքում նախագահելով Խորհրդում և Խորհրդի կազմում մասնակցելով նիստերի վարման և որոշումների կայացման գործընթացին Կ.Անդրեասյանը դրանով իսկ կասկածի տակ է դրել ողջ Խորհրդի անաչառությունը և նվազեցրել այդ մարմնի անունից կայացված եզրափակիչ ակտի նկատմամբ վստահությունը:** <sup>26</sup>

Այն, որ Խորհրդի նախագահը, սույն վարույթի շրջանակներում որպես նախագահող դատավոր հանդես գալիս, իր պարտականություններն իրականացրել է՝ նախապատվություն տալով <sup>27</sup> որպես կողմ հանդես եկող Արդարադատության նախարարին (Լիազոր մարմնին), ըստ իս, հիմնավորվում է նաև հետևյալ փաստարկներով.

Ա. Լիազոր մարմնի՝ նախարար Գ.Մինասյանի ներկայացրած կարգապահական միջևորդության լուծման արդյունքներով Խորհուրդը, նախագահությամբ Կ.Անդրեասյանի, բավարարել է այն, ընդ որում՝ անխտիր բոլոր դատավորների <sup>28</sup> նկատմամբ, ավելին՝ կիրառել է կարգապահական տույժի առավել խիստ տեսակը՝ դատավորի լիազորությունների դադարեցումը,

Բ. Խորհուրդը, նախագահությամբ Կ.Անդրեասյանի, վարույթով անցնող դատավորների արարքները գնահատելիս, ըստ էության իրականացրել է վարույթի կողմի, տվյալ դեպքում կարգապահական վարույթ հարուցած (Լիազոր) մարմնի գործառույթ, այն է՝ նախ՝ հետևանքների մասով լրացրել է դատավորներին վերագրված դատավարական իրավունքի նորմի խախտման փաստակազմը, ապա՝ եզրափակիչ որոշմամբ այն վերադարձնելով

դիտարկել է որպես Էական կարգապահական խախտում: <sup>29</sup>

9. Պատասխանող կողմը, ով նախ՝ Լիազոր մարմնի առջև բարձրացրել էր սույն կարգապահական վարույթով կիրառման ենթակա և վարույթի ելքի վրա ողջամտորեն ազդող օրենքի հակասահմանադրականության հարց, սակայն ստացել մերժում, նույնաբովանդակ միջնորդությամբ հանդես եկավ նաև Բարձրագույն դատական խորհրդում: Սակայն, Կ.Անդրեասյանի նախագահությամբ խորհուրդը տվյալ միջնորդությունը, ըստ իմ՝ ոչ իրավաչափորեն, մերժեց՝ թեև նիստում Լիազոր մարմնի դիրքորոշումը կառուցված էր նաև այն տրամաբանության վրա, որ Լիազոր մարմինը օժտված է կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության հարցը ինքնուրույնաբար ստուգելու և պարզելու լիազորությամբ, այդ հարցը, անշուշտ բավարար հիմքերի առկայության պարագայում, գտնվում է դատարանի, տվյալ դեպքում՝ որպես դատարան հանդես եկող Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների սիրույթում: <sup>30</sup>

Վերոնշյալ փաստարկներով առավել ամրապնդել է անաչառ չլինելու (կողմնակալության) վերաբերյալ խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի նկատմամբ ծագած կասկածները և մտահոգությունները, ինչը նաև ձևավորել է խորհրդի կայացրած եզրափակիչ ակտի նկատմամբ անվստահություն:

Աներկբա է, որ «**ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը կարգապահական վարույթի շրջանակներում կայացվող միջանկյալ (այդ թվում՝ բացարկի վերաբերյալ) և եզրափակիչ ակտերը բողոքարկելու ընթացակարգ չի նախատեսում**, մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, <sup>31</sup> որով որոշակի իրավիճակներում ղեկավարվում է նաև խորհուրդը, նման հնարավորություն, այնուամենայնիվ, նախատեսում է (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ և 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ): Ընդ որում, վարչական դատավարությունում բացարկի կամ ինքնաբացարկի հարցով որոշման վիճարկումն հնարավոր է իրականացնել ինչպես անմիջական, այնպես էլ հետաձգված (վերջնական ակտի հետ միաժամանակ) բողոքարկման ընթացակարգերով:

Վերոնշյալ իրավակարգավորումների պայմաններում խորհրդի կողմից բացարկի միջնորդության վերաբերյալ խորհրդակցական սենյակում որոշում կայացնելու, դրա եզրափակիչ մասը նիստում հրապարակելու, բայց **որոշման պատճառները (գոնե ընդհանուր գծերով) վարույթի կողմերին և բացարկված դատավորին չներկայացնելու ձևավորված պրակտիկան էլ ավելի է սահմանափակում կողմերի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից արդար(ացի) դատաքննության իրավունքը**. բացարկի մերժման փաստական և իրավական հիմնավորումները եթե նույնիսկ խորհրդի եզրափակիչ որոշման մեջ (այսինքն՝ դատաքննության ավարտից հետո) լիարժեքորեն ներկայացվեն, այդ միջնորդությունը ներկայացրած կողմը, ի տարբերություն վարչական դատավարության վերոնշյալ կարգավորումների, զրկված է եզրափակիչ որոշումը ներպետական որևէ աստիճանում (դատարանում) նույնիսկ հետաձգված բողոքարկման ընթացակարգով վիճարկելու իրավական հնարավորությունից:

Խորհրդի անդամի (դատավորի) դեմ ներկայացված բացարկը մերժելու որոշումն անմիջականորեն կամ հետաձգված եղանակով բողոքարկելու անհնարինության վերաբերյալ առկա իրավակարգավորման պայմաններում **խորհրդի վերոնշյալ որոշումները, ըստ իս, պետք է**

- **լինեն առավել պատճառաբանված և հիմնավորված, ինչը հնարավոր է միայն այն առանձին փաստաթղթի ձևով կազմելու պարագայում,**
- **տրամադրվեն վարույթի կողմերին այդ որոշման հրապարակումից անմիջապես հետո, իսկ եթե դա օբյեկտիվորեն հնարավոր չէ՝ հնարավոր սեղմ ժամկետում՝ մերժման պատճառները նիստում անհապաղ հրապարակելու պայմանով:**

Ըստ իս՝ առկա իրավակարգավորման պայմաններում գործնականում միայն այդ կերպ է հնարավոր ապահովել վարույթով անցնող դատավորների՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվող իրավունքները, նաև ոչ պակաս կարևոր՝ իրեն բացարկելու պատճառների և հիմնավորումների մասով խորհրդի եզրահանգումներին տեղեկացված լինելու՝ խորհրդի անդամի իրավունքը, ինչը ևս սահմանափակվում է <sup>32</sup> նման պրակտիկա ձևավորելու և խրախուսելու պայմաններում:

### **1.10. Դատարանի կոլեգիալ կազմի աշխատանքում և որոշումների կայացման գործընթացում բացարկման ենթակա նախագահող դատավորի դերի պարզում.**

**1.10.1** «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների համաձայն՝ դատավորը պարտավոր չէ ինքնաբացարկ հայտնել կամ ընդունել բացարկը, եթե այլ դատավոր չի կարող նշանակվել տվյալ գործը քննելու համար կամ դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին:

Սույն վարույթի շրջանակներում խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի կողմից ինքնաբացարկ հայտնելու կամ բացարկը ընդունելու որոշման կայացումը խորհրդի աշխատանքը չէր կազմալուծելու և դատավորների վերաբերյալ վարույթն անավարտ չէր մնալու, քանի որ նիստի իրավագործ էր և վարույթը կարող էր շարունակվել խորհրդի 7 անդամների կազմով: <sup>33</sup> Ընդ որում, որոշումները խորհուրդը կարող էր ընդունել նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ էր քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը (այսինքն՝ 5 ձայնով), <sup>34</sup> ուստի՝ Կարծիքի **1.10.1 կետում** նշված իրավիճակներից որևէ մեկի առաջացումը կանխելու հիմնավորմամբ դատավոր Կ.Անդրեասյանի դեմ ներկայացրած ինքնաբացարկի միջնորդությունները մերժվել էին կարող, <sup>35</sup> այդ կապակցությամբ Լիազոր մարմնի ներկայացուցչի պնդումն անհիմն է:

Եթե դատարանը կոլեգիալ մարմին է, տվյալ պահանջը, որպես կանոն, տարածվում է դատարանի կազմում ընդգրկված բոլոր դատավորների վրա. դատավորներից որևէ մեկի, տվյալ դեպքում՝ նախագահող դատավորի անաչառ չլինելու կամ անաչառ չերևալու հանգամանքը կասկածի տակ է դնում ողջ դատարանի (կազմի) անաչառությունը և ձևավորում կոլեգիալ կազմով հանդես եկող դատարանի կայացրած ցանկացած որոշման և առհասարակ վարույթի անարդարացի լինելու վերաբերյալ զգացում:

Քննարկվող հարցի վերաբերյալ Պատասխանող կողմը խորհրդին է ներկայացրել մի շարք գործերով ՄԻԵԴ արտահայտած դիրքորոշումներ, համաձայն որոնց՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դատարանի կողմնակալության հանգամանքը ստուգելիս և արձանագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ, այդ թվում՝ դատական

կազմում ներգրավված դատավորների թիվը և բացարկվող դատավորի դերն այդ կազմում:

**«Ֆազլի Ալյաններն ընդդեմ Թուրքիայի» գործով** ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ միայն երեք դատավորների մասնակցությունը (որոնց անաչառությունը կասկածի տակ էր դրվել) 31 անդամներից կազմված ընդհանուր ժողովին, բավարար էր վտանգի ենթարկելու ամբողջ տրիբունալի անաչառությունը ոչ միայն ներգրավված դատավորների համամասնության պատճառով (ինչն ինքնին բավարար չէր), բայց նաև գործի մեջ նրանց ունեցած դերի շնորհիվ: Մասնավորապես, նույն որոշման 41-րդ կետում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ **բացարկված երեք դատավորներից մեկը, որպես Գերագույն վարչական դատարանի փոխնախագահ, նախագահում էր Գլխավոր ասամբլեան և հետևաբար՝ նա վարում էր քննարկումները դատավարության ընթացքում**, ինչն անկողմնակալության դրսևորման հետ անհամատեղելի լրացուցիչ հանգամանք է: Արդյունքում ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

**«Ստոյմենովիչ Միլոշևիչն ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի» գործով** ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ **Գերագույն դատարանի դատավորը, որի օբյեկտիվ անկողմնակալության բացակայությունը հաստատված էր՝ գործը քննող Գերագույն դատարանի դատավորներից միայն մեկն էր**, բավարար է եզրակացնելու, որ ամբողջ Գերագույն դատարանի անաչառությունը կասկածի տակ է:

**«Կարրարն ընդդեմ Բելգիայի» գործով** ՄԻԵԴ-ը հաստատված է համարել այն, որ **դատարանի նախագահի անաչառության բացակայությունը բավարար է արձանագրելու համար, որ կասկածի տակ է ամբողջ դատարանի անաչառությունը:**

Սույն դեպքում բացարկված ենթակա անձը սահմանադրական մարմին՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահն է, որը գործող իրավակարգավորումների համաձայն օժտված է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված գործառնություններով: Մասնավորապես, նա է *իրավիրում և վարում Բարձրագույն դատական խորհրդի (այդ թվում՝ սույն կարգապահական վարույթի շրջանակներում հրավիրված) բոլոր նիստերը, նիստի սկզբում պարզում է նիստի իրավագորությունը, հայտարարում է ելույթների և հարցերի համար հերթագրումը, հանդես է գալիս արտահերթ ելույթներով և հարցերով, ձայն է տալիս ելույթի, ինչպես նաև հարցի կամ դրան պատասխանելու համար, հանում է այն հարցերը կամ դադարեցնում է այն ելույթները, որոնք չեն առնչվում կամ վերաբերելի չեն խորհրդի նիստում քննարկվող հարցերի էությանը*: Տվյալ հարցի անարգման համատեքստում պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ խորհրդի նախագահի նախագահությամբ իրավիրվող և իրականացվող նիստերում խորհրդի կողմից կայացվող բոլոր որոշումները, այդ թվում՝ եզրափակիչ որոշումը, գործող իրավակարգավորումների համաձայն, վերջնական են և բողոքարկման ենթակա չեն, այլ կերպ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տվյալ հարցը քննարկվելիս և լուծելիս պետք է հաշվի առնվի իրավունքի խախտում թույլ տալու պարագայում դրա շտկման իրավական անհնարինությունը (անվերականգնելի բնույթը):

Ավելին, Բարձրագույն խորհրդի անդամների և խորհրդի նախագահի փոխհարաբերությունների որակական կողմի, սույն դատական կազմում խորհրդի նախագահ և միաժամանակ բոլոր նիստերը նախագահող Կ.Անդրեասյանի ազդեցիկ դերի և անվերապահ հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ վերջինս Ազգային ժողովի կողմից 05.10.2022 թվականին ընտրվելով ԲԴԽ անդամ, անմիջապես հաջորդ օրը՝ 06.10.2022 թվականին, արդեն Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից (որոնցից 5-ը մասնակցել են նաև սույն կարգապահական վարույթին) ընտրվել է խորհրդի նախագահ, թեև այդ պահին նույն խորհրդի կազմում կային այդ մարմնում բազմամյա փորձառություն ունեցող այլ թեկնածուներ (ոչ դատավոր անդամներ):

Ընդ որում, խորհրդի նախագահի պաշտոնում Կ.Անդրեասյանի ընտրությանը մասնակցած խորհրդի անդամներից 4-ի և Կ.Անդրեասյանի ձայները բավարար էին սույն կարգապահական վարույթի շրջանակներում կայացվելիք *միջանկյալ որոշումների*<sup>36</sup> և վերջնական (երեք դատավորների լիազորությունները դադարեցնելու մասին) որոշման ելքերը կանխորոշելու համար, քանի որ սույն վարույթին մասնակցում էին խորհրդի 10 անդամներից միայն 8-ը:<sup>37</sup>

### 1.11. Եզրահանգում.<sup>38</sup>

Այսպիսով, կարգապահական վարույթի արդյունքներով դատավորների լիազորությունները դադարեցնելիս՝ Կ.Անդրեասյանի նախագահությամբ գործող Բարձրագույն դատական խորհրդը չի ապահովել Պատասխանող կողմի (դատավորների և/կամ նրանց ներկայացուցիչների) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի դատաքննության իրավունքը, վերջինները զրկվել են նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

### 2.1. Անձնական կյանքը հարգելու իրավունքին վերաբերելի ու կիրառելի իրավական նորմեր.

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. **Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական** ու ընտանեկան **կյանքի**, բնակարանի և նամակագրության **նկատմամբ հարգանքի իրավունք**:

2. **Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով**»:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանվում է անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը: Ընդհանուր առմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Դատարան) Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակը սահմանել է շատ լայն, նույնիսկ եթե դրանում որևէ կոնկրետ իրավունք միանշանակ ամրագրված չէ:

ՄԻԵԴ-ը կոնկրետ գործերի նկատմամբ կանոնավոր կերպով կիրառում է այս կամ նմանաբնույթ այլ սահմանափակող նորմերում ամրագրված չափանիշը՝ թեստը, որի միջոցով որոշում է, թե արդյոք պետությունը խախտել է դիմողի մեկ կամ ավելի իրավունքներ: ՄԻԵԴ-ում

գործին ընթացք տալու համար բողոքը ներկայացնողը պետք է ընդամենը հիմնավորի, որ իր գործով տեղի է ունեցել միջամտություն ՄԻԵԿ-ով պաշտպանվող իրավունքի նկատմամբ, որից հետո պետությունն է կրում միջամտության օրինականությունը և Կոնվենցիայի համաձայն հիմնավորվածությունն ապացուցելու պարտավորությունը՝ բեռը:

Դատարանն առաջին հերթին պետք է պարզի, թե արդյոք կոնկրետ խնդիրը տեղավորվում է Կոնվենցիայով նախատեսված մարդու իրավունքի շրջանակի մեջ: ՄԻԵԿ-ը, որպես կանոն, լայն մեկնաբանություն է տալիս ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքներին: Ավելին՝ Դատարանը պետք է համոզվի, որ գոյություն ունի մարդու իրավունքի նկատմամբ «միջամտություն»:

Պետության գործողությունը կամ անգործությունը, անգամ օրենքները կարող են մարդու իրավունքների նկատմամբ միջամտություն առաջացնել:

Այնուհետև ՄԻԵԿ-ը հետևյալ սկզբունքների կիրառությամբ պարզում է, թե արդյոք միջամտությունը հանգեցրել է մարդու իրավունքի խախտման.

• **Օրինականություն:** Որպեսզի կանխվի կամայականությունը, մարդու իրավունքների նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով: Օրենքը պետք է բավարար չափով հասանելի լինի. անձը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն իմանալու տվյալ հանգամանքներում կոնկրետ գործի նկատմամբ կիրառելի իրավական կանոնները: Ավելին՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն բավականաչափ ճշգրտորեն ձևակերպված չէ, որպեսզի անձն ի վիճակի լինի կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է ի վիճակի լինի տվյալ հանգամանքներին բնորոշ ողջամտության սահմաններում կանխատեսելու կոնկրետ գործողության հնարավոր հետևանքները [«Sunday Times-ն ընդդեմ Միացյալ Թագավորության», գանգատ թիվ 6538/74, 26 ապրիլ, 1979 թ.]:

• **Իրավաչափ նպատակ:** Պետական իշխանությունները չեն կարող մարդու իրավունքի նկատմամբ միջամտությունը հիմնավորելու համար մեջբերել կամայական նպատակ: ՄԻԵԿ-ում թվարկված են իրավաչափ նպատակները, այսինքն՝ այն կարևոր իրավական շահերը, որոնք հետապնդելիս կարելի է սահմանափակել նշված իրավունքները: Այնուհանդերձ, այդ թվարկումը բավական ընդհանրական է (օրինակ՝ ազգային անվտանգություն, հանրային անվտանգություն, հասարակական կարգ, առողջություն կամ բարոյականություն, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանություն):

• **Անհրաժեշտություն և համաչափություն:** Մարդու իրավունքների նկատմամբ միջամտությունները պետք է սահմանափակվեն նրանցով, որոնք անհրաժեշտ են իրավաչափ նպատակի հասնելու համար:

Դրանք պետք է համահունչ լինեն «իրատապ սոցիալական կարիքին»: Ավելին՝ դրանք պետք է անհրաժեշտ լինեն «ժողովրդավարական հասարակությունում», այսինքն՝ բացառվում են այն միջոցառումները, որոնք չեն կարող համատեղելի համարվել ժողովրդավարությանը: Միջոցառումը պետք է համահունչ լինի հետապնդվող նպատակին: **Եթե միևնույն նպատակին հասնելու համար առկա են նվազ միջամտող այլընտրանքներ, ապա պետք է կիրառվեն առավել մեղմ միջոցառումները:**

**Հետապնդվող նպատակը պետք է համաչափ լինի այն վնասին, որը պատճառվում է իրավունքի սահմանափակմամբ. որքան ավելի ծանր է միջոցառման վնասակար հետևանքը, այնքան ավելի կարևոր պետք է լինի նպատակը, որպեսզի միջոցառումը հիմնավորված համարվի:**

Որոշելու համար, թե արդյոք Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա տեղի ունեցած միջամտությունն անհրաժեշտ է «ժողովրդավարական հասարակությունում», Դատարանը հավասարակշռության է բերում անդամ պետության շահերը և դիմումատուի իրավունքը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ կայացված ուղեցուցիչային վճիռներից մեկում Դատարանը հստակեցրել է, որ «անհրաժեշտ» ածականն այս համատեքստում չունի այն բառերի ճկունությունը, ինչպիսիք են «օգտակար», «ողջամիտ» կամ «տեղին» բառերը, փոխարենը՝ այն ենթադրում է «ծայրահեղ սոցիալական կարիքի» գոյություն դիտարկվող միջամտությանը դիմելու համար: Յուրաքանչյուր գործով ծայրահեղ սոցիալական կարիքի վերաբերյալ նախնական գնահատական անելու պարտականությունը կրում են ներպետական մարմինները, այսպիսով, նրանք ունեն թույլատրելի հայեցողության շրջանակ: Այնուամենայնիվ, նրանց որոշումը ենթակա է Դատարանի վերահսկողությանը: Որպեսզի միջամտությունը Կոնվենցիայով պաշտպանված իրավունքին համարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», որի երկու հատկանիշներն են հանդուրժողականությունն ու լայնահայացությունը, այն պետք է, մասնավորապես, համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին («Դաջնն ընդդեմ Միացյալ Թագավորության», § 51-53):

Դատարանը հետագայում հաստատել է, որ վիճարկվող միջոցների «անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում» որոշելիս, գործը դիտարկելով որպես մեկ ամբողջություն, այն ուսումնասիրելու է, թե արդյոք դրանց հիմնավորման համար վկայակոչված պատճառները վերաբերելի և բավարար են եղել, և թե արդյոք այդ միջոցները համաչափ են եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին («2.-ն ընդդեմ Ֆինլանդիայի», § 94): **Դատարանը նաև հստակեցրել է այս պահանջը՝ նշելով, որ «անհրաժեշտության» գաղափարը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով ենթադրում է ծայրահեղ սոցիալական կարիքի վրա հիմնված և, մասնավորապես, հետապնդվող իրավաչափ նպատակին համաչափ միջամտություն:** Որոշելու համար, թե արդյոք միջամտությունը եղել է «անհրաժեշտ», Դատարանը հաշվի է առնում ներպետական մարմիններին վերապահված թույլատրելի հայեցողության շրջանակը, սակայն պատասխանող պետությունը շարունակում է կրել միջամտության հիմքում ընկած ծայրահեղ սոցիալական կարիքի գոյությունն ապացուցելու պարտականությունը («Պեչովիցն ընդդեմ Լեհաստանի», § 212): «Պարադիզոն և Կամպանելին ընդդեմ Իտալիայի» ([ՄՊ], §§ 179-184) գործի շրջանակներում Դատարանը վերահաստատել է թույլատրելի հայեցողության շրջանակի ղեկավար սկզբունքները:

Ներպետական կառավարության կողմից ձեռնարկված ընդհանուր միջոցների մասով Դատարանի նախադեպային իրավունքից բխում է, որ **ընդհանուր միջոցի համաչափությունը որոշելու համար Դատարանը պետք է նախ ուսումնասիրի այդ միջոցի հիմքում ընկած օրենսդրության ընտրությունը:** Այն առումով առանձնակի կարևորություն ունի այդ միջոցի անհրաժեշտության, այդ թվում՝ թույլատրելի հայեցողության համապատասխան շրջանակի կիրառման առնչությամբ խորհրդարանական և դատական վերահսկողության որակը: Անհատին հասանելի ընթացակարգային երաշխիքները հատկապես կարևոր կլինեն՝ որոշելու, թե արդյոք կարգավորման շրջանակը սահմանելիս պատասխանող պետությունը մնացել է իրեն վերապահված թույլատրելի հայեցողության շրջանակում: Մասնավորապես՝ Դատարանը

**պետք է ուսումնասիրի՝ արդյոք միջամտության միջոցների կիրառմանը հանգեցրած որոշումների կայացման գործընթացը եղել է արդար՝ այդպիսով անձին տրամադրելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված շահերի նկատմամբ պատշաճ հարգանք ապահովելու հնարավորություն** («Ա.-Մ.Վ.-ն ընդդեմ Ֆիլսալոնդիայի», § 82-84):

**«ժողովրդավարություն իրավունքի միջոցով»** եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) իր մի շարք կարծիքներում անդրադարձել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին և պետությունների ներպետական օրենսդրություններում դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ Նորմերի որոշակիության խնդրին՝ հայտնելով հետևյալ դիրքորոշումները:

Այսպես, ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ այն օրենսդրությունը, որը կարգավորում է դատավորի կարգապահական պատասխանատվության և կարգապահական որոշում կայացնող մարմինների հետ կապված իրավահարաբերությունները, պետք է ձևակերպվի հստակ: Երկրները հաճախ դժվարությունների են հանդիպում, երբ կարգապահական գործողությունների հիմքերը բավարար չափով մանրամասնված չեն: Հստակ սահմանված կանոնների բացակայությունը վտանգավոր է, քանի որ կարգապահական իրավախախտումների դեպքում հնարավոր է սկսվի կամայական հետապնդում դատավորների նկատմամբ: Այդ իսկ պատճառով եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ ԵԴԽՆ) **«Դատական համակարգի անկայունության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» իր թիվ 1 (2001) կարծիքում** առաջարկել է սահմանել այնպիսի չափորոշիչներ, որոնք կսահմանեն ոչ միայն այն վարքագիծը, որը կարող է հանգեցնել դատավորի պաշտոնից հեռացմանը, այլև բոլոր այն արարքները, որոնք կարող են հանգեցնել կարգապահական տույժի կամ կարգավիճակի փոփոխության (CDL-AD(2007) 009, կետ 6-րդ):

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ Նախադեպային իրավունքը, ընդհանուր ամամբ, ճանաչում է անձնական կյանքի և դրա հետ կապված արժեքների կարևորությունը: Այդ արժեքները, ի թիվս այլնի, ներառում են բարեկեցությունը և արժանապատվությունը («Բեյգարասը և Լևիցկասն ընդդեմ Լիտվայի», § 117), անհատականության զարգացումը («Ֆոն Հանովերն ընդդեմ Գերմանիայի (թիվ 2)» [ՄԴ], § 95), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը («Սյոդերմանն ընդդեմ Շվեդիայի», [ՄԴ], § 80), այլ անձանց հետ հարաբերությունները («Կուլերկը և Աշետ Ֆիլիպակի Գործընկերներն ընդդեմ Ֆրանսիայի» [ՄԴ], § 83), անձնական տվյալների պաշտպանությունը («Մ.Լ.-ն և Վ.Վ.-ն ընդդեմ Գերմանիայի», § 87) և անձի պատկերը («Ռեկյուսը և Գավուրիսն ընդդեմ Հունաստանի», § 38):

Թեև աշխատանքի, քաղաքացիական ծառայության մատչելիության կամ որոշակի մասնագիտություն ընտրելու որևէ ընդհանուր իրավունք չի կարող բխեցվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածից, «անձնական կյանք» հասկացությունը սկզբունքորեն չի բացառում մասնագիտական կամ առևտրային բնույթի գործունեությունը («Բարբուլեսկուն ընդդեմ Ռումինիայի» [ՄԴ], § 71, «Յանկաուսկասն ընդդեմ Լիտվայի (թիվ 2)», § 56-57, «Ֆերնանդես Մարտինեսն ընդդեմ Իսպանիայի» [ՄԴ], §§ 109-110): Իրականում, **անձնական կյանքը ներառում է այլոց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու անձի իրավունքը, այդ թվում՝ մասնագիտական և առևտրային ոլորտում** («Ց.-ն ընդդեմ Բելգիայի», § 25, «Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի», § 165): Ի վերջո, իրենց աշխատանքային կյանքում է, որ մարդկանց մեծ մասը ստանում է իրենց կապի արտաքին աշխարհի հետ ամրապնդելու բազմաթիվ հնարավորություններ («Նիմիցն ընդդեմ Գերմանիայի», § 29, «Բարբուլեսկուն ընդդեմ Ռումինիայի» [ՄԴ], § 71, և դրանում մեջբերվող հղումները, «Անտոպիչը և Միրկովիչն ընդդեմ Սոնտենեգրոյի», § 42):

**Հետևաբար, հաստատվել է, որ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու հարցում կիրառվող սահմանափակումները միջամտություն են «անձնական կյանքի» նկատմամբ** («Սիդաբրասը և Ձգյաուտասն ընդդեմ Լիտվայի», § 47, «Բիգաևան ընդդեմ Հունաստանի», §§ 22-25, տե՛ս նաև «Յանկաուսկասն ընդդեմ Լիտվայի (թիվ 2)» (§ 56) և «Լեկավիչենենն ընդդեմ Լիտվայի» (§ 36) գործերը՝ նախկինում դատապարտված լինելու պատճառով փաստաբանների պալատին անդամակցելու առևտրությամբ կիրառված սահմանափակումների վերաբերյալ), և նույնը վերաբերում է աշխատանքը կորցնելուն («Ֆերնանդես Մարտինեսն ընդդեմ Իսպանիայի» [ՄԴ], § 113): Նմանապես, հաստատվել է, որ աշխատանքից հեռացումը միջամտություն է անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին («Յոզֆինարն ընդդեմ Թուրքիայի», §§ 43-48):

**«Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի» գործով** Դատարանն արձանագրել է, որ **դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով դատավորին պաշտոնից ազատելը հանդիսացել է միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով նրա «անձնական կյանքի» նկատմամբ հարգանքի իրավունքին** (§§ 165-167):

Այսպես, 165. (...) Դատարանը նկատում է, որ անձնական կյանքը բովանդակում է այլ անհատների հետ անհատապես հարաբերություններ ձևավորելու և զարգացնելու իրավունքը, այդ թվում՝ մասնագիտական և գործարար բնույթի հարաբերություններ (տես՝ «Ս.-ն ընդդեմ Բելգիայի», 7 օգոստոսի 1996, կետ 25, Չեկույցներ 1996 III): Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է անձնական զարգացման ու այլ անհատների հետ հարաբերություններ ձևավորելու և զարգացնելու իրավունքներն ու արտաքին աշխարհի հետ շփումը (տես՝ «Պրեթիին ընդդեմ Միացյալ Թագավորության», թիվ 2346/02, կետ 61, ECHR 2002 III): «Անձնական կյանք» հասկացությունն սկզբունքորեն չի բացառում մասնագիտական կամ բիզնես բնույթի գործունեությունը: Ամեն ինչից գատ, այն նաև իր աշխատանքային կյանքի ուղեգիծն է, որի ընթացքում մարդկանց մեծամասնությունն ունի արտաքին աշխարհի հետ իր շփումները զարգացնելու եական հնարավորություն (տես՝ «Նիեմիեթցն ընդդեմ Գերմանիայի», 16 դեկտեմբերի 1992, կետ 29, Սերիա V թիվ 251 F): Ուստի մասնագիտություն ունենալու սահմանափակումները ճանաչվել են որպես անձնական կյանքին միջամտություն (տես՝ «Սիդաբրասն ու Դգիաուտասն ընդդեմ Լիտվայի», թիվ 55480/00 և թիվ 59330/00, կետ 47, ECHR 2004 VIII, և «Բիգաևան ընդդեմ Հունաստանի», թիվ 26713/05, կետեր 22-25, 28 մայիսի 2009): Նմանապես, պաշտոնից ազատելը ճանաչվել է որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտություն (տես՝ «Օգալինարն ընդդեմ Թուրքիայի», թիվ 20999/04, կետեր 43-48, 19 հոկտեմբերի 2010): Վերջապես, 8-րդ հոդվածը վերաբերում է նաև պատվի և արժանապատվության պաշտպանությանը՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի բաղկացուցիչ մաս (տես՝ «Պֆեյֆերն ընդդեմ Ավստրիայի», թիվ 12556/03, կետ 35, 15 նոյեմբերի 2007 և «Ա.-ն ընդդեմ Նորվեգիայի», թիվ 28070/06, կետեր 63 և

64, 9 ապրիլի 2009):

166. Դիմողին դատավորի պաշտոնից ազատելն ազդել է այլ մարդկանց հետ նրա հարաբերությունների լայն շրջանակի վրա, այդ թվում՝ մասնագիտական բնույթի հարաբերությունների վրա: Նմանապես, այն ազդեցություն է ունեցել նրա մերձավորների վրա, քանի որ աշխատանքի կորուստը պետք է շոշափելի հետևանքներ ունեցած լինել դիմողի և նրա ընտանիքի նյութական դրության վրա: Ավելին, դիմողի ազատման պատճառը, մասնավորապես՝ դատական երդման խախտումը, ենթադրում է, որ շոշափել է նրա մասնագիտական հեղինակությունը:

167. Դրանից բխում է, որ դիմողին աշխատանքից ազատելը ներառել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով միջամտություն նրա անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին:

Նույն գործով անդրադառնալով Միջամտությունն արդարացված լինելու հարցին և Միջամտության օրինականության ընդհանուր սկզբունքները՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը.

169. «Օրենքին համապատասխան» արտահայտությունը պահանջում է, նախ՝ վիճարկվող որոշումը ներպետական իրավունքում պետք է ունենա որոշակի հիմք: Երկրորդ՝ **այն հղում է կատարում քննարկվող օրենքի որակին՝ պահանջելով, որպեսզի այն մատչելի լինի շահագրգիռ անձին, ում համար պետք է առավելապես կանխատեսելի լինեն դրա հետևանքները, և համատեղելի լինի օրենքի գերակայության հետ** (տես՝ ի թիվս այլնի, «Կոպլ ընդդեմ Շվեյցարիայի», 25 մարտի 1998, կետ 55, Վճիռների և որոշումների վերաբերյալ գեկույցներ 1998-II):

170. Այսպիսով, կիրառվող եզրույթը, inter alia, որ ներպետական իրավունքն ինքնին պետք է բավականին կանխատեսելի լինի, որպեսզի անհատներին յուրաքանչյուր դեպքի հանգամանքներին համարժեք ուղղություն և պայմաններ տրամադրի Կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վրա ազդող պետական մարմինների այն գործողությունների համար, որոնցով նրանք լիազորված են օրենքով (տես՝ «Ս.Չ.-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի», թիվ 1365/07, կետ 39, 24 ապրիլի 2008): Բացի դրանից, օրենքը պետք է պետական մարմինների կամայական միջամտությունից իրավական պաշտպանության որոշակի աստիճան առաջարկի: **Առանձնահատուկ ընթացակարգային երաշխիքների առկայությունն այս համատեքստում նյութական է: Այն ինչ պահանջվում է երաշխիքի ձևով, նվազագույնը որոշակի մակարդակով, կախված է քննարկվող միջամտության բնույթից ու աստիճանից** (տես՝ «Պ.Չ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության», թիվ 44787/98, կետ 46, ECHR 2001-IX):

«Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի» (թիվ 76639/11) գործով, հիմնվելով «Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի» գործով սահմանած երեք չափանիշների վրա, Եվրոպական դատարանը նշել է, որ դատավորի լիազորությունների դադարեցումը կարող է ներգրավել որպես անձնական կյանքի հարգման իրավունքի մասին հարց, եթե (...) դատավորի լիազորությունների դադարեցման հիմք են հանդիսացել նրա մասնագիտական գործունեությանը վերաբերող հանգամանքները:

Վերջինի դեպքում Եվրոպական դատարանը հաշվի է առնում, թե արդյոք լիազորությունների դադարեցումը բացասական հետևանքներ է թողել դատավորի անձնական կյանքի հետևյալ երեք ոլորտներում՝

**Ա.** նյութական հետևանքներ (անձնական կյանքի «ներքին օղակը»),

**Բ.** անձնական կարիերայի վրա («այլոց հետ հարաբերություններ ստեղծելու ու զարգացնելու անձի հնարավորությունները»), և

**Գ.** անձնական և հասարակական (ոչ մասնագիտական) հեղինակության վրա:

### **2.1.1 Միջամտության ծայրահեղ միջոցի կիրառման իրավաչափության պարզում.**

Հաշվի առնելով, որ դատավորի անձնական կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության և համաչափության ստուգումն ու պարզումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում Եվրոպական դատարանը հատկապես կապում է կարգապահական վարույթի արդյունքներով դատավորի լիազորությունները (հարկադրաբար) դադարեցվելու կամ չդադարեցվելու փաստի հետ՝ հարկ է մ համարում այդ համատեքստում անդրադառնալ Եզրափակիչ որոշմամբ արձանագրված՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումները որպես Էական կարգապահական խախտում դիտարկելու և այդ իրավական հիմնավորմամբ Դատավորների լիազորությունները դադարեցնելու խորհրդի եզրահանգման իրավաչափությանը:

Այսպես, Եզրափակիչ որոշմամբ անդրադառնալով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցի ընտրության հարցին, խորհուրդը փաստել է հետևյալը. «(...) ընտրվող պատասխանատվության միջոցը պետք է համաչափ լինի խախտմանը, որպիսի պարագայում **անհրաժեշտ է նաև իրավական գնահատական տալ այն հարցին, թե արդյոք Դատավորների կողմից թույլ տրված արարքը բավարար հիմքեր է պարունակում վերջինիս կողմից թույլ տրված կարգապահական խախտումն Էական գնահատելու համար** և արդյոք դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Օրենքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:

**Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:**

Միաժամանակ խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ըստ Օրենքի 142-րդ հոդվածի, ի թիվս այլնի, Էական կարգապահական խախտում է հանդիսանում արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ թույլ տրված խախտումը, ինչն իր հերթին հանգեցրել է Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտմանը, ինչպես նաև դատական իշխանության հեղինակագրկմանը: Ավելին,

**տվյալ դեպքում Դատավորների կողմից կատարված խախտումներն Եապես նվազեցնում են դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը: Այսինքն՝ սույն դեպքում խոսքը վերաբերում է դատավորի պաշտոնի հետ ոչ համատեղելի արարքին:**

Դատավորի կողմից Օրենքի 142-րդ հոդվածի իմաստով «արարք» կատարելը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում դատավորի կողմից այնպիսի վարքագծի (ներառյալ անգործության) դրսևորումը, որն ակնհայտորեն կարող է կասկածի տակ դնել արդարադատությունը Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական չափորոշիչներին համապատասխանելու հանգամանքը՝ խեղաթյուրելով դրա բուն էությունը: **Եթե դատավորի պաշտոնավարման ընթացքում դատավորի վարքագիծը շեղվում է իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման ընդհանուր կանոններից, և դատավորը, դրսևորելով ոչ պատշաճ արհեստավարժություն և մասնագիտական պատրաստվածություն, դուրս է գալիս իրավական նորմի գործողության շրջանակներից ոչ թե զուտ նորմի սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում, այլ իր սահմանադրաիրավական լիազորությունների վերազանցման պայմաններում, ապա այդպիսի արարքը կարող է բնութագրվել որպես դատավորի պաշտոնի հետ ոչ համատեղելի:**

Այսպիսով, Դատավորներն իրենց գործողություններում գերծ չեն մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելու, ուստի միջևորդության ընկալմամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, **Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Դատավորների կողմից թույլ տրված դատավարական նորմերի խախտումներն Եական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ** և ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»:<sup>39</sup>

Սույն դեպքում դատավորներ Ա.Խառատյանին, Տ.Պետրոսյանին և Ա.Բարսեղյանին վերագրված կարգապահական խախտումներն (ենթադրաբար) կատարվել են մեղքի նվազ «վտանգավոր» ձևով՝ կոպիտ անփութությամբ, վերջիններս նախկինում կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել, սույնի էին ենթարկվում առաջին անգամ (նույնիսկ մարված տույժեր չունեն), ենթադրյալ իրավախախտմամբ շահագրգիռ կազմակերպության համար հետևանքներ չառաջանալու, սահմանված ժամկետում առնվազն գործը վերաբացելու և վնասները փոխհատուցելու պահանջ չեն կայացնելու (դրանք առնվազն չկարևորելու) մասին այլևս խոսվել է:

Խորհուրդը դատավորների անձը բացասաբար բնութագրող տվյալ է դիտարկվել դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակող որոշումներ կայացնելիս «ոչ պատշաճ արհեստավարժություն և մասնագիտական պատրաստվածություն ցուցաբերելը», «իրավական նորմի գործողության շրջանակներից դուրս գալը», իսկ որպես դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի և միաժամանակ Եական կարգապահական խախտում՝ «դատավորների կողմից իրենց սահմանադրաիրավական լիազորությունների վերազանցելը», «դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը Եապես նվազեցնելը և դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը վնասելը», թեև ուշագրավ է այն, որ օբյեկտիվ կողմից դատավորներին վերագրվել է նրանց լիազորությունների սահմաններում կատարված արարք՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքները որոշակի պատճառաբանությամբ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու (ըստ էության բողոքները մերժելու) վերաբերյալ որոշումների կայացում, որն անխուսափելիորեն հիմնված է նյութական և դատավարական որոշակի նորմերի մեկնաբանման կամ կիրառման արդյունքների վրա (նույնիսկ եթե այդ նորմերը դատավորները սխալ են մեկնաբանել կամ կիրառել):

Այսպիսով, կարծում են, որ Խորհրդի եզրափակիչ որոշման մեջ բացակայում են դատավարական իրավունքի նորմերի խախտումները որպես Եական կարգապահական խախտում գնահատելու բավարար հիմնավորումներն ու փաստարկումները, դրա մասին Խորհրդի եզրահանգումը գլխավորապես կառուցված է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում ՀՕ-333-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացված իրավակարգավորման ստանդարտ (շաբլոնային) ձևակերպումների վրա, որի պայմաններում այն կարելի է կիրառել տվյալ առիթով և հիմքով հարուցված անխտիր բոլոր կարգապահական վարույթներով անցնող դատավորների նկատմամբ:

### **2.1.2 Դատավորին վերագրված իրավունքի նորմի խախտումը որպես Եական կարգապահական խախտում որակելու իրավաչափության պարզում.**

Դատավորին վերագրված՝ իրավունքի նորմի որևէ խախտում որպես Եական կարգապահական խախտում գնահատելը գտնվում է վարույթ հարուցած և իրականացնող Լիազոր մարմին հայեցողական լիազորության տիրույթում, որից նա կարող է օգտվել կարգապահական վարույթի ընթացքում, սակայն մինչև դատավորին պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ (որոշմամբ) Բարձրագույն դատական խորհրդին դիմելը: Ընդ որում, տվյալ դեպքում՝ նաև սույն վարույթով, ինդրահարուցչի և դիտարկվում Լիազոր մարմնի կողմից դատարանում (Խորհրդում) և հատկապես դատարանի (Խորհրդի) կողմից սեփական նախաձեռնությամբ՝ վերագրված կարգապահական խախտման վերադրակմամբ հանդես գալու և այդ կերպ կարգապահական պատասխանատվության ենթակա դատավորի, տվյալ դեպքում՝ դատավորներ Ա.Խառատյանին, Տ.Պետրոսյանին և Ա.Բարսեղյանին իրավական վիճակը դատարանում վատթարացնելու պրակտիկան՝ հետևյալ հիմնավորմամբ:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերին վերաբերող «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքներով կարելի է փաստել, որ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի (մեղավորությամբ կատարված) խախտումը որակյալ տեսակի՝ Եական կարգապահական խախտում կարող է դիտարկվել, եթե այն հանգեցրել է որոշակի հետևանքների: Այսինքն՝ քննարկվող Եական կարգապահական խախտման գանցակազմի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է արձանագրել օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքներից առնվազն մեկի

առկայությունը, բնականաբար՝ նաև պատճառահետևանքային կապն արարքի և հետևանքի միջև:

**Օրենքի** 142-րդ հոդվածով սահմանված այդ հետևանքներն են՝

Ա. Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտումը կամ

Բ. դատական իշխանության հեղինակագրկումը:

Ընդ որում, **քննարկվող հետևանքը (հետևանքները) պետք է ուղղակի նշված լինի (լինեն) կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդության մեջ՝ իբրև դատավորին վերագրված խախտման փաստակազմ («մեղադրանքում» այն պետք է նաև նկարագրվի բավարար հստակությամբ)**, ինչն **Օրենքի** ուղղակի պահանջն է, <sup>40</sup> որպեսզի դատավորը

հնարավորություն ունենա պաշտպանվելու դատարանում (հորհրդում) ապացուցման ենթակա նաև այդ հանգամանքից: Հակառակ մոտեցման պարագայում անխուսափելիորեն խախտվում է կարգապահական վարույթով անցնող դատավորի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ այդ իրավունքի բաղադրիչ հանդիսացող պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, Օրենսդիրը հստակ սահմանել է ինչպես Լիազոր մարմնի՝ հորհրդին ներկայացրած միջնորդությանը (որոշմանը) ներկայացվող նվազագույն պահանջները, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հարցի քննության սահմանները, <sup>41</sup> վերոնշյալ նորմերն իմպերատիվ են (բացառություն կամ վերապահում չեն նախատեսում), ուստի՝ դրանցից շեղվելու և միջնորդության սահմաններից դուրս գալու իրավական հնարավորություն հորհրդորը չունի (չպետք է ունենա):

Սույն դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը ուղարկված միջնորդության (որոշման) նկարագրական - պատճառաբանական և եզրափակիչ մասերում բացակայում են դատավորների կողմից ենթադրաբար թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտումն էական կարգապահական խախտում գնահատելու Լիազոր մարմնի դիրքորոշումը կամ հորհրդին ուղղված պահանջը, դրան վերաբերելի փաստական ու իրավական հիմնավորումները, իսկ դատավորներին Լիազոր մարմնի վերագրած խախտման փաստակազմը օբյեկտիվ կողմից չի բովանդակում դրա բաղկացուցիչ մաս կազմող՝ խախտման հետևանք/ներ/ի մասին որևէ փաստական տվյալ, առավել ևս՝ նկարագրություն, ինչը պարտադիր պայման էր որակյալ այդ «մեղադրանքից» արդյունավետորեն պաշտպանվելու հնարավորություն ստանալու, ինչպես նաև կարգապահական խախտման էական լինելն հորհրդի կողմից հաստատելու համար:

Քննարկվող իրադրությունում, վերը նշված նախաձեռնությունը ցուցաբերելով, որպես դատարան հանդես եկող հորհուրդը հայտնվել է դատարանի սահմանադրական առաքելությանն անհարիր իրավիճակում. Լիազոր մարմնի պասիվ կեցվածքի պայմաններում, խախտման հետևանքի մասով (ինքնուրույնաբար) ըստ Էության լրացրել է կարգապահական խախտման փաստակազմը, դատաքննության արդյունքներով այն ապացուցված է համարել, ապա Եզրափակիչ որոշմամբ վերադարձել է դատավորներին վերագրված «սովորական» կարգապահական խախտումն էականով: Վերը նշված գործողությունների արդյունքներով դատավորներ Ա.Խառատյանի, Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժի ամենախիստ (ծայրահեղ) միջոցը՝ լիազորությունների դադարեցումը, ինչը չէր կարող նշանակվել քննարկվող հանգամանքների շուրջ Լիազոր մարմնի՝ հորհուրդը ներկայացրած միջնորդությունն ամբողջությամբ բավարարելու, Լիազոր մարմնի ներկայացրած ապացույցները (տեղեկությունները), փաստական և իրավական հիմնավորումները նույնիսկ ողջ ծավալով ընդունելի համարվելու պարագայում:

Այլ կերպ ասած՝ որպես դատարան հանդես եկած հորհուրդը նման գործելաոճով փաստացի իրականացրել է վարույթի կողմի, տվյալ դեպքում՝ կարգապահական վարույթ հարուցած (Լիազոր) մարմնի գործառույթ և ստանձնել է Պատասխանող կողմի դատավարական հակառակորդի դեր, որով խորացրել է **որպես դատարան անկողմնակալ չլինելու և չերևելու վերաբերյալ ծագած և սույն վարույթով հաստատված կասկածները**, <sup>42</sup> ինչը հորհրդին նախագահի և նրա ղեկավարությամբ (նախագահությամբ) վարույթին մասնակցած հորհրդի անկողմնակալության մեջ հավաստիանալու լրացուցիչ գործոն է: Ընդ որում, հորհրդի վերը թվարկված գործողությունները, հատկապես՝ դատավորներին վերագրված խախտման փաստակազմն հետևանքների մասով լրացնելը ցանկացած պարագայում չի կարող մեկնաբանվել որպես ապացույցների գնահատման գործողություն:

Կարծում են, որ տվյալ իրավիճակում հորհուրդը խախտվել է մրցակցային դատավարությանը բնորոշ, դատավորների համար կոնվենցիոն նորմերով և ներպետական օրենսդրությամբ երաշխավորվող այնպիսի նորմեր-սկզբունքներ, ինչպիսիք են՝ դատարանի (հորհրդի) անկախության, անկողմնակալության և միայն իրավունքի շահերը ներկայացնելու, դատարանի (հորհրդի) առջև կողմերի հավասարության, «մեղադրանքը» դատարանում **փոփոխելու և լրացնելու (հստացնելու) անթույլատրելիության**, <sup>43</sup> առաջադրված «մեղադրանքից» վարույթի սկզբնական փուլից արդյունավետորեն պաշտպանվելու, ինչպես նաև վարույթի ընթացքում դատավորի անմեղության կանխավարկածի իրավունքները:

Սույն դեպքում ըստ Էության «ծայրահեղ սոցիալական կարիքի» բացակայության պայմաններում, կարգապահական վարույթով անցնող երեք դատավորների նկատմամբ կիրառվել է նրանց անձնական կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ Միջամտության ծայրահեղ միջոցը՝ լիազորությունները դադարեցումը, որի հետևանքով նրանց կարիերան թե՛ դատական իշխանությունում և թե՛ դրան օժանդակող իրավապահ մարմիններում ավարտվել է, նրանք զրկվել են ՀՀ սահմանադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով երաշխավորված՝ մինչև 65 տարեկանը պաշտոնավարելու, դատավորի աշխատավարձ և այլ սոցիալական երաշխիքներ, դատավորի կենսաթոշակ ստանալու լեզիտիմ ակնկալիքներից: Վնաս է պատճառվել նաև դատավորների մասնագիտական հեղինակությանը, քանի որ հանդիսանալով բարձր ատյաններում պաշտոնավարող և բազմամյա փորձառություն ունեցող դատավորներ՝ նրանց լիազորությունները դադարեցվել են գործնական աշխատանքում գրեթե ամենօրյա ռեժիմով կիրառելի դատավարական իրավունքի նորմերի խախտման համար:

**2.2. Սույն վարույթով կիրառված (կիրառման ենթակա) օրենքներին հետադարձություն տալու անթույլատրելիության վերաբերյալ (Պատասխանող կողմի) փաստարկների ստուգում.**

Սույն կարգապահական վարույթի ընթացքում քննարկվեց և խորհրդակցական սեյսակում ձայների մեծամասնությամբ մերժվեց դեռևս 2023 թվականի հունիսի 8-ին Բարձրագույն դատական խորհուրդ մուտքագրված՝ դատավորներ Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի համատեղ միջնորդությունը («Պատասխանը»), որով նրանք, ի թիվս այլ հարցերի, խորհրդին խնդրել էին կասեցնել վարույթը և դիմել Սահմանադրական դատարան «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1.1-ին մասը և 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պահանջով՝ ներկայացնելով որոշակի փաստարկներ և հիմնավորումներ:

Կիրառման ենթակա վերոնշյալ օրենքների սահմանադրականությունը պարզելու նպատակով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու միջնորդությունը մերժելու հիմնավորումները խորհուրդը ներկայացրել է Որոշման 69-72-րդ էջերում՝ եզրակացնելով, որ այդ հարցով Պատասխանող կողմի ներկայացուցիչների հիմնավորումներն անհիմն են և ենթակա են մերժման:

Ըստ խորհրդի եզրափակիչ որոշման՝ «02.05.2020 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի և 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ (...) «մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթ, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի, հետևաբար սույն վարույթի «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքների սխալ մեկնաբանության արդյունքում հարուցված լինելու մասին Դատավորի ներկայացուցչի փաստարկներն խորհրդի գնահատմամբ անհիմն են»:

Քննարկվող միջնորդությունը մերժելու մասին որոշման հիմքում խորհուրդը դրել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի հիմնավորումը, որտեղ, մասնավորապես, նշվել է. «(...) ՀՀ-ում տեղի են ունեցել մարդու հիմնարար, կոնվենցիոն իրավունքների համակարգային և զանգվածային խախտումներ տարբեր ոլորտներում, որոնք էլ հենց բացահայտվել են ՄԻԵԴ վճիռներով, որոնց մեծ մասը կայացվել է մինչև վերջերս: Հետևաբար, եթե հիմք ընդունվեն միայն ՄԻԵԴ նոր վճիռները, ապա նախատեսված մեխանիզմը ամբողջությամբ չի հասնի իր նպատակին, քանի որ փաստ է, որ 2018 թվականից հետո դատաիրավական համակարգում տեղի են ունեցել էական փոփոխություններ, և դատական ակտերով թույլ տրված հիմնարար խախտումների առկայությունը հնարավոր կլինի բացահայտել բացառապես կամ մեծամասամբ ՄԻԵԴ այն վճիռներով, որոնք վերաբերում են ՀՀ անկախացումից ի վեր տեղի ունեցած խախտումներին: (...)»:

Որպես լրացուցիչ հիմնավորում խորհուրդը նշել է նաև հետևյալը. «Այնուամենայնիվ, եթե անգամ քննարկման առարկա դարձնենք Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Արտակ Բարսեղյանի ներկայացուցչից Էմիլ Ամիրխանյանի կողմից նկարագրված այն իրավիճակը, որ 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-333-Ն սահմանադրական օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի գոյության և 02.05.2020 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 58-րդ հոդվածի 19-րդ մասի իրավաբանական ուժը կորցրած ճանաչված չլինելու պայմաններում 02.05.2020 թվականից ուշ կայացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու անհիմն լինելուն, ապա սման իրավիճակը ևս կարգավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես, օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանել է նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների հարթահարման իրար հաջորդող որոշակի կանոններ, որոնք ի թիվս այլնի ներառում են իրավաչափ հնարավորություն կիրառել ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը»:

Խորհրդի վերոնշյալ եզրահանգումը, կարծում եմ, հիմնավորված, ուստիև՝ ընդունելի չէ, դրանով շրջանցվել և առանց բավարար հիմնավորման և փաստարկման՝ մերժվել է Պատասխանող կողմի բարձրացրած և սույն վարույթի արդարացի լուծման տեսանկյունով էական հարցի լուծումը, որպիսի եզրակացության հնարավոր է հանգել հետևյալ վերլուծության և դատողությունների արդյունքներով.

Դատավորների իրավական վիճակի վրա ազդեցության բնույթը պարզելու նպատակով իրականացված **ՀՀ դատական օրենսգիրք**<sup>44</sup> (այսուհետ՝ Հին օրենսգիրք) և դրան փոխարինած «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (սույն Կարծիքում՝ **Օրենք**) վերաբերելի կարգավորումների՝ ստորև ներկայացվող իրավահամեմատական վերլուծության արդյունքներով կարելի է հանգել հետևյալ հետևությունների.

Հին օրենսգրքի վերաբերելի դրույթների համաձայն՝ կարգապահական վարույթ կարող էր հարուցվել դատավորի կողմից նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու դեպքերում տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ **1 տարվա ժամկետում**, իսկ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումն արձանագրած ՄԻԵԴ ակտը կայացվելու դեպքում այդ վճիռ կայացման պահից **1 տարվա ժամկետում**:

Այլ կերպ՝ քննարկվող օրենսգրքի գործողության ողջ ժամանակահատվածում կարգապահական վարույթ հարուցելու առիթ, ինչպես նաև հիմք է հանդիսացել դատավորի կողմից նյութական կամ դատավարական նորմի խախտում թույլ տալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով

սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումն արձանագրած ՄԻԵԴ ակտի կայացվելը, ընդ որում՝ **երկու դեպքում էլ վարույթի հարուցման առավելագույն ժամկետը կազմում էր ընդամենը 1 տարի:**

Հին օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ կարգապահական տույժերի թվում առկա էր նաև դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը (Նախատեսված՝ տվյալ օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում), որը բովանդակային առումով համապատասխանում է գործող իրավակարգավորման՝ Խորհրդի կողմից դատավորների լիազորությունները դադարեցնելու տույժի տեսակին: Տույժի այդ տեսակն ենթակա էր կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով այն այլևս անհամատեղելի էր դատավորի պաշտոնի հետ, ընդ որում, դատավորի պաշտոնի հետ անհամատեղելիության էությունը Հին օրենսգրքով բացահայտված չէր:

Սույն վարույթի շրջանակներում քննարկվող ՄԻԵԴ ակտը կայացվել է 2019 թվականի հունվարի 24-ին, երբ Հին օրենսգրքը ուժը կորցրել էր և փաստացի չէր գործում: Ընդ որում, 09.04.2018թ. ուժի մեջ մտած **Օրենքի** սկզբնական տեսքում ՄԻԵԴ-ի կողմից արձանագրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումն որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ կամ հիմք Նախատեսված չէր և օրենսդիրն այդպեսով հրաժարվել էր Հին օրենսգրքում Նախատեսված այդ կարգավորումից: Քննարկվող **Օրենքում** այն Նախատեսվել է 25.03.20 թվականին՝ դրանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-197-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 02.05.2020 թվականին: **Օրենքի** նույն փոփոխությամբ խմբագրվել է 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, որպես կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, վերստին արձանագրվել է արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով Նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը (...), իսկ որպես նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման առավել «լուրջ» դրսևորում, օրենսդիր եզրույթաբանությամբ՝ «Եսկան կարգապահական խախտում», Նախատեսվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակագրվման:

45

Փաստորեն սույն վարույթի շրջանակներում դատավորներին վերագրվող իրավախախտման համար վարույթ հարուցելու առիթը և հիմքը ծագել են 2019 թվականի հունվարի 24-ին՝ ՄԻԵԴ-ի կողմից համապատասխան ակտը կայացնելու և այն ուժի մեջ մտնելու օրը, սակայն տվյալ ակտը կայացնելու օրվա դրությամբ՝

ա) Հին օրենսգրքը ուժը կորցրել էր,

բ) «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը թեև գործում էր, սակայն դրանում դեռևս բացակայում էր ՄԻԵԴ-ի կողմից արձանագրված խախտման փաստով վարույթ հարուցելու առիթը և դատավորին պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Ընդ որում, Հին օրենսգրքում վերոնշյալ առիթներն ու հիմքերն առանձնացված կերպով Նախատեսվելու, սակայն սկզբնական խմբագրմամբ **Օրենքում** ՄԻԵԴ-ի կողմից արձանագրված խախտումները որպես կարգապահական վարույթ հարուցելու առանձին առիթ և պատասխանատվության հիմք չնախատեսվելու՝ Օրենսդիր մոտեցումների փոփոխությունից կարելի է արձանագրել, որ նոր **Օրենքում** օրենսդիրն ի սկզբանե հրաժարվել էր ՄԻԵԴ արձանագրած խախտումները որպես նյութական և դատավարական իրավունքի խախտման առանձին դրսևորում դիտարկելու կարգավորումից, վերոնշյալ կարգավորումը Նախատեսվել է՝ **Օրենքում** փոփոխություններ և լրացում կատարելու մասին 25.03.20թ. ՀՕ-197-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 02.05.2020 թվականին:

ՀՕ-197-Ն օրենքով **Օրենքի** 144-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է նաև, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով Նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից **հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում**: Սույն կետով Նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե **եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի**.

Քննարկվող հոդվածը փոփոխած և լրացրած, 25.03.20թ. ընդունված և միայն 02.05.2020թ. ուժի մեջ մտած ՀՕ-197-Ն օրենքի 1.1-րդ մասի համաձայն՝ 144 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Նախատեսված ժամկետները չեն տարածվում սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով Նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա և այդ առիթով կարգապահական **վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց (այսինքն՝ 02.05.2020թ.) հետո կայացրած ակտերի հիման վրա:**

**Օրենքում** փոփոխություններ և լրացում կատարելու մասին 06.07.2022թ. ընդունված և 13.08.2022թ. ուժի մեջ մտած ՀՕ-333-Ն օրենքի համաձայն՝ եթե արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով Նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի (...) խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ ՄԻԵԴ ակտի ուսումնասիրության արդյունքով, այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե **ՄԻԵԴ-ի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի** (Նախկին խմբագրմամբ համապատասխան նորմում 8 տարի էր): Ընդ որում, ՀՕ-333-Ն օրենքի 3-րդ հոդվածում, որը վերնագրված է որպես «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ», **Նախատեսվել է տվյալ օրենքի ստորև նշված կարգավորմանը հետադարձություն տալու հնարավորություն**, այն է՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ ՄԻԵԴ ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով Եսկան կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու,

դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Վերոնշյալ իրավական վերլուծությունը սույն վարույթով պարզված փաստական հանգամանքների վրա տարածելով կարելի է արձանագրել, որ **Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Խառատյանը նրան վերագրված վարքագծի խախտումը ենթադրաբար կատարել է 2009 թվականի հունիսի 21-ին**, և այդ պահին գործող ՀՀ դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ նրա նկատմամբ կարգապահական վարույթ կարող էր հարուցվել գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում (հարկ եմ համարում ընդգծել, որ ներպետական մակարդակում տվյալ դատական ակտը չի բեկանվել, նյութական կամ դատավարական իրավունքի որևէ նորմի խախտում չի արձանագրվել), իսկ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումն արձանագրած ՄԻԵԴ ակտ կայացվելու դեպքում այդ ակտի կայացման պահից 1 տարվա ընթացքում: Հաշվի առնելով, որ վերագրվող իրավախախտման հիմքը ՄԻԵԴ-ն արձանագրել է 2019 թվականի հունվարի 24-ին՝ դատավոր Ա.Խառատյանի համար բարենպաստ կարգավորում նախատեսող Հին օրենսգրքի համաձայն՝ (անշուշտ դրա գործողությունը դադարեցված չլինելու պարագայում) այդ ժամկետը լրանալու էր 2020 թվականի հունվարի 24-ին: **Դատավոր Ա.Խառատյանի նկատմամբ կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել** նաև **Օրենքի** նոր կարգավորմամբ, քանի որ դրանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ընդունված և 02.05.2020թ. ուժի մեջ մտած ՀՕ-197-Ն օրենքի 58-րդ հոդվածի («Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ») համաձայն՝ 144 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետները չպետք է տարածվեին **Օրենքի** 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: **այդ առիթով կարգապահական վարույթ կարող էր հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային տարանջամի ՀՕ-197-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա:** Այլ կերպ՝ սույն վարույթով ՄԻԵԴ ակտը կայացվել է 2019 թվականի հունվարի 24-ին, իսկ **Օրենքում** կատարված քննարկվող փոփոխությունն ու լրացումը ուժի մեջ է մտել 02.05.2020 թվականին, ինչն առերևույթ բացառում է (պետք է բացառեր) Դատավոր Ա.Խառատյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, առավել ևս նրան պատասխանատվության ենթարկելու իրավաչափ հնարավորությունը:

**Վճռաբեկ դատարանի նույն պայտի դատավորներ Ա.Բարսեղյանին և Տ.Պետրոսյանին վերագրված վարքագծի խախտումը ենթադրաբար կատարվել է 2009 թվականի սեպտեմբերի 23-ին, քննարկվող առիթով և հիմքով նրանց նկատմամբ ևս կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել**, քանի որ դրա ժամկետը դատավորների համար բարենպաստ կարգավորում նախատեսող Հին օրենսգրքի համաձայն (դրա գործողությունը դադարեցված չլինելու պարագայում) լրանալու էր ՄԻԵԴ ակտն ուժի մեջ մտնելուց 1 տարի անց՝ 2020 թվականի հունվարի 24-ին: Այլ կերպ՝ սույն վարույթով ՄԻԵԴ ակտը կայացվել է 2019 թվականի հունվարի 24-ին, իսկ **Օրենքում** քննարկվող փոփոխությունն ու լրացումը ուժի մեջ է մտել 02.05.2020թ., ինչն առերևույթ բացառում է (պետք է բացառեր) նաև դատավորներ Ա.Բարսեղյանի և Տ.Պետրոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, նրան պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Այսպիսով, սույն կարգապահական վարույթի ընթացքում և արդյունքներով վարույթ հարուցելու առիթի առկայությունը վարույթ իրականացնող մարմինները (նախ՝ Լիազոր մարմինը, ապա՝ Խորհուրդը) պետք է ստուգեին՝ որպես ելակետ ընդունելով ՄԻԵԴ կողմից առնվազն 02.05.2020թ. հետո դատական ակտ կայացնելու փաստը, այսինքն՝ **սույն վարույթի շրջանակներում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը կարող էր բարձրացվել Օրենքում ուղղակիորեն նախատեսված նվազագույն պայմանը՝ ժամկետային սահմանափակումը** <sup>46</sup> պահպանելու պարագայում:

Եվրոպական դատարանը «Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի» գործով արտահայտել է կարգապահական վարույթի հարուցման և իրականացման ժամկետային սահմանափակմանը վերաբերող հետևյալ իրավական դիրքորոշումը.

«137. Վաղեմույթյան ժամկետները ծառայում են մի քանի կարևոր նպատակների, մասնավորապես, երաշխավորում են իրավական որոշակիությունն ու ավարտվելիությունը, հավանական մեղադրյալներին պաշտպանում են ուժը կորցրած հայցերից, որոնք հաշվելը կարող է դժվար լինել և կանխարգելել յուրաքանչյուր անարդարություն, որը կարող է ի հայտ գալ, եթե դատարաններից պահանջվի որոշումներ ընդունել այնպիսի հանգամանքների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել շատ վաղ անցյալում՝ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք, հավանաբար, դարձել են անարժանահավատ և ոչ ամբողջական ժամանակի կտրվածքի պատճառով (տե՛ս «Սթաբբինգսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության», 22 հոկտեմբերի 1996թ., կետ 51, Չեկոյցներ 1996 IV): Վաղեմույթյան ժամկետները Դայմանավորվող պետությունների ներպետական իրավունքի ընդհանուր հատկանիշներից են, որոնք վերաբերում են քրեական, կարգապահական և մյուս իրավախախտումներին:

138. Ինչ վերաբերում է Դիմողի գործին, ապա 2010 թվականին ԱԲԽ-ի կողմից քննված հանգամանքները թվագրված են 2003 և 2006 թվականներին, հետևաբար, Դիմողին դրել են ծանր կացության մեջ, քանի որ նա պետք է իր պաշտպանությունը կառուցեր այն հանգամանքների վրա, որոնց մի մասը տեղի էր ունեցել վաղ անցյալում:

139. Դիմողի գործով ԲԿԴ-ի որոշումից և Կառավարության դիրքորոշումներից հետևում է, որ ներպետական իրավունքը որևէ ժամանակային արգելք չէր նախատեսում երդումը խախտելու համար դատավորների աշխատանքից ազատման դատավարությունների համար: Քանի դեռ Դատարանը չի գտել, թե վաղեմույթյան որ ժամկետը կարող է համարվել լինել, այն արձանագրում է, որ **դատական համակարգին վերաբերող կարգապահական գործերի նկատմամբ առանց ժամանակային սահմանափակման մոտեցումն իրավական որոշակիության սկզբունքին լուրջ վնաս է պատճառում:**

140. Նման հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումը:

Ավելին, խնդրահարույց է նաև 13.08.2022թ. ուժի մեջ մտած ՀՕ-333-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված («Եզրափակիչ մաս և անցումային դրույթ») կարգավորումը, համաձայն որի՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է

կիրառվել, եթե դա անկախապես պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»:

Փաստորեն միայն 13.08.2022թ. ուժի մեջ մտած ՀՕ-333-Ն օրենքով է նախատեսվել այն, որ ՄԻԵԴ ակտերի հիման վրա հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունները կարող են ընդհուպ դադարեցվել (կամ այլընտրանքային տույժեր նշանակվել) նաև այն դեպքերում, երբ ՄԻԵԴ ակտը կայացվել և ուժի մեջ է մտել 13.08.2022 թվականից առաջ և այդ ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի: Այլ կերպ` **ՀՕ-333-Ն օրենքն էլ ավելի է վատթարացրել սույն գործով դատավորների իրավական վիճակը, քանի որ ըստ Էռլթյան վերացրել է նույնիսկ ՀՕ-197-Ն օրենքով նախատեսված` կարգապահական վարույթ հարուցելու ժամկետային սահմանափակումը** (այդ օրենքը տարածվելու էր 02.05.2020 թվականից հետո ուժի մեջ մտած ՄԻԵԴ ակտերով արձանագրված խախտումներ թույլ տրված դատավորների նկատմամբ): Ավելին` գրեթե կրկնակի երկարաձգվել է կարգապահական վարույթ հարուցելու և դատավորին պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը (Հին օրենսգրքով նախատեսված առավելագույն 1 տարի ժամկետը 2020 թվականին ՀՕ-197-Ն օրենքով փոփոխվել է 8 տարով, իսկ 2022 թվականին ՀՕ-333-Ն օրենքով` 15 տարով), այսինքն` այդ մասով ևս նոր օրենքը դատավորների իրավական վիճակն էլ ավելի է վատթարացրել: Վերոնշյալ վերլուծության և դատողությունների արդյունքներով այն կարծիքին եմ, որ ամերևույթ առկա էին սույն կարգապահական վարույթի շրջանակներում կիրառման ենթակա (կիրառված) օրենքների հետադարձություն տալու անթույլատրելիության վերաբերյալ Պատասխանող կողմի փաստարկները ստուգելու, դատավորներ Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի համատեղ միջնորդությունը բավարարելու իրավական և փաստական բավարար հիմքեր, այլ կերպ` **քննարկվող օրենքների սահմանադրականությունը նախքան դատաքննության ավարտը և սույն վարույթով եզրափակիչ ակտ կայացնելը ստուգելու և պարզելու նպատակով Սահմանադրական դատարանն դիմելու հիմնավոր կասկածներ**, ինչը, որպես դատարան հանդես եկող, ձայների մեծամասնությամբ որոշումներ կայացնող Բարձրագույն դատական խորհուրդը չի կատարել, թեև պարտավոր էր:

### **2.3. Կիրառման ենթակա օրենքի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ ՄԻ դիմելու լրացուցիչ փաստարկներ և իրավական հիմնավորումներ.**

Սույն Կարծիքի **2.1-2.2 կետերում** ներկայացված վերլուծության և դատողությունների արդյունքներով` գտնում եմ, որ կարգապահական վարույթի շրջանակներում ի հայտ էին եկել հիմնավոր կասկածներ` կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի (վերը քննարկված նորմերի) սահմանադրականության վերաբերյալ, որի պայմաններում **Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր էր (նույնիսկ իր նախաձեռնությամբ) դիմել Սահմանադրական դատարան.**

**դատավորների արդար դատաքննության և անձնական կյանքը հարգելու իրավունքների երաշխավորումը և սույն վարույթի արդարացի լուծումն ուղղակիորեն պայմանավորված էր այդ որոշումը նախապես կայացնելու և վարույթի ընթացքում բացահայտված խնդրի շուրջ Սահմանադրական դատարանի վերջնական և համապարտադիր դիրքորոշումը (որոշումը) ստանալու հանգամանքով:**<sup>47</sup>

ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն` Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրությանը, իսկ օրենքների նորմերի և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում կիրառման ենթակա են միջազգային պայմանագրերի նորմերը: Լիազոր մարմնի ներկայացրած միջնորդությունը և քննարկվող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության վերաբերյալ հակափաստարկները չեն բխում ՀՀ սահմանադրությունից և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բովանդակությունից:

Իր մի շարք որոշումներում (**ՄԻՌ-649, ՄԻՌ-723, ՄԻՌ-758, ՄԻՌ-881, ՄԻՌ-1000, ՄԻՌ-1061, ՄԻՌ-1142, ՄԻՌ-1224, ՄԻՌ-1326**) անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրին` Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց` **անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը**

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,  
- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ անկախիքների հանդեպ,

- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը` բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,

- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է:

Միաժամանակ, **այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի` անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններին:**

«Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94) 12 առաջարկության VI.2 սկզբունքից հետևում է, որ **կարգապահական վարույթի հիմքերը պետք է սահմանվեն նախօրոք**, ավելին, ցանկացած կարգապահական վարույթի համար պետք է տրվեն հստակ հիմնավորումներ, երբ նման վարույթ հարուցվում կամ իրականացվում է: Սույն դեպքում կարգապահական վարույթի հիմքը նախօրոք սահմանված չէր, մասնավորապես` այդ սահմանում պետք է առնվազն նախորդեր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած և սույն վարույթին վերաբերելի դատական ակտն ուժի մեջ մտնելուն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (համապատասխանում է մինչ այդ գործող «Իրավական ակտերի մասին» օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասին)` «Նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի

մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, այլ կերպ՝ անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձություն տալու անթույլատրելիության սկզբունքն ամրագրված է որ միայն ՀՀ սահմանադրությամբ, այլևս օրենքով»:

ՀՀ սահմանադրական դատարանի **2008թ. մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշման** համաձայն՝ «իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի՝ **իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:**

Իր **ՄԴՈ-630, ՄԴՈ-1142 որոշումներում** անդրադարձ կատարելով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ «այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Քննարկվող իրավակարգավորման՝ սահմանադրականության հետ կախված խնդիր բովանդակելու վերաբերյալ դեռևս օրինագծի փուլում **փորձագիտական եզրակացություն** <sup>48</sup> էր տվել նաև ՀՀ ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչությունը: Այդ եզրակացության համաձայն՝ «Սահմանադրության իմպերատիվ պահանջն է մարդու իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերին հետադարձ ուժ տալու արգելքը: Սահմանադրությամբ ամրագրված ընդհանուր կանոնից որևէ բացառություն նախատեսված չէ, բացի այդ, Սահմանադրությամբ նախատեսված չեն որոշակիացված հիմքերի հստակ շրջանակ, կառուցակարգ հետադարձ ուժ տալու ընդհանուր կանոնից բացառություն նախատեսելու համար: Ըստ նույն եզրակացության՝ Սահմանադրական պահանջից շեղում կատարելը կարող է կատարվել բացառապես ներպետական օրենսդրությամբ՝ Սահմանադրությամբ համապատասխան հնարավորություն նախատեսված լինելու պարագայում»: Այլ կերպ՝ անգամ փորձագիտական մակարդակով պատկան մարմիններին ուղղակիորեն մատնացույց էր արվել այն, որ նման օրինագծի ընդունումն ու օրենքի կիրառումը հնարավոր է Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կամ լրացում կատարելու պարագայում:

Օրինագծի հիմնավորման մեջ մեջբերված Վենետիկի հանձնաժողովի կարծիքի առկայությամբ և՛ վերոնշյալ վարչությունն արձանագրել էր, որ այդ հանձնաժողովը ևս ֆիքսում է նորմատիվ իրավական ակտերին հետադարձ ուժ տալու արգելքը, միաժամանակ՝ ոչ այդքան խիստ մոտեցմամբ անդրադառնալով եվրոպական չափորոշիչներին՝ նշում է, որ Եսկան է ապացուցել, որ հետադարձ ուժ տալը բխում է հանրային շահերից կամ նկատառումներից (հանրային շահի հանդիսացող որոշակի հիմքերից):

Կարծում են, որ խորհուրդը պարտավոր էր հաշվի նստել այն իրողության հետ, որ 10-ից ավել տարի առաջ դատական ակտ կայացրած դատավորը իրավախախտման պահին գործող վերաբերելի իրավակարգավորումների համատեքստում չէր կարող կանխատեսել, որ իր վարույթում քննվող գործով նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ տալու հնագամանքը ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվելուց հետո, հետագայում Նոր օրենքի ընդունմամբ կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետը երկարաձգվելու միջոցով կարող է Լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել, հանգեցնել իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելուն, իրավախախտումը՝ որպես Եսկան կարգապահական խախտում որակվելուն, իսկ որպես հետևանք՝ կարգապահական տույժ նշանակելուն, ընդհուպ՝ դատավորի լիազորությունները դադարեցնելուն:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ կանխատեսելիության առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարիների ընթացքում մշակել է չափանիշներ՝ որոշելու, թե արդյո՞ք իրավունքին միջամտելը նախատեսված է օրենքով, և եկել է այն եզրակացության, որ **իրավական կարգավորումների առկայությունը բավարար չէ, դրանք պետք է ճշգրիտ լինեն, և դրանց հետևանքները պետք է լինեն կանխատեսելի բոլոր շահագրգիռ կողմերի համար: Այս պահանջները կիրառելի են կարգապահական վարույթի դեպքում, քանի որ այդ վարույթում նույնպես պետք է պարզ լինի, թե որ գործողություններն են ենթակա կարգապահական պատասխանատվության (CDL- AD(2007) 009, կետ 15):**

Կարծիքներից մեկում փաստելով, որ օրենսդրության մեջ խախտումներն այնքան ընդհանուր են ձևակերպված, որ կարող են ընդգրկել գործի քննության ընթացքում հանդիպող դատական վարքագծի բազմաթիվ տարատեսակներ, ինչն իրականում վտանգ է ներկայացնում դատական անկախության սկզբունքի համար՝ Վենետիկի հանձնաժողովն առաջարկել է դրա փոխարեն հստակ սահմանափակել դատավորի կարգապահական պատասխանատվության շրջանակը: Հանձնաժողովն ընդգծել է, որ **դատական անկախության սկզբունքի նպատակն է ապահովել, որ դատավորները գերծ մնան արտաքին ազդեցությունից, երբ նրանք օրենքի հիման վրա որոշում են կայացնում գործի վերաբերյալ, և նրանք չպետք է վախենան որևէ հետևանքից՝ իրենց պարտականությունների կատարման համար, բացառությամբ արդարադատության խեղաթյուրման (քրեական) գործի (CDL- AD(2007)009, կետ 17):**

Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ **դատավորների կարգապահական կանոնների նպատակն է ապահովել դատարանների իրավասությունը, այլ ոչ թե ապահովել օրենքի ճիշտ կիրառումը, ինչը բողոքարկման ընթացակարգի խնդիրն է:** «Օրենքի խախտումների համար» գրեթե ինքնաշխատ հեռացումը հակասում է դատական անկախության հիմնարար պայեցակարգին: Ըստ այդմ **օրենքում պետք է հստակ սահմանվի, որ պաշտոնից ազատման պատճամիջոցն ամենալուրջ պատճամիջոցն է, որը կիրառվում է միայն ծայրահեղ դեպքերում և որպես ծայրահեղ միջոց:** Կարգապահական հանձնաժողովը պետք է տեղյակ լինի, որ իր բոլոր որոշումները պետք է անցնեն համաչափության քննություն, ինչպես դա շարադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (CDL- AD(2007) 009, կետ 29):

Սահմանադրական դատարանը **2019 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-1488 որոշմամբ** փաստել է, որ «իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, **իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում**»:

Քննարկվող դեպքում վերաբերելի իրավակարգավորումը ընդունվել է դատավորների կողմից դատավարական խախտումներ թույլ տալու փաստն արձանագրած ՄԻԵԴ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ ինչպես իրավախախտումը կատարելու, այնպես էլ այն արձանագրելու պահին գոյություն չունեղ վերաբերելի իրավակարգավորում, բնականաբար՝ դատավորներ Ա.Խառատյանը, Ա.Բարսեղյանը և Տ.Պետրոսյանը նույնիսկ ընդհանուր գծերով չէին կարող նախատեսել, առավել ևս՝ կանխատեսել, որ որևէ իրավախախտում են կատարում, նրանց համար կանխատեսելի չէին նաև վերը նկարագրված իրավական հետևանքները, որի պայմաններում դատավորներին կարգապահական խախտում վերագրելը, առավել ևս՝ նրանց նկատմամբ առավելագույն խիստ կարգապահական տույժի միջոց՝ լիազորությունների դադարեցում նշանակելը, իրավաչափ, առավել ևս՝ համաչափ չէ:

Ինչպես իրավախախտման պահին գործող ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի, այնպես էլ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերն հետադարձ ուժ չունեն: **Սահմանադրությունը նախատեսում է միայն մեկ իրավիճակ, որի պայմաններում օրենքին կարող է տրվել հետադարձ ուժ, այն է՝ եթե նոր օրենքն անձի իրավական վիճակը բարելավող է, ընդ որում, դա էլ իր հերթին պետք է հատուկ նախատեսվի նոր օրենքով:** Աներկբա է, որ Օրենքի քննարկվող լրացումներն ու փոփոխությունները դատավորների իրավական վիճակը վատթարացնող են, քանի որ կարող են հանգեցնել և փաստացի հանգեցրել են նրանց նկատմամբ կարգապահական տույժ նշանակելուն՝ դատավորների լիազորությունները դադարեցնելուն:

Որպես տվյալ օրենսդրական փոփոխություններին և լրացումներին հետադարձություն տալու հիմնավորում նշվել է այն, որ դրա ընդունումը պայմանավորված է «դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»:

Թեև Լիազոր մարմնի ներկայացուցչի մեկնաբանմամբ ՄԻԵԴ ակտերի ուսումնասիրությունները կատարում են դրանց կայացման ժամանակագրական չափանիշով, սակայն նրան ուղղված հարցադրումների պատասխաններից պարզվեց, որ սկսած 2007 թվականից **Հայաստանի Հանրապետության դեմ կայացված ՄԻԵԴ դատական ակտերն Արդարադատության նախարարությունում ուսումնասիրվում են առանց այդ գործընթացը կանոնակարգող որևէ նորմատիվ իրավական ակտի ընդունման, դրանով նախատեսված օբյեկտիվ չափանիշների բացակայության պայմաններում**, այլ կերպ՝ պատահական (սուբյեկտիվ) ընտրության սկզբունքով, որի հետևանքով **Պատասխանող կողմը (դատավորները և ներկայացուցիչները) որոշամտորեն բարձրացնում է տվյալ իրավիճակում գրեթե անհերքելի՝**<sup>49</sup> **փաստարկ՝ ՄԻԵԴ ակտերի ուսումնասիրությունները համակարգող Լիազոր մարմնի կողմից այդ գործընթացում դատավորների միջև տարբերակված մոտեցում ցուցաբերելու, կոնկրետ դատավորների թիրախավորելու և «պատժելու» վերաբերյալ:**<sup>50</sup>

**2.3.1** Թեև Լիազոր մարմնի ներկայացուցչի պնդմամբ քննարկվող գործընթացի շրջանակներում Արդարադատության նախարարությունում առաջին հերթին ուսումնասիրվել և ուսումնասիրվում են 2022 թվականին ՄԻԵԴ կայացրած ակտերը, այնուամենայնիվ, քննարկվող առիթով է հիմքով հարուցված և հորինուրդ ուղարկված 4 կարգապահական վարույթների, դրանց թվում՝ սույն վարույթին վերաբերելի տվյալների համադրված հետազոտությունը որոշամտորեն վկայում են հակառակ տրամաբանության՝ այդ չափանիշից շեղվելու, հետևաբար՝ Պատասխանող կողմին և հորինողին ներկայացված այդ **փաստարկի օբյեկտիվորեն չհաստատվելու մասին:**<sup>51</sup> Մասնավորապես, Լիազոր մարմնի ներկայացուցչի վկայակոչած սկզբունքով առաջնորդվելու պարագայում ՄԻԵԴ վերոնշյալ 4 ակտերից պետք է առաջինը ուսումնասիրվեր դատավոր Է.Լ-ի նկատմամբ վարույթ հարուցելու առիթ՝ հանդիսացած ՄԻԵԴ ակտը, ապա՝ դատավոր Մ.Մ-ի վերաբերյալ ակտը, այնուհետև՝ սույն վարույթով անցնող դատավորների վերաբերյալ ակտը, որից հետո՝ դատավոր Ս.Անտոնյանի վերաբերյալ ՄԻԵԴ ակտը, մինչդեռ Արդարադատության նախարարությունում դրանց ուսումնասիրությունների հաջորդականությունն (ժամանակագրությունը) օբյեկտիվ իրականության մեջ խախտված է:

Օրենքի դրույթների հետադարձ կիրառման առաջնությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «հետադարձ ուժի արգելման սկզբունքը վերաբերելի է միմիայն այն դեպքերին, երբ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ արդեն իսկ գտնվող, որոշակի իրավունքներ և պարտականություններ կրող անձի իրավական վիճակը օրենքի փոփոխման պատճառով վատթարանում է, նա զրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը»: (ՄԴՈ-1224, 2015թ. հուլիսի 7):

Կարծում եմ, որ **Լիազոր մարմնի կայացրած որոշումները՝ կարգապահական վարույթ հարուցելու, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները հորինողին դիմելու վերաբերյալ, ինչպես նաև հորինողի եզրափակիչ որոշումը՝ այդ միջնորդությունը բավարարելու մասին, չեն բխում Սահմանադրական դատարանի նաև վերը նշված իրավական դիրքորոշման տրամաբանությունից:**

Քննարկվող նոր օրենքներին հետադարձություն տալու անթույլատրելիության խնդիրը դատավորներն ի սկզբանե բարձրացրել էին Լիազոր մարմնի առջև, սակայն, կիրառելով խնդրահարույց վերոնշյալ օրենքը, այդ մարմինը վերջիններիս պատասխանատվության ենթարկելու միջնորդությունն ուղարկել է հորինուրդ, մարմին, որն առաջնորդվելով այլ վարույթներով ձևավորած պրակտիկայով, վերստին մերժեց կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության վերաբերյալ ՍԴ դիմելու վերաբերյալ այս անգամ դատավոր Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի ներկայացրած միջնորդությունը: Վերոնշյալ պրակտիկան

իրախուսելու հետևանքով կարգապահական վարույթի ելքի տեսանկյունով Էական վերոնշյալ հարցով դատավորները կարող են իրենց իրավունքները պաշտպանել միայն անհատական դիմումի կարգով ՄԴ դիմելով, այսինքն՝ կարգապահական վարույթով դատաքննության ավարտից հետո, երբ դատավորի լիազորությունները տորիորդի եզրափակիչ որոշման հիման վրա կարող էին նաև դադարեցվել (ինչպես և սույն վարույթով տեղի ունեցավ):

Ընդ որում, դատավորի կողմից անհատական դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի դիմելը ենթադրաբար խախտված իր իրավունքները վերականգնելու առումով ժամանակավորեալ է, ուստի՝ դիմողի շահերի տեսանկյունով՝ ոչ արդյունավետ (**հիմնական փաստարկ**): Բացի այդ, գործող իրավակարգավորումների պայմաններում որոշակիորեն առկա է նաև դատարանի մատչելիության խնդիր՝ ՄԴ առջև բարձրացվող հարցերի շրջանակի նեղ և անհատական դիմումի ընդունելությանը վերաբերող օրենսդրական պահանջների խիստ լինելու տեսանկյունով (**լրացուցիչ փաստարկ**):

Անհատական դիմումով ՄԴ դիմած անձը հիմնականում այլևս նախկին դատավոր է (տորիորդի կողմից առավել խիստ տույժի միջոց կիրառելու հետևանքով), մինչդեռ տորիորդի կողմից վարույթի շրջանակներում ՄԴ դիմելու պարագայում դատավորը չի գրկվում նախքան կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության հարցի վերջնական պարզումը շարունակելու և ավարտելու իր վարույթի գործերը: Այլ կերպ ասած՝ «դատավորի» անձնական շահն<sup>52</sup> ունի նրա զբաղեցրած պաշտոնին և սահմանադրական առաքելությանը բնորոշ հանրային շահի բաղադրիչ և տորիորդի որոշմամբ դատավորի լիազորությունները վարույթի արդյունքներով դադարեցվելու պարագայում դատավորի վարույթում քննվող հարյուրավոր, եթե ոչ հազարավոր գործեր վերամակագրվելու են այլ դատավորների՝ հանգեցնելով այդ գործով անցող դատավարության մասնակիցների՝ ողջամիտ ժամկետներում գործերի քննելու և լուծելու իրավունքի համատարած խախտման: Մինչդեռ, չի բացառվում, որ ՄԴ-ն դատավորի վիճարկված և նրա լիազորությունների դադարեցման հիմքում դրված (կիրառված) նորմը հակասահմանադրական ճանաչելի, ինչով կարող է արձանագրվել թե՛ նախկին դատավորի անփոփոխելիության սկզբունքի, թե՛ նրա վարույթում քննվող գործերով անցող անձանց արդար դատաքննության (այլևս անվերականգնելի) իրավունքի խախտումները:

Այսպես, **2023 թվականի հուլիսի 4-ի ՄԴԱՌ-79 որոշման** մեջ, Ա.Ս-ի դիմումը գնահատելով որպես ակնհայտ անհիմն և գործի քննությունը մերժելով, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «ինչպես պաշտոնաթող, այնպես էլ ներկայումս պաշտոնավարող դատավորները Սահմանադրական դատարանին ներկայացվող անհատական դիմումների շրջանակում հանդես են գալիս որպես ֆիզիկական անձ, հետևաբար՝ կաշկանդված են Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված՝ իրենց որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման հարց բարձրացնելու պահանջով: Ուստի՝ **անհատական դիմումների շրջանակում չեն կարող բարձրացվել և քննարկման առարկա դառնալ (...)** արդարադատության իրականացմանը և դատավորի կարգավիճակին, այդ թվում՝ **անխախտությանը վերաբերող հարցեր:**

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ՝ **2021 թվականի հուլիսի 27-ի ՄԴԴԿՌ-45 որոշմամբ** պատճառաբանելով, որ «դիմողը միաժամանակ պետք է նաև հիմնավոր և պարունակ ձևով փաստարկեր վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր կոնկրետ սահմանադրական իրավունք(ներ)ի ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթ(ներ)ի կամ դրա(նց) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է, (այդ պահին գործող դատավոր) Ռ.Մ.-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել է:

Սասնավորապես, Դիմողը, որն իր նկատմամբ 2021 թվականի մայիսի 6-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-08 որոշմամբ կարգապահական պատասխանատվության մասին որոշմամբ նկարագրված փաստակազմով պաշտոնավարել է (...) դատավորի պաշտոնում, նշում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մայիսի 6-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-08 որոշմամբ իր նկատմամբ հայտարարվել է խիստ նկատողություն:

Տվյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնք սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի կիրառումը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

Այսպիսով, առկա իրավակարգավորումները կարգապահական վարույթի ողջ ընթացքում հարուցումից մինչև տորիորդի կողմից այդ վարույթի արդյունքներով եզրափակիչ դատական ակտ կայացնելը, դատավորներին կիրառման ենթակա օրենքի սահմանադրականությունը ստուգելու հարցով Սահմանադրական դատարանի դիմելու հնարավորություն չեն ընձեռում, նման իրավունքի իրացման միակ ձևը Բարձրագույն դատական խորհրդին համապատասխան միջնորդություն ներկայացնելն ու այդպիսի տորիորդի աջակցությունը հայցելն է, որից դատավորները սույն վարույթով, ըստ իս՝ առանց բավարար հիմնավորման, գրկվել են՝ վիճարկվող նորմերի սահմանադրական լինելու վերաբերյալ տորիորդի անդամների (մեծամասնության) մոտ առկա չարդարացված նախապաշարմունքի և/կամ դատավոր Ս.Ա-ի վարույթով ՄԴ դիմելու վերաբերյալ նույնաբովանդակ միջնորդությունը տորիորդի ըստ Էոլթյան նույն կազմով մերժելու հանգամանքով կաշկանդված լինելու, այլևս արմատավորված պրակտիկային հետևելու պատճառ/ներով:

Ընդ որում, աներկբա է, որ տորիորդն օժտված է այդ լիազորությամբ այնքանով, որքանով գործում է որպես դատարան և կարող է ՄԴ դիմել կարգապահական վարույթի ընթացքում կիրառելի ՀՀ վարչական դատավարական օրենսգրքով սահմանված նորմերի հիման վրա:<sup>53</sup> Ավելին, սույն Կարծիքի **2.4. կետում** մեջբերվող իրավական դիրքորոշման համաձայն՝ **ՄԴ դիմելը տորիորդի ոչ թե իրավունքն, այլ պարտականությունն է, ինչը տվյալ դեպքում ոչ իրավաչափորեն չի կատարվել:**

Ավելին, կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի վերաբերելի նորմերի սահմանադրականության շուրջ ծագած հիմնավոր կասկածը ստուգելու և Սահմանադրական դատարանի դիմելու միջոցով վերջնականապես պարզելու գործընթացը պետք է նախորդեր սույն կարգապահական վարույթով դատավորների նկատմամբ եզրափակիչ դատական ակտ կայացնելուն, քանզի հակառակ հաջորդականությանը նախապատվություն տալու

պարագայում հորհուրդը դատավորներին ըստ Էուլթյան զրկում է վերագրված «մեղադրանքից» դատարանում պաշտպանվելու միակ արդյունավետ միջոցից՝ գիտակցելով, որ դատավորներն առնվազն մինչև կարգապահական վարույթի (դատաքննության) ավարտը չունեն «մեղադրանքի» բաղկացուցիչ մաս կազմող կիրառման ենթակա «օրենքի որակն» այլ կերպ ստուգելու հնարավորություն:

#### **2.4. Կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության ստուգման անհրաժեշտությունը (հորհրդի պարտականությունը) հաստատող իրավական դիրքորոշումներ.**

Սույն կետում քննարկման ենթակա են հետևյալ հարցադրումները՝

**ա)** արդյո՞ք որպես դատարան հանդես եկող Բարձրագույն հատական խորհուրդն իրավասու է անմիջականորեն արձանագրել կիրառման ենթակա՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքի հակասահմանադրական լինելը, թե՞ նման իրավասություն չունի, քանի որ դրանով մուտք է գործում սահմանադրական արդարադատության ոլորտ, այլ կերպ՝ Սահմանադրական դատարանի իրավասության տիրույթ.

**բ)** եթե խորհուրդն այդպիսի իրավասություն չունի և կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության հարցի պարզումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է, տվյալ օրենքի սահմանադրականության վերաբերյալ բացահայտած (պարզած) խնդրով ՍԴ դիմելն արդյո՞ք Բարձրագույն դատական խորհրդի (դատարանի) պարտականությունը չէ:

**ՀՀ սահմանադրության** 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Սահմանադրական դատարանը **2020 թվականի ապրիլի 14 ՄԴԱՌ-81 աշխատակարգային որոշմամբ** արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»: Ինչպես ուղղակիորեն բխում է մեջբերված դրույթի բովանդակությունից, **դատարանների՝ Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունն առկա է միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, երբ**

**1. հիմնավոր կասկածներ ունեն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ և,**

**2. գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով (կոնկրետ սահմանադրական վերահսկողություն):**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրականության հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի նշված պահանջը դատարանները պետք է դիտարկեն Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված պայմանների (կոնկրետ սահմանադրական վերահսկողության) ենթատեքստում: **Ըստ այդմ, դատարանները համապատասխան դիմումներում պետք է ներկայացնեն ոչ միայն վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իրենց հիմնավորումները, այլ նաև դրա վերաբերելիությունը կոնկրետ գործի հանգամանքներին, այն բացասական հետևանքները, որոնք վրա են հասնելու կոնկրետ գործի շրջանակներում շահագրգիռ անձանց համար, դիմողի կարծիքով, առերևույթ հակասահմանադրական դրույթի կիրառման կամ մեկնաբանման արդյունքում:** Այլ կերպ, եթե վիճարկվող դրույթը դատարանի կողմից կիրառվելու է զուտ ձևական իմաստով կամ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ դատարանի հիմնավորումները վերաբերելի չեն նրա վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքներին, ապա Սահմանադրական դատարանի՝ գործն ըստ Էուլթյան լուծող որոշմամբ վիճարկվող դրույթի վերաբերյալ արտահայտած ցանկացած գնահատական որևէ նշանակություն չի ունենալու կոնկրետ գործի լուծման համար: Այդ պարագայում դատարանի դիմումը ենթադրելու է ոչ թե կոնկրետ, այլ վերացական սահմանադրական վերահսկողություն: Այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Սահմանադրության 73-րդ հոդվածի նախատեսված կանոնի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Սահմանադրական դատարանը **ՄԴՌ-1148 որոշմամբ** նշել է. «Իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: **Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը»:**

Մեկ այլ, **2019 թվականի հունվարի 25-ի ՄԴԱՌ-7 աշխատակարգային որոշման** մեջ անդրադառնալով դատարանների, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հարցին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության ոլորտը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դուրս է Վճռաբեկ դատարանի գործառնությունների շրջանակից, չի նշանակում, որ Վճռաբեկ դատարանը չունի Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն», և որ՝ «**Որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝**

**Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքն անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է ամբողջ հանրային իշխանությունը»:**

Բացի այդ, տվյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանը՝ ամրագրելով, որ սահմանադրական արդարադատության իրականացումը, հատկապես նաև օրենքի և Սահմանադրության մեջ նշված այլ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը, Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, այնուամենայնիվ, փաստել է, որ **սահմանադրականության ստուգումը բոլոր դատարանների պարտականությունն է:** Սահմանադրական դատարանն այնուհետև հատուկ շեշտել է, որ **Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա նրանք պարտավոր են դիմել Սահմանադրական դատարան այդ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով, ինչը նշանակում է, որ բոլոր դատարանները, և ոչ միայն Վճռաբեկ դատարանը, պետք է ինցիդենտ կերպով ստուգեն կիրառվելիք նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը և պարտավոր են դիմել Սահմանադրական դատարան՝ նշված նախադրյալների առկայության դեպքում:**

Վերահաստատելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության խնդրի կամ օրենքի որևէ այլ մեկնաբանությամբ չհաղթահարվող՝ սահմանադրականության տեսանկյունից նշանակություն ունեցող թերության բացահայտումը դատարանների կողմից, նրանց պարտադիր լիազորությունն է, որն ապահովված է հատկապես Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **օրենքում նման խնդիրների բացահայտումն անխուսափելի է դարձնում Սահմանադրական դատարան դիմելը, քանի որ դրանք չեն կարող հաղթահարվել այլ (ոչ սահմանադրական) դատարանների կողմից:** Օրենքի պահանջների մեկնաբանության դեպքում դրանց անորոշությունը փաստելը ոչ այլ ինչ է, քան սահմանադրականության խնդրի արձանագրում: **Այդ (սահմանադրականության) խնդրի առկայությունն օրենքով սահմանված պահանջի կատարումից «ազատվելու» և սեփական լիազորություններն ընդլայնելու կամ սահմանափակելու համար հիմք դարձնելը նշանակում է սահմանադրականության խնդրի յուրօրինակ լուծում ոչ Սահմանադրական դատարանի կողմից, ինչն անթույլատրելի է:** Իսկ քննված գործի շրջանակներում վիճարկվող դրույթի իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանը Օրենսգրքի վիճարկվող դրույթի անորոշությունը պատճառաբանելու նպատակով հղում է արել նախկինում ընդունված իր որոշումներից մեկին՝ անտեսելով Սահմանադրական դատարան դիմելու՝ Սահմանադրությամբ սահմանված պարտադիր լիազորության առկայությունը:»:

## **2.5. Եզրահանգում.<sup>54</sup>**

Այսպիսով, սույն վարույթի շրջանակներում դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքով դատավորներ Ա.Խառնառյանին, Տ.Պետրոսյանին և Ա.Բարսեղյանին պաշտոնից ազատելը հանդիսացել է միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ նրանց «անձնական կյանքի» նկատմամբ հարգանքի իրավունքին, որն այդ միջամտությամբ խախտվել է:

Մասնավորապես՝ դատավորների լիազորությունների դադարեցման հիմքում դրված օրենքը չպետք է կիրառվեր կամայականորեն, այն (օրենքը) պետք է համահունչ լիներ ՀՀ սահմանադրության քննարկվող նորմի պահանջներին և ժամանակին հասանելի լիներ նրանց: Ավելին, դատավորները պետք է ի վիճակի լինեին՝

**ա.** համարժեքորեն տեղեկացված լինելու տվյալ հանգամանքներում կոնկրետ գործի նկատմամբ կիրառելի իրավական կանոնների մասին,

**բ.** դրան համապատասխան կարգավորելու իրենց վարքագիծը և

**գ.** ողջամտության սահմաններում կանխատեսելու դատավարական իրավունքի խախտում թույլ տալու հնարավոր հետևանքները:

Դեռ ավելին, Լիազոր մարմնի միջնորդության մեջ չի ներկայացվել, իսկ եզրափակիչ ակտում խորհրդի կողմից առարկայորեն չի փաստարկվել,<sup>55</sup> թե դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և հատկապես նրանց լիազորությունները դադարեցնելն ինչ իրավաչափ նպատակ էր հետապնդում, արդյոք ժողովրդավարական հասարակությունում դա անհրաժեշտ էր:

Ընդ որում, դատաքննությամբ պարզվեց, որ դատավորներին վերագրված իրավախախտման հետևանքով ենթադրաբար տուժած կազմակերպությունը ՄԻԵԴ որոշման կայացումից հետո քաղաքացիական գործը վերանայելու դատավարական ժամկետի ընթացքում նման դիմում չի ներկայացրել, իսկ դատավորների լիազորությունների դադարեցմամբ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված մյուս իրավաչափ նպատակներին հասնելը ողջամտորեն հնարավոր չէ:<sup>56</sup>

Եվ վերջապես, դատավորների պաշտոնագրկման հանգեցրած վերոնշյալ միջամտությունը պետք է համահունչ լիներ հետապնդվող նպատակին, բխեր «ծայրահեղ սոցիալական կարիքից», սակայն խորհրդի եզրափակիչ որոշումից հնարավոր չէ եզրակացնել, թե ինչ աստիճանի էր այն կարևոր, որ դատավորների նկատմամբ կիրառելի չէին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված տույժի նվազ միջամտող, այլընտրանքային տեսակները, կիրառելի էր միջամտության միայն ծայրահեղ, առավել ինտենսիվ միջոցը: Ընտրված ծայրահեղ միջոցի՝ դատավորի լիազորությունների դադարեցման համաչափությունը պահպանելու համար որպես դատարան հանդես եկող խորհուրդը, ում եզրափակիչ որոշումը, գործող իրավակարգավորումների համաձայն, քողորպարկման ենթակա չէ և վերջնական է,<sup>57</sup> պետք է առնվազն դատարանում ապահովվեր արդար դատաքննության

բավարար պայմաններ՝ դատավորներին տրամադրելով Կոնվենցիայի նաև 8-րդ հոդվածով երաշխավորված շահերի նկատմամբ պատշաճ հարգանքի հնարավորություն:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բարձրագույն դատական խորհուրդը մերժում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը, եթե՝

1) առկա է սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 6-րդ մասով և 147-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված որևէ հիմք.

(...) »:

Օրենքի 146-րդ հոդվածի համաձայն՝

«(...)»:

6. Կարգապահական վարույթ չի հարուցվում, եթե՝

(...).

4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով սույն կարծիքում ներկայացված վերլուծությունները և **1.11 և 2.5 կետերում** ներկայացված եզրահանգումները, ղեկավարվելով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 7-րդ մասով, 156-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 146-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. հոկտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման (Աշխատակարգի) 96-րդ մասով՝

## Կ Ա Ր Ծ ՈՒ Մ Ե Մ`

Լիազոր մարմնի ներկայացրած միջնորդությունը՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պայատի դատավորներ Տիգրան Պետրոսյանին և Արտակ Բարսեղյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ենթակա է մերժման:

<sup>1</sup> Այսուհետ՝ Որոշում, Խորհրդի որոշում կամ եզրափակիչ որոշում (ակտ):

<sup>2</sup> Խորհրդի եզրափակիչ որոշման մեջ որևէ անդրադարձ չի կատարվել «Բ» և «Դ» կետերում թվարկված բացարկման հիմքերին, դրանք մերժելու հիմնավորումներին:

<sup>3</sup> Տվյալ որոշումը Լիազոր մարմնի կողմից Խորհուրդ չի ուղարկվել, վարույթի ընթացքում Խորհրդի անդամներին այդպես էլ հասու չի դարձել, ուստի՝ կարգապահական վարույթ հարուցողի անձը ստուգվել է հաստատվել է նաև Նիստով, Լիազոր մարմնի ներկայացուցչին ուղղված հարցադրմամբ:

<sup>4</sup> Սույն պարբերության մեջ նշված փաստական տվյալները, այդ թվում՝ կարգապահական վարույթը Նախարար Գ.Մինասյանի կողմից հարուցվելու փաստը, վարույթը կողմերը Խորհրդում չեն վիճարկել:

<sup>5</sup> Հայտարարագրերի ռեեստրի համաձայն՝ Ե.Ա-ն իր 2022 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրել է «Էջ Եվ իրավաբանական ընկերությունում» առկա իր 40 % բաժնեմասից ստացած շահաբաժինը, որը կազմել է 4.116.670 ՀՀ դրամ, որից կարելի է ողջամտորեն եզրակացնել, որ շահաբաժին իր մասը ստացել է նաև Նախարար Գ.Մինասյանը:

<sup>6</sup> Նման պայմանագրի առկայության վերաբերյալ որևէ տվյալ բացարկման ենթակա անձը՝ Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը, կողմերին և Խորհրդի անդամներին չի ներկայացրել:

<sup>7</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

<sup>8</sup> Նույն հիմքով Խորհրդի նախագահի դեմ բացարկի միջնորդություններ են ներկայացրել Պատասխանող կողմի անխտիր բոլոր ներկայացուցիչները, որոնք լուծվել են՝ խորհրդակցական սենյակում առանձին-առանձին քննարկվելով: Ավելին, տվյալ հիմքի վերաբերյալ վերլուծություններ են առկա Խորհրդի եզրափակիչ որոշման մեջ (տե՛ս Որոշման 78-79 էջեր):

<sup>9</sup> Տվյալ հիմքով միջնորդություններ են ներկայացրել վարույթի կողմ հանդիսացող գրեթե բոլոր դատավորները և/կամ նրանց ներկայացուցիչները:

<sup>10</sup> Վարույթի հարուցումը մերժելու մասին 2023թ. հունիսի 16-ի N 02-ԴԱ/2023 որոշմամբ:

<sup>11</sup> Կարծիքում այս և տեքստային բոլոր այլ ընդգծումներն Ա.Վարդանյանին են:

<sup>12</sup> Կամ վերադաս դատական ատյանը, եթե կա նման ատյան, կամ եթե այդ որոշումը բողոքարկման ենթակա դատական ակտ է:

<sup>13</sup> ԲԴԽ-57-Ո-Կ-16 2023 թվականի հուլիսի 3-ի որոշման նախապատմության մասում ուղղակի արձանագրված է, որ Խորհուրդը 19.06.2023 թվականի արձանագրային որոշումով բավարարել է (...) Խորհրդի անդամ Արշակ Վարդանյանին ներկայացված բացարկ հայտնելու մասին միջնորդությունը:

<sup>14</sup> Տվյալ լիազորությունների իրականացումն ըստ Էուլթյան վարչարարական գործառույթ է և որևէ կերպ չի կարող նույնացվել Բարձրագույն դատական խորհրդի և նրա նախագահի՝ որպես դատարան և նախագահող դատավոր հանդես գալու գործառույթի հետ:

<sup>15</sup> Խորհրդը, նախագահությամբ Կ.Անդրեասյանի, եզրափակիչ որոշման մեջ նշված հետևությունը կատարելիս, հիղում են արել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «բ» ենթակետում առկա կարգավորման վրա:

<sup>16</sup> Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանը, իր դեմ ներկայացված հերթական բացարկի միջնորդությունը քննարկելիս, Նիստում ներկայացրել էր նաև նման հակափաստարկ:

<sup>17</sup> Նիստը նախագահող Կ.Անդրեասյանը տվյալ քննադատական խոսքում դատավորների անուններ չի հիշատակվել, սակայն հայտարարել է, որ դա չի վերաբերում տվյալ վարույթով անցնող դատավոր Ս.Ա-ին, թեև վերջինիս լիազորությունները վարույթի արդյունքներով դադարեցվել են, ընդ որում՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը (վերստին) քննարկելիս և այն վարույթ ընդունելու որոշում կայացնելիս Եսկան կարգապահական խախտում կատարելու հիմքով:

<sup>18</sup> Տե՛ս որոշման 22-րդ էջի 1-ին պարբերությունում:

<sup>19</sup> Տե՛ս նույն որոշման 23-րդ էջի 2-րդ պարբերությունում:

<sup>20</sup> Տվյալ ատյանի դատարանի դատավորների ոչ իրավաչափ որոշումները նրանց «տնտեսական շահերով» պայմանավորված կամ գործադիր իշխանության մարմնից ստացվող զանգերի հիման վրա կայացվելու մասով:

<sup>21</sup> Խորհրդի նախագահ Կ.Անդրեասյանի նախագահությամբ է քննարկվել և խորհրդակցական սենյակում մերժվել սույն վարույթով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթների սահմանադրականության հարցը պարզելու նպատակով ՄԴ դիմելու վերաբերյալ դատավորներ Տ.Պետրոսյանի և Ա.Բարսեղյանի համատեղ միջնորդությունը, որպիսի հարց մինչ այդ՝ Լիազոր մարմնում ևս բարձրացվել էր, սակայն ըստ Էուլթյան մերժվել:

<sup>22</sup> Խոսքը Նիստերն անցկացնելիս և որոշումներ կայացնելիս որպես նախագահող հանդես գալու մասին է:

<sup>23</sup> Դատավոր Ս.Թադևոսյանի վերաբերյալ վերապահմամբ, որի պատճառի մասին սույն Կարծիքում ստորև խոսվելու է:

24 Վերջինով փաստվում է Լիազոր մարմնի նկատմամբ անաչառությունը հակակշռող լրացուցիչ գործոնի բացակայությունը նաև սույն վարույթի արդյունքներով խորհրդի կայացրած եզրափակիչ ակտի էջի համատեքստում, ընդ որում՝ դատավորների լիազորությունների դադարեցման հնարավորություն տված՝ դատավարական իրավունքի խախտումն որպես եական կարգապահական խախտում որակելն իրականացվել է ոչ թե Լիազոր մարմնի միջնորդության հիման վրա, այլ խորհրդի նախաձեռնությամբ:

25 Տե՛ս Կարծիքի **2.1.2** կետում:

26 Իր՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի ԲԴԽ-84-Ո-4-24 որոշման մեջ Բարձրագույն դատական խորհուրդը, կարգապահական վարույթի շրջանակներում անդրադառնալով դատավոր Զ.Ն-ի կողմից ոչ իրավաչափորեն ինքնաբացարկ չհայտնելու հարցին, արձանագրել է, որ դատավորի կողմից թույլ տված այդ խախտումը՝ **«ուղղակի և մեծապես վտանգել է դատարանի որպես անաչառ ինստիտուտի հանրային ընկալումը, անվստահություն է առաջացրել Սահմանադրությանը և Օրենքով ամրագրված դատական իշխանության անկախության և անաչառության հիմնարար սկզբունքների նկատմամբ»**:

27 Կ.Անդրեասյանը մինչև ԲԴԽ անդամ ընտրվելը, որպես նախարար, համակարգում և ղեկավարում էր Արդարադատության նախարարության ողջ աշխատակազմի, այդ թվում՝ իր նախկին տեղակալ, ներկայումս Արդարադատության նախարար (սույն վարույթով Լիազոր մարմին) Գ.Մխիթարյանի աշխատանքները:

28 Բացառությամբ դատավոր Ս.Թադևոսյանի, ում լիազորությունները մինչ այդ դադարել էին՝ սեփական դիմումի կապակցությամբ, որի ուժով ի հայտ էր եկել միջնորդությունը նրա մասով մերժելու անվերապահ հիմք:

29 Մանրամասն ներկայացվել է Կարծիքի **2.1.2** կետում:

30 Տվյալ միջնորդության մերժման ոչ իրավաչափ լինելու հիմնավորումները տե՛ս Կարծիքի **2.2-2.4** կետերում:

31 Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. հոկտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման (Հավելված 1-ի) 93-րդ հոդվածի համաձայն՝ «Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության փուլում խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է Օրենքով, իսկ այն դեպքում, երբ կոնկրետ դատավարական գործընթացը կարգավորված չէ Օրենքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով»:

32 Բացարկված դատավորը խորհրդակցական սենյակում տվյալ հարցի քվեարկությամբ, ըստ ելույթի նաև բովանդակային քննարկմանը չի մասնակցում, իսկ բացարկի հարցով առանձին փաստաթղթի ձևով որոշում չկայացվելու և պատճառները (հիմնավորումները) նիստում չհրապարակվելու, առավել ևս խորհրդի եզրափակիչ որոշման մեջ դրանք չարտացոլվելու պարագայում այդպես էլ մտնում է անհաղորդ, թե կոնկրետ ինչ հիմնավորումներով կամ հիմնավորումներից հատկապես որով է խորհուրդը բավարարել կամ մերժել իր նկատմամբ ներկայացված բացարկ միջնորդությունը:

33 Գործող իրավակարգավորումների համաձայն՝ խորհրդի նիստերն իրավագոր են, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը, այլ կերպ՝ առնվազն 6 անդամ:

34 Վերոնշյալ իրավակարգավորումները նախատեսված են «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ և 94-րդ հոդվածներում:

35 Եզրափակիչ որոշման մեջ ներկայացվել են Կ.Անդրեասյանի բացարկելու հիմքերից երկուսը մերժելու մասին այլ հիմնավորումներ, սակայն սույն Կարծիքում նշված մյուս երկուս հիմքերով ներկայացված բացարկի միջնորդությունների մերժման պատճառները կողմերին չեն բացահայտվել, ուստի՝ տվյալ դատողությունը վերաբերում է հենց այդ հիմքերին:

36 Բացառությամբ Կ.Անդրեասյանի դեմ ներկայացված բացարկների վերաբերյալ որոշումների կայացման, որոնց քվեարկությանը վերջինս մասնակցելու իրավունք չուներ: Ընդ որում, Կ.Անդրեասյանին որպես խորհրդի նախագահ ընտրած խորհրդի 4 անդամների կողմից դեմ քվեարկելը սույն վարույթի շրջանակներում բավարար էր խորհրդի նախագահին բացարկելու, ինչպես նաև վարույթը կասեցնելու և ՍԴ դիմելու մասին Պատասխանող կողմի հարուցած միջնորդությունները մերժելու վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

37 Սույն վարույթով խորհրդի 8 անդամների մասնակցությամբ նիստերով Պատասխանող կողմի հարուցած ցանկացած միջնորդություն մերժելու համար խորհրդի անդամների 4 ձայներն ինքնին բավարար էին:

38 1-ին (հիմնական) հարցադրման վերաբերյալ:

39 Տե՛ս Եզրափակիչ որոշման 80-81 էջերում:

40 Մասնավորապես, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (Օրենքի) 148-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին **որոշման նկարագրական-պատճառաբանական մասում վարույթի հարուցող մարմինը շարադրում է դատավորի կողմից կատարված կարգապահական խախտում հանդիսացող յուրաքանչյուր արարքը, այդ արարքը կատարված լինելը հիմնավորող տեղեկությունները և արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները**:

41 **Օրենքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը** Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում»:

42 Ներկայացված են սույն Կարծիքի **1.5 - 1.10** կետերում:

43 **Օրենքով** նման կարգ սահմանված չէ, ինչը, այդ թվում՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի գործողության ուժով, բացառում է խորհրդում դատավորի պաշտպանության իրավունքը խախտող և նրա իրավական վիճակը վատթարացնող մեղադրանքի փոփոխություն (խստացում) կատարելը թե՛ վարույթի հարուցող մարմնի, թե՛ խորհրդի կողմից:

44 Ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, ուժի մեջ է մտել 18.05.2007 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելու հետևանքով:

45 Այն այսուհետ կնշվի հակիրճ՝ «ՄԻԵԴ-ի կողմից արձանագրված խախտում».

46 Այլ կերպ՝ կարգապահական վարույթի հարուցելու վաղեմության ժամկետը լրացած չլինելու պայմաններում:

47 Անշուշտ, անկախ և անաչառ դատարանի կողմից գործի հրապարակային դատաքննության իրավունքը նախապես երաշխավորելու պարագայում:

48 Տվյալ փորձագիտական եզրակացության ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ հրապարակային աղբյուրից՝ Ազգային ժողովի պաշտոնական [parliament.am](http://parliament.am) կայքից:

49 Հատկապես՝ սույն Կարծիքի **2.3.1 կետում** ներկայացված եզրահանգման պայմաններում:

50 ՄԻԵԴ ակտերի հիման վրա Արդարադատության նախարարությունում իրականացվող ուսումնասիրություններին թափանցիկություն տալու, հնարավոր կոռուպցիոն ռիսկերը զսպելու, այդ ուսումնասիրությունները (նորմատիվ իրավական ակտով սահմանված) օբյեկտիվ չափանիշների հիման վրա իրականացնելու անհրաժեշտության անդրադարձել է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ինչը սույն վարույթի և դրանով անցնող դատավորների տեսանկյունով, թերևս, ժամանակավրեպ էր: Մասնավորապես, 2023 թվականի հուլիսի 4-ին, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝ **ՀՀ Արդարադատության նախարարին առաջարկվել է ՄԻԵԴ ակտերի հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցելու գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը զսպելու, հանրային վստահությունը բարձրացնելու, ինչպես նաև գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով սահմանել վարույթների հարուցման առաջնահերթությունները՝** ըստ ներքոհիշյալ չափորոշիչների՝ 1. ըստ գործերի վաղեմության ժամկետների, 2. ըստ դատական ատյանների, 3. ըստ այբբենական կարգի, 4. ըստ դատավորների պաշտոնավարման ժամկետի: Առաջարկվել է նաև մշակել և հրապարակել ՄԻԵԴ ակտերի հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցելու տարեկան պլան (տարվա կտրվածքով նախատեսվող կարգապահական վարույթների թիվ, մտավոր շրջանակ՝ ոչ անվանական և այլն)՝ սպառնալիցով տարվա ընթացքում նախատեսվող վարույթների կանխատեսելիությունը:

51 Մասնավորապես՝ քննարկվող հիմքով խորհուրդ են ուղարկվել Լիազոր մարմնի հարուցած 4 վարույթներ (ըստ «court.am» կայքում առկա տեղեկատվության), որոնցով **ՄԻԵԴ ակտերը ուժի մեջ են մտնել** հետևյալ հաջորդականությամբ՝ դատավոր Մ.Մարտիրոսյանի (այսուհետ՝ Մ.Ս)

վերաբերյալ վարույթով **2021 թվականի մայիսի 18-ին**, դատավոր Էդ. Նահապետյանի (այսուհետ՝ Է.Ն.) վերաբերյալ վարույթով՝ **2021 թվականի սեպտեմբերի 21-ին**, դատավոր Ս.Անտոնյանի (այսուհետ՝ Ս.Ա) վերաբերյալ վարույթով՝ **2015 թվականի դեկտեմբերի 3-ին**, սույն վարույթով՝ **2019 թվականի հունվարի 24-ին**: Մինչդեռ վերոնշյալ կարգապահական վարույթները ՄԻԵԴ ակտերի ուսումնասիրությունների արդյունքներով **հարուցվել են**<sup>52</sup> դատավոր Է.Ն-ի դեպքում՝ **2021 թվականի սեպտեմբերի 21-ին**, դատավոր Մ.Մ-ի դեպքում՝ **2022 թվականի մայիսի 30-ին**, դատավոր Ս.Ա-ի դեպքում՝ **2022 թվականի նոյեմբերի 30-ին**, իսկ սույն վարույթով՝ **2023 թվականի մարտի 27-ին**: Այլ կերպ՝ նույնիսկ վերոնշյալ 4 վարույթների համադրված ուսումնասիրության արդյունքներով հնարավոր է արձանագրել, որ ԱՆ իրավասու մարմինը խախտել է ՄԻԵԴ ակտերն ուսումնասիրելու վերաբերյալ իր իսկ որդեգրած սկզբունքը, ինչն ավելի ցայտուն կդառնա, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ քննարկվող 4 ակտերից ԱԲ հետո, ԱԲ առաջ Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել են անձի հիմնարար իրավունքների խախտումներն արձանագրած բազմաթիվ ակտեր (Arlis.am-ե իրավական տեղեկատվական համակարգի համաձայն՝ 11.01.2007-ից մինչև 25.04.2023թթ. ընթացքում << դեմ կայացվել են 199 ակտեր, որոնցից 2022 թվականին՝ 27, իսկ 2021 թվականին՝ 20, իսկ 2015 - 2020 թվականներին՝ 80 ակտեր):

<sup>52</sup> Իր վերաբերյալ կարգապահական վարույթի ընթացքում կիրառված (կիրառման ենթակա) օրենքի սահմանադրականությունը պարզելու նպատակով ՄԴ դիմելիս՝ դատավորի շահը գուտ անձնական է:

<sup>53</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել է Սահմանադրական դատարան, ընդ որում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը դիմում է Սահմանադրական դատարան համապատասխան գործով վարույթը սկսվելուց մինչև այդ գործով ըստ Էության որոշում ընդունելու պահը:

<sup>54</sup> 2-րդ (հիմնական) հարցադրման վերաբերյալ.

<sup>55</sup> Խորհրդի որոշման մեջ ուղղակիորեն վերարտադրվել են օրենսդրական (ՀՕ-333-Ն օրենքի 3-րդ հոդվածով լրացված «Եզրափակիչ մասի և անցումային դրույթի») ձևակերպումները, որոնք առանց լրացուցիչ փաստարկման և անհատականացման (առանց հիմնավորման և բավարար պատճառաբանման) սույն վարույթով չէին կարող կիրառվել, քանի որ օրենսդիրն այն ձևակերպել է չափազանց ընդհանրական եղանակով: Նման պայմաններում վկայակոչված նպատակներն ապահովելու օրակարգով վերոնշյալ հիմնավորումները Խորհրդուն ըստ Էության կարող են դրվել կարգապահական վարույթներով անցնող անխտիր բոլոր դատավորների լիազորությունները դարադեցնելու որոշումների հիմքում: Այդ բացը պետք է ողջամտորեն լրացվեր գոնե Խորհրդի գերպատճառաբանված և գերհիմնավորված եզրափակիչ որոշմամբ, ինչը, թերևս, նկատելի չէ:

<sup>56</sup> Սույն վարույթով դատավորների լիազորությունների դադարեցումը ողջամտորեն չի շաղկապվում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության իրավաչափ նպատակներից որևէ մեկի հետ:

<sup>57</sup> Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը («GRECO»-ն) Հայաստանի վերաբերյալ 2021 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակված զեկույցում ուղղակիորեն արձանագրել է, որ, պետք է նախատեսված լինի ԲԴԽ որոշումների բողոքարկման մեխանիզմ, հատկապես՝ դատավորների լիազորությունների դադարեցման դեպքերում (43-րդ կետ):

**ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՍ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 1 օգոստոսի 2023 թվական:**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ

Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ

Համապատասխան ինկորպորացիան